* Իւրաքանչիւրոք յիւրոց գործոց գովի՝ կամ պար-
տաւի ॥ . Գրիգոր արշարունի :

* Բարիոք է մահկանացուի ոչ գիտել՝ թէ երբ վախ-
ճանի ॥ . 'ի պարմուլէ արեֆս :

Իսկ անկատար բանն է , որ 'ի բառից կարգաւ շա-
րագրեալ՝ թէպէտ յայտնէ զտրամաստոհունի մտաց ,
բայց անկատար և թերի . և կամ տայ զսկզնաւու-
րութի իմանալոյ զտրամաստոհունի մտաց , բայց ոչ
աւարտէ . այլ՝ որպէս թէ 'ի կախ թողու և որ լսէ՝
լրման նորին սպասէ . զի , Եթէ ցանկամք հասանել
փառացն . թէպէտ և յամ աշխարհ գովեն և երա-
նեն զմեզ . 'ի փոքունցն փախուցեալ . Յորժամ յաղ-
թեմք . ևն : Օ ի ահա սոքա զթերի ինչ դատմունս
մտաց յայտնեալ , թէպէտ և սկիզբն առնեն իմացու-
ցանելոյ , այլ ոչ կատարեն . բայց եթէ յարեսցի 'ի
նոսա այլ բան , կամ բայ . զոր օրինակ :

* Եթէ ցանկամք հասանել փառացն , փախուցուք 'ի
փառաց անտի ॥ . Կսէբ :

* Թէպէտ և յամ աշխարհ գովեն և երանեն զմեզ
(մարդիկ) , զինչ օգուտ են մեզ ॥ . Վարդ Կարց :

* 'ի փոքունցն փախուցեալ՝ մեծամեծացն մատնե-
ցայ ॥ . Կար :

* Յորժամ յաղթեմք , ցնծամք ॥ . Կսէբ :

'ի վախճան ծանօթուէց դիւաւոր մասանց քերա-
կանութե՝ համառօտեսցուք զսահմանսնոցա յայտ ո-
տանաւոր , առ գիւրին սերտողութի համբախաց :

Ղիբն է գիծ ինչ՝ նշան տառի .

տառն է հնչումն՝ ինչ հեղելի :

Սանկն միով հնչմամբ յօդի ,

բաղկացութեամբ՝ պէսպէս տառի :

Բառն է ձայն ինչ՝ նշանական ,
 յազգրս 'ի յուժ՝ բաժանական :
 Բանն է կարգաւ՝ բառի հիւսուած ,
 յայտնիչ ներքին դատման մտայ :

Ըրգ՝ յեա խօսելոյ մեր զնորից մասանց քերակա-
 նուժէ, հարկ է խօսիլ զուժից մասանց բանի՝ զիւ-
 րաքանչիւրոց առանձինն :

Գ Լ Ո Ւ Խ Ե Ե :

Յաղագս անուան :

(Ը) Է զինչ է քանիպարիչ իցէ անուան :

Ընունն է մասն բանի, որով իրն յորջորջի . այս-
 ինքն է՝ այնպիսի բառ, որով իրն անուանի՝ և ասի այս
 ինչ, կամ այսպիսի ինչ . փր, Սարգ . քար . խունկ .
 լոյս . պայծառ . տկար . ևն . զի սքօք պէսպէս իբր
 պէսպէս օրինակաւ այս ինչ կամ այն ինչ անուանին՝
 մինն մարդ, մինն քար . ևն : Հնար է ևս սահմանել
 այսպէս . Ընունն է մասն բանի, որ զէուի իրին նշա-
 նակէ . այլ այս ևս զնոյն զօրուի ունի . քանզի անունն
 յայնժամ նշանակէ զէուի իրին, յորժամ իրն նովաւ
 անուանի այս ինչ, կամ այսպիսի ինչ . որպէս անունս
 մարդ՝ յայնժամ նշանակէ զէուի մարդոյ, յորժամ նո-
 վաւ անուանի իրն այնպիսի . այսինքն՝ մարդ :

Ընունաց ոմանք են գոյական, և ոմանք ածական :
 Գոյական անունն է, որ ինքնին վարի 'ի բանս . և
 նշանակէ զիրս էականս, կամ իբր էականս . թէ բնա-
 կանք իցեն, և թէ արհեստականք . զոր օրինակ, Սարգ .
 տունկ . աթուռ . թուղթ . գոյն . քաղցրուի . նկար . շի-
 նուած . և այլն :

Գոյական անունաց ոմանք են յատուկ, որք և 'ի
 հնոց՝ իսկ ասին . ոմանք հաւաքականք, որք և Բագա-
 չականս կոչին . և ոմանք ընդհանուրք կիմ հասարակք .
 որք և ասին առաստիանս :

Յատուկ անուանն է , որ կարգեալ է՝ առ ՚ի զմի ինչ նշանակել , և զմիօջէ միայն ասիլ . ԿՐ , Սիմոն . տարոն . տիգրիս . քորեք . լեռ : Օ ի սոքա հնարեալ են վասն նշանակելոյ զմի մարդ , զմի գաւառ , զմի գետ , զմի լեառն , լեռ . ուստի և զմիօջէ միայն ասին . վասն որոյ և ոչ վարին յոգնականապէս :

Եւ թէպէտ յատուկ անուանք մարդկան՝ այլևայլ անձանց ևս դնին , բայց այն է ըստ պատահման . և զնոցանէ՝ ևս իբրև զմիօջէ ասին : Իսկ եթէ կամիցիմք որոշել զնոսին յայլոց , յարեմք ՚ի նոսա երբեմն զբառս ինչ՝ նոցին յատկացեալս . ԿՐ , Սիմոն յոջնանա . սիմոն նականչայոյ . սիմոն Բորո . սիմոն Տոփ : Յուգա մակբէ . յուգա յակովբեան . յուգա իսկարիովսացի . լեռ :

Հաւաքականն է , որ միով եզական ձայնիւ զբազում իրս հաւաքմամբ միացեալս՝ իբրև զմի ինչ նշանակէ . ԿՐ , Եղջ . կոյտ . դէզ . հօտ . երամ . խումբ . ժողովուրդ . տոհմ . հոյլ . պար . լեռ : Օ ի սոքա ոչ զմի ինչ յինքեանս նշանակեն , և ոչ ևս զբազումս իբր ՚ի միմեանց զատեալս , այլ՝ իբրև հաւաքեալս ՚ի մի : Որպէս հօսն՝ ոչ նշանակէ զմի ոչխար , այլ՝ զբազում ոչխարս , ոչ առանձինն առանձինն , այլ՝ իբր ՚ի մի հաւաքեալ . զի առանձին մի ոչխարն ոչ ասի հօտ , այլ յորժամ բազումք ՚ի մի խումբ իցեն :

Իսկ ընդհանուրն՝ կամ հասարակն է , որ նշանակէ զընդհանուր ինչ եւռ թի տարածեալ առ բազում անհատս . կամ որ զբազմաց ասի հասարակաբար . ԿՐ , Կառ . հաւ . գետ . տուն . գահ . զոհ . խորհուրդ . բան . զօրութի . փառք . լեռ : Օ ի սոքա ոչ զմիօջէ միայն , այլ և զբազմաց ասին ՚ի հասարակի : Որպէս ծառն՝ ոչ ասի զմիօջէ ծառոյ միայն , այլ և զամենայն ծառոյ . զի զօր ինչ նշանակէ անունս ծառ՝ գտանի այն յամենայն ծառս :

Իծական՝ կամ ըստ հնոց մակարախան անուանն է , որ ինքնին ոչ վարի ՚ի բանս . այլ՝ պահանջէ յարիլ ՚ի գոյականս՝ իբր յայանիչ որպիսութեանոց . ԿՐ , Կարի . չար . առատ . սակաւ . անստուեր . վեհագոյն . կարևոր . ամենափայլ . կենդանարար . բարեատեաց . լեռ : Որք առանձինն ոչ վարին ՚ի բանս , այլ՝ յարագրելով

'ի գոյականս : Ալ պատճառն է, զի ունին զնշանակուի իբր ճապաղ . քանզի թէպէտ և յայտ առնեն զորպիսուի ինչ, բայց ոչ որոշեալ առ այս կի՛մ առ այն . որով և միտք մարդոյ 'ի լսելն՝ մնայ տատանեալ . և որոնէ, թէ որոյ իրի արդեօք որպիսուի է այն, զորնշանակեն : Ապա եթէ ընդ գոյականի վարեցին, որոշի նշանակուի նոցա առ այս կամ առ այն . որով և միտք լսողին հանգչի . զոր օրինակ, յասելն, * Առ բարի՛ պտուղ բարի առնէ . և ծառ չար՝ պտուղ չար առնէ ॥ . Դար . ածական անունս Բարի՛ յարելով 'ի գոյական անուանող ծառ և պտուղ՝ որոշի առ այս և առ այն . այսինքն առ ծառն և առ պտուղն . որով և միտք լսողին ոչ ևս որոնէ, թէ բարին զոր իր նշանակէ աստ . կամ զորոյ իրի որպիսու թի յայտնէ : Մտ այսմ և անունդ չար՝ յարելով յանուանող՝ ծառ և պտուղ, որոշի 'ի նշանակու թէ իւրում :

Յասացելոցս տեսանի, զի գոյական անունն հայի 'ի շինչ գոլ իրին . իսկ ածականն հայի յորպիսի գոլ նորին . վասն որոյ մին վարի առանձին, և միւսն յարելով 'ի նոյն :

Այլ գիտելի է, զի թէպէտ ածականն պահանջէ յարիլ 'ի գոյականս, բայց ոչ է հարկ միշտ ներգործութիւն ունել զնոսին . այլ՝ բաւական է ևս զօրութիւն միայն ունել . զոր օրինակ, յասելն, * 'ի փոքուն նկարեաց զմեծն, և 'ի մարմնականն զհոգևորն ॥, Ի՛ֆնար . ածական անուանքս 'ի փոքուն, զմեծն, 'ի մարմնականն, զհոգևորն՝ զօրութիւն ունին զգոյական իւրեանց . այսինքն է՝ իր, գործ, գործողութի, խորհուրդ . որպէս թէ ասէր . 'ի փոքու իրի նկարեաց զգործ մեծ, և 'ի մարմնական գործողութի զխորհուրդ հոգևոր :

Ածական անուանց ոմանք դրականք ասին . ոմանք բաղգատականք . և ոմանք գերադրականք :

Վրականք են, որք ցուցանեն զորպիսութի կամ զորքանութի իրին պարզապէս՝ առանց ձօխացուցանելոյ, կամ նուազեցուցանելոյ . Կր, Վարի . սպիտակ . դեղեցիկ . վատթար . պակաս . երկայն . կարճ . ևն :

Վաղգատականք են, որք բաղգատելով զմի իր ընդ այլում իրի՝ ցուցանեն զորպիսութի կամ զորքանութի

նորին առաւելեալ կամ նուազեալ քան զմիւսոյն . և սորա կազմին մասնկամբս՝ գոյն . զոր օրինակ , Քարեգոյն . սպիտակագոյն . գեղեցկագոյն . վատթարագոյն . պակասագոյն . երկայնագոյն . կարճագոյն . ևն :

Վերագորականք են , որք ցուցանեն զորպիսութի իրին յոյժ առաւելեալ , կամ յոյժ նուազեալ քան զայլոցն . և սորա կազմին մասնկամբս՝ աճն . զոր օրինակ , Վննաբարի . ամենազեղեցիկ . ամենավատթար . կամ՝ ևս վերագոյն , ևս մեծագոյն , ևն : () այսցանկ տես յընդարձակն :

Մասն Գ. Ռեզակն :

Մտանօր արժան համարիմ խօսիլ զայնոցիկ ա նուանց , որք կոչին Ռեզակն . և բաժանին 'ի հինգ տեսակս . որք են , Սերբերականք . հանրականք . հարցականք . մասնականք , և թուականք :

Սերբերականք են , որք 'ի մէջ բերեն զբաղդատութի ինչ որպիսութե կամ որքանութե . և են սորա . Սոյնպիտի , դոյնպիտի , նոյնպիտի : Մյսպիտի , այդպիտի , այնպիտի : Մյքան , այդքան , այնքան . սոյնքան , դոյնքան , նոյնքան . և սորա վարին ածակա նապէս : Մնդ որս դասին և բառքս՝ Մյշափ , այդչափ , այնչափ . սոյնչափ , դոյնչափ , նոյնչափ . որք առանց հօլովելոյ վարին :

Հանրականք են բառքս՝ ամենայն , ամենեքեան , կամ ամենեքին . բոլոր , բոլորեքեան , կամ բոլորեքին . որք իբր ածական 'ի գործածին : Մնդ որս կարեն դասիլ և անուանքս՝ բնաւ , համայն , ևն :

Հարցականք են , որք հարցականապէս վարին . որոց ոմանք են իբր դոյական . և են սորա , Ս. ո՞վ . զի՞նչ . ո՞վ որ . ո՞յք : Մւ ոմանք իբր ածական . և են սորա . Սր . զինչպիտի . որպիտի . ո՞րչափ . ո՞րքան . քանի՞ : (Մտտա բառքս՝ որպիտի . որքան . քանի . որչափ . վարին երբեմն նաև իբր վերբերականք առանց պարօջկի) :

Մասնականք , որք և ճակեալիս ասին , են նորա , որք մասնաւորեն զնշանակուի անուան իրիք . երբեմն իբր ածական վարելով , և երբեմն իբր դոյական . և սորա

են չորեքիկն : Առաջինն որոշէ զմին 'ի յերկուց . և է բառս այս Միս . զոր օրինակ , * Յայ երկու ճանապարհք հոչեցան . մին լայն և ընդարձակ . իսկ Բաննեղ և անձուկ ॥ . ոսկ : Սա չունի յոգնական :

Արկորորդն որոշէ զմին 'ի բազմաց . որպէս սօքին , Սին . ոս . ին . ինչ . փք , * Օ ոն ('ի մարդկանէ) աստ պատժէ , և անդ պսակէ ॥ . լամբրոն . 'ի մէն . պար :

Արրորդն ցուցանէ զերկուսն մի մի յինքեանս . և է բառս այս Արկաքանչիւր . զոր օրինակ , * Օ կերպարանս երկաքանչիւրոց առ միմեանս եղեալ զմի և զնոյն վճատութե ճնունդս արտադրեն ॥ . նար :

Չորրորդն ցուցանէ զբազումն 'ի միասին անձներաբար և ոչ հաւաքապէս . և է բառս Խարաքանչիւր . զոր օրինակ , * Աանձինն ունի իւրաքանչիւր անդամ զիւրաքանչիւր գործ ॥ . նար . երգ :

Սորա ուղղականն բազում անգամ վարի փոխանակ սեռականի և տրականի . զոր օրինակ , * Աոյն հոգի բաշխէ Խարաքանչիւր ըստ իւրաքանչիւր կարի ॥ : այսինքն բաշխէ իւրաքանչիւրոց . հոչ :

'Ի տեղի սորա երբեմն դնի կրկնակ բառքդ՝ Բ Բ . այր այր . լւ . զոր օրինակ , * Բաշխէր Բոյ Բոյ 'ի նոցանէ զգանձս ॥ . խորէն : * Օ առն առն զբաշխութի պատմէր նոցա ॥ . եշեշէ :

Թուականք են , որք 'ի մէջ բերեն զթիւ . և վարին ածականապէս . որոց են հինգ տեսակք : Առաջին տեսակքն ասին ընդարձակք . որք արձակապէս նշանակեն զթուեալն . որպէս՝ Մի . երկու . երեք . չորս . հինգ . վեց . տասն . հնգետասան . քսան . քսանևմի . երեսուն . լւ : Արկորորդ տեսակքն ասին դասականք . որք կարգաւ ցուցանեն զթուեալն . որպէս՝ առաջներորդ . երկրորդ . երրորդ . չորրորդ . հինգերորդ . տասներորդ . հնգետասաներորդ . լւ : Արրորդ տեսակքն ասին զատականք . որք նշանակեն զթուեալն իբր զատուցեալս և առանձնացեալս . փք , Միակ . երկեակ . երրեակ . հնգեակ . եօթնեակ . յիսնեակ . լւ : Չորրորդ տեսակքն ասին անձներականք . որք զբազումն ընդ միով թուով իւրաքանչիւրաբար նշանակեն . փք , Արկաքեան , կմ՝ երկոքին . երեքեան , կամ

երեքին . չորեքեան , կի՛մ չորեքին . հնգեքեան , կամ
հնգեքին . վեցեքեան , կի՛մ վեցեքին . տասնեքեան , կի՛մ
տասնեքին . և : Հինգերորդ տեսակքն ասին կրկնա-
կանք . որք զկրկնումն թուոյ ցուցանեն՝ վերջաւորու-
թիւս պարիչ . զք , Քառապատիկ , (այսինքն մին քա-
ռիցս կրկնեալ) . հնգապատիկ , (չի մին հնգիցս կըրկ-
նեալ) . եօթնապատիկ , (չի մին եօթնիցս կրկնեալ) . և :
Յոմանս ՚ի սոցանէ յարի և մասնիկս կէն՝ այնու նշա-
նակու թիւ , զոր ունի մասնիկս պարիչ . զք , Արեքկին .
չորեքկին . հնգեկին . վեցկին . և այլն :

ԳՆՈՒԽ Թ :

Յաղագս պարագայից անուան : Առ նախ՝ յաղագս Սեուից :

Պարագայք անուանց ասին այնք , որք շուրջ զան-
ուամբ մտածին՝ իբր հետեւումն որպիսութե՛ն նոցա .
ուստի նաև հետեւանք կոչին . և են վեց , այսինքն ,
Սեւ , ձև , տեսակ , թիւ , հոլով , և հոլովումն :

Սեւք կամ սերք անուանց են որոշմունք դոյական
անուանց՝ ըստ նշանակելոյ նոցա զսերս իրաց , այսինքն
զարու և զէգ , կամ զհասարակ ինչ , և կամ զէգորք :
Սւստի և անուանք՝ ըստ սեւին են չորք , արական ,
իգական , չեղորական , և հասարակ :

Ղբականն է որ նշանակէ զարու . զք , Ղբահամ ,
խահակ , հայր , եղբայր , այր , փեսայ , աներ , հաւ ,
պապ , եղն , ցուլ , արջաւ , քաղ . և այլն :

Իգականն է որ նշանակէ զէգ . զք , Սարբա , ան-
նա , կին , արիկին , դչխոյ , հարան , մայր , քոյր , զորանչ ,
հանի , նու , հորաքոյր , մայրագիր , մօրու , կով , երինջ ,
մաքի , ալով , մարի . և այլն :

Հասարակն է որ միով ձայնիւ նշանակէ զարու և
զէգ . զք , Օւակ , որդի , թուան , կորիւն , կողուն ,
մարուկ , ձաղ . և : Աւ ևս՝ Սարդ , առիւծ , ձի , նա-
պաստակ , արսուտ , անգղ . և այլն :

Չեղորականն է որոյ նշանակեալն ոչ արու է , և ոչ
էգ . զք , Սղուր , օգ , հող , մոմ , ճրագ , թուղթ , լոցս ,

մեծուի, ծնունդ . և այլն : Իսկ եթէ անկենդան իբր
կոչեսցին երբեմն արու կամ էգ . զի, Բարու կամ էգ
ծղինսի . արու կամ էգ արմաւենի . արու կի՛էգ սլը-
ղինձ . և այլն , այն նմանութի ասի , և ոչ տիրապէս :

Բայցի ՚ի վերոյ , թէ այս որոշմունք են գոյական ա-
նուանց . զի ՚ի լեզուի մերում ոչ գտանի որոշումն սե-
ռի ածական անուանց ըստ արականի և ըստ իգական
նի . զի որչափ և ածականս ունիմք , կամ հասարակ
են արուի և իգի , և կի՛ չեզոք . և բազումք ևս հա-
սարակ են մարդկան և անասնոց , զգայնոց և անզգայ-
ից , արհեստականաց և բնականաց :

Բայցի և ևս , ըստ նշանակելոյ նոցա զսերս իրաց . զի սեռք
անուանց ոչ նկատին ՚ի մեզ ըստ վերջաւորուե՛ կամ
ըստ յօդից ինչ . որպէս ՚ի լատինս , և ՚ի յայլս . այլ՝
ըստ նշանակութե՛ նոցին . իբր զի եթէ նշանակեալն
անուան իցէ արու , անունն ասի արական . եթէ էգ ,
իգական . եթէ երկուցն ևս պատկանեալ , հասարակ .
և եթէ և ոչ միում պատշաճեալ , չեզոք :

Եւ թէպէտ ոմանք յածականաց ունելով զվերջա-
ւորութիս ունի՛ որոշին ՚ի սեռ իգական . զոր օրինակ,
Սրբուհի . երանուհի . և այլն , բայց այս վերաբերի
յաճանցումն անուանց . զորմէ տեսցես ՚ի ԳԼ . Է :

Եւ դարձեալ՝ ՚ի յատուկ անուանս թէպէտ կան՝
որք ըստ այս ինչ վերջաւորուե՛ արականապէս նշանա-
կեն . զի, Յովհաննէս , հերովդէս , կիւրոս , յուստիա-
նոս , և այլն . և ըստ այլ ինչ վերջաւորուե՛ իգակա-
նապէս . զոր օրինակ , Յովհաննա , հերովդիա , կիւրիա ,
յուստիանէ , և այլն : Բայց այս ոչ է ՚ի յատուկութե՛
լեզուիս մերոյ , այլ՝ գրեթէ ՚ի թարգմանութենէ ան-
ուանց այլոց աղգաց . որպէս և յայտ է :

Իսկ եթէ պիտոյ լիցի ՚ի լեզուի մերում զանուն
ինչ հասարակ իգականապէս ՚ի գործ ածել , յարեմք
յայն զանուն իգական . զոր օրինակ , Աի՛ն մի վհուկ .
ա . Բագ : Աի՛ն մարգարէ . դաս : Աի՛ն ժրագլուխ . սասի :
Բճճի՛ն՝ որ դռնապանն էր . յովն . լի՛ն : Եւ ևս՝ Սասի՛ն
ձի , Տասի՛ն առիւծ , Գագ՛ աղուէս . Գագ՛ կատու . և այլն :

Չեք անուանից որոշին ըստ պարզուէ, ըստ բարդուէ և ըբ բաղադրուէ նոցա : Սւտի և անուանք ըբ ձեոյն երբեակ են . Պարզ , բարդ և բաղադրեալ :

Պարզ անուանն է որ կայ յինքեան միայնակ և առանձինն , և ոչ է զօրեալ ընդ այլում նշանական բառի , և ոչ ունի յառաջոյ զաննշան ինչ մասնիկ . զք , Սով . հոգի . բարի . խառն . կեղծիք . ելք . ևն :

Բարդն է , որ յերկուց նշանական բառից զօրեալ է 'ի մի անուն 'ի ձեռն յօդիցս , ա , ե , է , ի , ու , կամ եւ . զք , Սովամահ , բարեմիտ , հոգեկիր , խառնիխուռն , կեղծուպատիր , ելեկջ . ևն . յորս յօդքդ է և է՝ եղեալ են փոխարկմամբ ինի տառին :

Մյլ բազում անգամ առանց այսպիսի յօդից ևս բարդի անունն . զք , Երկձայն . վրէժխնդիր . ողջանդամ . բարձրնտիր . ևն :

Մյլ գիտելի է , զի անունն բարդի ը պէսպէս մասանց բանի . Ետն՝ ընդ ինքեան . զք , Պարագլուխ , սկզբնաչար , բազմապարգև , մեծապայծառ . և այլն :

Երկրորդ՝ ընդ գերանուան . զոր օրինակ , Ինքնագոյ , իւրահնար , նոյնատիպ , քոյնաստեղծ , և այլն :

Երրորդ՝ ընդ բայից . զոր օրինակ , Չարախնդաց , թագընկէց , ծովահեղձոյց , վարձահատոյց , բեռնաբարձ , տիեզերակալ , սրատես , գիւահար , ահանջալուր , և այլն : Երբեմն ևս ընդ արմատս բայից . զոր օրինակ , Բազմածին , զինակիր , լուսակիզն , հոգեպատում , և այլք բազումք : 'Ի սոսա ոմանք ունին զգօրուի օշի , և ոմանք եալի . բանզի չարախնդացն նշանակէ զինդացօղն ընդ չարիս . Ետնինկէցն՝ զթագ ընկէցօղ . Բեռնաբարձն՝ զբեռն բարձօղ . Բազմածինն՝ զբազումս ծնանօղ . զինակիրն՝ զզէնս կրօղ . և այլն : Սոյն պէս և ծովահեղձոյցն նշանակէ՝ 'ի ծովու հեղձեալ , կիմ 'ի ծովու հեղձուցանօղ . կոպեպարտմն՝ հոգուով պատմեալ , կամ զհոգւոյն պատմօղ . Կրտսեպարն՝ 'ի դիւէ հարեալ . և այլն :

Չորրորդ՝ ընդ ընդունելուն . զոր օրինակ , Վերո-
ղամիտ , քերթողահայր , տեսանողազուշակ , առաքե-
լաչնորհ , ընտրելակից , սքանչելադործ , և այլն :

Հինգերորդ՝ լէ նախագրուէ . զոր օրինակ , Վաղ-
տամիտ , ընդգիմամարտ , հեռաբնակ , միջասահման ,
մտաբաղաք , շրջապարիսպ , և այլն :

Վեցերորդ՝ ընդ մակբայի . զոր օրինակ , Յառա-
ջապահ , յարագալար , յաւէտահրաշ , մշտանուէր , նա-
խաժաման , ներքսակողմն , և այլն :

Տնոր է անուանց բարդիւնակ ընդ միջարկուէ և
ընդ շաղկապի . զոր օրինակ , Վալլաշասեր , թէա-
խնդիր , և այլն . այլ սոքա չեն 'ի գործածուէ :

Գիտելի է ևս , զի բարդութի անուանց լինի քա-
ռակի . Վախ՝ յերկուց ամբողջ բառից . զոր օրինակ ,
Սեծահանգէս , գեղատեսիլ , հրեշտակակերպ , լայ-
նախորհուրդ , շքեղապայծառ , և այլն :

Երկրորդ՝ յերկուց պակասելոց կամ փոփոխելոց . զոր օրինակ ,
Լուսատու , երկգիմի , երկնառաք , բազմազունի , և
այլն :

Երրորդ՝ 'ի միոջէ փոփոխելոց 'ի հաւիւն , և 'ի
միոջէ ամբողջէ 'ի յանգիւն . զոր օրինակ , Վեղեցկա-
տիպար , ժողովրդապետ , բարեյիճակ , տանուտեր ,

չարեացապարտ , ձերբակալ . և այլն : Չորրորդ՝ 'ի
միոջէ ամբողջէ 'ի հաւիւն , և 'ի միոջէ փոփոխելոց 'ի
յանգիւն . զոր օրինակ , Յոգնապիտի . մեծազգի . միա-

մօր . անարգամեծար . և այլն :

Վ բարդ անուանս դասին և այլ քանի մի անուանք
որք կոչին յարաբարդք . զի յերկից նշանական բառից
զօգին 'ի մի անուն , որք և չեն այնչափ 'ի յաճախ
գործածութե . որպիսի են սոքին , Վնաչառասփիւռ .

անձնապահապետ . բարեհասակաչափ . երեքփառա-
տրեան . հնգետասանամայ . ողբերդարկուի . և այլն :

Իսկ բազադրեալ անունն է , որ յառաջոյ զօգեալ
ունի զաննշան մասնիկ ինչ բազադրական , որպիսի են
սոքին , Վերկիւղ , աղերախտ , աղենիազ , աղիկար ,

առողջ , արքուղի , կամ զարքուղի , արաժամ , հա-
կաճառ , համախոհ , հոմասեռ , Բաղաճայն , Բաղանուն ,
Երանան , փկար , Գժգոհ , Գժպատեհ . և այլն :

Յաշտո Տեսակաց անուանց :

Տեսակք անուանց են որպիսութիւք անուանց ըստ նախնական և ըն ածանցական նշանակութեան նոցա : Ուստի և անուանք կրկին են ըն տեսակին . Նախադաղափար , և ածանցական , որ 'ի հնոց կոչի նաև յարանոսն :

Նախագաղափար կամ նախատիպ անունն է , որ կայ յառաջին նշանակութե իւրում , և կի՞ յայնմ որպիսութե զոր ինքնին նշանակէ . թէ գոյական իցէ , և թէ ածական . թէ պարզ իցէ , և թէ բարդ , կամ բաղադրեալ : Բստ որոյ և կոչի նախագաղափար , կի՞ նախատիպ . իբր թէ նախկին օրինակ և տիպ , յորմէ կարեն ածանցիլ և յարանուանիլ այլք . որպիսի են սոքա . Աոյս , երկիր , գործ , մահ , բարի , զուարթ , լուսափայլ , բարեգործ , անմահ , և այլն :

Ըծանցական անունն է նոյն նախատիպ անունն 'ի ձեռն ածանցականակերտ աննշան մասնկանց տրամակայեալ 'ի յանգիլն , և ածեալ յայլ իմն կերպ նշանակութե . որպէս , Ուսաւոր , երկրային , բարեգործութիւն , անմահական , և այլն : Յորս որպէս տեսանի անունք լոյս ածանցիչ մասնկամբս առոր՝ եղանակաւորեալ՝ ածեալ է յայլ իմն կերպ նշանակութե . զի 'ի կերպաւորիլն լոսառոր՝ ոչ ևս նշանակէ զլոյսն , այլ՝ զունօղն լուսոյ : Բստ այսմ ևս անունս բարեգործ՝ տրամակայեալ ածանցիչ մասնկամբս առիւն , ոչ նշանակէ զայն , որ գործէ զբարի . այլ՝ զգործս նորա բարւոք կատարեալս : Բստ այսմ իման և զայլոց :

Ըծանցականակերտ կի՞ ածանցիչ մասնիկք բազում են յոյժ , զորս կարես տեսանել յընդարձակ քերականութե , մասն թ . գլ . ը :

Բալ ոմանք յանուանց երբեմն 'ի կրկին մասնկանց ածանցին , որպէս . թագաառորոյ . թագաառորական , ևն . և սոքա կոչին կրկնաածանցականք :

Յարագիս Թուոյց անուանց :

Թիւք անուանց են միուի կամ բազմաւորուի նը շանակուե անուանց ը ձայնին : Ալ են կրկին . եզական , և յոգնական . կամ միաւորական , և բազմաւորական :

Ազականն է , որ ը ձայնին զմի ինչ նշանակէ . դր , չոգի , մարմին , խոնարհ , հօտ . ևն : Օի թէպէտ նշանակեալն այսպիսի անուանց 'ի բազումն է , բայց ըստ ձայնին ոչ իբրև բազում նշանակի , այլ 'իբրև մի

Իսկ յոգնականն է , որ ըստ ձայնին զբազումն նշանակէ . դր , չոգիք , մարմինք , խոնարհք . հօտք . ևն :

Այլ գիտելի է , զի 'ի բարբառս մեր անուանք կրկնակի լինին յոգնականք . Ախի՝ յաւելլով յեզականան զտառ ինչ . որպէս յուղղական և 'ի գործիական հալովս՝ * . զոր օրինակ , Աննք , բանիւք . Իսկ 'ի հայցակական և 'ի ներգոյական հալովս * . զոր օրինակ , Օ բան , 'ի բան . Այլ 'ի սեռականն և 'ի բացառականն՝ * . զոր օրինակ , Աննից , 'ի բանից :

Արկրորդ՝ յաւելլով յեզականան զվանկս ինչ , կմ գմանսիկս յոգնականակերտս . որպէս երևի 'ի սոսին . Աղախնայք , այգեստանեայք , գաշտորայք , գեղորեայք , կողմնայք , բեռնայք , սերմանայք , ատամնայք , գահայք , մուռացծայք , անդէք , գիւղօրէք , աւաղանի , մանկի , խողեան , բարձկնեար , մարդիկ , բազմակն , մանկտեակ :

Վիտելի է դարձեալ , զի 'ի բարբառս մեր բազում անուանք կան , որք ը ինքեանց այնոգնականք են . զոր օրինակ , Ալաւար . լոյս . տիւ . սէր . յոյս . լիւ : Այնպէս այնոգնական են և ամենայն յատուկ անուանք աստեղաց , ամոց , քաղաքաց , գետոց , լեռանց , կղզեաց , մարդկան լիւ . զոր օրինակ , Առսին . յունվար . վաղարշապատ . երասխ . սինա . կիպրոս . հայկ . ևն :

Ան ևս բազում անուանք՝ որք անեզականք են . զոր օրինակ , Աղաչանք . բաղձանք . բարք . փառք . կամք . խելք . մեղք . ալիք . ժանիք . կարծիք . ընթ .

րիք . դժոխք . ցնորք . կուռք . աղօթք . և այլք բազումք :

Եւ ևս գիտել արժան է, զի անեզական անուանքս, Բռն, Կամ, ևն, յորժամ յարին 'ի բայս ինչ՝ իբրև մի վարելով ընտոսին, կի՛մ իբր գիմազուրկ, երբեմն եզականապէս դնին. զոր օրինակ, * Մնձանց իւրեանց մեղ է, և ոչ փրկողին ॥ . Ի՜՜՜նապ :

* Արոց զիարդ կամ եղև անձանց իւրեանց, բերին նուէրս տեառն ॥ . Էլից :

ԳՂՈՒԽ Ժ :

Յաղագս Հոլովից անուանից :

Ի՛նչուս հոլով՝ հասարակ առմամբ նշանակէ թաւալումն և գլորումն, կամ շրջումն : Ըյլ ըստ քերականաց՝ նշանակէ պէսպէս փոփոխումն մի և նոյն անուան 'ի սկիզբն, կամ 'ի վերջն, և կի՛մ յերկոսին միանգամայն : Արպէս անունս Բոյս՝ 'ի հոլովին պէսպէս փոփոխի՛ կամ 'ի սկզբն, կամ 'ի վերջն, և կամ յերկոսին ևս . Գր, Բոյս, բուսոյ, 'ի բոյս, զբոյս, 'ի բուսոյ, զբուսոյ, բուսով, զբուսով, 'ի բոյս, ո՛վ բոյս :

Եւ այսպիսի փոփոխուիք կամ զանազանուիք միոյ անուան՝ կոչին հոլովք անուանց . և են տասն . այսինքն, Աւղղական, սեռական, արական, հայցական, բացառական, պատմական, գործիական, պարառական, ներգոյական, կոչական :

Աւղղական կամ անուանական հոլովն է, յորում իրն ուղղակի և արձակաբար նշանակի յինքեան . Գր, Հաց. անձն. հիմն. և այլն : Իսկ յայլ հոլովս անուղղակի և հոլովակի նշանակին իրք : Ըյս հոլով թէպէտ և փոփոխմամբ իւրիք ոչ ձևանայ, բայց դասի 'ի հոլովս վասն երկուց պատճառաց . նախ՝ զի է իբր արմատ այլոց հոլովից . և երկրորդ՝ զի 'ի յոգնակին փոփոխի . Գր, Հացբ. անձինք. հիմունք. ևն :

Սեռական կամ ստացական հոլովն է, յորում ոչ իրն, այլ՝ իմն իրին զօրու թի՛ք նշանակի, թէ ազգ իցէ նորա, թէ տուն, և թէ այլ ինչ . որպէս յասելն ճար

դոյ, զօրու թիւ նշանակի իմն՝ որ մարդոյն է . որպիսի են միտք . խօսք . դէմք . ձեռք . զգեստ , և կամ այլ ինչ , որ ոչ է նոյն ինքն մարդն , այլ իմն նորա : Այլ վասն այսորիկ այս հօլով կոչի սեռական , զի ցուցանէ , թէ որոյ սեռի է այս իր . այսինքն թէ որոյ է , և կամ ոյր ստացուած . նմին իրի ստացական ևս կոչի : Այլ յայսմանէ է , զի երբեմն փոխանակ սեռականի վարեմք զստացական յարանուանս . օր , Այս էրինային . պարծանք պողոսի . և այլն . փոխանակ ասելոյ , լոյս երկնից . պարծանք պողոսի . և այլն :

Տրական , այսինքն տուողական հօլովն է , յորում նշանակի իրն իբր այն ինչ՝ որում տալի է իմն , կամ առ որ հայեցի է , կամ դիմելի , լի : Այս հօլով կըրկին է , վերջահօլով և նախդրիւ : Այլ վերջահօլովն է , որոյ վերջաւորութիւն միայն այլայլ՝ նման սեռականին . օր , Ազգի . դրան . դասու . լի : Արոց յոգնակին լինի , ազգաց . դրանց . դասուց . լի : Իսկ նախդրիւն է , որոյ սկզբնաւորութիւն փոփոխի ՚ի ձեռն նախդրացս . ՚ի . յ . առ . առ ՚ի . յ . ընդ . օր , Ախուհի . յարուեստ . առ թագաւոր . ցանձն . ընդ լեառն . լի : Արոց յոգնակին լինի , Ախուհիս . յարուեստս . առ թագաւորս . ցանձինս . ընդ լերինս . և այլն :

Հայցական հօլովն է , յորում նշանակի իրն իբր ենթակայ խնդրոյ , կամ իբր ենթակայ ներգործական գործողութեց . և ձեանայ այսպէս . Օ կողով . զպլտուղ . զմասն . լի : Արոց յոգնակին լինի , Օ կողովս . զպտուղս . զմատուռնս . և այլն : Այս հօլով բազում ուրեք զօրութիւն ունի զլայ . և կոչի անորոշ հայցական . զի փոխանակ ասելոյ , զճանապարհ . զողի . զաջ . ըզվիշտ . և այլն , ասեմք երբեմն , ճանապարհ . ոգի . աջվիշտ . և այլն . օր , * Յոյց ինձ ճանապարհ , յոր գնացից || . սաղմոս :

Այլ սակայն ՚ի դերանուանս ոչ է այսպէս . զի հայցական նոցա միշտ զայիս ձեանայ . զի ոչ լինի ասել , Յիշեալ իս . այլ * Յիշեալ զիս || . զհակ : Այլ ոչ լինի ա սել , Արսն՝ որ որսայցէք , ըմբռնեսցէ ձեզ . այլ * Արսն՝ զոր որսայցէք , ըմբռնեսցէ զձեզ || . խոր : Այլ ոչ լինի ասել , Այս ամ և առ աւել քան զոյն խօսեր . այլ՝

* Օ այս ամ և առաւել քան զսոյն խօսէր ॥ . եղիշ :
Ըստ այսմ իմն և վասն այլոց :

Բացառական , կամ ըստ հնոց՝ առաքական հօլովն է , յորում նշանակի իրն իբր այն ինչ , յորմէ ելանէ իմն , կամ ծագէ , կամ 'ի բաց բառնի , և կամ առաքի . զք , 'Ն սենեկէ . 'ի բերանոյ . 'ի գայթակղուէ . և այլն : Արոց յոգնակին լինի , 'Ն սենեկաց . 'ի բերանոց . 'ի գայթակղութեց . և այլն :

Ըստ գիտելի է , զի յորժամ մի և նոյն անունն 'ի բացառական և 'ի տրական հօլովն միանգամայն 'ի գործ ածի , նախդիրն բացառականին , կամ տրականին՝ իբր 'ի բազումն ներգործուի ոչ դնի . զոր օրինակ ,

* Օ ամենայն տիեզերս կրօնից 'ի կրօնս փոխեցին ॥ . սարգ . ան . պե . կ :

Ըստ ուրեք ուրեք ներգործութիւն և ս դնի , զք , * Հալածեալ շրջեցայ 'ի քաղաքէ 'ի քաղաք ॥ . յովն . կալ :

Պատմական , այսինքն ճառողական հօլովն է , յորում նշանակի իրն իբր առարկայ պատմելոյ , կամ ասելոյ , և կիմառնելոյ ինչ վասն նորա . զք , Օ տնկոյ . զփայտէ . զծագմանէ . ևն : Արոց յոգնակին լինի , Օ տնկոց . զփայտից . զծագմանց . և այլն :

Վործիական հօլովն է , յորում նշանակի իրն իբր միջնորդ՝ կամ գործի , 'ի ձեռն որոյ առնեմք ինչ . զք , Սուսերաւ . գլխով . եղնգամք . ևն : Արոց յոգնակին լինի , Սուսերօք . գլխովք . եղնգամքք . և այլն :

Պարառական հօլովն է , յորում նշանակի իրն իբր պարառեալ կամ փարեալ իւրիք՝ զք , Օ քաղաքաւ . զսեղանով . զտամբ . և այլն : Արոց յոգնակին լինի , Օ քաղաքօք . զսեղանովք . զտամբք . և այլն :

Վերգոյական հօլովն է , որով նշանակի իրն իբր այն ինչ , յորում լինի մնալ , կամ կալ , և կամ լինել . զք , 'Ն տապանակի . յատենի . 'ի լերին . և այլն : Արոց յոգնակին լինի , 'ի տապանակս . յատեանս . 'ի լերինս . և այլն :

Ըստ գիտելի է , զի նաև եզակի նախդրիւ տրականն փոխի ներգոյականի վարի բնմ ուրեք՝ դրեթէ յամ հօլովմունս . որգոն , 'Ն բանի , կիմ 'ի Բան . 'ի քաղաքի . կիմ 'ի քաղաք . ևն . Ը որում եզաք յառաջին մասին :

Վոչական , կի՛հ հոչական հոլովն է , յորում նշանա-
կի իրն իրբև կոչեցեալ . զոր օրինակ , սվ աղգ անհա-
ւատ . սվ կին դու . ս տր . ս արք . ս ոսկերք . և այլն :
Լս յ հոլով բազում անգամ առանց կոչական մասն-
կանց ևս ձևանայ . զր , * Բժիշկ՝ բժշկեալ զանձն քոյ ||
դու . փոխանակ ասելոյ . սվ բժիշկ :

ԳՎՈՒԽ ԺԼ :

Հաղագիս հոլովմանց անուանն :

Հոլովմունք անուանց են պէսպիսուիք վերջաւո-
րութեց նոցա 'ի սեռական և 'ի գործիական հոլովս
միանգամայն : Իբր զի այն անուանք , որք ըստ սեռա-
կանին՝ միանգամայն և ըստ գործիականին՝ այսպիսի
ինչ վերջաւորութիք յանգին , կացուցանեն զայս ինչ
տեսակ հոլովման . որգոն , Բան , բանի , բանիւ : Եւ
որք այնպիսի ինչ վերջաւորութիք յանգին , կացու-
ցանեն զայն ինչ տեսակ հոլովման . որգոն , Բղբիւր ,
աղբեր , աղբերք :

Եւ քանզի այսպիսի վերջաւորութիք լինին առ հա-
սարակ քսան օրինակաւ , հոլովմունք անուանց ևս հա-
մարին քսան . որոց չորեքտասանքն ասին հասարակք ,
կամ տարածականք , և վեցքն մասնաւորք կամ յա-
տուկք :

Հասարակքն են սոքա , Բառ , ի , իւ . Բաղաք , ի ,
աւ . Գետ , ոյ , ուլ . Եկեղեցի , ւոյ , եաւ . Բղեղն ,
ան , ամբ . Եղուի , եան , եամբ . Գառն , ին , ամբ .
Օգեստ . ու . ու : Փոքր . ու . ումբ . Բղբիւր . եր .
երբ : Բտղ . եղ . եղբ . Տրդատ . այ . աւ : Եսայի .
եայ . եաւ : Հայաստանեայք . եայց . եօք :

Ոքա եթէ միայն ըստ վերջաւորութե եզակի սե-
ռականացն առցին . թուին ութ՝ ըստ ութից յան-
գիցս . ի . ոյ . ան . ու . այ . ին . եղ . եր . որգոն : Բառի .
կամ քաղաքի . գետոյ . կամ եկեղեցւոյ . աղեղան .
կամ նեղութեան . զգեստու , կամ փոքու . տրդա-
տայ , կի՛հ եսայեայ . գառին . աստեղ . աղբեր : Լս յսո

քիկ հօլովմունք կոչին հասարակ . զի իւրաքանչիւր սոցա՝ բազում անուանց հասարակ է . իբր զի բազում անուանք հօլովին ըստ օրինակի սոցա :

Իսկ մասնաւորքն են սոքին՝ Տէր . տեառն . տեւամբ : Հայր . հօր . հարբ : Քոյր . քեռ . քերբ : Աին . կնոջ . կնաւ : Գիւղ . գեղջ . գիւղիւ : () ր . աւուր . աւուրբ : Սոքա ասին մասնաւոր կամ յարակ , զի ըստ օրինակի իւրաքանչիւրոց ՚ի սոցանէ՝ մի կամ երկու անուն հօլովի , և կամ բարդեալքն այնր անուան . որ պէս եղաք յառաջին մասին :

Հայտոսիկ հօլովմունտ բովանդակին ամ անուանք լեզուիս հայոց , թէ անեղականք իցեն , և թէ անյողնականք . թէ յատուկք իցեն , և թէ ընդհանուրք . ոչ թէ ամենեքին ընդ ամենեքումբք , այլ ոմանք ընդ առաջնով . ոմանք ընդ երկրորդիւ . և այլք ընդ այլովք . և բազումք ևս ընդ երկօրումբք . որոց քաջ կարես հասու լինել՝ ոչ կանոնօք , և ոչ օրինակօք . այլ յաճախ ընթերցմամբ գրոց , և ՚ի բառարանի դեգերելով . զի ՚ի նմա եգեալ կան ըստ կարի հօլովմունք ամ անուանց :

Մ. յ. աստ գիտելի է , զի կան անուանք ինչ՝ որք ՚ի հօլովին ընդ զանազան հօլովմամբ՝ փոխեն զնշանաւու թիս իւրեանց . որպէս : Անուն գալ ՚ի հօլովին՝ ի . իւ . ից . իւք . նշանակէ զքէլէփէ . որ է գործի ինչ տանջանաց : Իսկ ՚ի հօլովին՝ գայոյ . ոյ . և այլն . նշանակէ զլուրտ գազանն :

Անունս քոչ ՚ի հօլովին՝ ի , իւ , ից , իւք , նշանակէ զխուչափողն : Իսկ ՚ի հօլովին՝ փողոյ . փողով . և այլն , նշանակէ զպօռու և զգուռնա . ևս և զգրամ :

Անունս գեղ ՚ի հօլովին՝ գեղոյ . ոյ . ոց . ոյք . նշանակէ զգեղեցկու թի : Իսկ ՚ի հօլովին՝ գեղի , իւ , ից , իւք , նշանակէ զգիւղ :

Անունս որի ՚ի հօլովին՝ ոյ , ոյ , ոյք . նշանակէ զտունի խաղողոյ . քի է ասմա : Իսկ ՚ի հօլովին , ու , ու , ուց , ուք կի՞ օք , նշանակէ զծնունդ կովու . քի է տանա :

Անունս օք ՚ի հօլովին՝ ոյ , ոյ , ոց , կի՞ ից , ոյք , նշանակէ զմին ՚ի չորից տարերաց . քի է հաւա : Իսկ ՚ի

Հոլովին՝ ի, իւ, ից, իւք նշանակէ զազանելիս ոտից :
 Բ՛ստ այսմ են և այլ քանի մի անուանք :

Եւ ևս գիտելի է, զի գտանին բազում անուանք
 ածականք, որք ոչ փակին ընդ իւիք Հոլովմամբ, այլ՝
 նախգրիւ միայն Հոլովին. որքոն, Բզազուն. բնիկ.
 զուրկ. խիտ. համակ. նկարէն. ուրախ. պատիր. տրը-
 տում. ևն : Բ՛ստ այսմ և բարդեալք բազումք յոյժ.
 որքոն, լայնատարր. խաւարասնունդ. հրաշազննին.
 մահահրաւէր. որոգայթադիր. սաղարթափթիթ.
 օձաջամբ, և այլք բազումք :

Բ՛ստ այսմ են և բազում անուանք գոյականք,
 որք նախգրիւ միայն Հոլովին. կմ ը բայս յարեւով
 վարին. զոր օրինակ : Յամբո՛ գործոյ ժամանեւ. պար-
 կաւ կալ. յորտասր լինեւ. ևն :

Գ Լ Ո Ի Խ ԺԻ :

Յաղագս Գերանուան :

(Թ)է զե՛նչ և քանիպարի՛ն իցէ դերանուանն :

Գերանունն է մասն բանի՝ որ փոխանտի անուան
 դնի, և առ որոշեալ դէմն վերաբերի. ոն՞ Գ՛ու, իմ-
 այն. որ. ևն. զոր օրինակ, * Իմ կամքս է այն, զոր
 դու սիրես ॥ Լամբ : ուր գերանուանքս՝ այն. որ. ի՛մ,
 եդեալ են փոխանակ անուանց. այնն փոխանակ ա-
 նուանն՝ որ ցուցանէ զկամեցեալ իրն : Արն փոխանակ
 անուանն՝ որ ցուցանէ զսիրեցեալ իրն : Իսկ դրան՝ փո-
 խանակ անուանս Թ՛ : Աոյսպէս և ի՛մն՝ եդեալ է ՚ի
 վր անուանս կամբ՝ ՚ի տեղի անուան կամեցողին. իսկ
 յօդս ս՝ զկամն որոշեալ է առ առաջին դէմն : Յորս
 ոն՞ տեսանի՝ զերկուս պաշտօնս վարէ գերանունն.
 Ա՛ր՝ զի փոխանակ անուան դնի. ըստ որոյ և կոչի դե-
 րանուան. այսինքն փոխանակ անուան. քանզի դերն
 փոխ լի. յոր միտ ասեմք, դերադատաւոր. դերասան.
 դերամտանեւ. և այլն : Եւ երկրորդ՝ զի ցուցանէ,
 թէ յոր դէմն վերաբերի անունն՝ որոյ փոխան դնի. և

վասն այսորիկ ասացաք 'ի սահմանի, թէ դերանուենն առ որոշեալ դէմն վերաբերի. զորմէ ունիմք ևս խօսիլ 'ի յաջորդ գլուխդ :

Ղերանուենն է հնդապատիկ, Ղահկան, ցուցական, ստացական, յարաբերական, և դիմորոշական :

Ղահկան դերանուենն է, որ գոյականապէս և որոշակի նշանակէ զդէմն իրին. որպիսի են սոքա. Ղս. դու. ինքն. իւր, իւրեան : Ղնդ որս դասին և սոքին. Բեանդ և իբերաց. որք պակասին 'ի յուղղականն :

Յուցական դերանուենն է, որ փոխանակ անուան եղեալ իբր յանդիման ցուցանէ զայն, զորմէ է բանն. որպիսի են սոքա. Սա. դա. նա. այս. այդ. այն. սոյն. դոյն. նոյն :

Ստացական դերանուենն է, որ ածականապէս նշանակէ զիմն որոշեալ դիմաց. որպիսի են սոքին. Ղմ. քոյ. մեր. ձեր. իւր. իւրոյ : Օ ի սոքա նշանակեն զայն ինչ, որ է այսր կի՛ֆայնր դիմի, թէ մարմին իցէ այն, թէ հանդերձ, և թէ դործք. ևն. դր, յասելն, * Տուր 'ի խրատ զսիրտ քոյ ॥ առաւել. դերանուենս քոյ՝ ցուցանէ զիմն երկրորդ դիմի, առ որ է այս բան :

Ղլ որպէս յայտնի տեսանես, այսոքիկ դերանուանք կազմին 'ի սեռականաց էական դերանուանցս : Ղս. դա. նա. դի. դի. դի սեռական սոցա լինի : Ղմ. քո. մեր. ձեր : Ղլ վասն այսորիկ բազում անգամ նաև սեռական հոլովք ցուցական դերանուանցս՝ Սա. դա. նա. յաւելմամբ, տառին իբրև ստացական վարին. որդոն. Սորայ կի՛ֆսորայն, դորայ կամ դորայն, նորայ կամ նորայն. սոցայն, դոցայն, նոցայն. որոց յոգնականն լինի, Սորայք, դորայք, նորայք, սոցայք, դոցայք, նոցայք : Ղլ սոքա հոլովին լի հոլովման ստացական դերանուանս քոյ, քոյոյ. սրդոն. սորայ. սորայոյ. նորայն, նորայոյ, դոցայք, դոցայոց. ևն :

Յարաբերական դերանուենն է, որ 'ի կարգս բանի՝ զօրութեամբ յառաջ բերեալ զնախորն թաց կի՛ֆ զյաջորդ բառն՝ դնի 'ի տեղի նորա, յոր հոլով և պահանջեսցէ բանն. և է բառս այս՝ որ. դր, * Ղրանեալ է այր, որ եգիտ զիմաստութի ॥ առաւել : Ղլ բառս որ՝ եղեալ է 'ի տեղի անուանս՝ այր :

Վիմորոշականքն են երեքին տառքս այսոքիկ , . .
 ր . ն . որք իբր յօղք ինչ յարեւով 'ի մասունս բանի՝
 որոշեն զդէմն նոցա . րթ , * իմ կամքս 'ի քո ճշմարիտ
 ճանապարհիդ սէրն է ॥ . լամբ :

Սոքա թէպէտ լը գերանուանս դասին , բայց չեն
 յատկապէս գերանուն . զի ոչ դնին փոխանակ անուան .
 բայց քանզի որոշեն զդէմն բառից , և լինին ևս սկզբ
 բունք կի՛մ վերջատառք , յորոց բղխեն ցուցական գե-
 րանուանքս , Սա , դա , նա . սոյն , դոյն , նոյն . այս ,
 այդ , այն . վասն այսորիկ առ գերանուանս վերաբե-
 րին :

Գ Լ Ո Ի Խ Ժ Վ :

Յաղագս Պարագայից գերանուանց :

Պարագայք գերանուանց են հինգ . Տեսակ , դէմք ,
 թիւ , հոլով , և հոլովունն : Սմանք եօթն դնեն , յաւե-
 լեալ 'ի սոսա զսեռ և զձև . բայց յայտ է՝ թէ 'ի գե-
 րանուանս սեռ ամենեւին ոչ գտանի 'ի լեզուի մերում
 ևս և ոչ ձև . զի գերանուանք 'ի բարդիւն լը այլ մասունս
 բանի՝ ոչ ևս մնան գերանուն , այլ՝ փոխադրին յանուն .
 սրգոն , Իւրակերտ . նոյնահրաշ . ինքնակալ . քոյի-
 նաչունչ . ևն . որք իբր անուն վարին :

Տեսակք գերանուանց են երկու , ուր և անուանցն .
 այսինքն նախատիպք , և ածանցականք : Նախատիպք
 են սոքին . իմ . քոյ . մեր . ձեր . նոյն . իւր . ինքն . և
 ևս՝ սորա . դորա . նորա . ևն :

Իսկ ածանցականք են նոյն նախատիպ գերանուանք
 վերածեալք յայլ իմն եղանակ նշանակելոյ 'ի ձեռն
 աննշան մասնկանցս , ային , ին , ալան , աւոր , ուրի . սր
 գոն . մերային , քոյին . իւրական . ինքնաւոր . նոյնուի :

Վէմք գերանուանց են յայտարարուիք որոշեալ
 անձանց . կի՛մ այնց՝ որք իբր գիմաւոր նկատին , և իբր
 գիմօք որոշին . և են երբեակ . առաջին , երկրորդ ,
 և երրորդ :

Ղաաջին դէմքն յայտ առնէ զայն , յորմէ է բանն .
 կի՛մ որ իսօսի . սրգոն , Լս . թե :

Երկրորդ դէմքն յայտ առնէ զայն , առ որ է բանն . կի՛մ լէ ում լինի խօսիլ . որդոն , Ղառ . դոռոք :

Երրորդ դէմքն յայտ առնէ զայն , զորմէ է բանն . կամ յազազս որոյ լինի խօսիլ . որդոն , Սա . Ինչն . Իար :

Առ այս երրորդ դէմս վերաբերին և այլ ամենայն դերանուանք . թէ ստացականք . որդոն , Ղճ . Թր . Իոյ . Յեր . Իար . ոյ . և թէ ցուցականք . որդոն , Սա . դա . այս . այր . այն . սոյն . դոյն . նոյն . զի սոքա ամենէքին յայտ առնեն զայն ինչ , զորմէ լինի բան : Եւ սակայն համեմատու թեամբ միմեանց՝ ՚ի սոսա ևս կան որոշմունք երից դիմաց . զի ՚ի ստացականս՝ ոմանք նկատին լի առաջին դիմաց . որդոն , Իճ . Թր . Իմային . Թերոյին . ևն . վասն զի սոքա ցուցանեն զայն ինչ , որ է առաջնոյ դիմի : Ոմանք նկատին լի երկրորդ դիմաց . որդոն , Իոյ . Յեր . Իոյին . Յերոյին . ևն . զի սոքա ցուցանեն զայն ինչ , որ է երկրորդ դիմի : Եւ ոմանք նկատին լի երրորդ դիմաց . որդոն , Իար . Իարային . ևն . զի սոքա ցուցանեն զայն ինչ , որ է երրորդ դիմի :

Սոյնպէս և ՚ի ցուցականս համեմատու թեամբ միմեանց՝ ոմանք նկատին իբր առաջին , կամ իբր մօտաւոր . որդոն , սա . այս . սոյն : Ոմանք նկատին իբր երկրորդ , կամ իբր մերձ մօտաւորին . որդոն , դա . այր . դոյն : Եւ ոմանք նկատին իբր երրորդ , կամ իբր հեռաւոր . որդոն , նա . այն . նոյն :

Իսկ դերանունս Ինչն՝ յորժամ առանձինն վարի , թէպէտ յերրորդ դէմս վերածի , սակայն յորժամ լի դերանուանս յարի , կարէ վերաբերիլ յառաջին և յերկրորդ դէմս ևս . զր , * Սա Ինչն սպանի զնա || . Վարդ հարց : * Ղու Ինչն խառնեցար ՚ի սոյն մաքրու թի || . նար : * Սոյն Ինչն զգժոխս աւերեցեր || . շար :

Թիւք դերանուանց են երկու . եզական , և յոգնական : Օ ՚ի սր իբրև զմիաւոր նշանակէ՝ ասի եզական , թէ միոյ դիմի իցէ , և թէ բազմաց . որդոն , Ղս . դու . իմ . մեր . ձեր . ևն : Իսկ որ իբրև զբազումս նշանակէ՝ ո՛ր և իցէ դիմի , ասի յոգնական . որդոն , Մեր . դուք . մերք . իմք . նոքա . և այլն :

Հորովք դերանուանց են տասնապատիկ փոփո-

խումն մի և նոյն դերանուան ը օրինակի անուանց . որոց և բազմաց կուականքն պակասին , ը որում է դաք յառաջին մասին :

Հոլովմունք դերանուանց են պէսպիսութիւնք հոլովից նոցա . որպէս և անուանցն . ը որում յայտ է յե դելոց յառաջին մասին անդ :

Ըյլ գիտելի է նախ , զի ցուցական դերանուանքս՝ Սոյն , որոյն , նոյն՝ որք իբր ածական վարին՝ նախգրիւ միայն հոլովին . իսկ յայլ հոլովն լրանան ՚ի ցուցական դերանուանցս , Սա , դա , նա , ՚ի հոլովիլ նոցա Սա , սորին . դա , դորին . ևն , ՚ի վարիլ սոցա ածականապէս որպէս եգաք յառաջին մասին :

Վիտելի է երկրորդ , զի ցուցական դերանուանցս , Ըյս , այդ , այն . սա , դա , նա , եզակի արականքն , որք են՝ այսմ , այսմիկ . այդմ , այդմիկ . այնմ , այնմիկ . սմին . դմին . նմին . յորժամ յարին յառաջոյ ՚ի բացառական՝ նաև ՚ի պատմական հոլովս անուանց , իբր բացառական և պատմական վարին . դր , * Վազում ծնանին հերձուածք յայսմ պատճառ է ॥ Ըորհաւէ :

* Ըյսուհետև զգոյշ լեր յայդմ ամէ ॥ . ՚ի վարս ոսկեք :

* Ընին զսուրբսն յայնմ անապատէ ॥ . եղիշէ :

* Ըհան ՚ի նմն քաղաքէ ասորի քրիստոնեայս ॥ . նոյնն :

Եւ դարձեալ այսորիկ ցուցական դերանուանք , իմ են այս , այդ , այն , երբեմն եզական ձայնիւ՝ վարին իբր յոգնական , մանուանդ յուղղականն . դր , * Ըրհու այլ ևս քահանայք երանելիք , որոց անուանքն են այս՝ սամուէլ և արբահամ ॥ եղիշէ :

* Ըյդ և ՚ի մարդիկ երեւին ॥ . նոյնն :

* Ըյն էին իղձք ազօթից նոցա առ ամ ॥ . նոյնն :

Վիտելի է երրորդ , զի ստացական դերանուանց եզակի սեռականքն՝ բազում անգամ իբր արական վարին . դր , * Սրդեակ՝ ՚իմոյ իմաստուէ անսմ ॥ . փոխանակ ասելոյ , իմում իմաստուէ . սուսէ :

* Տուր փրկուի թոյոյ ծառային ॥ . այսինքն քում ծառայի . նար :

* Ընկարօս է ամ . այլ սական Քաղցեալ և կարօս է Վերոյ փրկուէ ॥ . այսինքն մերում փրկութեան . նար . երգ :

* Թողու զԹագաւորութիւն՝ արտաշրի որդւոյ Իւրոյ ॥ .
այսինքն որդւոյ իւրում . յովն . էալն :

Ալ ներհակ այսմ , եզակի տրականք սոցա բազում
անգամ իբրև սեռական վարին . զթ , * Ամսն խոռ
վունէ հաշտարանք ॥ . փոխանակ ասելոյ , իմոյս խոռ
վունէ . նար :

* Մ ներքոյ Գոմդ Թագաւորութեմք գրաւեալ ॥ . լամբ .
պար :

* Ի նկալ զերգաբան օրհնութի մերոսն լեզուի ॥ . նար :

* Օ համայնն հաւաքեսցէ առ ՚ի նոյն մարմին Իարոսն
գլխոյ ॥ . նոյնն :

Իսկ Գոմն՝ ուրեք ուրեք դնի ևս փոխանակ սեռա
կանի էական դերանուանս՝ դոս , իբր յատկացուցիչ .
զոր օրինակ , * Առ քեզէն ՚ի Գոմդ լրութէ փառա
ւորեալ իսկ էիր ॥ . փոխանակ ասելոյ , ՚ի քո լրութէդ .
նարեէ :

Ղիտելի է չորրորդ՝ զի յարաբերական ոքն բազում
անգամ յարի ՚ի բառսդ , Ինչ . Ռանգամ . ոք . և վարի լը
նոսա իբր մասնական անուն . բայց այնու ևս՝ ոչ կորու
սանէ զյարաբերականութի իւր . որպէս երևի ՚ի սո
սա . * Ար Ինչ հայի ոք , ՚ի նոյն փոխի մտօք ॥ . նար . երգ :

* Ար Ռանգամ ունի զոխութիւնն ՚ի սրտի իւրում , դեղ
բժշկութե նորա չիք ॥ . ճծբ :

* Ար ոք աստ սիրէ երկայնել զբանս վարդապետութե ,
զգիրսն յովհաննու ընթերցցի զոսկեբերանին ॥ .
Իգնար :

Մ վախճան դերանուանց ամենայնի գիտելի է և
այս , զի ՚ի հօլովս սոցա գտանին ուրեք ուրեք խոտոր
մունք ինչ արտաքոյ սովորութե . յորոց գործածուէ
պարտ է զգուշանալ :

(Թ)է զԷնչ և շանիպարիչ Իցե Բայն :

Բայն է մասն բանի, որ զառս, կի՛մ զկիրս, և կամ զլինելու թիս իրաց՝ լը ժամանակաւ նշանակէ՝ լը որու շեալ գիմաց . վասն զի յայտ առնէ կի՛մ զներգործել իրաց յայլս, կի՛մ զկրել նոցին յայլմէ, և կի՛մ լոկ զգործել և զլինել նոցին՝ լը այս ինչ՝ կի՛մ լը այն ինչ գիմաց . որպէս յասելն, * Ա՛հա մեղաւորք շարեցին զաղեղունս իւրեանց ॥ . սաղ . նշանակի ներգործել մեղաւորացն յաղեղունս . և այս՝ յերրորդ դէմն : Աչ յասելն, * Վ՛ազաղոնի նետից բանսարկուին Վերաորեցայ ॥ . շար . նշանակի կրելն անձին ՚ի նետից բանսարկուին . և այս՝ յառաջին դէմն . Աչ յասելն, * Ա՛խ՛նէր դու հաւատարիմ յամենայնի ॥ . Ժողով . նշանակի հաւատարիմ լինելն անձին . և այս՝ յերկրորդ դէմն :

Արդ՝ որովհետև յատուկ է գործողուեց և լինելուեց ՚ի ժամանակի կատարիլ, կի՛մ ՚ի ներկայն, կամ յանցեալն, և կի՛մ յապագայն, բայն ևս՝ որ զգործողուին և զլինելուիս նշանակէ, ցուցանէ զնոսին լը ժամանակաւ . կի՛մ լը ներկայիւ . որդոն, գործեմ . կամ լը անցելով . որդոն, գործեցի . և կի՛մ լը ապագայիւ . որդոն, գործեցից :

Բայք բաժանին յերկուս, յէական և յառքական . Աականք են, որք նշանակեն սոսկ զլինելուի իրին լը ժամանակաւ . և են չորեքին . Աղանիմ . Լինիմ . Էմ, և Գմ :

Ասկ առքականք են, որք զառնել կի՛մ զկրել իրացն նշանակեն . ար, Տնկեմ . ընում . աղօթեմ . մատչում . ազատիմ . ևն :

Առքական բայք բաժանին ՚ի կանոնաւորս և յանկանոնս : Անոնաւորք են, որք ՚ի խոնարհմունս, կի՛մ ՚ի վերացմունս իւրեանց՝ հասարակօրէն անփոփոխ մնան ձայնիւ, անթերի ժամանակաւ, և անպակաս

դիմաւ , և են սորա . Ղարծեմ : Հատանեմ . զօրացուցանեմ . աղամ . խոստանամ . թողում . ընկենում . և որք լը սորօք պարունակին :

Իսկ անկանոնք են , որք ոչ խոնարհին ամբողջ . այլ կամ պակասին 'ի ժամանակս ինչ , և յայլոց լրանան . և կոչին պակասաւորք . և են սորա . Սւտեմ , կերայ . ըմպեմ , արբի . ճանաչեմ , ծանեայ . ունիմ , կալայ . երթամ , չոգայ : Կամ զարտուղին , այսինքն այլայլին ձայնիւ 'ի խոնարհին իւրեանց . և կոչին զարտուղիք և են սորա . Բանեմ , արարի . գնեմ , եղի . լսեմ . լուայ . տամ , ետու . մեղանչեմ , մեղայ . յառնեմ , յարեայ . գամ , եկի : Եւ կի՞ երբեմն պակասին յառաջին և յերկրորդ գէմնն , ևս և 'ի յօգնականն . և կոչին դիմազուրկք . որպիսի են սորա . Յաջողէ . լուսանայ . թուի . հարկ է . և որք ընդ սորօք են , զորոց ամենեցուն զխոնարհմունսն եղաք առանձինն յառաջին մասին :

Գ Լ Ո Ի Խ Ժ Կ :

Յաղափս պարսպայից բայից : Եւ նախ յաղափս Սեռից :

Պարագայք բայից են պէսպէս հետեւմունք որպիսու թէ նոցա . և են ինն . Սեռ , ձև , ատակ , թիւ , գէմք , ժամանակ , եղանակ , խոնարհմունք , և լծորդութիք :

Սեռք բայից , որք 'ի հնոց կոչին տրամագրութիք , են որոշմունք նոցա լը ներգործականուէ , լը կրաւորականութէ , լը հասարակ լինելոյ և լը չեզօք գոլոյ : Սւտի և են չորք . Սերգործական , կրաւորական , հասարակ և չեզօքական :

Սերգործականք են նոքա , որք նշանակեն զներգործել իրին 'ի կրօղն՝ որով և իցէ գործողութի , թէ արտաքին իցէ , և թէ ներքին . որգոն , խորտակեմ . գովեմ . սիրեմ . եւ : Արովք նշանակի այնպիսի գործողութի , զոր խորտակողն՝ գործով ներգործէ 'ի խորտակեալն . գովօղն՝ բանիւ ներգործէ 'ի գովեալն .

սիրօղն՝ սրտիւ ներգործէ 'ի սիրեցեալն . Գր , * Վու
խորհանէցեր զգլուխ վիշապին ॥ . սաղ : * Վա՛նքսն զբեզ
ընկերն , և մի քո բերան ॥ . առաջ : * Սիրեացո՛ւս զա՛ծ ,
որ սիրեացն զմեզ ॥ . Խորհու՛ :

Կրաւորականք են , որք նշանակեն զկիրս իրին յու
մեքէ ներգործողէ՝ որով և իցէ կրելուք . որպո՛ն ,
Խորտակիմ . գովիմ . սիրիմ , ևն . յորս նշանակի կրե
լուծիւն խորտակելոյն 'ի խորտակողէն . գովեցելոյն
'ի գովողէն . սիրեցելոյն 'ի սիրողէն . Գր , * Սէմք Խոր
հանէցան 'ի նմանէ ॥ . նառա՛մ : * Մերան իմաստնոց գո
վէ 'ի մարդկանէ ॥ . առաջ : * Որ սիրէն զիս , սիրեացի 'ի
հօրէ իմմէ ॥ . յով : :

Հասարակք են , որք միով կրաւորական ձայնիւ
մերթ զներգործուծի իրին առ կրօղն նշանակեն . և
մերթ զկրելուի իրին յումեքէ ներգործողէ . որպո՛ն ,
Նանիմ . դատիմ . ևն : Որովք մերթ նշանակի ներ
գործուծի ծնողին , և դատողին . և մերթ կրելուծի
ծնելոյն , և դատելոյն . Գր , * Սի որ Գաթեացի զընկեր
իւր , զի մի և ինքն Գաթեացի յարդարադասն այ ॥ .
Դոր :

Ներգործականք են՝ որք զներգործուծի գործողին
յիմքեան 'ի գործօղն նշանակեն . և ո՛չ իբր 'ի ներ
գործողէ առ կրօղ որ . Գր , * Վախորհեալ երբեքս ամբա
րիշտն առանց ուրուք հալածելոյ ॥ . առաջ :

Սորա կի՛ ը ներգործական բայից լծորդին , և կի՛
ը կրաւորականաց : Որք ը ներգործականաց լծօր
դին , կոչին ներգործակերպ չեզոքականք . որպիտի են
այն ամենայն չեզոքական բայք որք յանդին 'ի է՛մ , 'ի
ա՛մ , և ո՛մ՝ Գր , Վիմեմ . գնամ . զարժնում . և որ ը
սորօք :

Իսկ որք ը կրաւորականաց լծորդին՝ կոչին կրա
ւորակերպ չեզոքականք , կամ ձայնակրականք . որ
պիտի են այն ամենայն չեզոքական բայք որք 'ի է՛մ յան
գին Գր , Հաշտիմ . սնանիմ . փախչիմ . և որ ը սորօք :

Մ. Մ. Գիտելի է . զի են բազում բայք ներգործա
կանք՝ որք երբեմն իբր չեզոքական վարին . որպո՛ն ,
ասպատակեմ . ծագեմ . յաճօխեմ . կարդամ . համ
բառնամ . յաւելում . զեղում , ևն :

Եւ լի հակառակն՝ են բազում չեզոքական բայք , որք իբր ներգործական վարին . որդոն , լուեմ . խընայեմ . մաղթեմ . ստեմ . փայլեմ . անդիտանամ . ըզձամ . վստահանամ . ևն :

Կան և բազում կրաւորական բայք բղխեալ ՚ի բայից եղեւոց լի Գործեմիւ և լի հասանեմիւ , որք իբր ձայնակրական վարին . որդոն , ամբոխիմ , բորբոքիմ , զինիմ , թաւալիմ , կանգնիմ , ձկտիմ , գտանիմ , լքանիմ . ևն :

Գիտելի է ևս՝ զի գրեթէ ամենայն ձայնակրական բայք , որք ըստ կրաւորականի Գործեմ բային լծորդին , իբրև զներգործակերպ չեզոքականս ևս խոնարհին . որդոն , հակառակեմ , հրաժարեմ , սարսափեմ , բնակեմ , ևն :

Հարկաւոր է ևս գիտել , զի բազում բայք կան՝ որք փոփոխուի իւր լի այլ և այլ լծորդութիւն խոնարհին . որդոն , խինջամ , խինջեմ : Նփամ , ծփիմ : Կարօտիմ , կարօտանամ : Օբաղնում , զբաղիմ : Թաղչիմ , թաղչում , ևն :

Գ Լ Ո Ի Խ Ժ Օ :

Յաղագս . Չեոյ Բայից :

Չեք բայից մտածին լի պարզուէ , լի բարդուէ , և լի բաղադրուէ նոցա . ուստի և բայք երեք են լի ձևոյն . Պարզ , բարդ , և բաղադրեալ : Պարզ բայն է , որ զպարզ նշանակուածի առից կի՛ կրից ցուցանէ . որդոն , լսեկանեմ . հարկանեմ . զարդարեմ . ստեղծում . ևն :

Բարդ բայն է , որ զօգեալ լի այլում նշանական բառի՝ զերկուս իմացուածս առից կի՛ կրից միայարէ . որդոն , լհաբեկեմ . յաղթահարեմ . զեղազարդեմ . կենդանաստեղծում . և այլն :

Ոմանք յայսպիսի բայից վասն բարդութե՛ այլազգ խոնարհին , քան զոր յառաջն . զք , լսերեմ , բերի , բեր . ընծայաբերեմ , բերեցի , բերեալ : Հարկանեմ , հարի , հար . յաղթահարեմ , հարեցի , հարեալ . ևն :

Բաղադրեալ բայն է, որ բաղկանայ բաղադրական մասնկամբք . և այս՝ քառակի :

Ախ՝ առ 'ի զարդ, կամ առ 'ի եղանակաւորել զնշանակուածին . որդոն, Տարակորդեմ . Բաշխուսեմ . Բայորոշեմ . վիճակաւորեմ . յանկաւորեմ . ևն :

Արկորդ՝ առ 'ի փոփոխումն նշանակուածն . դք , Աւարդեմ . սագտանեմ . ագիտանամ . ածգոհեմ . արքաբերեմ . համաձայնեմ . արամաբանեմ . ևն : Այլ յաճախ գործածուածն մասնկանցս՝ արք . համ . հակ . արամ . արք . Բող . ևն , աղաւաղէ զչնորհս կազմուածն բայից :

Արրորդ՝ առ 'ի վերածել յայլ իմն լծորդուածի 'ի ձեռն մասնկանս՝ ան . դք , ()ծեմ , օծանեմ . բուծեմ , բուծանեմ . ևն :

Չորրորդ՝ առ 'ի յաճախականապէս նշանակել 'ի ձեռն յօդիցս , որ , սր , ս , զ , և այլն . դք , Այոցել . խոցութել . պատել , պատապել , քակել , քակապել . գրգռել , զգրգռել . եղծանել , զեղծանել . ընկենուլ , զընկենուլ . անցանել , զանցանել . և այլն :

Այս կերպ յաճախման բայից լինի երբեմն նաև կրկնելով առաջնոյ վանկի բային . որդոն , Բեկել , Բեկբեկել . կցել , կցկցել . բախել , Բաբախել . Չաղխել , Չաղխաղխել . շրջել , շրջշրջել . և այլն :

Ի ինի այս երբեմն նաև կրկնմամբ նոյն բայի . դք , * Օարթիցուք զարթիցուք յարբեցուածն սատանայական մուրորուածեց || . Խորով :

Արբեմն գրուածն դերբայից այնք բայի . դք , * Արթալով երթայր և զօրանայր || յովաննէս հաթ :

Արբեմն գրուածն աներևուածին , կմ ըունելուածն ըանցելոյն . դք , * Ան բազումք՝ որ սիրել սիրեն , այլ ոչ սերաիւ || . սարգիս :

Այլ զգուշանալ պարտ է 'ի յաճախելոյ զայսպիսիս :

Արբեմն գրուածն արմատոյ բային . զոր օրինակ ,

* Արհամարհանօք արհամարհեն զօրէնսդիրն || . յաճախ . Է :

Յոգափո Տեսական Բայից :

Տեսակը բայից որոշին ըն նախնական և ըն անցողական նշանակուէ իւրեանց . ուստի և բայք կրկին են ըստ տեսակին . նախագաղափար , և անցողական :

Նախագաղափար կի՞մ նախատիպ բայք են , որք կան 'ի նախկին նշանակու թէ իւրեանց , թէ՛ պարզ իցեն , թէ՛ բարդ , և թէ՛ բաղադրեալ . և ցուցանեն զառս գործողին միայն . որպոն , Վարկանամ . խոնարհիմ . զարթնում . ևն : Սորա կոչին նախագաղափար , կի՞մ նախատիպ , զի են իբր գաղափար և տիպ անցողականաց . մանաւանդ թէ՛ իբրև արմատ նոցին :

Իսկ անցողական կի՞մ ածանցական բայք են , որք 'ի ձեռն ածանցակերտ մասնկանս ուղան՝ ածին և իբր թէ անցուցանին յայնպիսի որպիսու թի , որով նշանակեն ոչ միայն զգործողու ձեռնողին , այլև զգործել կրողին 'ի ներգործելոյ անտի արարողին . որպոն , Վարկացուցանեմ . խոնարհեցուցանեմ . զարթուցանեմ . ևն . այսինքն առնեմ , զի այլ ոք բարկացի . առնեմ , զի խոնարհեցի . առնեմ , զի զարթուցի . ևն :

Վրդ՝ թէպէտ բազում բայք լինին անցողականք , բայց առաւելապէս չեզոքականքն . իր , Ղեմեմ , ճեմեցողանեմ . մերձենամ , մերջեցողանեմ . զայրանամ , զաչացողանեմ . ևն : Իչ յաճախագոյն ևս ձայնակրականքն . իր , Օ կծիմ , զչեցողանեմ . թմրիմ , ըմբեցողանեմ . խոնջիմ , խոնջեցողանեմ . սողիմ , սողեցողանեմ . հանգչիմ , հանգողանեմ . ևն :

Ի՞յլ զիտելի է՝ զի ոմանք 'ի ձայնակրական բայից՝ յանգեալ 'ի էմ՝ երբեմն իբր անցողական նշանակեն . որպոն . աշխատիմ , աշխատեմ . զբաղիմ , զբաղեմ . հնազանդիմ , հնազանդեմ . սասանիմ , սասանեմ . ևն . որք երբեմն իբր ներգործակերպ չեզոքական ևս վարին . որպէս ասացաք 'ի ԳԼ ԺԵ :

Իսկ ներգործական բայք հաղիւ երբեք փոխին յանցողականն . և եթէ հարկ լիցի վարել իբր անցողական՝ կազմեմք զայն 'ի ձեռն բայիս ԳԼ իր , * Ն թէ

ճառայ լը ունին ոչ լսէ, ընդ մկանոււնս քան լսել նմի .
այսինքն լսեցուցանեն նմա՝ գանելով զնա ընդ մկա-
նոււնս . եւնիկ :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ :

Յաղագս Թուոց, և Գեմաց Բայից :

Ասան Թուոց և դիմաց բայից սակաւ ինչ ունիմք
ասել . զի զոր ինչ խօսեցաք զԹուոց անուանց, և զգի-
մաց դերանուանց, նոքօք յայտնին լը իմիք և թիւք
և դէմք բայից : Օ ի որպէս թիւք անուանց մտածին
լը եզականութե՛ և լը յոգնականութե՛ նոցին, սոյնպէս
և թիւք բայիցն մտածին լը եզականութե՛ և լը յոգ-
նականութե՛ իւրեանց . ուստի և են երկու . եզական,
և յոգնական :

Եզականն է, որ նշանակէ զմիակի ներգործուի կի՛
կրելու թի միոյ գործողի կամ կրողի . զի, Գործեմ,
գործիմ . և այլն :

Յոգնականն է, որ նշանակէ զբազում ներգործու-
թիս կի՛ կրելու իս բազում գործողաց կի՛ կրողաց . զի,
Գործեմք, գործիմք . ևն :

Գեմք բայից են այնք, որք ցուցանեն զգործողու-
թիսն լինել որոշեալ անձին . և են երեք : Եւաջին,
Երկրորդ, Երրորդ : Եւանջի գործք և կիրք, կամ
նորա են, որ խօսի . և լը այսմ է աւաջին դէմքն .
որգոն, Գնամ . պատմեմ . եւ : Կամ նորա լը որում
լինի խօսելն . և լը այսմ է երկրորդ դէմքն . որգոն,
Գնաս . պատմես . և այլն : Եւ կի՛ նորա, զորմէ լինի
խօսիլն . և լը այսմ է երրորդ դէմքն . որգոն, Գնայ .
պատմէ . և այլն :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ :

Յաղագս Ժամանակաց Բայից :

Ժամանակք, կամ լը հնոց ամանակք բայից են,
որք ցուցանեն զառս կամ զկիրս լինել յայս ինչ, կամ
յայն ինչ ժամանակի . այսինքն, կամ ՚ի ներկայն, կի՛

յանցեալն, և կամ յաստիւսիս ուստի և են երեք.
 Վերկայ, անցեալ, և ապառնի: Այլ անցեալն քա-
 ոակի որոշի. այսինքն՝ իբր անկատար, իբր կատա-
 րեալ, իբր յարակատար, և իբր գերակատար: Այլ
 լի այսմ ժամանակք բայից ասին լինել վեց. այսինքն,
 Վերկայ, անցեալ անկատար, անցեալ կատարեալ,
 անցեալ յարակատար, անցեալ գերակատար, և ա-
 պառնի:

Վերկայն է, յորում բայն նշանակէ զառս և զկիրս
 յառաջիկայ կէտ ժամանակի, կամ այժմ նորոգ ըս-
 կսեալ. որդոն, Սարեմ, վարես, վարէ. զենում, զե-
 նուս, զենու. ևն:

Վնկատար ժամանակն, կմ լի հնոց՝ յարաձգականն
 է յորում բայն նշանակէ զառս կամ զկիրս արդէն
 սկսեալ բայց դեռ ձգի՝ ի կատարիլ. որդոն, Սարէի,
 վարէիր, վարէր. զենուի, զենուիր. ևն:

Վատարեալ ժամանակն, կամ լի հնոց՝ յարակայն
 է, յորում բայն նշանակէ զառս և զկիրս կատա-
 րեալ կամ վճարեալ. որդոն, Սարեցի, վարեցեր,
 վարեաց. զենի, զեներ. ևն:

Վարակատար ժամանակն է, յորում բայն նշա-
 նակէ զառս և զկիրս վճարեալ, և ժամանակ ինչ ևս
 ՚ի վերայ անցեալ. որդոն, Սարեալ եմ, ես, է. զե-
 նեալ եմ, ես, է. ևն:

Վերակատար ժամանակն է, յորում բայն նշանա-
 կէ զառս և զկիրս ոչ միայն վճարեալ, այլև յետ
 վճարման բազում ժամանակ ևս ՚ի վերայ անցեալ ՚ի
 վճարման անդ. որդոն, Սարեալ էի, էիր, էր. զե-
 նեալ էի, էիր, էր. ևն:

Վպառնի ժամանակն է, յորում բայն նշանակէ
 զառս և զկիրս իբր եղանելի, կամ իբր հանդերձեալ
 առ ՚ի լինել. որդոն, Սարեցից, վարեսցես, վարես-
 ցէ. զենից, զենցես, զենցէ. ևն:

Վասն յարակատար և գերակատար ժամանակաց,
 (լի որս և վասն անցելոյ ստորագասական եղանակին)
 գիտելի է նախ, զի յոգնական սոցա կրկնակի ձևա-
 նայ: Արբեմն առանց հէի. փր, * ՚նարեալ են պահք
 սուրբք առաջի նյ || . ԺԺԷ:

Իսկ երբեմն չէի . զոր օրինակ , * Վրիստոսի
չնորհիւն փրկեալք եմք ॥ . Լաճիւրնացի :

Եւ յայսպիսիս յաճախուի չէի՝ ծանրալուր առ-
նէ զխոնարհմունս բայից :

Ոքա առ հասարակ թէպէտև 'ի եւլ յանգին , բայց
երբեմն 'ի եղեալ ևս դնին , թէ ներգործականք իցեն
և թէ հասարակ . զոր օրինակ , այրեցեալ , սիրեցեալ ,
խօսեցեալ , կարծեցեալ , և այլն :

Վիտելի է երկրորդ , զի սոքա թէպէտ նախադաս
լինելով էական բայի ձևանան , որդոն , Հատեալ եմ ,
ես , է . թողեալ էի , էիր , էր . և այլն , բայց 'ի գործ-
ածուէ՝ յետադաս լինելով վայելուչ ևս կերպաւորին .
զոր օրինակ :

* Ի քեզ եմք ապաւինեալ Վրիստոսի մայր աստու-
ծոյ մերոյ ॥ . շար :

* Վոյն մարմին է , որում գուգ ես վիճակեալ ॥ . Լաճ .
արէն :

* Եւ միայն է պատառեալ և անջատեալ յեկեղեցւոյ ,
որ 'ի հաւատս կործանի , և մեղաց լինի պաշտօնեայ ॥ .
սահակ էալ . Կարգ էիէղ :

Երբեմն այլ մասն բանի ևս չէ մէջ անկանի . զոր
օրինակ , * Իմ է օրն լինելու թէ նզովեալ , և ոչ յո-
բայ , կամ երեմիայ ॥ . Նարէի :

* Վանգի խաւար խոր և զիշեր տխրալից էր 'ի վե-
րայ բնուէս մերոյ մածուցեալ ॥ . սարգ . ք . պեդ . չ :

Վիտելի է երրորդ , զի սոցա եզակի երրորդ գէմն
վարի 'ի տեղի երից գիմաց ևս , թէ իբրև եզական ,
և թէ իբրև յոգնական . որդոն , Վործեալ է իմ ,
գործեալ է քո , գործեալ է նորա . գործեալ է մեր ,
գործեալ է ձեր , գործեալ է նոցա : Վործեալ էր իմ ,
քո , նորա . գործեալ էր մեր , ձեր , նոցա : Վործեալ
իցէ իմ , քո , նորա . գործեալ իցէ մեր , ձեր , նոցա .
զոր օրինակ , * Օրնս զնաս գործեալ է իմ ॥ . եղիլէ :

* Ինգէր տրտմեալ է քո հայր ॥ . Վար հարց :

* Եւ թէ լուեալ էր քո պատուիրանաց իմոց , լինէր
քեզ իբրև զգետ խաղաղութի քոյ ॥ . Եսայ :

* Վաղիւ յայս ժամ իցէ , ահա մոռացեալ իցէ մեր
զամենայն նեղութիւս և զչարջարանս ॥ . եղիլէ :

Վիտեղի է չորրորդ , զի սոքա բազում անգամ առանց էական բայի վարին 'ի բանս . որդոն , (ժ)սողեալ . ծնեալ . կործանեալ . և այլն . և յայնժամ կոչին Դարձի . և այս կարի յաճախեալ է 'ի գիրս մեր . զոր օրինակ , * (ժ)ողեալ ոմանց զօրէնս՝ պարծին 'ի մեղս ॥ . ԺԺԲ :

* Սահկանացու ծնեալ անմահ զիւրն յիշատակ եթող ॥ . Խորէն :

* Սամալ կործանեալ կորստեանն վիճակեցայ ॥ . Կարտեօ և յընդարձակն :

Գ Լ Ո Ւ Խ Ի :

Յարգութս Լ ղանակաց Բայից :

Լ ղանակք բայից են պէսպէս կերպք կամ աստիճանք նշանակելոյ նոցա զառս և զկիրս , կամ զլինելու թիւս , և են չորս : Սահմանական , հրամայական , ստորադասական , և աներևոյթ՝ կամ անորոշ :

Յարգութս Սահմանական եղանակի :

Սահմանական եղանակն է , յորում բայքն արձակաբար և որոշակի նշանակեն զառս կամ զկիրս՝ առանց ցուցանելոյ զկախումն ինչ . որդոն , Վրեմ , գնացի , տեսից . և այլն : Լք ամենայն բանք սահմանականք , պատմականք , ծանուցականք , խոստացականք և հաստատողականք՝ այսու եղանակաւ ձևանան :

Լյս եղանակ բայից ունի կատարելապէս զվեց ժամանակս . այսինքն զներկայ , զանկատար , զկատարեալ , զյարակատար , զգերակատար , և զպառնի :

Լյլ վասն կատարեալ ժամանակի սորա գիտելի է , զի լի հին սովորութե լեզուի մերում երկրորդ դէմն յոգնականի սորա ոչ յանգիւր 'ի էք , այլ 'ի էք . կամ 'ի բոսի բեր զի որոց հրամայականի յոգնակի երկրորդ դէմն յանգիւր 'ի էք , կատարեալն ևս դնիւր էք . ուստի փոխանակ ասելոյ գործեցիք , հատիք , բացիք և

այլն, ասէին . գործեցէք, հատէք, բացէք, և այլն . առանց շեշտի : Իսկ որոց յոգնակի հրամայականն յերկրորդ դէմն յանդիւր 'ի բոս, կատարեալն ևս դնիւր բոս : Ուստի փոխանակ ասելոյ, լուայք, դարձայք, և այլն, ասէին . լուարուք, դարձարուք, և այլն . թէպէտ երբեմն այս ևս դնէին, այսինքն է, լուայք, դարձայք . և այլն :

Յաղագս Հրամայական Էղանակի :

Հրամայական եղանակն է, յորում բայքն ցուցանեն զառս կամ զկիրս՝ ոչ արձակաբար, կամ իբր անկախ, այլ լի հրամայողութեամբ . որպէս, Արա . տուր . գծա . հայեաց . և այլն : Այլ ամենայն բանք հրամայողականք, մտղթողականք, սպառնականք, կոչականք, յորդորականք, խրատականք և արգելականք՝ այսու եղանակաւ ձևանան :

Այս եղանակ ունի զերկուս ժամանակս միայն, զներկայ և զապառնի, այլ ոչ զանցեալ . զի զանցելոց հրամայել ոչ լինի : Արկայն ունի զմի դէմ միայն . քի զերկրորդն . որպէս, (Սող, մի թողուր . թողէք, մի թողուք : Այլ ապառնին ունի 'ի յեղականն զերկուս դէմն միայն . այսինքն զերկրորդն և զերրորդ . որպէս, թողջիւր թողցէ : Իսկ 'ի յոգնականն ունի զերիս դէմն ևս . որպէս, (Սողցուք, թողջիւր, թողցեն :

Սորա թէպէտ (բաց 'ի յանգելոցն 'ի Ղէր) ըստ ձայնին նոյն են լի սահմանականի ապառնուոյն, բայց կարեն որոշիլ յեղանակէ նշանակելոյն . զի հրամայականն հրամայողականապէս նշանակէ . զոր օրինակ,

* Այսուհետև յօժարեսցիս սիրելի առ աղօթս ॥ ՏՃԲ :

* Ի եղու քո սիրեսցի՛ք զլրուծի՛ ॥ . նոյնն :

* Սանձահարեսցուք զլեզուս : սանձահարեսցուք զակն ॥ . սարգ :

Իսկ սահմանականին՝ ծանուցողապէս . քր, * Արդարուի խոնարհի առաջնորդեսցէ նմա ॥ . ՏՃԲ :

* Աթէ հաւատասջիւր, և ոչ բաժանեսջիւր 'ի միտս ձեր, չիք այն ինչ՝ զոր գուք ոչ կարիցէք առնել ॥ . նոյնն :

Յաղագս Սորորատասական եղանակի :

Սորորատասական եղանակն է, յորում բայն նշանակէ զառս կամ զկիրս՝ ոչ արձակաբար, այլ՝ ցուցմամբ ըղծի, կամ թէուէ, կամ պատճառի, կամ ժամանակի, կամ տարակուսանաց, կամ հարցման, և այլն. այսինքն սորորատասակ զնշանակեալ գործողութիւն լի ըղծիւ, կամ լի թէուիւ, կամ լի պատճառաւ, և այլն. յոյր սակս իսկ այս եղանակ՝ սորորատասական կոչեցաւ :

Երգ՝ եթէ ընդ ըղծիւ նշանակեսցէ, կոչի ըղծական. զոր օրինակ, * Արանի թէ չէի պատահեալ այնմ մենայնի || . պիտոյից :

Աթէ լի թէուիւ նշանակեսցէ, կոչի լիական. և լի ոմանց՝ սորորակցական, կամ անկատարական. Գր, * Վատաւոր է ՚ի մեզ միտքս. թէ զբարին գովիցէ, և զչարն խոտիցէ, դատաւոր արդար է || . Գեորգ :

Աթէ լի պատճառաւ նշանակեսցէ, կոչի պատճառական. զոր օրինակ, * Սան այսորիկ տուան կերակուրք, զի կերակրիցիմք. և ոչ զի կերակրովք զոզի և զմարմին կորուսանիցեմք || . Գեորգ :

Աթէ լի ժամանակաւ իւրք նշանակեսցէ, կոչի ժամանակական. Գր, * Սի հաներ յինէն զչնորհս, մինչև մեռեալ իցեմ || . առաջ :

Աթէ լի տարակուսանօք նշանակեսցէ, կոչի երկբայական, կամ տարակուսական. Գր, * Թերևս արգեօք ՚ի հանդերձեալ յաւիտենին ՚ի քրիստոսէ ըզնոյն ճմարտապէս վայելիցեմք || . յովհաննէս Իմաստ :

Աթէ ընդ հարցմամբ նշանակեսցէ, կոչի հարցական. Գր, * Օ իմրդ օտար եղէլոց ՚ի մօրէ կարիցէ լի նեւ որ ծնօղ || . շնորհ :

Սյս եղանակ ունի զերկուս յատուկ ժամանակս. այսինքն զանցեալ. որդոն, Տեսեալ իցեմ, իցես, իցէ. և այլն. և զապառնի. որդոն, Տեսանիցեմ, իցես, իցէ. և այլն :

Սացի՝ յառաջ ժամանակս. քանզի բաց յերկուց աստի՝ բազում անգամ իբր զիւր ժամանակս վարէ նաև

զժամանակսն սահմանականին . թէ լն ներկային , թէ լն անկատարին , և թէ լն այլոց :

Ստ ներկային . զոր օրինակ , * Մանուկ կրօնաւոր թէպէտ և զերկինս բանայ , մի մտաներ ॥ . Կեղոս :

Ստ անկատարին . զոր օրինակ , * Արանի թէ զազատութիւն , զոր ետ անձ բնուէս , բարւոք ՚ի կիր արկանէին ॥ . Նորհ :

Ստ կատարելոյն . զոր օրինակ , * Աթէ յարեայք լն քրիստոսի , ապա զվերինն խնդրեցէք ॥ . Կեղոս :

Ստ յարակատարին . զոր օրինակ , * Աթէ այսու կենօքս միայն յուսացեալ եմք ՚ի քրիստոս , ողորմելի եմք քան զամենայն մարդիկ ॥ . Թ . Կոր :

Ստ գերակատարին . զոր օրինակ , * թէ կացեալ էր ՚ի պատուիրանին , պահէր զնա կենդանաբարն կենդանի ॥ . Եղիէ :

Ստ ապառնոյն . զոր օրինակ , * Վուցէ մոռացոյց զչափ բնուէս ॥ . լամբրոնացի :

Յաղագս Անբերեղոյն Եղանակի :

Անբերեղոյ թ կամ անորոշ եղանակն է , յորում բայն իբր վերացեալ նշանակէ զառս կամ զկիրս՝ առանց որոշման ժամանակաց , դիմաց՝ և թուոց . զոր օրինակ , Փրկել , բարբերարել , խոնարհել , ընթանալ , լինել , և : Այս եղանակ բայի վասն այսօրիկ կոչի անբերեղոյ թ , զի ոչ երևի ՚ի նմա ժամանակ ինչ . կոչի և անորոշ , զի դիմօք ոչ որոչի . և սակայն ՚ի ձեռն գերանուանց , կի՞ դիմորոշական տառից՝ կարէ նկատիլ ՚ի նոսա կարգ ինչ լն օրինակի դիմաց . զոր օրինակ , * Փրկել ոչ է իմով զօրութեամբս , այլ՝ քոյին խնամօք ॥ . լամբր :

* Վո է Բարբերելք առ մեզ , և առ նոսին ॥ . Կոր :

* Խոնարհելն նուաստին է անգ՝ քան մեծին ॥ . լամբ :

Այս եղանակ բայի ձևանայ յառաջին դիմաց սահմանականի ներկային՝ զտառ գ ճ՝ ՚ի լ փոխարկելով . որդոն , Վործեմ , գործել . գործիմ , գործիլ . բանամ , բանալ . բանիմ , բանիլ . թողում , թողուլ . թողանիմ , թողանիլ . շահիմ , շահիլ . և այլն :

Այլ գիտելի է՝ զի 'ի հնուսն սակաւ ուրեք 'ի կիր առնուին զվերջաւորուիս իւ, թէ 'ի հասարակ բայս, թէ 'ի ձայնահրականս, և թէ 'ի կրաւորականս. մաւնաւանդ այնոցիկ՝ որոց ներգործականի ներկայն յանգի 'ի աճ, և 'ի ուճ. այլ ը վերջաւորուե ներգործականացն ձեացուցանելին զնոսին : Աւստի փոխանակ ասելոյ՝ ծագիլ, բառնիլ, ընանիլ, թողանիլ, զեղանիլ, ևն. ասելին, ծագել, բառնալ, ընուլ, թողուլ, զեղուլ, հերձուլ, առնուլ, որպէս երևի յառաջիկայ օրինակս :

* Վ ծագել ճշմարտուէն՝ պարտ է բառնալ ստուերին ॥
անանիս :

* Հայնժամ ահաւոր նշանք լինիցին, պարտուել վիմաց, հերքուլ վարագուրի, և այլն ॥ . նանայ :

Իւ սակայն յորժամ հարկն պահանջէր, զնէին նաև վերջաւորութեամբս իւ. զոր օրինակ, * Ամարժանի հոլիւ, և ոչ բնաւին առ այս անաւանիւ, ոչ միայն որդի, այլ և անպիտան ապաբան վարձկան ॥ . նարեկ :

* Ատեսցուք պարծիւն յերևելիս ॥ . լաճբոն :

* Օրնչ չարաչար կիրք մեզ քան զթշնամանէն և իւր նաճանիւ, անպատուել և անպարտաիւ, ատել և արիւ, հարկանել և հարկանիւ, տրտմեցուցանել և արարիւ, բամբասել և բամբասիւ ॥ . սարգ :

Գիտելի է ևս, զի այս եղանակ բայի՝ (որպէս յիշեցաք յառաջին մասին,) իբրև անուն հոլովի ը փեքով՝ յեզակին ևեթ . որգոն .

- Ուղաւան . Գոլել .
- Սե . Գոլելոյ .
- Տե . Գոլելոյ . 'ի գոլել, առ 'ի գոլել .
- Նայ . զԳոլել .
- Բայ . 'իԳոլելոյ .
- Պար . զԳոլելոյ .
- Վար . Գոլելով .
- Պար . զԳոլելով .
- Իե . 'իԳոլել . 'ի գոլելա, 'ի գոլելդ . 'ի գոլելն, կմ ը գոլելն :

Իւ այսպիսի հոլովեալքս՝ դեբայ . կոչին . այսինքն փոխանակ բայի . զի չեն յատկապէս բայ . որովհետև

ուչնչանակեն ը ժամանակաւ և դիմաւ, այլ ընդ մէջ բայի վարին. ԳՐ, յասելն, * Վ խաղաղանալս իմուժ՝ ամբոխիմ ॥, Կար. դերբայս 'ի խաղաղանալ՝ իբր անուն հօլովեալ ներգոյական հօլովիւ եղեալ է իբր բայ. որ պէս եթէ ասեր. յորժամ խաղաղիմ՝ ամբոխիմ :

Վիտել պարտ է և զայս, զի 'ի հօլովիլ սոցա՝ բազում անդամ նախդիրն զօրուք դնի 'ի արականն. ԳՐ, * Ար եկն կեցուցանել, ոչ կարաց անտես առնել ॥. փոխանակ ասելոյ, որ եկն 'ի կեցուցանել. Իփնար :

* Վրան զօստեւն և զյանդիմանելն՝ ողբելն թուի թէ զօրաւորագոյն է՝ խոնարհեցուցանել զբիրտ հօլիսն 'ի հնազանդութի ॥. այսինքն առ 'ի խոնարհեցուցանել. սարգիս :

Վւ երբեմն ևս 'ի մէջ սոցա և 'ի մէջ նախդիրն անկանի իննդիր սոցին. ԳՐ, * Վ զերկրորդն խուզել՝ զնախնին կորուսի ॥. փոխանակ ասելոյ, 'ի խուզելն զերկրորդ՝ զնախնին կորուսի. Կար :

* Աչ է ժամանակ յերկարաձգութեալ առ 'ի զպարտան հատուցանել ॥. փոխանակ ասելոյ, առ 'ի հատուցանել զպարտան. Կար :

ՎԼՈՒԽ ԻԱ՝

Յաղագս Խոնարհմանց և Ի ճորդոմէնց Բայից
և Վղխմանց նոցին :

Խոնարհմանք բայից են արեւոյս փոփոխութիք մի և նոյն բայի 'ի զանազան վերջաւորութիս, 'ի դէմն, և 'ի ժամանակս. թէ յեզականն, և թէ 'ի յոգնականն. որգոն, Վործեմ, գործես, գործէ. գործեմք, գործէք, գործեն. գործելի, գործելիր, գործէր. գործէաք, գործէիք, գործէին. գործեցի, գործեցեր, և այլն : Իստ այսմ և յայլ ամ բայս :

Վյսպիսի փոփոխութիք վասն այսորիկ կոչին խոնարհմանք բայից, զի սօքօք զիջանին և խոնարհին բայք առ այս, կամ առ այն դէմն. առ այս, կի՛ առ այն ժամանակս, և այլն : Օ ի որպէս յանուանա՝ պէս :

պէս փոփոխու թիբ մի և նոյն անուան՝ կոչին հոլովք՝ վասն հոլովելոյ և թաւալելոյ անուան յայնպիսի փոփոխուին , սոյնպէս և ՚ի բայս պէսպէս փոփոխու թիբ մի և նոյն բայի՝ կոչին խոնարհմունք՝ վասն խոնարհելոյ և իջանելոյ բային յայնպիսի այլայլուին : Աւայսպիսի խոնարհմունք բայից այնչափ են , որչափ փոփոխի մի և նոյն բայն ՚ի զանազան դէմն և ՚ի Ժմկս :

Եւ ի լծորդու թիբ բայից ոչ են պէսպէս փոփոխու թիւնք նոցա ինչ զիմաց և ինչ ժամանակաց , այլ՝ որոշմունք նոցին ինչ զանազան վերջաւորու թեց սահմանականի ներկային . որպէս և հոլովմունք անուանց ոչ են պէսպէս փոփոխուիք մի և նոյն անուան , այլ՝ որոշմունք նոցա ինչ զանազան վերջաւորուեց սեռականացն և գործիականաց :

Բարդ քանզի այսպիսի վերջաւորու թիբ սահմանականի ներկային՝ են չորք . եմ , ամ , ում , իմ , լծորդուիք բայից ևս՝ ասին չորք . Բաւջինն լծեալ և յանգեալ ՚ի եմ . Արկրորդն ՚ի ամ . Արբորդն ՚ի ում . և Աորբորդն ՚ի իմ . ընդ որովք լծին ամենայն բայք . և լծելով՝ որոշին առ այս , կի՞ առ այն տեսակ լծորդուեց . ինչ սրում եղաք յառաջին մասին . յորս պարտ է ուսանողին զգուշանալ , զի մի բունդատեսցէ : զամենայն բայ՝ ուր և իցէ՝ յամենայն ժամանակս և ՚ի դէմն խոնարհեցուցանել . մանաւանդ զայնոսիկ , որք են ինչ օրինակօք հարանէմին և խորանմին :

Աւ ևս պարտ է զգուշանալ ՚ի գործածուին կրաւորական բայից . զի բաց ՚ի յառաջին լծորդու թեց , որք են՝ Աործեմ և հարանեմ . և որ ինչ նորօք . ոչ է արժան յաճախել զկրաւորականս այլոց լծորդու թեց . բայց եթէ զկատարեալն և զսպառնին և եթէ : Մանաւանդ զի բազումք ևս ՚ի նոցանէ՝ ՚ի կրաւորականն պակասին . ըստ որում կարգեցաք յառաջին մասին : Աւ զորս եղաք ևս անդ , ոչ է պարտ նաև զնոսին վարել անխտիր . այլ ինչ տեղոցն , ուր հարկն ստիպեսցէ , և կի՞ վայելչուի բանին պահանջեսցէ՝ ՚ի բացատրուին մեկնու թեց և մակացու թեց : Բայ՝ քեզ յարացոյց ան զնախննիս մեր , որք միայն ՚ի հարկաւոր տեղիս , և ինչ պահանջելոյ բանին՝ ՚ի գործ ածէին զայսպիսիս .

(Թ)է զէնչ իցէ, և բանի պարագայս նորա :

Բնդունելու թիւն է մասն բանի, որ նշանակէ զիրն 'ի յառնելու թէ, կամ 'ի կրեելու թէ. և մերթ զառս կամ զկիրս չէ ժամանակաւ. որդոն, Բ. յրօղ. այրեալ կամ այրեցեալ. այրելոց. այրելի : Օ ի այրօղն նշանակէ զիրն յառնելու թէ այրելոյ զայլս 'ի ներկայ ժամանակի :

Եւ այրեցեալն նշանակէ զիրն 'ի կրեելու թէ այրման յանցեալ ժամանակի : Սոյնպէս և այրելոցն իմնասպէս նշանակէ զիրն 'ի ներգործութե այրելոյ յասպայն. և այրելին 'ի կրելիութե այրման յասպառնին : Յորս որ պէս երևի, ընդունելու իք ունելով զգորութի անուան, սենին միանգամայն և զգորութի բայի. զի են իբր ա նուն 'ի բայից բղխեալ 'ի ձեռն չորից վերջաւորութեցս՝ օղ, էալ, լի, լոյ : Եւ միանգամայն ցուցանեն զայնպիսի առս և զկիրս, զորպիսի նշանակեն բայքն, յորոց բղխեն :

Բ. յս մասն բանի՝ կոչի ընդունելու թի՝ վասն երկուց. 'Արի՝ զի ընդունի զգոլ և զանուն 'ի յառից, կամ 'ի կրից, յորս իրն նշանակի լինել. զի որ այրէ, 'ի յայրելոցն առեալ զնշանակու թի և զանուն՝ այրօղ ասի. և որ այրի, յայրմանէ անտի՝ այրեալ կամ այրեցեալ ասի. ի՞նչ այսմ իման և վասն այլոցն : Երկրորդ՝ զի ունի ըզմասնակցութի ընդ երկուց մասանց բանի, այսինքն ընդ անուան և ընդ բայի, և 'ի նոցունց ընդունի զպարագայս. որպէս տեսցի այժմ :

Պարագայք ընդունելու էց են վեց. քի, Սեռ, ձև, տեսակ, ժամանակ, թիւ, և հօլով : Սեռն, ձևն, տեսակն և ժամանակն՝ ի՞նչ բայից. իսկ թիւն և հօլովն՝ ի՞նչ անուանց :

Սեռք ընդունելու թէց չորք են, որպէս և բայից. 'Ներգործական. փրկօղ. փրկեալ. փրկելոց : Արաւո-

բական. զրկեալ, կի՞ զրկեցեալ. զրկելի, կի՞ զրկելոց :
Չեզոքական. ընթացող. ընթացեալ. ընթանալոց .
ընթանալի : Հասարակ . խօսող . խօսեալ, կամ խօսե-
ցեալ . խօսելոց . խօսելի :

Չեք ընդունելութեց են երեք : Պարզ . գործող .
գործեալ : Բարդ . կենագործող . կենագործելի : Բա-
ղադրեալ . ներգործող . ներգործեալ :

Տեսակք ընդունելութեց են երկու : Վախատիպ .
հնչող . հնչեալ : Բնցողական . հնչեցուցանող . հնչե-
ցուցեալ : Ոմանք ին անուանց ևս կազմեն տեսակ ընդ-
ունելութե՞ այսպէս . հնչողական . հնչողութի, և այլն .
բայց այս կազմութի վերաբերի առ անուանս . զի այս-
պիսի բառք իբր անուն վարին :

յամանակք ընդունելութեց են երեք : Վերկայ .
գրաւող : Բնցեալ . գրաւեալ : Բպառնի . գրաւելոց .
գրաւելի : Թիւք ընդունելութեց են երկու : Եղա-
կան . ծագող . ծագեալ . ծագելի : Երգնական . ծա-
գողք . ծագեալք . ծագելիք :

Հոլովք ընդունելութեց են տասն , որպէս և ա-
նուանց . զորմէ գիտելի է , զի որք 'ի եալ յանդին , հոլով-
վին՝ որպէս դետ , գետոյ . դր , շօրացեալ , շօրացելոյ .
շօրացեալք , շօրացելոց . և այլն : Եւ որք 'ի լի յան-
դին , հոլովին՝ որպէս եկեղեցի , եկեղեցւոյ . դր , գո-
վելի , գովելոյ . գովելիք , գովելեաց : Իսկ որք 'ի լոյ
յանդին , ոչ հոլովին : Եւ որք 'ի ոչ յանդին , ին կա-
կանին հոլովին՝ որպէս բան , բանի . փոխարկելով զօ-
տառն 'ի ո . իսկ ին յոգնականին՝ որպէս բաղադր , բաղա-
բայ . դր :

Ղ Բ. ո. ող .	Ղ Բ. ո. ողք .
Ղ Բ. ո. ողի .	Ղ Բ. ո. ողաց .
Ղ Բ. ո. ողի . ցառ. ող .	Ղ Բ. ո. ողաց . ցառ. ողս .
Ղ Բ. ո. ող .	Ղ Բ. ո. ողս .
Ղ Բ. ո. ողէ .	Ղ Բ. ո. ողաց .
Ղ Բ. ո. ողէ .	Ղ Բ. ո. ողաց .
Ղ Բ. ո. ողիւ .	Ղ Բ. ո. ողօք .
Ղ Բ. ո. ողիւ .	Ղ Բ. ո. ողօք .
Ղ Բ. ո. ող , կի՞ յառ. ողի .	Ղ Բ. ո. ողս .
նվ/ Բ. ո. ող :	նվ/ Բ. ո. ողք :

Բայց գիտելի է՝ զի առ նախնին ոչ պահելը ճիշդ այս որոշումն , քանզի հանգիտուի ունելով հնչմանցս * և օ կի՛ ը հնոց առ , անխտիր դնելին ոչ կի՛ առ . ցի՛ օղ . զի և * դնելով՝ սուր հնչելին իբր օ . ըստ աւանդելոյ եզնկացւոյն ՚ի քերականուէ :

Գ Լ Ո Ւ Խ Ի Վ Ի :

Պատելի էն է՛ ՎԲ ընդունելութեց ՚ի Տասնատրի :

Ս ասն ընդունելութեց յանգելոց ՚ի օղ գիտելի է , զի ՚ի կրաւորական բայից բնաւ ոչ ելանեն ընդունելութիք վերջաւորութիւն օղ . այլ՝ եալ , լի և լոյ :

Եւ թէպէտ ուրեք ուրեք դնի եցօղ . սրգոն , Մ . յրեցօղ . ատեցօղ . և այլն , բայց այսօրիկ ՚ի գործ ածին ՚ի ներգործականս և ՚ի չեզոքականս . զոր օրինակ , * Օ բոցն ՚ի բարիւնն՝ (արար ւնծ) մանկանցն ցօղ , և քաղզեացւոցն հուր այրեցօղ . Զորդ . Եղի :

* Օ օրէն գիւաց ատեցօղք ւնմցն . Կիպոյից :

* () օրինակ բարեաց և գու լինիցիս հայեցողացն ՚ի քեզ . սարգիս :

Իսկ ՚ի կրաւորականս՝ փնկ օղի դնեմք եալ . Կր .

* Հրաշալի ճգնութի յերկրի նահատակեալ , և ՚ի յերկինս պսակեալ . ՚ի շար :

* Բացեր զաղխեալ գուռն դրախտին . Եղիղի :

* Սարչարեալք արիաբար ընդդէմ մահու չար իշխանին . ՚ի շար :

Սոյնպէս իման և վասն էական բայիցս՝ Եղանի՛մ , լի . նի՛մ և ե՛մ . զի ՚ի սոսա ևս փոխանակ օղի միշտ եալ դնի . սրգոն , եղեալ , եղելոյ . և այլն . Կր .

* Օ իմ այսպէս ստորաքարչ եղելոյս զաղօթս . . . ոչ արար անտես . Լամբրոն :

* Օ ուղիս փափկութեք քո տացես ըմպել արժանի եղելոցն . սփաթի :

Բստ այսմ և ընդունելութիւնք այնց չեզոքական բայից , որք են ը օրինակաւ զարեւոմին , ոչ լինին օղ :

այլ՝ եաւ . զոր օրինակ , * Աղէն որպէս երազք զարթուցելոց ॥ . սաղ :

* Ա՛ի կշտամբեր զհարթուցեալս ॥ . նարեկ :

* Տաց նմ՝ ուտել 'ի մանանայէն թաքուցելոյ ॥ . յայտ :

Աոյնպէս և ընդունելու թի ֆաճ բային հասարակօրէն ոչ դնի յանգիւս օշ , այլ՝ եաւ . դր , * Օգուշասուցուք զկնի եկեալքս ॥ . իմ եկողքս . խոսրով :

* Յորմն վարսել հրամայէ (արամ զնիւքար) 'ի տեսիլ անցաւորաց և նմ՝ եկելոց անդր ॥ . խոր :

Թէպէտ դուն սւրեք օշ յանգիւս և ս գտանի եդեալ . զոր օրինակ , * Վարով աւանդեցին զամենայն զկնի եկողացս ॥ . շնորհ :

Ասն ընդունելու լեռնէ յանգելոց 'ի եալ՝ գիտելի է , զի սոքա երբեմն իբրև բայ վարին , և երբեմն իբրև անուն . որպէս ունիմք ասել յերրորդ մասին . Գլ . Ին :

Վարձեալ գիտելի է , զի սոքա երբեմն դնին փոխանակ աներևութի . դր , * Այնպէս ուրախացեալք

'ի սերն նյ՝ մինչև համարեալ զինքեանս 'ի մարմնի , այլ՝ յերկինս ॥ . իմ համարել . եղիշէ :

* Այ ներքինք շարժեալ կարեն , (իմ շարժել կարեն ,) և ոչ վերինք գրգուեցուցանեն ॥ . եղիշէ :

Այլ պարտ է 'ի գործածուէ սոցա զգուշանալ :

Ասն ընդունելու լեռնէ՝ որք յանգին 'ի լոյ գիտելի է , զի սոքա միշտ իբր բայ վարին , թէ 'ի ներգործականս , թէ 'ի կրաւորականս , և թէ 'ի չեղորականս :

'ի ներգործականս . դր , * Այնդրեւոց է զվրէժ յափրշտակուեցն ॥ . ֆէորդ :

'ի կրաւորականս . դր , * Վատապարտելոց են , որք գիտեն աիրապէս , թէ ոչ գիտեն , և ձևանան , թէ գիտեն ॥ . սարգ :

'ի չեղորականս . զոր օրինակ , * Արդ զինչ արարից մեղուցեալ անձամբս , որ չեմ ապրեւոց յահագին հրոյն ॥ . շար :

Վայց գիտելի է , զի յաճախ գործածուի այսպիսի ընդունելու լեռնէ տգեղացուցանէ զկազմութի շարադրութեց , վասն որոյ բազում անգամ 'ի տեղի սոցա դնեմք զբայսդ՝ հանդերձեալ , կամ ունիլ . և մերթ ևս՝ հասանէ . դր :

* Խթէ հանդերձեալ էք քնի լինել գործակից, պարտիք և ճանապարհի նորին լինել հետևող ॥ ցի, և թէ լինելոց էք գործակից Վրիստոսի . շորհ :

* Եւ եթէ անտես առնէ, ունի տոկոսեօք վճարել առաջի քնի ॥ այսինքն վճարելոց է . շորհ :

Վիտելի է ևս, զի ընդունելուիքս փառաց և լինելոց՝ ուրեք ուրեք նաև իբր անուն վարին՝ նախգրիւ միայն հոլովելով . զոր օրինակ, * Եւ զգալոցն պատմեցէ ձեզ ॥ յով : * Յազգմանէ հոգւոյն զլինելոցս նախատեսեալ . . . պատրաստէր ॥ յով . Իմաստ :

Սասն ընդունելուէց յանգելոց 'ի լի՝ գիտելի է, զի սքքա բղխեն յամ կրաւորական և 'ի ձայնակրական և 'ի հասարակ բայից . և նշանակեն իբրև լինելի . որդոն, Պատմելի . հրաժարելի, դաւանելի . ևն :

Իսկ եթէ բղխեսցեն ևս 'ի ներգործականաց, ունին յայնժամ զգորուի օղի . զոր օրինակ, * Վործն և գործելին առ հասարակ տանջեսցին ॥ . Իմաստ :

* Վառնացաւ ցբի ըմպելեաց ॥ այսինքն ըմպողաց . Էսայ :

* Խթան լըգէմաքացելեաց ոչ Ֆնասի, այլ՝ զոտոնոյա ծակոտէ ॥ այսինքն խթան ընդգէմաքացողաց ոչ Ֆնասի . Գեորգ :

* Յարեաւ նախապատմելին ॥, այսինքն նախապատմօղն . որ է ասել՝ յարեաւ նա, որ յառաջն պատմէր՝ թէ յառնեմ . շոր :

Սմանք յընդունելուէց աստի զնին երբեմն ևս և փոխանակ ընդունելուէց յանգելոց 'ի Էս մանաւանդ ընդունելուիգ՝ Խորբելի . զոր օրինակ, * Լյնդրէ ջերմեռանդն արտասուօք զբաւուի, և առնու զխնդրելին ॥ . յաճախ :

Վիտելի է ևս, զի այսպիսի ընդունելու թիք բազում անգամ յարելով յէական բայս՝ վարին գրեթէ իբր զիմազուրկ բայ . զոր օրինակ, * Լնկարելի է . . . երկուց հակառակ տերանց ծառայել, և հաճոյանալ ॥ . շորհ :

Յաղագս Նախադրութեան :

Նախադրութիւն է մասն բանի , որ 'ի յարիւն յա նուանս՝ ևս և յայլ մասունս բանի իբր յանուանս , յուցանէ զպարագայս ինչ իրին , զոր անունն նշանա կէ . կամ թէ յայտ առնէ զայն ինչ , որ շուրջ զիրօք մտածի . զորս լի կարգի հորովից եդաք յառաջին մա սին . ԳԼ . ԺԷ : տէս յընդարձակն Բ . 25 :

ՍԼ զիտեղի է նախ՝ զի ոմանք 'ի նոցանէ երբեմն առնուն զկրկին խնդիր 'ի միասին . և ոմանք զայլ , փոխանակ բուն խնդրոյ իւրեանց . որպէս է տեսանել 'ի յետագայսդ :

Նախադրութիւնս՝ Բնչ , Բնչն , երբեմն առնուն միան զամայն զբացառական և զնախդրիւ տրական . ԳՐ .

* 'ի դաւթէ Բնչ 'ի քօ հազար ամ է ॥ . Վարդան :

* 'ի մերոյն հայկայ Բնչն ցթագաւորելն վաղարշակայ գտանին ամբ ռջծը ॥ . յովհ . կալ :

Նախադրութիւնս՝ յառաջ քան , յետոյ քան , 'ի վեր քան , ևն , առնուն միանգամայն զհայցական և զգործիական . ԳՐ .

* Ղատանեմք ժամանակս կրիւտոսի՝ երկերիւր ամաւ յառաջ քան զնեքաանեբայ (ժամանակն) ॥ . Խոր :

* ինն հարիւր ամաւ յետոյ քան զաբրահամ շինեցաւ սիոն 'ի դաւթայ ॥ . Վարդան :

Նախադրութիւնս՝ Կեռի , 'ի Բացեայ , Բեռսի , առնուն եր բեմն զբացառական և զգործիական , մանառանդ 'ի վարիւն էական բայիւ . ոնչ և նախադրութիւնս , Բերջ , Ծօք , Կոտայ , առնուն երբեմն զտրական և զգործիական . ԳՐ .

* Թաղեցին պատուով 'ի մէջ պողոտային՝ չորս ասպա րիտաւ Կեռի 'ի քաղաքէն ॥ . յայսմա :

* Նր այր նորա 'ի Բացեայ 'ի մէջ ասպարիսօք հինգ ॥ . Վարդ Կարց :

* Երջ էր զեզն յերուսաղէմ մղոնաւ երեք ॥ . Տամբրէ :

Վարձեալ՝ նախադրութիւնս՝ Բերջ , Ծօք , Կոտայ , երբեմն հանդերձ նախդրիւս առ՝ առնուն զվերջահաջով տրա կան . ԳՐ , * Երջ առ նմին հանդուցեալ ॥ . Երզնէացի ॥ :

* Երջ առ նմին հանդուցեալ ॥ . Երզնէացի ॥ :

* Երջ առ նմին հանդուցեալ (զհոգեղէն բնութիւն) ॥ . սարգ :

* Հոռոյ առ նմին տեսանէք և զնա եկեալ յերկնից ॥
Ի Գնարիոս :

Պիտեւի է երկրորդ, զի գտանին և ևս նախադրուիք
ինչ, զորս մեք ոչ եղաք յառաջին մասին . վասն զի առ
նախնիս մեր հազիւ ուրեք երեւին նորին , և կի՛ յոտա
նաւոր բանս միայն . որպիսի են սղբա . Բարոյ , Բանոյ ,
պէս , հեք , դէրն . և այլն :

Պիտեւի է երրորդ , զի երբեմն ոմանք 'ի մակբայից
ևս խնդիր առեալ՝ վարին իբրև զնախադրու թի . Գր ,
* Վրկեաց զժողովուրդդ 'ի ներքոսս ձեռին եզիպտա
ցւոց ॥ . Եւեց :

* Հոս է յեքոյ ամենեցուն զայ 'ի կու թս (որ թ) ॥ . պիպոյից :

* Լոս 'ի լոս ամ ժողովրդեանն ասէ ցաշակերտան ॥ . զոս է :

* Խոստովան լերուք ... զանխոսլ 'ի լսողաց ॥ . սարգ :

* 'ի նմանէ և անոր շինեաց աշտարակս ॥ . Խորէն :

Երբեմն ևս ածական անուանք ինչ խնդիր առեալ՝
վարին իբր նախադրու թի . Գր , * Որ սիրէ զամ , նման
նմին սիրէ զամ մարդոյ զկեալն ॥ . Խորով :

* Հանգոյն ի ժի և քարբի խցեալ զլսելիս ॥ . շնորհ :

* Բղաղակեցին և երկու ծերքն կից նմին ॥ . Դոսն :

* Ոչինչ ընդ հոսս յայսմ պատուոյ տայ սմբատայ ॥ . Խոր :

* Օրոյ Է հրամանին և զործն վճարեալ լինէր ॥ . Ի Գն :

* Խոսան ընդ նոսա ... սկսանի նուագել ॥ . յո՛վն . Ի մասս :

Պիտեւի է չորրորդ , զի նախադրուիք թէ պէտ հա
սարակօրէն յառաջոյ դասին խնդրոյ իւրեանց , ըստ
որոյ և կոչին նախադրուիք , բայց բազում անգամ ևս
յետոյ դնին . Գր , * Չարին զիսի միտեցայ ॥ . Կարեէ :

* Օ դատախազն՝ դատաւորին հանդէպ կացուցի ॥ . Կար :

* Կամար թ էր զսրբունիսն շանց առաջի արկանել ॥ . Լամբ :

Եւ երբեմն ևս՝ ընդ մէջ նախադրուէ և խնդրոյն
անկանի այլ մասն բանի . Ի՛ն կամ բայ , կամ խնդիր
խնդրոյն , և կամ այլ ինչ . Գր , * Օ խաչ առաքինու
թեն բարձին , և զիսի գնացին քոի ॥ . այսինքն գնա
ցին զկնի քոի . շնորհ :

* Ուղև չարի 'ի ձե խրոխտայր հասուցանել արքայի ॥
Ի՛ն 'ի վերայ արքայի հասուցանել . յո՛վն . Կալ :

* Օ աղքատն վասն զցնցոտին զգենլոյ անպատուէք ॥
այսինքն վասն զգենլոյ զցնցոտին . սարգիս :

Վիտեւի է հինգերորդ , զի յայնպիսի նախադրութիւն , որք ունին զնախդիր , որպիսի են , զհնի , զհեթ , յաղագս , և այլն , երբեմն կրկնի նախդիրն նաև 'ի վերայ խընդրոց նոցա . ԳՐ , * Օ միմեանց զհնի անհետ 'ի վերայ գային ॥ . Խոր :

* Յամ ժամ զբարեաց զհեթ երթայք ॥ . Թ . Լեւս :

* Սի ինչ սլատաճառս տալ հակառակորդին 'ի հայհոյութեան յաղագս ॥ . Թ . Խիմ :

Իսկ երբեմն դնի միայն 'ի վերայ խնդրոց նոցին . ԳՐ ,

* Օ միմեանց հնի կարգեալ տողեսցին ॥ . Թ . Թալ :

* Օ նորին անպիտանութեն վարեցաւ հեթ ॥ . Կեհոյից :

* Ինչ ինքն 'ի ճշմարտութե վերայ չև է հասեալ ॥ . Եղիշէ :

* Ի պատուիրանազանցութեն սակա դարձաւ առ փօզն ॥ . Ժամբի :

Երբեմն ևս՝ ուր պիտոյ է կրկնիլ նախադրութե՝ նախդիր միայն կրկնի 'ի տեղի նորա . զոր օրինակ ,

* Երթ զհեթ արդարութե , զանձպաշտութե , զհաւատոց , զսիրոյ , զհամբերութե , զհեզութե ॥ . Թ . Խիմ : Յորս զօրութե կրկնի նախադրութիս՝ զհեթ . որպէս թէ աւսեր . երթ զհետ արդարութե , զհետ անձպաշտութե , զհետ հաւատոց , և այլն :

* Ի էրս 'ի վերայ վերաց՝ և ցաւս 'ի ցաւոց յաւելուն ॥ . այսինքն ցաւս 'ի վերայ ցաւոց . Խորհալի :

* Ի ներեւոյթ զօրութե ան կալով 'ի Բնի ձեր , ոնչ յերից մանկանցն ॥ . Կր ոնչ 'ի միջի երից մանկանցն . Ճառնար :

* Հաներ զգիշերն 'ի գլուխ յաղութան անոյ՝ ոչ յիւր պէտս , այլ 'ի մերն ॥ . այսինքն 'ի մեր պէտս . Լամբ :

Ի ան խնդրատուտե նախադրութեցս , Իբրև . իբր . իբրու . որպէս . քան :

Սորա թէպէտ հասարակօրէն առնուն զինդիր 'ի հայցական հոլովն , բայց բազում անգամ ևս ըն պահանջման բանին և 'ի զօրութե բային պէսպէս խընդիրս առնուն՝ գրեթէ յամ հոլովս , յուղղականն , 'ի սեռականն , և այլն :

Յուղղականն . ԳՐ , * Իբրև այլազգիք և այլալեզուք տանիմք և բերեմք (բամբասանօք) զմիմեանս ॥ . յով . Իմաստ :

- * Որպէս վտանգաւորք ողորմութի հայցեսցուք ॥ Խոսրով :
- Վ սեռականն . ԳՐ , * Իբրև օձի զթոյնս 'ի բաց եղեալ զեսպանս առ իշխանն ատում առաքէր ॥ . յովհ . Կաթ :
- * Ազղիցի միատարր խաղաղութի 'ի մէջ մեր' որպէս հօլ հարազատի և որդւոյ սիրելւոյ ॥ . յովհ . Կաթ :
- * Մ'արթ էր զայդ իւզ վաճառել աւելի քան երեքհարիւր զահեկանի ॥ . Ժորհ :
- Վ վերջահօլով տրականն . զոր օրինակ , Իբրև անմահից հատուցանէ մեզ զվարձս վաստակոց մերոց ॥ . Եղիշէ :
- * Աւնկնդրու թի և հոյատակութի (մատուցի քահանայի) որպէս հրեշտակի անյ ॥ . Խոսրով :
- * Սեղ արդարև 'ի դէպ է երկոց մանկանցն երգ առ անծ քան իսրայէլեան տոհմին յայնժամ ॥ . Դորհ :
- Վ նախդրիւ տրականն . ԳՐ , * Չգէ զբանն առ պետրոս' իբրև 'ի գլուխ աշակերտացն ॥ . Իգնատի :
- * Որպէս յանձային սեղան' ի սոյն մերձենայ ॥ . լաթ . Կոստ :
- * Փափաքէ 'ի մահ քան 'ի կեանս ॥ . Եղիշէ :
- Վ հայցականն . զոր օրինակ , * Ս'ի ոք աստանօր անուսումն զմեզ համարեալ բամբաստիցէ իբր զանվարժս ॥ . Խորհն :
- * Որպէս զմտերիմ ծառայս պատիւ ընդունիցիք յերկնաւոր թագաւորէն ॥ . Դորհ :
- * Չիք ինչ զգուշաւոր ամբու թի քան զերկիւղն անյ ॥ . Խոսրով :
- Որքա երբեմն զօրութի ունին զհայցականն' և ներդործութի զյատկացուցիչ նորա . զոր օրինակ , * Ս'չ իբրև զմահականացուի համարի զմահս մեր ॥ . ԿՐ ոչ իրրև զմահս մահականացուի համարի զմահս մեր . Եղիշէ :
- * Բանք ձեր ոչ լինիցին անհամ և անաղ , որպէս զուամկաց ॥ . այսինքն որպէս զբանս ռամկաց . Դորհ :
- * Բարձր է ծառայուէն պատիւ քան զառաքելութի ॥ . այսինքն քան զպատիւ առաքելութի . սարգ :
- Վ բացառականն . ԳՐ , * Վ բարկութեն և 'ի նորին չարութենէն իբրև 'ի կատաղի զազանէ զերեսս 'ի բաց դարձուցուք ॥ . սարգ :
- * Վրեալ ես երկնէլ 'ի կեղծաւորութի' որպէս յանհաւատութենէ ॥ . Դորհալի :

- * Եւն՝ որ քան յանտի կենացն վրիպել՝ յաստեացս զարհուրին ॥ . այսինքն , են՝ որք զարհուրին վրիպիլ յաստեացս՝ քան յանտի կենացն . ի փնար :
- Եւ պատմականն . Գր , * Ոչ ասէ զաւակաց՝ ի Բրեւ զբազմաց , այլ՝ ի բրեւ զմիոյ ॥ . փառ :
- * Օ հօրէն իւրմէ որպէս զմարդոյ ումեքէ պատմէ ॥ . մէն . զուի :
- * Եւ շխարհ է առաւել հոգալ զմարմնոյ քան զհոգւոյ ॥ . շարք հարց :
- Եւ գործիականն . Գր , * Արեւակացուք մարդկան ունին բանիւ կակղել զխստուի մտաց՝ ի Բրեւ բրջաւ ॥ . ի փնարիս :
- * Եւն որ բանիւք իւրեանց խոցոտեն որպէս սրով . բայց լեղուք իմաստնոց բժշկեն ॥ . առաւի :
- * Օ թռչունս վայրենիս և զգազանս սիրով քան բռննու թիւ սովոր են մարդիկ վարժել ॥ . շնորհ :
- Եւ պարտականն . Գր , * Ի Բրեւ զփեսայիւ հարկ զինև զվահանն ॥ . հոլ . ընծայ :
- * Իսկ երկրորդն անհմուտ գոլով՝ ծիծաղի զնովաւ որպէս զանմտաւ ॥ . լամբ :
- * Իսկ ան զբազմօք առաւելեալ մեծասպէս՝ ի փառս ॥ . սահակ հաթ :
- Եւ ներգոյականն . գործ օրինակ , * Տատանեալ հոգիս ՚ի յայտմ աշխարհի՝ մարմնոյս շինուածով ի Բր ՚ի նաւաւակի ॥ . նարեի :
- * Օ ի ցորչափ արտաքոյ կամացն նոյ լինի մերս ոգի , որպէս ՚ի ծովու ալեկոծիմք ॥ . խոսրով :
- * Որքան իսաղաղուի է ՚ի տունս շինականաց՝ և անհոգու թի , քան ՚ի տունս թագաւորաց ॥ . սարգ :
- Եւ փառագրութ . Գր , * Օ անձն իւր եգ ՚ի վերայ ձեր ի Բրեւ ՚ի վերայ սիրելեաց ॥ . սարգ . ա . պեթ . լն :
- * Եւ պեալ են նամ ուրեք ազգ մեր յազբատուէ որպէս ընդ երկաթոյ ՚ի ներքոյ լձոյ ծառայու թի ॥ . շնորհ :
- * Եւնէ ծք ցաւազինք վս այլ մեղաց ոչ և ս շարժին ՚ի մշջ եկեղեցւոյ , քան յազագոս գողութի ॥ . նոյն :

Սակերայն է մասն բանի , որ զսարադայս կամ զեղանակս գործողուէց նշանակէ . զի եղեալ մակերայից , այսինքն 'ի վերայ բայից՝ ցուցանէ զպէսպէս եղանակաւ կատարին գործողութեց . և զի այս պէսպիսունի կարէ մտածիլ երեսուն և երեք օրինակաւ ըստ պէսպիսութե նշանակուէ իւրեանց . տես յընդարձակն . Թ . 19 . և թ . 26 : Յայն սակս երեսն և երեք տեսակը մակերայից թուին . Որակական , քանակական , ժամանակական , տեղական , և այլն . որպէս եղաք յառաջին մասին :

Մյլ գիտելի է նախ , զի մակերայից ոմանք են բնականք . որպէս , Մյժմ , աստ , անդ , դեռ , մերթ , երբ , միշտ , հիմ , այո , ոչ , ուր , և այլն :

Սակ ոմանք , մանաւանդ թէ բազումք՝ կազմին յանուանց , ևս և յայլ մասանց բանի՝ 'ի ձեռն պէսպէս վերջաւորութեց կամ մասնկանց . որգոն , Մուրծաբար , մեծապէս , ինձէն , հայերէն , ուժգնակի , նշանաջի , ինքնին , բիւրիցս , այլոսոս , և այլն :

Վիտելի է երկրորդ , զի մակերայք՝ երբեմն նախադասին բայից . ֆթ , * Սիշո ուսանիմ , և երբէք՝ 'ի գիտութի ճշմարտուէ ոչ հասանեմ ... սոռ ինչ քաջալերիմ , և սոսաւելապէս լքանիմ || . նարէի :

Սակ երբեմն յետադասին . զոր օրինակ , * Ացորդակից լեր Բժշկապէս , և մի 'ի խոյզ ընտրութե կոչեր դասորաբար || . նար :

Սլ երբեմն ևս ընդ մէջ մակերայի և բայի այլ բանականի . և կամ այլ մասն բանի . ֆթ , * Յորժամ որ այժմս բնապաճոյճ՝ խրոխտաճայն՝ սիգացօղ՝ բարձրապարանոց , անկեալ դիմ գի անկենդան || . նարէի :

* Սլ գու մի զանբանիցն կենդանութի ինձ 'ի դէմս Բերեր || . սարգ :

Վիտելի է երրորդ , զի մակերայք բազում անգամ երկու կամ երեք 'ի միասին դնին : Սրբեմն նովին տե-

սակաւ . ԳՐ , * Օ մարգոյ բարին ընդ այ բարոյն հա-
մեմատեալ՝ արդարեւ սրտագողէս չար գտանի ॥ . սարգ :
Լըբեմն ևս այլևայլ տեսակօք . զոր օրինակ , * Լհա-
սնիկ արդարապէս կանխեցաք ասացաք , իբրու պա-
րանաւ յինքեանս ձգել զմեզս ॥ . սարգ :

Լը երբեմն ևս մի և նոյն մակբայն կրկնելով դնի առ-
ի յաճախականապէս նշանակել . զոր օրինակ , * Սե-
ծացաւ այրն յոժ յոժ ॥ . այսինքն կարի յոյժ . ծննդոյ :

* Լսյո՛ այո և ես մի եմ՝ ի նոցանէ ॥ . նարեկ :

* Սրեկ սրեկ զմարտ հինին ՚ի վր հեղուին ॥ . յովհ . կալ :
Բստ այսմ վնի երբեմն և բացասական մակբայս՝ ոչ ,
կրկնելով ՚ի սկզբան և ՚ի վերջոյ . ԳՐ , * Լը ոչ մի ինչ
առանց շնորհացն այ ՚ի գլուխ ոչ ելանէ ॥ . այսինքն
և ոչ մի ինչ բնաւ . սարգ :

Վիտելի է չորրորդ , զի մակբայք ոչ միայն դնին ՚ի
վերայ բայից , այլև ՚ի վերայ ընդունելուէց . ԳՐ ,
* Լմենից տիրող հաւասարապէս ॥ . նարեկ :

* Լըղև վերստին ծնող մարդկու թէս ॥ . փռլ . լուս :

* Լնճառելի դրախտին աստէն տեսող ॥ . ՚ի շար . Խ :

* Սեծ է փառք քահանայու թէ յարժանապէս ու-
նողսն ॥ . լամբրոն :

Լըբեմն ՚ի վերայ բայանուանց ևս . ԳՐ , * Լը եցոյց
զմուկգնաբար գոչումն ॥ . եղիշէ :

* Լնասնաբար սահեցմամբ . . . լը երկիր մածաք ॥ . նար :

* Սերստին առումն բանին՝ զհաւատարմութի իրացն
ցուցանէ ॥ . սարգիս :

Լըբեմն ևս դնին ՚ի վերայ այնպիսի ածականաց , որք
ունին զհաղորդուի լը բայից . ԳՐ , * Լայեա՛ վերըս-
տին ՚ի բնուէս կերպարան՝ միշտ սխալական ॥ . նար :

* Բստ հոգւոյ՝ ամենեւին անշարժք ՚ի բարիս ॥ . շնորհ . ընդի :

* Հեղցէս զաղբիւրաբար զառատաբուղիս զշնորհս ॥ .
ի յաղորոյի : Ըր աղբիւրաբարն է մակբայ՝ ածական
անուանդ ստասպաբողիս :

Լըբեմն ևս դնին յայնպիսի բանս , յորս զօրուք կայ
բայն . ԳՐ , * Լսյօր ՚ի կառս , վաղիւն ՚ի դագաղս ॥ .
այսինքն այսօր նստեալ կայ ՚ի կառս , լի . լամբրոն :

* Լթէ կանոնն թիւր իցէ , քանի՛ մանաւանդ , զք
ուղղին նովաւ ॥ . սարգ :

* Իսկ արդ՝ չար արժան է ասել թագաւորին , քան՝
ես ոչ ասեմ՝ ॥ Եղիշէ :

Գիտե՛լի է Հինգերորդ , զի երբեմն մահբայք ինչ ա-
ծական լինին գոյականաց , և իբր ածական վարին . Գր ,

* Օ սարի կենցաղս գիշեր կոչեաց առաքեալն ॥ Խոս-
ր՛ն : Ուր սարին լեալ է ածական՝ անուանս կենցաղ :

* Չար է նախանձ , և 'ի կարի յանդգնութիս ածէ ॥
Իգնատիոս :

* Յայտնեցին որդւոց մարդկան զծածկապէս խոր-
հուրդ ॥ շար :

Եւ ևս՝ երբեմն նախգիրք խնդրոյն դնին 'ի վերայ
մակբայից . Գր , * Լարեպաշտ արքայն կոստանդիանոս

չայսր անոր տարբերեալ տուն հաւատոյ ... անխախ-
տելի ամուսն պնդեալ հաստատեաց ॥ լամբ :

* Օ պար եղեալն ... առաջի աչաց տեսանէր ॥ Կոլ :

* Գայր առ նա ապա և մեծ իշխանն վրայ ատրներ-
սէ՛հ 'ի ցաւակցաբար վշտակցուի ॥ յովն . Կալ :

Գիտե՛լի է վեցերորդ , զի բազում անուանք ածականք
երբեմն իբրև զմակբայ վարին . Գր , * Ար ծաղկեաց

գարունն հաւատոյ ॥ Ղնորհ :

* Եթէ նոքա (այսինքն առաջնորդք ,) ուղիղ գնան ,
հետեւեալքն անխորթ ճանապարհորդեն ॥ լամբրոն :

* Բաջ միտ դիր աղաչեմ ॥ Տամբրէ :

* Սոր ձեւանամ , և իրօք խոտորիմ ॥ Նար . Կալ :

Եւս կիրառութի յաճախ է 'ի բարդ ածականս . Գր ,

* Պարզերես կացընք առաջի աւանդողին ձեզ զտաղանդ
պատուիրանին ॥ Ղնորհալի :

* Օ մեզ ինքեանս բոլորապարտող ընծայել նյ ॥ սարգ :

* Երազանութի էլանելի կամարս լուսեղէնս ॥ 'ի մայրոցի :

Սոյնպէս և ածական անուանք , որք ունին զբաղա-
դրական մասնիկս՝ ան , կամ զբաղդատական մասնիկս՝
գոյն , բազում անգամ վարին իբրև զմակբայ . Գր , * Եւ-
սայնս կարօղ եմք զնալ ընդ ճանապարհ կենցաղոյս
'ի յերկինս ॥ լամբ :

* Եւնաս նաւեցիք , և հասիք առ քո ॥ շարակ :

* Գերազոյն զոչէ փող գաբբիէլեան ॥ շարակ :

* Որք կանխագոյն զածեղէն բանն ընկալան , կատարե-
լագոյնք են և առաջինք ॥ Տամբրէ :

Երբեմն ևս անուանք ինչ ածականք՝ ունեւորվ ՚ի վերջոյ
զյօզս՝ ս , կամ զբառգ՝ ինչ , իբր մակբայ վարին . զք ,

* Եւզումն առաքինանամք ॥ . Խորոզ :

* Եւբարտաւանս և բարձրայօնս փքայր ॥ . յովհ . կաթ :

* Ղեկեցիկ ինչ անգ կարգեւորվ ॥ . Խոր :

* Իր սքանչելի ինչ գիպեալ եղև ըստ գործոյն՝ և ա-
նունն ॥ . Նոյն :

Վիտելի է եօթներորդ , զի երբեմն անուանք ինչ , թէ
ածականք և թէ գոյականք՝ հօլովմամբ իւրք իբր մակ-
բայ վարին . զք , * Սինչ կենդանեօսս խօսիմ , մեռեալ
եմ անհասիրգ ॥ . Նար . կի :

* Հանապարասորից եկեալ սրտաբեկ առնէր ॥ . Գեորգ :

* Հանկարիս հայեցեալ յանդէպս տեսանէր ॥ . Կոլ :

* Կնմանս առ օրին յայտնէ զբարկու թի իւր ॥ . առաջ :

* Խափանեցի առ աչօ կարծելն ॥ . շնորհ :

* Օրնչ վիճելք զճանապարհայն ॥ . Տարի :

Եւ երբեմն ևս մի և նոյն անունն կրկնեւորվ իբրև
մակբայ վարի . զք , * Խմբեցաւ պատերազմն , և մա-
տեան ճակատս առ ճակատս ॥ . Խոր :

* Որն առ որն յառաջ մատուցեալ՝ միապետել ջա-
նայր ॥ . յովհաննէս . կաթ :

* Ի երան ՚ի Բերան զմիմեանս համբուրիցեն ॥ . Վեցօր :

* () Ըստ օրէ յաւելուած լիցի ՚ի լաւունն ॥ . յաճախ :

* Տօնէ իսրայէլ աճ յաճէ՝ պենտակոստէ առ ձայնեալ ॥ .
Խոր . վարդ :

* Եւ մի առնուին զբահանայուէն պատիւ ॥ . Նանայ :

* Ղայլ ՚ի գայլի կային յօրէնսն առաջինս ॥ . Գ . Տակ :

Եւ ևս՝ երբեմն այլևայլ անուանք , և կամ նաև այլ
մասունք բանի՝ ՚ի միասին եկեալ իբրև մակբայ դնին .

զք * Սեծ ամուրդ այդ հիշն ՚ի վեր տապալեցաւ ॥ . եղիշ :

* Եւ իւր ընդ ձեջ ձեղքէր զամուր զլիսանոցն ॥ . յովհ . կաթ :

* Եւ ինչ պարաստ տեսանեմք զգործն բանիցս վը-
կայ ॥ . լամբրոն :

* Հան ևս զի սիւսեալ լը զլուխս կոհակայն ॥ . յովհ . կաթ :

* Եւ անգի ողորմու թի է , որ Բարձր ՚ի գլուխս պարծի առ-
դատաստանաւն ॥ . շնորհալի :

* Կօչեւոր հրաման տայր յակնէ յանոսանէ ॥ . եղիշ :

* Եւ այսպէս սք (զի սեւեւ կիրոս և անախորոս) թագա-

ւորեալ ընդ փոքր եւ ընդ շատ իբրև ամս Կ , ապա ապրստամբին պարթևք 'ի մակեդոնացւոց ॥ . յովն . կաթ :

Վիտելի է ութերորդ , զի ցուցական դերանուանքս՝ սոյն , Դոյն , նոյն , յարեալ յանունդ օրինակ՝ վարին ընդ նմա իբրև զմակբայ , ունելով երբեմն զնախդիրդ՝ զ զոր օրինակ , * Օ սոյն օրինակ եւ ծերունին այն (նոյ) յայնժամ 'ի սուգ տրտմութիւն վտանգեալ էր ॥ . ոսկ :

* Վոյն օրինակ եւ յոյնք ... ունին զիրաւունս ॥ . յաճախ :

* Վոյն օրինակ եւ 'ի տնէ են ամ պահպանուիք ॥ . ափաթ :

* Սիւ կս ձեզ վոյն օրինակ գնալ ॥ . երէտ :

Բստ այսմ ձեանայ եւ ցուցական դերանունդ՝ այս . զԲ ,

* Եւ նա զայս օրինակ փոխեցաւ յաշխարհէ ॥ . Բ . ճակ :

* Եւ էր պատճէն հրովարտակին օրինակ զայս ॥ . ափաթ :

Վարձեալ եւ բայս՝ է , վարի երբեմն իբրև ժամանակական եւ տեղական մակբայ ընդ բառիցս՝ ուրեք , ուր , շէ , որ , զԲ , * Եւ ուրեք ուր բանիւ վճարէ . . . եւ է՝ շէ ձեռն դնէ ॥ . այսինքն ուրեք ուրեք , կամ երբեմն .

Իփնասիոս :

* Եւ ուրեք՝ շէ քաջապէս յաղթեցաք թշնամեացն , եւ է՝ շէ նորա մեզ յաղթեցին . եւ Բաղամ այն է՝ որ յաղթող գտեալ եմք , եւ ոչ յաղթեալք ॥ . երէշէ :

Վիտելի է իններորդ , զի մակբայքս՝ Մստի , այտի , անտի . աստ , անդ . այտը , այդը , անդը , դնին երբեմն փոխանակ ցուցական դերանունաց . զոր օրինակ , * Եւ են կրկին կարօտ 'ի տարաբնակ լինել 'ի բնակուէ ստտի ॥ . այսինքն յայսմ բնակուածէ . յովն . կաթ :

* Բայց արդ՝ դարձ 'ի բարկուածէ այտի ॥ . նոյնն :

* Բնոյոս եղեն . . . 'ի մեծուածէ անտի , որ արդարոցն պահեալ կան յերկինս ॥ . Իփնաս :

* Յաշխարհի աստ նեղուածի ունիցիք ॥ . յովն :

* Յո գնաց 'ի գերեզման անդր , ուր եղեալ էր զազար ॥ . ճամբր :

Երբեմն կս դնին 'ի տեղի դիմորոշական տառից . զԲ ,

* Վզորդեալ սասանեցաւ ողորմելի աշխարհս մեր 'ի մերոց աստի ॥ . այսինքն 'ի մերոցս . յովն . կաթ :

* Բհա ըզձալի համարիմ ասել աստանօր 'ի քոյոց այտի զոր ընդ իմ կրեցեր ամբ բուրբից ॥ . նար :

* Աշինչ կարաց շարժել զնոսա 'ի սիրոյ անտի անյ ॥ . սարգ :

- * Աղվաղակի փոփոխեալ գտայց 'ի լաւ անորք ॥ Կար :
- Լաւ երբեմն ևս դնին իբր զարդ . Գր , * Աեցցեմ 'ի հիւ-
ւանդու թենէ աստի իմմէ յայսմանէ ॥ . Կ . Լապ :
- * Լանեւոց էք 'ի մարմնոյ այտի ॥ . Տամբբէ :
- * Որք 'ի լոյս անդ են , ցնծան . և որք 'ի խաւարի անդ
են , յոգւոց հանեն ॥ . Տճբ :
- * Լա իւրան անորք եկն , և իւրքն զնա ոչ ընկալան ॥ .
նոյնն :

Գ Լ Ո Ի Խ Ի Օ :

Յարգութս Շաղկապի :

Շաղկապն է մասն բանի , որ յարէ և միաւորէ ի
միմեանս զայլ մասունս բանի , նաև զնոյն իսկ զբանս .
և բաժանի 'ի զանազան տեսակս . որք են՝ բաղհիւսա-
կան , տրոհական , ևն . որպէս կարգաւ եղաք յառա-
ջին մասին . տես և յընդարձակն . ք . 27 :

Լա յիտելի է , զի երբեմն վասն վայելու թէ բա-
նին զօրու թի՞ դնին շաղկապք ինչ . որպիսի են հասա-
րակօրէն սօքա . Բայց , սակայն , այլ , վասն այսորիկ , ևն .
յորժամ յառաջոյ սոցա դնին շաղկապդ՝ Լեպէր , վասն
չի , ևն . Գր , * Թէպէտ փակեաց և կնքեաց զդրունս
եկեղեցեաց ընդ անձ աշխարհն պարսից , (Բայց) նո-
քա զանձ տուն եկեղեցի արարին . եղիչէ :

* Անն զի ոչ կացաք յուխտի նն , (վասն այսորիկ) ան-
փոյ թ արար զմեզ ॥ . յով . Կալ :

Իսկ երբեմն ներհակ այսմ շաղկապս և իբր յաւե-
լորդս դնի 'ի դրադէմ բանս և 'ի դերբայաւորս . Գր ,

* Լա երկիւղի անկանելոյն զարհուրեալ՝ և թմրեսցի ॥ .
սարգ : Ուր ևն ամենեկն թարմատար դնի :

* Ա՛յ ոք լսելով զարժանի ողբոց բանքս՝ և ոչ բեկանի
սիրան ॥ . սարգիս :

* Ա՛յ յընթանալս իմնւմ՝ և կասիմ ... 'ի յաթուս ծե-
րոց բազմեալ՝ և խելայեղից կցորդիմ ॥ . Կար : Լա յա-
պարտ է զգուշանալ յայսպիսի ոճոյ :

Պիտելի է դարձեալ , զի շաղկապս Իսկ՝ երբեմն միայն

առ ՚ի զարդ դնի ՚ի բանս. դր, * Ինքն իսկ է ամ յամի՛
աղբիւր բարեաց || . յաճախ :

* Օ բոլոր իսկ զչոյնս ոչ դանդաղիմ մայր կի՛մ զայեակ
ասել իմաստից || . Խոր :

* Վանզի արդարե գիտակ իսկ ես, թէ չար է արարն,
և ընդաբոյս՝ չարուին մեր || . Կարեէ . տես յընդար-
ձակն :

Գ Լ Ո Ի Խ Ի Կ :

Յաշտս Սնարկուի :

Ս վերայ միջարկուէ ևս սակաւ ինչ ունիմք խօսիլ .
զի սակաւ է և գործածուի սորա . և զորս եղաք յա-
ռաջին մասին , այն բաւական է :

Օ սա ոմանք ընդ մակբայս դասեն . բայց ոչ երևի
այս ուղիղ . զի մակբայն ցուցանէ զպարագայս գոր-
ծողուէցն , իսկ միջարկուին ՚ի միջի արկեալ ՚ի բանս՝
յայտ առնէ զընական կիրս հոգւոյն . որպիսի են կիրք
ուրախուէ , տրտմուէ , ցաւոց , երկիւղի . ևն : Վանզի
յասէն , * Վաճէ , որչափ է որովայնամուլու թէ բռնաւ
ւորու թի || . (սսկ .) միջարկու թիւնս Բաճէ՝ ոչ ցուցանէ
զպարագայս գործողուէցն , այլ՝ զկիրս հոգւոյն պատ-
ճառեալ ՚ի զարմանալոյն ՚ի վերայ բռնուէ որովայնա-
մուլուէ : Եւ յասէն , * Հապա՝ որով օրինակաւ , զինչ
կամիս առնել՝ կատարեալ || , (եշեշէ .) միջարկու թիւնս
հապա՝ յայտ առնէ զկիրս եռանդեան հոգւոյն առ ըու-
նելուի իրիք : Եւ յասէն , * Ո՛վ զիարդ միանգամ
վճիռ եհատ , և զեղկելի ձայնն արձակեաց || , (սարգ .)
ուչն ցուցանէ զկիրս զարհուրանաց ը ահագին վճիռն :
Ի ստ այսմ իմն և զայլոց :

Եւ զիտելի է նախ , զի միջարկուիք երբեմն յա-
րին յանուանս նշանակիչս այնց՝ յորոց վերայ է կիրք
հոգւոյն . դր , * Ո՛վ սքանչելեացս , գործ՝ առ որ տկա-
րանայ բռնու թի թագաւորաց || . Լաճ :

* Վաճէ անոթակալուեն (քսի) , չև ևս յանդիմանէր
զմասնիչն . այլ՝ սաուեր արկեալ ծածկէր զիրն || . Կարե :

* Սայ ախտացելու մն յախտէ, որ խոցի և ոչ ընդոստնուն ॥ . շնորհ :

* Լաւաշ 'ի վերայ չարչարելոցդ և հնձելոցդ առ հասարակ հարցդ և եղբարցդ ॥ . Տաշտոց :

Հայտախտի բանս՝ գրեթէ միշտ զօրու թիւ գտանի բայինչ . որ և երբեմն ներգործու թիւ դնի . զոր օրինակ ,

* Սայ է նոցա, զի լը ճանապարհին կայենի գնացին ॥ .
յուրայ :

* Լարանի որսնմ, և երկրին, լը որ նա անցանիցէ ॥ . եղիշ :

* Լարանի է մարդոյ, զոր ոչ յաղթահարեցին երկունք ազահու թե ॥ . Տծբ :

Գիտելի է երկրորդ, զի առ միջարկուին վերաբերին լը իմիք և կուսական անուանք . զի լը օրինակի միջարկուեց իբր անկախ 'ի բայէն և 'ի խնդրոյ նլ դնին 'ի բանս՝ յերկրորդ դէմս . զոր, * Լնկալ ոչ անձայինդ գրեգորիոս՝ զփոքրիմաց բանս նուազ մերոյ տեսուես ॥ .
իգնար :

Լալ զպէսպիսու թե միջարկուեց ասացաք յառաջին մասին հանդերձ օրինակօք : Լայց պարտ է ևս զիտել, զի գտանին և այլ բազում միջարկու թեք, զորս ոչ եղաք 'ի նմին՝ վասն ոչ գոլոյ նյ 'ի հասարակ գործածու թե . որպիսի են սոքին . ա ա , ա , ահ , հա , է , հէ , յէ , եհէ , էհ , ըհ , իհ , իհ թէ , ուհ , իշա , տի , տիր , իցիւ , իցիւ թէ , օշ թէ , օշ եթէ , վայ վաղայ , բէք , ափսոս , և այլ այսպիսիք . զորս չէ արժան 'ի կիրառնուլ 'ի հասարակ շարագրուին : Տես յլարձակն :

ՄԼՍՆ ԵՐՐՈՐԿ

{ Յաղագս համայնութեան մասանց բանի :

Էանդէս արուեստի քերականութի յայսմ մասին պայծառանայ . զի 'ի սմին ամ բառք առ միմեանս եկեալ պէսպէս համաձայնութի՝ կազմեն խորն ջոյս բանի . որով և միտք ուսանողաց տեսեալ զխայտալ բառից ընդ իրեարս յայս սեղան՝ զուարճանան և բերկրին . և ս և արժանօք վայելեն զպտուղս վաստակոց իւրեանց, զոր վաստակեցին յառաջին և յերկրորդ մասին : Եւ յանձանձիրն ճաշակել՝ սկսանին պարարտանալ ոգիք նորա յանուշութի կազմաւորութեանից : Օ այս սեղան՝ կամեցեալ կազմել բարեւոյն՝ ախորժական և ընտիր օրինակօք ունիմք կարգել . խօսեալ նախ համառօտիւ զհամաձայնութենէ մասանց բանի 'ի հասարակի : Եւրդ՝

Համաձայնութիք մասանց բանի են կապակցութիք նոցա ընդ միմեանս՝ առ 'ի կազմել զբան : Եւ յս կապակցութիք լինին ութ եղանակաւ՝ ըստ ութից մասանց բանի : Եւ յս՝ անուան ընդ անուան : Եւ յերկրորդ՝ դերանուան ընդ դերանուան, և ընդ անուան : Եւ յերկրորդ՝ բայի ընդ անուան, ընդ դերանուան և ընդ ընդունելութե : Եւ յերկրորդ՝ ընդունելութե ընդ ընդունելութե, ընդ անուան և ընդ դերանուան : Եւ յինգերկրորդ՝ նախադրութե ընդ անուան, և ընդ այնս, որք իբր անուն հօլովին : Եւ յեցերկրորդ՝ մակբայի ընդ բայի, և ընդ այնս, որք ունին զզօրութի բայի : Եւ յօթներկրորդ՝ միջարկութե ընդ բանի : Եւ յութերկրորդ՝ շաղկապի ընդ բանի, և ընդ մասանց նորա :

{ Յայտոսիկ ութ համաձայնութիս առաջի դնին ութ հարկաւոր գիտելիք 'ի շարադրութե . որք են սորին . 1, բացայայտիչ և բացայայտեալ . 2, յատկացուցիչ և յատկացուցեալ . 3, ածական և գոյական . 4, յարաբերական և յարաբերեալ . 5, անուն բայի . 6, խնդիր .

7, արգելիչ խնդրոյ . 8, նախդիր : Արոց հանդամանք
և պիտանու թիք յայտնի լինին 'ի բացատրութիւն վե-
րոյգրեալ ու թից համաձայնութեցդ :

Մ. Մ. զիտելի է, զի զհամաձայնութե նախադրուէ ,
մակբայի , միջարկութե և շղկապի՝ զօր ինչ արժան
էր գիտել, խօսեցաք յառաջին և յերկրորդ մասին .
ուստի չունիմք ինչ խօսել զսոցանէ յայսմ մասին . այլ
միայն զհամաձայնութե անուան , դերանուան , բայի և
ընդունելութե . յորս բովանդակին ամ զօրութիւնք
արուեստի քերականութե :

Եւ նախ կամեցեալ խօսիլ զհամաձայնութե անուան
ը անուան՝ գիտելի է, զի անուանք որովհետե կամ
գոյական են , և կամ ածական , 'ի դալ սոցա առ մի-
մեանս՝ հարկ է , զի կամ գոյականք ընդ գոյականաց
յօդեսցին . կամ ածականք ընդ ածականաց . կամ
գոյականք ընդ ածականաց . և կամ ածականք ընդ
գոյականաց : Իսկ գոյական անուանք երրակի կարեն
յօդիլ ը գոյականաց . նախ՝ իբր բացայայտիչ . երկ-
րորդ՝ իբր յատկացուցիչ . և երրորդ՝ իբր խնդիր .
զորոց խօսեսցուք կարգաւ :

Գ Լ Ո Ւ Խ Ե Ը :

Հաղագս համայնաբանութե փոյական անուանց ընդ փոյականաց իբր
Բացայայտիչ . համ

Հաղագս Բացայայտել :

Յորժամ 'ի բանս կամիմք զգոյական անուն ինչ
բացայայտել՝ թէ յինչ միտս դնի , և կամ փոխանակ
որոյ նշանակէ , յարեմք 'ի նոյն զայլ միւս ևս անուն
գոյական՝ թուով և հոլովիւ համաձայն նմին՝ առանց
շղկապի . և զայն կոչեմք Բացայայտիչ . որպէս երեւի
յայս բան . * Մ. յօր բուսաւ յաննայէ մորենին մա-
րիամ || . շարակ : Աւր անունս մարիամ՝ յարեալ յա-
նունս մորենի՝ լեալ է նմին բացայայտիչ . զի բացայայ-
տէ , թէ մորենին աստ առեալ լինի փոխանակ մա-
րիամու :

Եւ զի տելի է նախ, զի բացայայտին երբեմն զնի
 ևս յառաջքան զբացայայտեան. զք, * Սուշէս հիմն
 մարգարէից ապաց, մի ատեր զեղբայր քոյ ॥ . ՏՃԲ :
 Ուր անուես սուշէս՝ է բացայայտիչ բառիս՝ հիմն մար-
 գարէից :

Երբեմն ևս ՚ի մէջ բացայայտին և բացայայտելոյն
 անկանի բայ . զք, * Օ կորուսեալ դրամն ինդրեաց՝
 զլծագաւորական պատկերն ॥ . Ի Գնար : Ուր անուես
 Լափաւորական պատկեր՝ է բացայայտիչ կորուսեալ դրա-
 մոյն, ՚ի մէջ անկանելով բայիս՝ Ինդրէաց :

Վիտելի է երկրորդ, զի երբեմն բազում եզական ան-
 ուանք լինին բացայայտիչ միոյ յոգնականի . զք .

* Որդիք սբյ յուսկանն պապ և աթանազինէս... մաս
 անձանց նիւթեցին ॥ . յովն . կալ : Ուր երկու եզական
 անուանքս պապ և աթանազինէս՝ են բացայայտիչ միոյ
 յոգնական անուանս՝ որդիք սբյ յուսկանն :

Վիտելի է երրորդ, զի թէպէտ բացայայտին առանց
 շաղկապի յարի ՚ի բացայայտեալն՝ որպէս և եղաք ՚ի
 վերոյ, բայց որովհետեւ բացայայտին է իբր մեկնուի
 բացայայտելոյն, ուր ուրեք կայ բացայայտիչ, անդ
 կայ զօրութիւն և մեկնական շաղկապ ինչ . որպէս յայս
 բան, * Օ տիրական մարդն՝ զհոգին թշնամանեցին ॥,
 սարգ . կայ զօրութիւն մեկնական շաղկապդ՝ այսինքն .
 որպէս եթէ ասէր . զտիրական մարդն, այսինքն զհո-
 գին թշնամանեցին :

Եւ զի յամի ՚ի սոսա միշտ զօրութիւն կայ շաղկապ մեկ-
 նական, վասն այսորիկ բազում անգամ հանդերձ նու-
 վաւ դնի բացայայտին . զոր օրինակ, * Յամաբեսցին
 պտոյտք գետոց . այսինքն՝ մեղաց յորդու թիք ॥ . ափալ :
 Ուր անուես մեղաց յորդուի՝ հանդերձ շաղկապիւս այս-
 ինքն՝ լեալ է բացայայտիչ անուանս՝ պտոյտք գետոց :

Երբեմն ևս բայիւ հանդերձ դնի . զք . * Ինթասցո՛ւք
 այսուհետեւ ՚ի սք լերինսն, ՚ի մարգարէսն ասեմ և
 յառաքեալս ॥ . Գով . լուս : Ուր անուանքս ՚ի մարգարէսն
 և յառաքեալս՝ հանդերձ բայիւս ասեմ՝ են բացայայտիչ
 անուանդ՝ ՚ի լերինսն :

Եւ դարձեալ երբեմն ամբողջ ինչ բան իբրև անուս
 ինչ՝ լինի բացայայտիչ անուան . զոր օրինակ, * Ի՞մ

օրէնք 'ի մի բան կատարին, 'ի սիրեցեցեան զընկեր քոյ իբրև զանձն քոյ ॥ - Գաղ : Ուր բանս՝ սիրեցեցեալ զընկեր քոյ *liā*, է բացայայտիչ անուանս 'ի մի բան :

Մ. յւ այսպիսի բացայայտիչք հասարակօրէն յանորոշ բանս դիպին . այսինքն յայնպիսիս, որք աներևոյթ բայիւ կազմին . զոր օրինակ, * Մ. յս խաբէութի մտաց ողորմելի է քան զամ խաբէութի, համակ կարգաւորութի յանկարգութե կալ, և լուսով 'ի խաւար ॥ - սարգ : Ուր բանս՝ համակ կարգաւորութի յանկարգութե կալ և այլն, է բացայայտիչ անուանող՝ այս խաբէութի :

Մ. յս եղանակ բացայայտիչ առաւելագէտս 'ի գործածի 'ի վերայ ցուցական դերանուանցս՝ այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն . զոր օրինակ, * Օ իմարդ լինիցի այդ՝ փոխանակել զիմ՝ ախտացեալ ոչխար ընդ առողջ գազանին ॥ - խոր : Ուր բանս՝ փոխանակել զիմ և այլն՝ է բացայայտիչ դերանուանս՝ այդ :

Վիտելի է չորրորդ, զի ուրեք ուրեք յատուկ անուանք առանց համաձայնելոյ ևս լինին բացայայտիչ հասարակ անուանց . իբր զի երբեմն դնին յուղղական հօլովն (իբր ածական) . զոր օրինակ, * Հունն յորդանան գետոյ երիցս անգամ բաժանեցաւ ॥ - ՏճԲ : Ուր յատուկ անունս յորդանան՝ է բացայայտիչ գեորդն յուղղական հօլովն (իբր ածական) .

Այլ երբեմն ևս յարելով 'ի բառ դանուանովաւ հանդերձ լինին իբրև մի բացայայտիչ հասարակ անուան . (և այս յաւէտ 'ի յատուկ անուանս մարդկան) . Գր, * Արեւից մի պետրոս անուն ॥ - Եղեղե : Ուր պետրոս անուան է բացայայտիչ բառիս՝ երեց մի :

Վիտելի է հինգերորդ, զի 'ի բացայայտիչս նախդիրն իբր 'ի բազումս դնի 'ի վերայ երկուցն ևս, այսինքն 'ի վերայ բացայայտելոյն և 'ի վերայ բացայայտչին . մանաւանդ եթէ անկեալ իցէ 'ի միջի այլ մասն բանի . Գր, * Օ փրկականն սաղաւարտ 'ի գլուխ եդել զնշան խաչին ॥ - շար : Ուր նախդիրդ զ՝ եդեալ է 'ի վերայ երկուցն ևս . այսինքն 'ի վերայ բացայայտելոյն՝ որ է բառս փրկականն սաղաւարտ, և 'ի վերայ բացայայտչին՝ որ է բառս նշան խաչին :

Թեպէտ երբեմն միայն 'ի վերայ նախընթացին

դնի . դր , * Օ առաւօտ խաղաղու թէն քս սիրով 'ի մեզ ընկացուք ॥ . Խոսրով : Ուր նախդիրդ զ' եդեալ է 'ի վերայ նախընթացին միայն , այս է առաւօտ խաղաղութի . սրոյ լեալ է բացայայտիչ անունս քս :

'Ի վերոյգրեալ օրինակոք արժան է նկատել և զայս , զի բացայայտիչն և բացայայտեալն բազում ուրեք դնի հանդերձ յատկացուցաւ՝ կամ ածականաւ . ոպ երեւի և յայտ . * Շուրջ եղեն շունք բազումք՝ զինուորք պիղատոսի ॥ . շար : Ուր բացայայտիչն , այսինքն անունս զինուորք՝ եդեալ է հանդերձ յատկացուցաւ , որ է բառս՝ պիղատոսի . և բացայայտեալն , այսինքն անունս շանք՝ եդեալ է հանդերձ ածականաւ , որ է բառս՝ բազումք :

Գիտելի է վեցերորդ , զի երբեմն թէպէտ գոյական անուանք համաձայն դնին 'ի բանս առանց շաղկապի , բայց ոչ համարին բացայայտիչ միմեանց , այլ իբր խնդիր բայի . զոր օրինակ , * Արեւեցաւ մովսէսի վառմամբ հրոյ 'ի մօրենուջ յանապատին ॥ . զարար : Ուր երկօրին գոյական անուանքս 'ի մօրենուջ և յանապատին՝ թէպէտ առանց շաղկապի յարեալ են ընդ միմեանս համաձայն թուով և հօլովիւ , բայց ոչ են միմեանց բացայայտիչ . այլ երկօրին և ս խնդիր բայիս՝ երեւցաւ :

Գ Լ Ո Ի Խ Բ :

Յաղագս համայնոսն գոյական անուանց ընդ գոյականաց՝ իբր յարեացոյցիւ . հաճ

Յաղագս յարեացոյցիւ :

'Ի բանս յորժամ կամիմք յայտ առնել , թէ արդեօք նշանակեալն իրիք գոյական անուան՝ որո՞ւմ յատկանայ , կամ որոյ է , դնեմք առ նմին զայլ գոյական անուն 'ի սեռական հօլովիւ , որ զնշանակուի միւս անուան իւրացուցանէ , կամ ինքեան յատկացուցանէ . այսինքն ցուցանէ՝ թէ նշանակեալն այնր անուան՝ իւր է . և զայն սեռական հօլով կոչեմք յարեացոյցիւ .

զոր օրինակ . * Ար զբեռն ընկերին բառնայ , կատարէ զօրէնսն քնի ॥ . լամբ : Աւր գոյական անունդ ընկերին՝ լեալ է յատկացուցիչ բեռն . զի իւրացուցանէ զբեռն . այսինքն ցուցանէ զբեռն՝ որ ընկերին է . և ոչ՝ որ նաւուն , կի՛մ այլոյ իրիք : Սոյնպէս և գոյական անունդ քնի՝ լեալ է յատկացուցիչ բառիս՝ զօրէնսն . զի սեպհականէ ինքեան զնոյն . այսինքն յայտ առնէ՝ թէ քնի է այն օրէնք , և ոչ աշխարհի , կի՛մ այլոյ :

Այլ զիտեղի է նախ , զի յատկացուցիչն բազում անգամ նախադասի յատկացուցելոյն . զոր օրինակ , * Արում շատ տուաւ գիտութեան իմաստ , շատ խնդրեցի ՚ի նմանէ առաքինութեան տեսակ ॥ . Խորով : Աւր անունս գիտութեան՝ լեալ է նախադաս յատկացուցիչ Իմաստին . որպէս և անունս առաքինութեան՝ Խորով :

Արբեմն ՚ի մէջ յատկացուցիչն և յատկացուցելոյն այլ մասն բանի անկանի . զոր օրինակ , * Հախտս թաւալի մեղաց ॥ . այսինքն յախտս մեղաց թաւալի . Դորդ :

Արբեմն ևս ամբողջ բան մտանէ ՚ի միջի . զոր օրինակ , * Օ ի զմեղացն՝ որով ստուք բամբասեցեր զարդարն ՚ի մեծամեծաց կի՛մ ՚ի փոքունց , զգատաստանն գու ինքնին անձամբ քո բարձրես ॥ . Կր գու ինքնին բարձրես զգատաստան մեղացն . սարգ :

Վիտեղի է երկրորդ , զի երբեմն միոյ անուան լինին բազում յատկացուցիչք . Դր , * Սթերս՝ սուկոյ և արծաթայ և քարանց պատուականաց և զգեստուց և պէսպէս գունոց և անկուածոց ... բազմացոյց ॥ . Խոր : Աւր անուանքս՝ սուկոյ , արծաթայ , քարանց , ևն , են յատկացուցիչ անուանս՝ Տթերս :

Արբեմն ևս բազում գոյական անուանք լինին միմեանց յատկացուցիչ . Դր , * Տիպք կերպարանաց ճըշմարիտ բանից զգեցեալ ունին զհօգւոյն իմաստս ॥ . Իգնատ : Աւր ճշմարիտ բանիցն է յատկացուցիչ կերպարանաց . և կերպարանացն է յատկացուցիչ անուանս՝ Իգնատ :

Վիտեղի է երրորդ , զի եթէ յատկացուցիչն կամ յատկացուցեալն իցէ նախադասեալ , նախդիրն հասարակօրէն գնի միայն ՚ի վերայ նախընթացին . Դր , * Օ լուսոյն ճառագայթ տպաւորէր ՚ի յինքեան ॥ . շար : Արբեմն ևս՝ այլ սակաւ ուրեք գնի միայն ՚ի վերայ

յետադասին . դր , * Նառայի առեր ղերպարանն ॥ չի
առեր ղերպարան ծառայի . շար :

Արբեմն 'ի վերայ երկուցն ևս դնի , մանաւանդ ե-
թէ անկեալ իցէ 'ի միջի այլ մասն բանի . զոր օրինակ ,
* Օ մահու փարատեաց ղերկիւղ ॥ շար : Աւր նախդիրն
եղեալ է 'ի վերայ երկուց անուանցս՝ Տահու և Երկու-
սրոց մինն է յատկացուցիչ , և միւսն յատկացուցեալ ,
որպէս եթէ ասէր . ղերկիւղ մահուն փարատեաց :

Իսկ երբեմն դնի նախդիրն նաև 'ի վերայ այլոց բա-
ռից՝ որք յարին 'ի յատկացուցիչն կի՞ 'ի յատկացու-
ցեալն , զհարգ և իցէ . դր , * Օ մեծին 'ի ծնունդս կա-
նանց ղարատեալն և ղմկրտչին յովհաննու ղառաբի-
նու թէ ղհանդէս տօնելով այսօր 'ի ձայն հնչման , և
այլն ॥ շար : Աւր փոխանակ միոյ նախդրի եղեալ կան
բազումք . զորս հնար էր չդնել՝ և կարգել այսպէս .
'ի ձայն հնչման տօնելով այսօր ղհանդէս առաքինուե-
կարատեալն և մկրտչին յովհաննու՝ մեծին 'ի ծնունդս
կանանց :

Պարտ է նկատել և զայս , զի եթէ յատկացու-
ցիւքն կամ յատկացուցեալքն իցեն բազում , նախ-
դիրն իբր 'ի բազումս կրկնի նաև 'ի վերայ երկրորդ
յետադասին . և երբեմն 'ի վերայ Կամի . իսկ երբեմն
ոչ կրկնի . դր , * Վուք զմն արհամարհեալ զօրոյն
պատուիրան՝ ղթչամուսն ձեր ընկալայք դարձեալ
զխրատ , ղատելու թի և ղբաժանումն ॥ շար :

Արբեմն ևս զօրու թի եղեալ ղյատկացուցեալն՝
նախդիրն դնի 'ի վերայ յատկացուցիչն , և այնու իբր
զօրու թի իմացեալ լինի յատկացուցեալն . զոր օրինակ ,
* Երբեքն ուսանել , և ղյովհաննու առաջի դնեն ॥ .
այսինքն զօրինակ աղօթելոյն յովհաննու առաջի դը-
նեն . Իգնար :

Ըստ այսմ պատահի և 'ի դերանուանս . զոր օրի-
նակ , * Ատուղ հոգւոյն ղմերս ասէ առաքեալն (այս-
ինքն զգործ մեր) , որ է սէր , իսաղաղութի . և ոչ թէ
հնոցայն (այսինքն զգործ նոցա) , որ էր հեռ , նա-
խանձ , և այլն ॥ շար :

Յաղագս համայնառնէ փոյական անուանց ընք փոյականաց իբր
խնդիր . համ

Յաղագս խնդրոյ փոյականաց :

Փոյական անուանք բաց 'ի համաձայնելոյ լէ գոյ-
ականաց իբր բացայայտիչ և իբր յատկացուցիչ, յա-
րին 'ի նոսա նաև իբր խնդիր՝ համաձայն բնութեան
ցին : Ս ասն զի բազումք 'ի նոցանէ ունելով զհաղոր-
դութի լէ բայից՝ լը պահանջելոյ բնութեան բայիցն առնուն
էրբեմն զխնդիր 'ի պէսպէս հոլովս . որպիսի են բայ-
անուանքն , իմ արք՝ որք 'ի բայից ամանցին , որդոն ,
Ղաշակումն , առումն , տեսութի , ժառանգութի , ասա-
ցուած , ևն . և կիմեն իբր արմատք նոցին . սնյ , Պատ-
ճառ , բարոզ , վիշտ , բարբառ , և այլն :

Սմանք յայտպիսի անուանց ունին զհաղորդութի լէ
ներգործական բայից , և կոչին ներգործականահաղորդ . ու
մանք լէ կրաւորականաց , և կոչին կրաւորականահաղորդ .
և ոմանք լէ չեզոքականաց , և կոչին չեզոքականահաղորդ :
Ըստ այսմ իմա և զածական անուանց :

Ըստպիսի անուանք էրբեմն ունին զզօրութի դեր-
բայի՝ մանաւանդ 'ի հոլովիլն . և էրբեմն ևս զզօրութի
ընդունելութեց յանգելոց 'ի ոչ և 'ի եւալ : Սւստի և
ըստ այսմ առնուն զխնդիր :

Ըստ զիտելի է , զի 'ի մեջ սոցա ներգործականա-
հաղորդքն և կրաւորականահաղորդքն առնուն զիւրի-
նատեսակ խնդիր . մի՛ խնդիր սեռի , և մի ևս՝ խնդիր
բնութե . իսկ չեզոքականահաղորդքն՝ միայն զխնդիր
բնութե :

Վիտելի է ևս , զի այսպիսի գոյական անուանք ոչ
միայն առնուն խնդիր զգոյական անուանս , այլ և 'ի
տեղի նոցա զածականս , ևս և զգերանուանս և զըն-
դունելութիս , որպէս տեսցի զկնի :

Ամեն . Կ :

Անուանք ներգործականապաշարդդ՝ յորժամ իբր դերբայ վարին , առնուն խնդիր սեռի 'ի սեռական հոլովն . փր , * Ճաշակմա՛ն մեղաց՝ ճաշեցի զմահ՝ ॥ . Ժամադիրք : Ուր սեռականն հոլովս մեղաց՝ լեալ է խնդիր սեռի ճաշակման . ուղ եթէ ասէր . ճաշակելով զմեղս՝ ճաշեցի զմահ :

Սոյնպէս է եթէ այսպիսի անուանք ունիցին զզօրութի բառից յանգելոց 'ի օղ , և 'ի էլ . փր , * Աղբուր կենաց անձ , և բղխումն սղորմութե՝ ॥ . այսինքն բղխող սղորմութե . շար :

Արբեմն ևս առնուն զխնդիր հայցական փոխանակ սեռականի . փր , * Անդանացուցեր զնա՝ փմա՛նք քո 'ի նա զհոգի բանական ॥ . 'ի մաշտոյի : Ուր հայցական հոլովդ պիտի բանական՝ լեալ է խնդիր սեռի փմանն . որպէս թէ ասէր . կենդանացուցեր զնա փչելովդ զհոգի բանական :

Այլ եթէ համբալք և նորավարժք չիցեն բաւական որոշելոյ զսեռական խնդիրն 'ի յատկացուցէ , մարթ է նոցա հասու լինել այսու . զի եթէ սեռական հոլովն կարիցէ փոխիլ 'ի հայցական՝ է խնդիր . որպէս տեսանի յառաջի եղեալ օրինակդ յասելն . ճաշակելով զմեղս . և ևս զորդմութե՝ բղխող : Ասկ եթէ ոչ կարիցէ փոխիլ 'ի հայցական , ոչ է խնդիր , այլ յատկացուցիչ և կամ այլ ինչ :

Ամեն . Ը :

Անուանք ներգործականապաշարդդ բաց 'ի սեռական և 'ի հայցական խնդրոց , և կամ առանց նոցա ևս , առնուն երբեմն յընտիր շարադրութիս զխնդիր բնութե յայնպիսի հոլով , զորպիսի պահանջեն բայքն , և որոց ունին զհաղորդութի :

Յուզականն , (թէպէտ և 'ի սակաւս .) փր , * Որ դրամանունն պետրոսի զքեզ օրդի հօր անյ՝ հայր 'ի յամպոյն վկայեալ այսօր ॥ . շար : Ուր անունս որդի՝ է սուղական խնդիր դրամանունն , որպէս թէ ասէր . զգաւա-

նեւն պետրոսի զքեզ որդի հօր ւնյ՝ հայրն ւնձ վկայեաց
այսօր 'ի յամսոյն :

'Ա վերջահօլով տրականն . ար , * Առայք զուն ան
սուտ ձեզ խոստանն ॥ . լամբրոն : Աւր չեղն՝ է տրական
խնդիր բառիդ խոստանն :

'Ա նախդրիւ տրականն . ար , * Տնւր մեզ զխաղաղու
թիւն քո , զոր շնորհեցեր սքց քոց առաքելոց՝ քնմաճ
քո 'ի նոսա զկենդանացուցիչ և զամենազօր հոգիդ քո
սք ॥ . Ժամադիրք : Աւր բառդ 'ի նոսա՝ է նախդրիւ տրա
կան խնդիր քնման . որպէս թէ ասէր . փչելով քո 'ի
նոսա զհոգիդ :

'Ա բացառականն . զոր օրինակ , * Առաւել քան
զարարչութիւն յօնչէ զաշխարհս՝ մեծագոյն փրկութիւն
զվերջինն իմանայիր ॥ . եղիչէ : Աւր յունչն՝ է բացա
ռական խնդիր արարչութիւն . որպէս թէ ասէր . առա
ւել մեծագոյն փրկութիւն իմանայիր զվերջինն՝ քան
զարարչագործել զաշխարհս յօնչէ :

'Ա պատմականն . ար , * Աւերագոյն է այս զբար
տութեան սասցոսած զմէնջ՝ քան զհեթանոսականացն ա
ռասպելեալ ւնձաբանութիւն ॥ . այսինքն ասեւն զմէնջ
զայս զբարտութիւն՝ վերագոյն է , ին . Էորհ :

'Ա գործիականն . զոր օրինակ , * Չէին ինչ 'ի միտ
առնոց լն հոգւոյն սքց կանխասացութիւն բերանով դաւ
թիւն ॥ . այսինքն լն ասելոյ կանխաւ զայս հոգւոյն սքց
բերանով դաւթի . նանայ :

'Ա պարառականն . ար , * () րինաւոր լուացմունք
քահանայիցն , և սրսմունք զժողովրդեամբն՝ նշանա
կէին զհոգւոր մկրտութիւնս ॥ . նի սրսկեւն զջուրս և
զարիւնս զժողովրդեամբն նշանակէին , ին . գեորդ :

'Ա ներգոյականն զոր օրինակ , * Ար 'ի սկզբան օրի
նարիւ պահոցն 'ի դրախտին ॥ . շար : Աւր 'ի դրախտին է
խնդիր բնութեան օրինարիւն . որ աստ փոխանակ գոյա
կանի դնի . իսկ խնդիր սեռին 'ի բարգուռ տեսանի .
այլ պահոցն է յատկացուցիչ . որպէս թէ ասէր . որ 'ի
սկզբան եգիր զօրէնս պահոց 'ի դրախտին :

'Ա խաղաղութեան . զոր օրինակ , * Ար սքեղծմաճ լն պատ
կերի քո տէր՝ պատուեցեր զմեզ ॥ . այսինքն ստեղծա
նելով ըստ պատկերի քո . շար :

Իսկ անուանք էրառարականահաղորդք առնուն զբացա-
ռական իբր զինգիր սեւի . զոր օրինակ , * Օ պաշա-
րուսն 'ի տուանց մեղացն գիշեր կոչէ ॥ լմբ : Ուր բա-
ցառական հօլովս 'ի սրտանց մեղացն է խնդիր սեւի կրա-
ւորականահաղորդ բայանուանս զպաշարուսն : Մյլ զըր-
նուէ խնդիրն առնուն ը ներգործականաց իւրեանց :

Ս ան 7 :

Մյուանք քերականահաղորդք յայնպիսի հօլով առնուն
խնդիր յօրպիսի պահանջէն բայքն՝ որոց հաղորդին :
'Ի վերջահօլով տրականն . զր , * Մինչալուի վարձուցն
հատուցման՝ ընդարձակէ զոգիսն 'ի գործս բարուէ ॥
էոչ : Ուր բառս հասրոցման վարձուցն՝ է տրական խնդիր
աինչալուէն . որպէս թէ ասէր . ակնուենին հատուցման
վարձուց՝ ընդարձակէ զոգիսն 'ի բարեգործութիս :

'Ի նախգրիւ տրականն . զր , * Ո՞ւյլ զտապանակն
նյ արար գերի այլազգեաց , թէ ոչ՝ քահանայիցն առ
'ի պաշտօն իւրեանց հեղգութիւն ॥ լմբ : Ուր բառս առ
'ի պաշտօն իւրեանց՝ է խնդիր հեղգութիւն . որպէս թէ ա-
սէր . ո՞ւյլ զտապանակն նյ գերի արար այլազգեաց ,
եթէ ոչ՝ հեղգանալն քահանայից առ պաշտօն իւ-
րեանց :

'Ի բացառականն . զր , * Հասանէ նմա կէտ վճար-
ման 'ի կենացս ॥ յովհ . էալ : Ուր 'ի կենացս է բացառա-
կան խնդիր վճարման . որպէս թէ ասէր . հասանէ նմա
կէտ վճարելոյ 'ի կենաց :

'Ի պատմականն (այլ 'ի սակաւս .) զր , * Յալի-
տեան է մեր զնմանէ գոհութիւն , որպէս և շնորհն . լմբ ॥
Ուր զնմանէն է պատմական խնդիր գոհութիւն :

'Ի պարառականն (այլ 'ի կարի սակաւս .) զոր օրի-
նակ , * Սպառաւորելին մեղք 'ի ժամանակէ անախ յան-
ցոսածոցն ազամայ զպատուիրանաւն ॥ Տծբ : Ուր պա-
րառական հօլովս զպարտութեանաւն՝ է խնդիր յանցոսածոցն :

'Ի ներգոյականն . զր , * Խոստացաւ զերանութիւն և
զհանգիստ յարքայուէ իւրում ॥ Տծբ : Ուր բառս յար-
քայութիւն է ներգոյական խնդիր հանգստեան :

'Ի ձեռն նախագորութիւն . զր , * Որգի հօր ասելով

ընդունելնայնոք ընդ հօր յայտ առնէ ॥ Խոսրով : Ուր
 ընդ հօրն՝ է նախագրուք խնդիր բնու-նայնոք : Աս
 այսմ է և յայլ բազումս :

Այլ զիտելի է, զի ոմանք յայսպիսի անուանոց եր-
 բեմն հանդերձ բուն խնդրով իւրեանց առնուն նաև
 զայլ խնդիր . զի, * Ար առաքեցէր նախընթաց քում
 գալստան սբ զմարգարէսն աւետարանել տիեզերաց
 զիջումն քո՝ ի հայրական ծոցոյ՝ ի վերկուր տիեզերաց ॥
 շար : Ուր անունս իջումն առեալ է զերկուս խնդիրս՝
 զբացառական, այս է՝ ի հայրական ծոցոյ, և զնախդրիւ
 արական, այս է՝ ի փրկութիւն տիեզերաց :

Գ. Լ. ՈՒՍ Գ.՝

{ աղագոս համայնոք փոյակն անուանոց ընդ ածականաց . համ

{ աղագոս խնորրոյ ածականաց :

Նամաձայնուրի դոյականաց լը ածականաց ոչ այլ
 ինչ է՝ բայց եթէ լինելն դոյականաց՝ խնդիր ածակա-
 նաց . զի որպէս գոյական անուանք ունելով զհազոր-
 դուր ընդ բայից՝ առնուն զխնդիր ի պէտպէս հօրովս,
 սոյնպէս և բազումք յածականաց, վասն ունելոյ զհա-
 զորդութի ինչ կամ զվերաբերուրի առ բայս՝ առնուն
 զխնդիր ըստ կանոնաց խնդրառութե գոյականացն .
 որպէս տեսցի յառաջիկայ կանոնսդ :

Այլ զիտելի է, զի որպէս ասացաք զգոյականաց,
 սոյնպէս և ածականք ոչ միայն զգոյական անուանս
 առնուն իւրեանց խնդիր, այլ և ի տեղի նոյ երբեմն
 զածական իբր զգոյականս, և զդերանուանս, և ըզ-
 դերբայս, ևս և զընդունելութիս, զորոց զօրինական
 կարես տեսանել զկնի :

Կանոն . Թ :

Ըծականք ներփոքականահաղորդոս ունելով զզօրութի
 ընդունելութեց յանգելոց ի օղ՝ առնուն զխնդիր սե-
 ու ի սեռական հօրովս . զի, * Ակայք օրհնեալք հօր

իմոյ՝ Ժառանգորդք երկնից խորանայ ॥ . Ի շարահնայն :
 Ուր սեռական հոլովս խորանայ երկնից է խնդիր սեռի
 անուանս Ժառանգորդ :

Արբեմն ոմանք յայսպիսի ածականաց, այլ սակաւք
 յոյժ աւնուն զհայցական փոխանակ սեռականի . զոր,

* Ղտիւք չարեաց, զծնողս անարգութ ॥ . հոռով :

Այլ զիտելի է, զի բարդ ածականք բազում ան-
 գամ ՚ի բարդութե՛ն ունելով զխնդիր սեռին աւնուն
 միայն զխնդիր բնութե՛ն յայլ հոլովս . զոր, * Հրամանա-
 հան յընդհանուր եկեղեցիս քնի ॥ . Իմ հանող զհրաման
 յընդհանուր եկեղեցիս քնի . ագաթ :

Սանն . Բ :

Ածականք ներգործականահաղորդք բաց ՚ի խնդրոյ
 սեռի աւնուն երբեմն նաև զխնդիր բնուէ յայնպիսի
 հոլով՝ յորպիսի պահանջեն բայքն՝ ընդ որոց ունին
 զհաղորդութի . զոր, * Ղարծակից է աւն իւրում ամ
 բարեաց ॥ . առակ : Ուր բառս ամ բարեաց է խնդիր սեռի
 գործակիցն . իսկ բառս առն իւրում է խնդիր բնութե՛ն ՚ի
 տրական հոլովս . որպէս թէ ասէր զործուլ է ամ բա-
 րեաց ընդ աւն իւրում :

* ՚ի հեղձմանէ կենցաղոյս ալեաց պահպան ॥ . նար :
 Ուր ՚ի հեղձմանէ ալեացն է բացառական խնդիր պա-
 հպանին . որոյ խնդիր սեռին զնի զօրութե՛ն . որպէս
 թէ ասէր . պահպանող մարդկան ՚ի հեղձմանէ ա-
 լեաց կենցաղոյս :

* Ղառանգաւոր հին օրինացն արդարութե՛ն ընդ մար-
 դարէից ॥ . շար : Ուր բառս արդարութե՛ն հին օրինաց՝ է
 խնդիր սեռի Ժառանգաւորին . իսկ բառս ընդ մարդա-
 րէից՝ է խնդիր բնութե՛ն նախադրութե՛ն ընդ :

Արբեմն ևս աւանց խնդրոյ սեռի . զոր, * Աւտասոր
 հայոց մեծաց ॥ . շար : Ուր հայոց մեծացն է տրական
 խնդիր ավտասորին . իսկ խնդիր սեռին զօրութե՛ն
 զնի . որպէս թէ ասացեալ էր . աւետող բարեաց
 առ հայս :

Ամեն . 7 :

Ըծականք կրտսրականահաղորդք ունելով զգորութի ընդունելութեց յանգեւոց 'ի լի կամ 'ի եալ, առնուն զխնդիր սեռի 'ի բացառական հոլովն . զոր օրինակ ,

* Աղէգն շարժան 'ի հոլմոյ || . զոր : Աւր բառդ 'ի հոլմոյ' է խնդիր շարժանին . ոնկ թէ ասէր . շարժեալ 'ի հոլմոյ :

* Հերեւելի զգայութեցս անձառնին՝ առնել հաղորդս || . շար : Աւր բառս յերեւելի զգայութեցս՝ է խնդիր բառին անձառնին . որպէս թէ ասէր . առնել հաղորդայնց , որք ոչ ճառին յերեւելի զգայութեց : Ասկ զխնդիր բնուեն առնուն ըստ ներգործականացն :

Ամեն . 7 :

Ըծականք չեղորականահաղորդք հասարակօրէն զայն պիտի խնդիր առնուն զորպիսի պահանջեն բայքն՝ ի որոց ունին զհաղորդութի :

Ամանք առնուն զվերջահոլով տրական . դր , * Վառ վութե արժանաւոր այն բժիշկ է , որ զանյուսացեալ հիւանդն յանձն առնու բժշկել || . սարգ :

Ամանք զնախդրիւ տրական . դր , * Բնուի մարդ սիրօղ է բանի , որպէս պատուեցաւ յարարէն , և սրաւնի 'ի խօսս || . սարգ :

Ամանք զբացառական . դր , * Սահն սպար 'ի մահուանէ՝ արձակէ զմահու ըմբռնեալն || . մարգ :

Ամանք (այլ սակաւք) զպատմական . դր , * Թանձրամիտք էին փարիսեցիքն , և անդոյն զհոգեկան խնդրոյն || . նանայ :

Ամանք զգործիական . դր , * Ընդլին անդամօք անկարօտք են բժշկութե || . նար :

Ամանք զներգոյական . զոր օրինակ , * Բաշարկնդ 'ի հաստատութե || . նար :

Ամանք 'ի ձեռն նախադրուէ . դր , * Թողեալ են շարք խառն ընդ բարիս յաշխարհի աստ || . մարգ :

Այլ աստ գիտելի է , զի ամականք չեզոքականա-

Հաղորդք երբեմն բաց 'ի բուն խնդրոյն առնուն նաև զայլ խնդիր . Գր , * Արկնայնոյն 'ի յերկրի հաղորդ Զըգնու թի . . . Կբ գանիել ॥ . շար : Աւր երկնայնոյն է բուն տրական խնդիր հաղորդին . իսկ Զգնու թին և 'ի յերկրին' են երկրորդական և պատահական խնդիրք նորա :

* Աս ինձէն անձամբ իմով ինչնագրաւ 'ի մահ ॥ . Կար : Աւր 'ի մահն է բուն խնդիր ինչնագրաւին . իսկ բառս անչամբ իմով է երկրորդական խնդիր նորուն :

* 'Ի Հաւատս բանից և 'ի պատմութիս խօսից հասարակի իրերաց . և 'ի Հաւատն՝ որ առ ԿԾ , միմեանց անհասանի ॥ . լամբ : Աւր իրերացն է բուն տրական խնդիր հասարակին . իսկ 'ի հասարս բանից ԿԾ՝ երկրորդական խնդիր նորին : Սոյնպէս և միմեանցն է բուն տրական խնդիր անհասանին . իսկ 'ի հասարս է երկրորդական խնդիր նորա :

Վիտելի է դարձեալ , զի ածական անուանք բաղադրեալք մասնկամբս ան , թէպէտ լը բնուէ իւրեանց զայլ խնդիր պահանջեն , բայց իբր 'ի բազումս առնուն զբացառական . զոր օրինակ , * Վահանայք . . . անդրոտդ 'ի Հաւատոց ॥ . մամբրէ :

Աւ և ս գիտելի է , զի ածական անուանք ինչ՝ որք նշանակեն զհայրենիս , հասարակօրէն առնուն զխնդիր 'ի գործիական կամ 'ի բացառական հօլովն . զոր օրինակ : * Արբակէս՝ գաւառաւ մեղացի . . . յինքն յանկուցանէ զպարոյր ॥ . Խոր : Աւր գասարաւն է գործիական խնդիր բառիս մեղացի :

* Ագիտ հրէայ զոմն անուն ակիւղաս յազգէ պոնտացի ॥ . Գործ : Աւր յազգէն է բացառական խնդիր բառիս պոնտացի :

Սասն խնդրոյ ածականաց յանգեւոյ 'ի լի :

Սյսպիսի ածականք բղխեն 'ի ներգործական բայից . և առնուն զխնդիր 'ի սեռական հօլովն իբր զխնդիր սեռի . զոր օրինակ , * 'Ի գերեզման իջեր խաչանիւ մահու ॥ . շար : Աւր սեռական հօլովք մահու՝ լեալ է խնդիր սեռի ածական անուանս խաչանիւ : Աւ այս յաճախեալ է 'ի զիրս :

Բայց երբեմն փոխանակ սեռականի առնուն զհայ-
ցական . զոր օրինակ , * Ատուն մեզ զգեղմն ընդունիչ
զցօղն երկնային ॥ . շար : Աւր հայցական հոլովդ շոշն
երկնային՝ է խնդիր բառիս ընդունիչ , որ լեալ է ածա-
կան գեղման : Այսպիսի ածականք ուրեք ուրեք հան-
դերձ սեռական կամ հայցական խնդրով առնուն նաև
զայլ խնդիր՝ յայլ հոլովս իբր զխնդիր բնութի :

Վերջահոլով տրականն . զոր օրինակ , * Այ մատ-
նեցեր ամօթոյ՝ զմարտիչն զքեզ տանջանաց մահու ॥ .
նարեի :

Վ նախդրիւ տրականն . զոր օրինակ , * Համուիչ ՚ի
խաղաղուի մրկածուսի շարժմանց կացուցար ॥ . նարեի :

Վ բացառականն . զոր օրինակ , * Վ նմա հան-
գեաւ ... տապանն աղբեցոցիչ ՚ի հոսանաց մեղաց հայ-
աստան ազանց ॥ . այսինքն որ աղբեցոյցն զաղինս
հոյաստանեսայց ՚ի հոսանաց մեղաց . շար :

Վ գործիականն . զոր օրինակ , * Վաղցրաձայն
հնամամբ դարձոցիչ մոլորեալ հօտին ॥ . շար :

Վ ներգոյականն , և այն՝ իբր ըստ պատահման . զոր
օրինակ . * Հա հաւորն ատենի յայտնիչ իրաւամբք զմա-
տակարարութին որ աւ մեզ ॥ . նար :

Վ ձեռն նախադրուէ . զոր օրինակ . * Վ զօթքն է ...
զնձ լը մարդկան հաղբեցոցիչ ॥ . սարգ . ան . պեք . է :

Վ տանին և քանի մի ածականք սակաւք յոյժ այս
պիսի վերջաւորութիւնք ըրիտեալք ՚ի շեղոքական բայից-
ոնչի են բառքս , բնակիչ . կառաւիչ , և սղասաւորիչ . որք
երբեմն առնուն զխնդիր լը բայիցն , և երբեմն փոխա-
նակ նոցին զսեռական . զոր օրինակ . * Վ նակիչս ՚ի
խաւարի տեսաք զլոյս գիտութեան եկեալ հասեալ ॥ .
խոսրով :

* Րնդարձակասուն բնակիչ ձիւնեղէն լերանց՝ եղեն
բնակիչ խորշակաբեր դաշտաց ॥ . եղիշէ :

Այն խնդրոյ ածական անոանց բաղդաբախանաց :

Առքա չորեքկին առնուն զխնդիր : Արբեմն զսեռա-
կան , կի՛ գտրական . զոր , Այնպիսի սերովբէից և բաղ-
մալեայ քերովբէից ॥ . շար :

Ուր բառքդ սերովբէից և սերովբէից են խնդիր վէ-
հափոյն բառին :

Երբեմն զբացառական. Դր, Օ դաժանագոյնն 'ի կեն-
դանեաց զօձն՝ դնէ օրինակ իշխանին մահու ॥ . Իֆն :

Ուր բացառական հոլովս 'ի կենդանեաց՝ է խնդիր
դաժանագոյնն :

Երբեմն զներգոյական. Դր, * Նանուցար վէհագոյն
'ի սիրօղս իմաստուէ ॥ . Զնորհ : Ուր ներգոյական հո-
լովք 'ի սիրօղս իմաստուէ է խնդիր վէհագոյնն :

Երբեմն ևս՝ և բազում անգամ նախադրու թէս՝
քան. և ուրեք ուրեք ևս նախադրու թեամբս՝ 'ի մէջ. Դր,

* Թէև քան զգազանս խոսագոյն իցէ՝ քան զսխարսն
հանդարագոյն լինիցի ॥ . Զնորհ :

* Ինթեռնուլ արժանաւորեցաք (զբանս առն) ... 'ի
մէջ իմաստնոց Իմաստագոյնն ॥ . Խոր .

Վիտելի է ևս, զի բազումք յաժականաց ուրեք
ուրեք իբր բազգատական վարելով լը բազգատական
անուանց առնուն զխնդիր . զնր օրինակ , * Թագա-
ւորաց վէհագոյն, որ ոչ ցուցաւ 'ի դարս ॥ . Դր թագաւո-
րաց վէհագոյնագոյն . նար :

* Վիտեա՛ ասէ ս'վ մեծք գիւցազանց, զի գիմեալ գայ
'ի վերայ քո բէլ ॥ . այսինքն մեծագոյնդ գիւցա-
զանց . Խոր :

* Խաբեն զպարզամիտս 'ի մարդկանէ ॥ . Իֆնար :

* Տատրակ ... քաղցրակօսս 'ի հաւս վայրենիս ॥ . Կեարեղ :

* Յիմար է՝ որ լը վէհա՛ք զինքն հակառակէ ॥ . պիտոյից :

Գ Լ Ո Ի Խ Ե :

Յաղագս համայնաբնէ ածական անուանց ընդ գոյականաց :

Ըձական անուանք յարելով 'ի գոյականս՝ յայտ
առնեն զորպիսու թի իրացն, զորս գոյականքն նշանա-
կեն . որպէս յայտ է 'ի գրելոց յերկրորդ մասին . Գլ-
Է : Եւ քանզի պէսպէս յարին սոքա 'ի նոսա, պէս-
պէս համաձայնին լը նոսին . որոց վասն դիցուք զվեց
կաննս :

Անոն . ւ .

Ըծական անուանք յորժամ յետադասին գոյակա-
նաց, համաձայնին լը նոսա թուով և հոլովիւ . փր ,
* Որդւոյ նենգաւորի բարի ինչ մի եղիցի ॥ . առաջ :
Ըհա 'ի սմին ածական անունդ նենգաւորի՝ համաձայ-
նեալ է լը գոյականի իւրում, այսինքն լը բառիս որդւոյ՝
թուով և հոլովիւ . զի որպէս որդւոյն է եղական, և
վերջահոլով տրական, սոյնպէս և նենգաւորին :

Սոյնպէս ևս եթէ բազումք իցեն յետադաս ածա-
կանքն, պարտին համաձայնիլ ընդ գոյականին թուով
և հոլովիւ . զոր օրինակ, * Այցոյց՝ եթէ ուստի ուր
խոնարհեցաւ և էջ վասն մարդկան մեղաւորաց և անար-
ժանից ॥ . սարգ :

Ըյլ գիտելի է նախ, զի սակաւ ուրեք յետադաս
ածականք 'ի նախգրիւ հոլովս՝ և յուղղականս յոգ-
նական անուանց դնին երբեմն անհամաձայն . փր ,
* Օ պսակս անապական 'ի քէն ընկալան ॥ . փոխա-
նակ դնելոյ, զպսակս անապականս . շար :

Ուրեք ուրեք ևս յերգս և յոտանաւորս նաև 'ի
վերջահոլովսն վասն յարմար ձևացուցանելոյ զոտս
բանիցն . զոր օրինակ, * Ատես մովէս զօրինակ կու-
սին 'ի սինա լցեալ լուսովն անմարոյց ॥ . այսինքն անմա-
տոյց լուսով . շար :

Գարձեալ գիտելի է, զի ածականք յանգեալք 'ի
էայ և էան իբր անհոլով գոլով, 'ի յետադասին՝ հա-
սարակօրէն ոչ համաձայնին ընդ գոյականացն . փր ,
* Վարինս արձակեցեր պարսիւս այսու փայտեայ
ընդդէմ գողիագու ॥ . նար :

Ըստ այսմ է և 'ի յաղգային և 'ի տոհմային ածա-
կանս . զոր օրինակ ,

* Տունկք տենչալիք տանս Ռորփոմեան ॥ . երկնէացի :

Անոն Է :

Ըծական անուանք յորժամ նախադասին գոյա-
կանաց, ոչ համաձայնին լը նոսա ոչ թուով և ոչ հոլով

վիւ . այլ՝ դնին պարզապէս , որպէս էին յուզղական
 հօլովն . ԳՐ , * Մնայական պսակաց արժանի եղեն ॥ .
 շար : Մհա՛ ՚ի սմին ածական անուանս անապական՝ նախա-
 դասեալ գոյական անուանս պսակաց՝ ոչ իւրք համաձայ-
 նեալ է լը նմա . զի պսակացն է տրական հօլով , և յոգ-
 նակի . իսկ անապականն է ուզղական , և եզակի :

Սոյնպէս է ևս՝ յորժամ՝ նախադաս ածականքն ի-
 ցեն բազում . ԳՐ , * Մներկբայ և անպղտոր ոգւով
 գրոշմեսցնէք զմեզ ॥ . խորով : Աւր ածականքս աներկ-
 բայ և անպղտոր՝ առանց համաձայնութե՛ նախադասին
 գոյական անուանս ոգւով :

Մյլ զիտելի է նախ , զի ածականք միավանկք նաև
 երկավանկք՝ որպէսի են , մի . այլ . մեծ . փոքր . նոր . հին .
 սք . աջ . յոգունս . բաղամ . բոլոր . լիւ . բազում անգամ ՚ի
 նախադասին համաձայնին լը գոյականաց թուով և
 հօլովիւ , զոր օրինակ :

* Սիով հոգւով զօրացեալքս զիարդ ՚ի միմեանց խոր-
 շիմք ॥ . լամբրոնացի . ՚ի ճառն հարգ . ելեշ :

* Յամենայն պատուիրանս այ կամաւոր գործելն է
 գովուե՛ արժանաւոր , և մեծաց վարձուց առ ի թ ॥ .
 սարգ :

* Բարորդ սրտիւ եկի առ քեզ աստ ॥ . Վարս :

Սօքա ուրեք ուրեք միայն հօլովիւ համաձայնին
 անեղական անուանց , և ոչ թուով . զոր օրինակ ,

* Տեսեր զաւհաւաչեայն նորոյ շնորհացս , և թէ ոււ
 տի սկսաւ , և ուր կատարեցաւ ॥ . սարգիս :

* Սեծի աւետեաց եղև միջնորդ (գաբրիէլ) ॥ . իգնար :

* Օ մեզ նորոգել ՚ի հոյ մեղաց ॥ . շար :

Աւրեք ուրեք նաև յոգնավանկ ածականք՝ մանա-
 ւանդ յանգեալքն ՚ի գոյն՝ համաձայնութե՛ նախադա-
 սին գոյականաց՝ լը պահանջելոյ վայելութե՛ բանին
 այլ ՚ի սակաւս . ԳՐ , * Ոմանք՝ Վայելլափոռնից սովորուեց
 ջանան խափանումն ՚ի վերայ բերել ॥ . յովն . իմաստ :

Մասն . Գ :

Եթէ ՚ի մեջ նախադաս ածականի և յետդաս
 գոյականին անկցի բայ՝ կմ՝ ընդունելուի , ածականն

իրը 'ի բազումս համաձայնի լը գոյականին [Թուով և հոլովիւ . զոր օրինակ , * Առաքելականացն աշակերտեցան բանից ॥ . Գրեգոր հալ : Ուր ածականս առաքելականացն՝ համաձայնեալ է [Թուով և հոլովիւ գոյական անուանս բանից՝ վասն ընդ մէջ անկանելոյ բայիս աշակերտեցան :

Այլ երբեմն առանց համաձայնուէ դնի . զոր օրինակ , * Համադրճան կարօտանամ մեքենայից ॥ . լախ :

Անոն . Դ :

Աթէ նախադաս ածականն ունիցի զգիմորոշական տառ , երբեմն դնի համաձայն յետադաս գոյականին , և երբեմն անհամաձայն , ինչպէս հասնեցն բառիցն , և ինչ վայելուած բանին . զոր օրինակ , * Այ յօժարուք ունկնդիր լինել փաստակարացն բանից . այլ՝ օգտակարացն ॥ . շնորհ : * Արբուսցուք ծարուեաց չափաւորապէս 'ի ծայրածաւալն ծովէ գոյզն ինչ ճաշակ ॥ . շնորհ :

Անոն . Ե :

Աթէ նախադաս գոյականն իցեն բազում յատուկ անուանք եզականք , յետադաս ածականն [Թէ մի իցեն՝ և [Թէ բազում , պարտին լինել ըստ [Թուոյն յոգնական , և ինչ հոլովին համաձայն . Գր , * Աորանօք բնակեաց սահակաւ և յակորաւ հանդերձ ժառանգակցօք նոցին աւետեաց ॥ . այսինքն հանդերձ սահակաւ և յակորաւ ժառանգակցօք այնց աւետեաց . եէր :

Այնպէս և 'ի նախադասին եթէ ունիցին զգիմորոշական տառ , համաձայնուածք դնին . զոր օրինակ , * Առ նձ ոչ եզեր ապաշխարուածի վասն արարոցն արհամարհու , իսահակայ և յակորայ , որք ոչ մեղանքեղ ॥ . Ժամագիրք :

Անոն . Զ :

Աթէ ածականն իցէ նախադասեալ գոյականի , նախդիրն դնի 'ի վերայ ածականին . զոր օրինակ ,

* Աղաչեմ զամենեւեան զարժնուլ 'ի մահահրաւէր թմբու թէ կենցաղոյս ॥ . շնորհալի : Աւր նախդիրն բացառական հօլովոյս 'ի Բմբրու թէ եղեալ է միայն 'ի վերայ նախադաս ածականի նորա , այսինքն 'ի վերայ ճահարաւերին :

Եւ ևս եթէ նախադաս ածականքն իցեն բազում, և ունիցին զշաղկապդ և , զնախդիրն պարտ է դնել 'ի վերայ ամ ածականաց . զոր օրինակ , * Օ անօգուտ և զնասակար բանս ոչ տալ խօսել լեզուին , այլ լուել ॥ . շնորհ :

Իսկ եթէ յառաջ քան զշաղկապաւոր ածականն կայցէ բառ ինչ , որպէս դերանուն , կամ միջական անուն , ևն , յորոց վերայ իցէ եղեալնախդիրն , ոչ ևս է հարկ միշտ կրկնել զայն 'ի վերայ յաջորդ ածականաց զոր օրինակ , * Աւրեմն 'ի քերոց ստայօդ և չարաթոյն բանից մոլորեալ են 'ի պանրոյ հայոց զգուշանալ ॥ . շնորհ :

* Յամաղտաղտուկ և ալէկոծ փորձանաց մեկուսի բը նակեալ ॥ . լամբ :

* Այրենացեալ յառաջին ընտանի և խաղաղ բնուէն կոհակս լեռնաձևս յարուցանէ ॥ . սարգ :

* Արոց պատուիրեմք յայսմհետէ 'ի բաց կալ յայդպիսի աներկիւղ և չար սովորութեց ॥ . շնորհ :

Եւլ եթէ նախընթաց ածականքն իցեն առանց շաղկապի , նախդիրն իբր 'ի բազումս դնի 'ի վերայ առաջնոյն միայն . զի , չրաժարեցոյց 'ի հեթանոսական անկարգ շատխօսուէն ॥ . իֆնար :

* Իժկեալ հրատապ ջերմական տոչորումն մղձկեալ սրտիս ॥ . նարեկացի :

* Իբրև բազմութի զօրաց զմեծանիստ լայնատարած դաշտովքն իջանեն (մարախք) ॥ . վեցօր :

Իսկ եթէ յետադաս զոյականքն իցեն բազումք յօդեալք շաղկապաւս և , նախդիրն դնի ոչ միայն 'ի վերայ ածականին , այլ և 'ի վերայ երկրորդ զոյականին , և հետագայից նորա . զի , * Օ պատշաճ կարծիս և զգիտութի վասն նորա ոչ ունէին ॥ . իֆնար :

* Օ եկամուտ չարիան և զամբարտաւանութիւն մերկացին ॥ . իֆնար :

* Օ հրեշտակական կարգս և զվարս յաշխարհի յանձին առեալ բերեն (կուսանք) ॥ . հոչ . ընծայ :

Օ այս վեցերորդ կանոն մերձեցո՞ նաև առ նախադաս գոյականս . իբր զի եթէ գոյականն նախադասեցի ածականին , զնախգիրն պարտ է դնել 'ի վերայ գոյականին . զի , * Օ այր հաւատարիմ գործ է գտանել ॥ . առաջ :

Լ յլ եթէ յետագաս ածականքն իցեն բազում , նախգիրն իբր 'ի բազումս դնի միայն 'ի վերայ նախադաս գոյականին . զի , * Օ արս պատուականս և պիտանիս հաստատէր 'ի նահապետութիս ॥ . յովհ . հախ :

* Լ աւ է մանուկ աղքատ և իմաստուն՝ քան զթագաւոր ծեր և անմիտ ॥ . ծողով :

* Ունի զօրէնս խաղաղականս և փրկականս ॥ . եղիշէ :

* Լը այլն անկաւ յերկիր բարի և պարարտ ॥ . զորհ :

Երբեմն դնի նաև 'ի վերայ երկրորդ յետագաս ածականին . զի , * Օ այր զուարթ և զառատ սիրէ անձ ॥ . առաջ :

* Բնկալաւ . . . զկեանս տրտմական և զախտալից ॥ . շորհ :

* Տանջին 'ի ճգունս զանազանս և 'ի բազմապատիկս ॥ . սարգ :

Ե վախճան այսր կանոնի պարտ է գիտել , զի եթէ 'ի մէջ գոյականի և ածականի մացէ բայ , նախգիրն պէսպէս կարէ դասիլ . զի երբեմն դնի 'ի վերայ նախադասին միայն . զի , * Ե ծայրագոյնն ժամանեցաք մաքրութի ॥ . լաճ :

Երբեմն դնի 'ի վերայ երկուցն ևս . զի , * Ե արեկցաբար մատուցել զծայրագոյն ցուցեր զխնամս ॥ . նար :

Ղայական անուանս՝ 'ի փեղի ածականաց :

Ղիտելի է , զի ուրեք ուրեք գոյական անուանք ինչ իբր ածական յարին յանուանս . զոր օրինակ ,

* Ո՞ր աղաւթ սիրտ . . . 'ի յիշատակեն զայս՝ ոչ երկրպագէ առաջի նորա ॥ . լաճ :

* Սպառէր և մաշէր զխաւար խորհուրդս նորա ॥ . եղիշէ :

* Օ փաղան ցանկութիւն 'ի բաց վարել , և զընտանի

ողջախոհոհուն անվնաս 'ի ներքս բնակեցուցանել ॥ .
սարգ :

Սոյնպէս վարին երբեմն և անուանք ազգաց . և ս և
տնկոց . ցր , * Յոյն լեզու ուսեալ (եղիազար) պատ-
մագրեաց զգործսն շապհոյ և յուլիանու . ॥ Խորէն :

* Որ կոչի 'ի հայ բարբառ կորուստ . ॥ յայրնուէ :

* Օտուեն մեծ՝ գրուագեաց Տայր փայտիւք ॥ Բ . Գնաց :

* Լուաւել պատիւ մի գնէք Բարբի ծառոյն՝ քան այլ
ծառոց ॥ . շիրհալի :

Լստ սոսա վերաբերին և այնք , որք յարին 'ի բառգ-
անուան . զոր օրինակ , * Նայիսկոպոսն անուն 'ի հելլէ-
նացի լեզուէ է ॥ . լամբ : Ուր բառս եղիսկոպոսն՝ գնի
իբր ածական բառիս անուան . և կի՞ իբր բացայայտիչ :

Բստ այսմ է տեսանել և յօրինակոգ՝ որ զկնի :

* Տոգին անուան՝ զանմարմին նշանակէ զբնուի ॥ . շիրհ :

* Տայրդ անուան՝ մի է հոգևորաց և մարմնաւորաց ॥ .
եղիշի :

Նրբեմն նաև վերացեալ անուանք յատկացուցա-
բար եղեալ 'ի մէջ բերեն զգորուծի ածականի . զոր
օրինակ , * Հոգի քոյ բարուէ առաջնորդեսցէ ինձ ॥ .
կոչ . այսինքն հոգի քոյ բարի առաջնորդեսցէ ինձ :

* Լնօթ ընտրուծէ է ինձ նա ॥ . այսինքն , անօթ ըն-
տիր . Գործ :

* Տպարտացայ հողս անարգուծէ ॥ . այսինքն անարգ
հողս . նար :

Գ Լ Ո Ի Խ Օ :

Յաղագս համաշայնուէ ածական անուանց ընդ ածականաց :

Չորեքիկն համաձայնին լը միմեանս ածական ան-
ուանք . Նախ՝ իբր ածական . զոր օրինակ , * Լմաս-
տակ խելափար . ճարտասան անճոռնի . . . ունայնաբան շա-
ղակրատ Գծոխային ազաճ ॥ . նարէն : Ուր բառքս՝
խելափար , անճոռնի , ունայնաբան , և Գծոխային՝ են ածա-
կան բառիցս՝ իմաստակ , ճարտասան , շաղակրատ , և ափակ :

Նրկորդ՝ իբր խնդիր . զոր օրինակ , * 'յ մարմնի

վարս ստացեալ անհամեմատ ճարմաստորաց ॥ շար : Աւր
ճարմաստորացն է տրական խնդիր անհամեմատին :

Արրորդ՝ իբր բացայայտիչ, այլ 'ի սակաւս . զոր
օրինակ, * Օներգործութի լեզուին 'ի ներհակացն
կամի ցուցանել՝ 'ի բարոյն ասեմ' և 'ի շարէն ॥ . սարգ :
Աւր ածականքդ 'ի բարոյն և 'ի շարէն՝ լեալ են բա-
ցայայտիչ ածականն անուանս 'ի ներհակացն :

Չորրորդ՝ իբր յատկացուցիչ . այլ այս 'ի սակաւս
յոյժ . զոր օրինակ, * Յայտ արար զսնօրինականն
էնարարին ॥ . արիստ . վիճ : Աւր ածականն անունս էնարա-
րին՝ է յատկացուցիչ ածականիդ զսնօրինականն :

Յայտ ամենայնի՝ զորս ստացաք, թէպէտ ածա-
կանք լը ածականս կապին, բայց յամենայնի ևս զօ-
րուք դնին գոյականք նոցին, որպէս և յայտ է :

Աւրեք ուրեք ևս համարին եղեալ իբր գոյական .
որպէս յասելն, * Ար ելեր 'ի բարձրարդիսանէ քառա-
թեւին ॥ , շար . ածականն անունս բարձրարդիսանէ՝ համարի
իբր գոյական եղեալ . որում լեալ է յատկացուցիչ
ածականն անունդ քառաթեւին իբր գոյական :

Գ Լ ՈՒ Խ ԼՅ

Հ) աղագոս համաշայնոմէն միջական անուանոց, որք ասին, ըստանիս,
հանրանիս, վերբերանիս, հարցանիս, և մասնանիս :

Սորս առ հասարակ՝ թէպէտ լը համաձայնութե
այլոց անուանոց վարին . բայց քանզի ուրեք ուրեք
փոքր մի այլազգ դնին, վասն այնորիկ արժան համա-
րիմ ասելինն ինչ զսոցանէ 'ի մասնաւորի . խօսեցել
'սաս' զխնդրառութե սոցին . զորմէ զիտելի է, զի 'ի
մէջ սոցա՝ հանրականքն և վերբերականքն ոչ առնուն
զխնդիր . բայց եթէ գուցէ լը պատահման, և կմվասն
կարգի բանին :

Խսկ թուականք, հարցականք և մասնականք՝ հա-
սարակօրէն առնուն զխնդիր 'ի հոլովն բացստականն .
զոր օրինակ, * Ղրձակեաց երկուս յաշակերտացն իւ-
րոց ॥ . մար :

* Օ և յարարածոցս . . . այնպէս պատուեաց անձ՝ ուր
զքեզ ॥ . սորոք :

* Լ անկ լինել անկէ՛ր ՚ի մարդկանէ . անկար է ॥ . լա՛ն :

* Չար է նախանձ . և որք նովաւ վարակեալք են ,
չածեն ինչ ՚ի պատշաճիցն զմտաւ ॥ . ի Գ Կ Կ :

* Օ ի արարանչ ի արար յէիցս լը իւրում ընթացիցն ուղ-
ղէ ॥ . լա՛ն :

Ուրեք ուրեք ևս առնուն սորա առ Հասարակ ըղ-
ներգոյական . զոր օրինակ , * Չորրորդն ՚ի նոսա . . . ՚ի
կերպարանս արծուոյ ॥ Գ Ե Դ . արչ :

* Չունի ոք ՚ի նոսա անուն չարութե ॥ . ՚ի շարահնոցն :

* Ո՛ր ՚ի նոս իւրումն ոչ ծառայեաց ախտի ॥ . արիսրակէս :

Երբեմն ևս թուական անուանք ՚ի յարիւն ՚ի բառդ
Լի առնուն ինդիր զնոյն ՚ի գործիական հօլովն . զոր
օրինակ , * Լ անկան առաքեալքն առաքինիք ՚ի բով
անդր՝ թուով երէրոսանիցն ॥ . արալ :

* Սատունք ձեռաց նորա և ոտից՝ վեց վեց՝ խան և
չորս թուով ॥ . Է . Լ արալ արաց : Սատիցուք այժմ խօ-
սել զայսմ անձ ՚ի մասնաւորի :

Ս ան Լ Կ Կ Կ Կ Կ Կ Կ :

Սորա առ Հասարակ միշտ իբր ածական վարին . և
լը իմիք լը կանոնի ածականաց համաձայնին լը գոյա-
կանաց , յորս յարին . վասն որոյ կամեցեալ համա-
ռօտիւ անցանել զսօքօք՝ պարտ է գիտել , զի ՚ի մէջ
սոցա ընդարձակն . որպէս , Ս ՚ի , երկու , տասն երկու
տասան , քառասուն , եօթանասուն , հարիւր , երկե-
րիւր , և այլն . յորժամ յետադասին գոյականաց՝ հա-
սարակօրէն համաձայնին լը նոսա . ար , * Երեւեցաւ
աշակերտաց իւրոց երէրոսանիցն ॥ . ընդ . ընդհանր :

Լայց երբեմն ևս առանց համաձայնութե գնին . զոր
օրինակ , * Ս երձ է յե՛մ իբրև ասպարիզօք հինգ ॥ .
Է . հալ :

Լ և լ ՚ի նախդրիւ հօլովս գրեթէ միշտ անհամա-
ձայն գնին . ար , * Յետ արշաւրի թագաւորէ արշակ՝
ամս իննեօրան . արտաշէս՝ ամս խան ॥ . ի ար :

Իսկ ՚ի նախադասիւն՝ հասարակօրէն՝ ոչ համաձայ-

Յաղագս համախոսութե միջան անուանց : 169
նին . ԴՐ , * Օ կնի երեսուն ամաց սպան կայէն զհարէլ .
զարար . հալ :

Ուրեք ուրեք ևս համաձայնութի դնին . ԴՐ , * Այն
ի յորդանան ՚ի լրումն երեսնից ամաց . շնորհ :

Թուական անուանք դասակնի , որպիսի են՝ Ար-
կորդ , երրորդ , եօթներորդ , մեծասներորդ , լի .
յորժամ յետադասին անուանց՝ միշտ համաձայնին լի
նոսա . զոր օրինակ , * Յամեանն մասաներորդի , որ
օր առաջին էր ամսոյն , երկեցան գլուխք լերանց .
ծննդոց :

Իսկ յորժամ նախադասին , իբր ՚ի բազումս ան-
համաձայն դնին . զոր օրինակ , * Յերրորդ ժամուն
ստեղծաւ ադամ . խորով :

Այլ երբեմն համաձայն . զոր օրինակ , * Վհիստ
բերեբորդի ամի (կենաց նոյի) սպաւնալիք պատուհա-
սին ելանէին յայ . և ՚ի վեցհարեբերորդի ամի անդ՝ ջր-
հեղեղն հասանէր յաշխարհ . հու . ընծայ :

Թուական անուանք անհարկնի , որպիսի են՝ Ար-
կորեան , կամ երկորին . չորեքեան , կամ չորեքին .
եօթաներեան , տասներեան , լի . հասարակօրէն հա-
մաձայնութի գոյականաց վարին , թէ ՚ի նախադա-
սին , և թէ ՚ի յետադասին . ԴՐ , * Օ ի ոչ եթէ եր-
կոսմիք ոտիւք կաղայցէ ոք , և ոչ յայտ լիցի . խորով :

* Յայնչափ քաջութեան սրտի մանկանցն եօթանեցոնց
սրտաբեկ լինէր թագաւորն . Բ . հակա :

Թուական անուանք դասակնի , որք են՝ Արրեակ ,
չորրեակ , եօթնեակ , ութեակ , յիսնեակ , լի . ևս և
կրկնակնի , որք են՝ Արեքպատիկ , տասնպատիկ , բա-
նապատիկ , լի . հազիւ երբէք յետադասին գոյակա-
նաց . այլ հասարակօրէն նախադաս լինելով յարին
ի նոսա առանց համաձայնելոյ ընդ նոսա . զոր օրի-
նակ , * Տօնեմք (զվարդավառն) յեօթներորդում
ամեանն ըստ յաւիտենիս ըստ այսմիկ եօթնեակ շրջա-
գայութի . խոր . վարդ :

* Հատուցանէր զդարձ փոխարինին ասանպարիկ յա-
ւելուածով . յով . հալ :

Ս ան հանրական անուանի :

Հանրական անուանի, որք են ամենեքեան և ամենեքին, լը որս են և բոլորեքեան, և բոլորեքին որք և իբր ածական վարին, հասարակօրէն ինքնին 'ի գործածին՝ զօրութիւն ունելով զգոյականն . զոր օրինակ,

* Սր ամենեցոանց իշխէ՝ յամենեցոանց դողաց ॥ . սար :

* Տեսանեն ... զգատաւորն ամենեցոան քսնստեալ ընդ աջմէ հօրն բոլորեցոան ॥ . իգնաս :

Իսկ 'ի յարինն յանուանս և յընդունելութիւնս՝ և մանաւանդ 'ի դերանուանս՝ միշտ համաձայնին ընդ նոսա, թէ 'ի նախադասին, և թէ 'ի յետագասին . զոր օրինակ,

* Օ ամենեւին ինձ յանձնարարեալսն ոչ կօրուսից ॥ . նար :

* Օ ամենեւին զնոսա այսու միով բանիւս աւետաւորէ ॥ . խորով :

Ըստ զիտեւի է, զի յաճախ գործածութիւն հանրական անուանց լը անուանց՝ ծանրացուցանէ զընթացս բանին . վասն որոյ բազում անգամ 'ի տեղի սոցա դնեմք զբառդ ամենայն . զորոյ զգործածութիւն արժան է գիտել, զի սա յորժամ յարի յեղակի ցուցական դերանուանս, միշտ և յիմի համաձայնի ընդ նոսա . զոր օրինակ,

* Ս անս այսր ամի ածցէ զքեզ անձ 'ի դատաստան ॥ . ժողով :

* 'Ի վերայ ամի այսորիկ անսան անր ॥ . Էսայ :

Ըստ յորժամ 'ի յոգնականս յարի, ըստ թուոյն եղական դնի . զի ըստ նշանակութեն զուրով բաղմաւորական՝ եղական ձայնիւ յոգնական համարի . զոր,

* 'Ըստ սոցիկ ամի սպերախտ գտան ॥ . իգնաս :

* Վու ես անր և զլուխ նոցա ամի ॥ . Վարդ Կարց :

Իսկ յորժամ նախադասի անուան կամ ընդունելութեան, ոչ համաձայնի ընդ նոսա . զոր,

* 'Ըստ նայնի գլուխ Վ՛ն է ॥ . ան . իորնի :

Իսկ 'ի յետագասին՝ 'ի յեղականսն համաձայն դնի . զոր,

* 'Ըստ անսանսի զլուխ Վ՛ն է ॥ . ան . իորնի :

Իսկ 'ի յոգնականսն՝ անհամաձայն դնի լը թուոյն . զոր օրինակ,

* 'Ըրարածոցս ամենայնի արար խաղաղութիւն ॥ . սարգ :

* Ղու սկիզբն և պատճառ բարեաց ամենայնի ॥ . նոր :

* Առեալ զգլխաւորսն զմ՝ չուէ 'ի մծբին ॥ . խոր :

Եւ յիտելի է , զի սա յորժամ նախդրիւ հանդերձ լինի ածական , նախդիրն երբեմն կրկնի 'ի վերայ իւր , և 'ի վերայ այնր՝ յոր յարի . օր , * Աննիցես զարգարու թի յամենայն 'ի կեանս քո ॥ . քո :

* Այն եհաս ժամանակ , զի զամենայն զկեղտ անուն 'ի մէջ 'ի բաց բարձցուք ॥ . եղիէ :

* Օհարտուի զամենայն 'ի բաց ընկեցուք ॥ . եր :

Ասան վերբերական անուանոց :

Արբերական անուանոց , որք են այսպիսի , այդպիսի , այնպիսի . սոյնպիսի , դոյնպիսի , նոյնպիսի . այսքան , այդքան , լե . իբր ածական վարին . և 'ի յետագասին միշտ համաձայնին ըստ կանոնի ածականաց . թէ պէտ և հազիւ ուրեք է յետագասիլ սոցա : Իսկ 'ի նախագասին՝ իբր 'ի բազումն անհամաձայն դնին . օր , * Ազամ տեսու թէ այսպիսի տնկոյ ॥ . մոգիս :

* Արտիմք լինել արթուն , զի լինիցի մեզ յայսքան վտանգից զերծանել ॥ . իգն :

Իսկ երբեմն համաձայն դնին 'ի վերջահոլովս . զոր օրինակ , * Աբաց լերուք յայդպիսեաց ոչխարազգեստ գայլոց ॥ . շոր :

* Օխորդ բժշկեցիս անձն իմ եղկելի 'ի յայսքանեաց տիգաց խոցոտեալ ॥ . նարէ :

Աարձեալ եթէ անկցի 'ի միջի բայ , իբր 'ի բազումն համաձայն դնին . օր , * Արք այսպիսեօք վարելին խորհրդովք ... զամենայն տուժեցան ॥ . իգնար :

* Յայսքանեաց սա որոշեալ պատշաճագոյն յարմարութեանց ॥ . պիպոցի :

Ասացի 'ի վերոյ՝ 'ի վերջահոլովս . զի 'ի յուղական և 'ի նախդրիւ հոլովս յոգնականին ոչ երբէք համաձայնին . զի ոչ լինի ասել . այսպիսիք բանք . յայնպիսիս իրս . զայսքանս ժամանակս . լե . այլ այսպիսի բանք . յայնպիսի իրս . զայսքան ժամանակս . լե :

Ս՝անն հարցախնան անուանոց :

Հարցախնան անուանոց , որք 'են՝ ո՛ր , ո՛րվ , զին՝նչ , ի՛նչ . և ևն՝
 ո՛ր , ո՛րքան , քանի՛ , որպիսի՛ , զինչպիսի՛ , պէսպէս վա-
 րին . և նախ ՚ի մէջ սոցա բառքս՝ ո՛ր և ո՛րվ , յորժամ ՚ի
 գործ ածին իբր անուռն հարցական , իբրու գոյական
 վարին . փր , * Ս՝ կարէ կալ առաջի դոցա յանդուզն
 յարձակման ॥ . Եղիշէ :

Իսկ վասն այլոց հարցականաց գիտելի է , զի զինչն
 երբեմն հանդերձ բայիւ վարի իբր գոյական , կի՛ իբր
 նոյն . փր , * Օ՛րնչ իցէ , որ լինելոց իցէ ॥ . Ի՜ֆնաթ :

* Եւ արդ՝ զինչ գործեսցես անձն իմ կորուսեալ ॥ . Կար :

Եւ երբեմն յարի յանուանս իբր ածական՝ առանց
 հոլովման . փր , * Օ՛րնչ վայելումն իցէ կերակրոյն , և
 թէ անզգայեալ ցաւօք ուտիցեմ ॥ . Կար :

Իստ այսմ և հարցական անուռնս ի՛նչ՝ երբեմն իբր
 գոյական վարի առանձինն , և երբեմն իբր ածական
 յարի յանուանս . փր , * Եւ արդ՝ յինչ հային այս ամե-
 նայն արթնութե պէտք ॥ . Ի՜ֆնաթ :

* Օ՛րնչ (բանսարկուն) խաբէութի իւրով զսկիզբն
 բարւոյն և չարին , եթէ ուստի և յինչ իրս գոյա-
 նայ ॥ . սարժ :

Իսկ հարցական անուանքս՝ ո՛ր , ո՛րքան , քանի՛ , որ-
 պիսի՛ , զինչպիսի՛ , որք իբր ածական վարին , հասարա-
 կօրէն նախադասին անուանոց . երբեմն առանց հա-
 մաձայնելոց . փր , * Օ՛րն մահուանէ յորպիսի կենդա-
 նութի փոխեցաք սիրելով զեղբարս ॥ . սարժ :

Իայց երբեմն համաձայնութի , մանաւանդ ո՛րն և
 ո՛րքանն . փր , * Սրո՛մ կորստեան և գեհնի ակնկալուի
 ոչ է առաջի ձեր ॥ . շնորհ :

* Սրանեանց տարակուսանաց խաւարի՛ լուսաւորութի
 յուսոյ կենաց խառնեցից ॥ . Կարէէ :

* Օ այսպիսի կարծրութի նիւթոյ . . . ոչ գիտէ որ՝
 թէ որպիսեանց իրաց պատրաստութիւն հրաշակեր-
 տեաց ॥ . Խոր :

Ս ան ճանաչան անուանոց :

Ս անանիան անուանոց . ոմն , որ , իմն , ինչ . ընդ որս են
և սորա , մի իմն , կի՛մի ոմն , որ որ , որ ինչ , ոչինչ , ինչ
ինչ , ամ ինչ , որ ինչ միանդամ , ևն . սորա երբեմն
ինքնին վարին 'ի բանս իբր գոյականք . փր , * Ս ան իշ-
խէ , և ոմն իշխի ॥ . Խորհրդ :

* Ս որ զախտսն իշխանուի՞ կարէ սպանանել , և զա-
ռաքինուիս կեցուցանել , թի՞ր արդար է ॥ . սարգ :

* Օ որ ինչ մանգամ խոստովանի որ , կորուսանէ , եթէ
զմեղս և եթէ զարդարուի ॥ . սարգ :

Ս յԼ յորժամ վարին սորա ընդ անուանոց կամ լը
ընդունելու թէց , լինին իբր ածականք մասնաւորիչք
նշանակուէ նոցա . * փր , * Ս շխարհ ինչ է բնուիս ॥ .
Ի՛փնար :

* Օ մ ոմն դեսպան ձիով փուլ թանգ առաքեցին ॥ . Եղիշէ :

* Սնչ ինչ և յասորուոց ընկալան տեղեկուի կարգաց ॥ .
փր ինչ ինչ տեղեկուի . այս է , քանի մի . լամբ :

Ս որա 'ի յետադասիլն անուանոց կամ ընդունելու
թէց , երբեմն ևս 'ի նախադասիլն , եթէ իբր մասնա-
ւորիչ նշանակուի նոցա վարեցին , հասարակօրէն
թուով և հօլովիւ համաձայնին ընդ նոսա . զոր օրի-
նակ , * Օ զաղթեալն անդրէն դարձուցանէ . . .
բաց 'ի նախարարէ ոմնէն , որոյ անուն օտայ կու-
չիւր ॥ . Խորհն :

* Ս ատուասիրաց ոմնոց գանձս առաջի դնէին ॥ . յու-
հանէս կալ :

* Ս չ 'ի ժամանակի ի՛փ , այլ ժամանակք 'ի նմանէ
գոյացան ॥ . Եղիշէ :

* Ս ուայ յոմնէն ոչ պարտաւորէ ॥ . սարգ :

Ս սոսա ինչ երբեմն առանց համաձայնուէ դնի . փր ,

* Ս եծի ինչ ցանկացար ॥ . կոչ :

* Ս աւանիկ ազնուականի ինչ ցանկացեալ են ॥ . Եբր :

* Ս անէ իբր թաթառով ինչ ջուր 'ի ծովէն ॥ . սարգ :

Ս ա , այսինքն ինչ և բառդ ինչ բազում ուրեք իբր
զարդ դնին . փր , * Ս յսպիսեալ ինչ պատրաստուի
անձին հանդերձանաց կուռ վառեալ ॥ . սար :

* Օ պատճառս հարստուեն մեք ինչ ոչ գիտէաք ॥ . Եղիշ :

Մասն Տասնամյան անոտանոցս՝ Միւս . երկաքանչիւր , և
իւրաքանչիւր .

Սորա իբր ածական վարին , բազում անգամ զօ-
րութիւն ունեւոյ զգոյականն . զոր , * Մին Բաստանն ձայ-
նակցի ՚ի յանցանեւն ॥ . լամբ :

* Երբեքանչիւրոցն աղօթիւք տօնողացս ողորմեա՛ ॥ . շար :

* Իւրաքանչիւր ՚ի վերայ իւրոյ արմատոյ արձանաս-
ցի ॥ . լամբ :

Իսկ յորժամ յարին ՚ի գոյականս , հասարակօրէն
նախագասին նոցա , և իբր ՚ի բազումն անհամաձայն
դնին . զոր , * Ի Բաս կողմանէ գետոյն ॥ . խոր :

* Երբեքանչիւր ծայրիւք ... ծածկեալ է յեղականացս
բնուէց ॥ . շար :

* Իւրաքանչիւր գործոց հատուցմունք լինելոց է . և
խորհրդոց և բանից քննուիք ॥ . սար :

Իւրայ երբեմն ևս՝ համաձայնութիւնն . զոր , * Ի ստ
Բաստանն բանի սոյն այս յայտնի ցուցանի ॥ . խոր :

* Տեսցուք զերբեքանչիւրոց սոցա բարեբախտութիւն ॥ . շար :

* Իւրաձեւին անվեհեր փութութիւն զհաւատացեալ հօան
յիւրաքանչիւրոցն ժամանակի ॥ . շար . կա :

* Մասն զի իւրաքանչիւրոց նոցա չարափառութիւն յոյժ
աննամանիք են միմեանց ॥ . շար . իմաստ :

ԳԼՈՒԽ Բ .

Յազագս համայնոտութիւնն դերանոտանոց ընդ դերանոտանս :

Համաձայնութիւն դերանուանց ընդ դերանուանս
յայտմ է , զի եկեալ սոցա առ միմեանս համաձայն
թուով և հոլովիւ՝ վարին ՚ի բանս իբր նոյն , այսինքն
իբրև մի դերանուան : Իսկ թէ ոչք ընդ ճրս յարին ,
զիտելի է , զի ՚ի մէջ սոցա էական դերանուանս Ինչս՝
յարի յայլ նմ դերանուանս ը իւրաքանչիւր դիմաց
նոցին , (բաց ՚ի ստացականաց) :

Իւր նախ՝ յարի յէականս . զոր , * Օպլս խրատեմ ,
և էս Ինչս անփորձ եմ ॥ . նարե :

Երկրորդ՝ յարի 'ի ցուցականս . փր , * Ս Ինչն ըզմեղս մեր բառնայ || . Իոչ :

Սոյնպէս յարին ընդ միմեանս նաև ցուցական զերանուանք . փր , * Սոյն այս ձայն զամենեսեան յարուցանելոց է 'ի գերեզմանացն || . նանայ :

Պարտ է դիտել , զի 'ի յարիլ սոցա ընդ միմեանս 'ի նախդրիւ հոլովն , նախդիրն դնի 'ի վերայ ամենեցուն . փր , * Սոյն յայտ միտս երգեաց զերեսներորդ առաջներորդ սաղմոսն || . սարգ :

Գ Լ Ո Ի Խ Թ :

Յաղագս համայնութի Դերանուանց ընդ անուանց . և նախ՝

Յաղագս համայնութի Էական Դերանուանցս՝

Լս . դու . ինքն . իւր :

Դերանուանք որովհետև այլևայլ են տեսակաւ , այսինքն էական , ցուցական , ստացական , յարաբերական , և դիմորոշական , այլևայլ օրինակաւ յարին յանուանս , և պէսպէս եզանակաւ համաձայնին . զորոց կամեցեալ խօսիլ կարգաւ՝ աստացօք նախ զհամաձայնութի էական դերանուանցս՝ էս , դու , ինչն , իւր . ընդ որս են և դերանուանքս՝ միմեանց և իրերաց . (ևս և ցուցական դերանուանքս սա , դա , նա , յորժամ 'ի գործ ածին էականապէս :)

Սորա ամենեքին գոյականապէս վարին . և ըստ օրինակի՝ գոյական անուանց՝ լինին անուն բայի , ինքնդիր բայի , և ինդիր ընդունելուէց . որպէս ունիմք ասել յիւրեանց տեղիս : Լս ևս՝ ինդիր նախադրութեց . որպէս յայտ է յեգեղոցն յառաջին մասին :

Իսկ 'ի յարիլն յանուանս՝ լինին Վախ՝ ինդիր անուանց՝ գոյականաց և ածականաց . որպէս ունիս տեսանել 'ի ինդրառութեան նոցա . որպիսի է և այս .

* Օ փառաւորիչս իւր փառաւորէ || . երչն : Ուր գերաւնունս իւր՝ է ինդիր ածական անուանս զքառասորիչս :

Երկրորդ՝ լինին յատկացուցիչ . փր , * Սերտ է՞ ուրախ եզև յամ՝ վաստակս է՞ || . փողով :

Արրորդ՝ լինին բացայայտելի 'ի ձեռն գոյականն անուանց՝ համաձայնելով լէ նս թուով և հոլովիւ . զոր օրինակ , * Աս իմաստուի բնակիմ 'ի խորհրդեան ॥ . առաւ : Ուր եսն լեալ է բացայայտելի . և իմաստութիւն բացայայտիչ :

Չորրորդ՝ լինին բացայայտիչ ածականն անուանց . զոր , * Օ Բէլ զմեղաւորս արժանի արարեր փառաւորեւ զքեզ ॥ . յովն . իմաստ :

Բոտ այսմ յարին սոքա բազում անգամ և յածականն ընդունելուիս՝ իբր բացայայտիչք . զոր , * լծէ յուսահատելոյս Ինչ միջնորդեսցես . . . թէ 'ի կործանեալս յիս ակնարկեսցես ॥ . նարեի :

Գ Լ Ո Ի Խ Ժ :

Յաղագս համայնութիւն յոյականն դերանուանոցս՝
Սա . դա . նա :

Սոքա յորժամ հոլովին՝ սա , սորա . դա , դորա . և այլն , վարին գոյականապէս . և պէսպէս օրինակաւ 'ի գործ ածին :

Իսկ 'ի հոլովին՝ սա , սորին . դա , դորին . նա , նորին , կամ նորուն , հասարակօրէն վարին ածականապէս . և իբր ածականք յարին յառաջոյ յանուանս՝ համաձայնելով լէ նս թուով և հոլովիւ . և այս՝ հասարակօրէն 'ի հինգ հոլովս միայն :

Ի սեռականն . զոր , * Պտուղն թէպէտեւ նորին ծառոյն է և ծաղկին , այլ նմիւ որոշեալ է 'ի նոցանէ ॥ . այսինքն նոյն ծառոյն . սարգ :

Ի վերջահոլով տրականն . զոր օրինակ , * Աւքան զի այս ըստ «Ռն մասին կնքեցաւ և ճշմարտեցաւ առ այրս մահու , և ես վկայեմ , կրկին հաստատեալ ॥ . նար :

Ի գործիականն . զոր , * 'Ի նոյն փառատրու թի նովն հոգւով կոչեցաք ॥ . եղնի :

Ի պարառականն . զոր , * Օ նմ զբանակն զնովն տեղեալ գումարէր ॥ . պարմ . աղէք :

Ի ներգոյականն . զոր օրինակ , * 'Ի նոյն յամառութեան կան ॥ . եղնի :

Իսկ յայլ հոլովն հասարակօրէն իբր գոյական վարին . և եթէ հարկ լիցի ածականապէս վարել , 'ի տեղի սոցա զնեմք զցուցական գերանուանս՝ Լ.յս , այդ , այն . սոյն , դոյն , նոյն . որպէս տեսցի 'ի ստորեւ :

Գ Լ Ո Ի Խ Ժ Ը :

Յաղագս համայնութե՛ն ցոացական գերանուանոցս՝
Լ.յս . այդ . այն :

Սորա միշտ իբր ածական վարին , բազում անգամ զօրութիւնն ունեւով զգոյականն . զոր օրինակ , * Որ ինչ 'ի խոր է քան զքեզ , զայն մի քններ . և որ ինչ հզօր է քան զքեզ , զայն մի հարցաներ . որ ինչ հրաման արուաւ , զայնու ա՛ծ զմիտս քոյ ॥ . հոգ :

Լ.յլ յորժամ յարին սորա յանուանս , 'ի նախագասին՝ հասարակօրէն համաձայնին լէ նոսա թուով և հոլովիւ՝ բաց 'ի բացառականաց յանգելոց 'ի է . դր , * Լ'պաշխարուի չիք յայնձ աշխարհի ॥ . ճճ :

Բայց երբեմն ևս առանց համաձայնութե գնին , այլ սակաւ ուրեք . զոր օրինակ , * Լ'նգէր է կորուստ այդ իւզօյդ ॥ . ճար :

Լ'սացի՛ բաց 'ի բացառականաց յանգելոց 'ի է . զի ըստ այսմ ոչ համաձայնին մք 'ի նախագասին , բայց եթէ կրկնեսցի նախդիրն . դր , * Իսկ քահանայական կարգն յայսցանէ 'ի գործոցս որիչ է ॥ . լաճ :

Իսկ յորժամ յետագասին սորա անուանց համաձայնին լէ նոսա թուով և հոլովիւ . դր , Լ'մենայն պրտուղք իմաստու թէն այնորիչ , որ զօղորմունին ծնանի , բարի են ॥ . սարգիս :

Հազիւ ուրեք ևս անհամաձայն գնին . դր , * Թե՛ թեւս կացո՛ զաշխատութեա այս սկիզբն ॥ . նար :

'Ի համաձայնութե այսոցիկ գերանուանց հարկ է գիտել և զայս , զի 'ի նախագասին սոցա՝ նախդիրն հասարակօրէն գնի միայն 'ի վերայ սոցա . զոր օրինակ , * Բոյով խորհրդով անցուցին զայս անցս ընդ իս և ընդ զօրս ॥ . եղիչ :

Իսկ 'ի յետագասիլ սոցա՝ նախդիրն միշտ և անվրէպ դնի՝ թէ 'ի վերայ սոցա, և թէ 'ի վերայ անուանյն, բաց 'ի նախդրէս առ. և այս՝ 'ի վեց հօլովս:

Ի նախդրիւ արականն. զոր օրինակ. * Այսպէս ասէ ձոր ձոր շոսկերոց շայգոսիկ ॥ . Եղէի:

Ի հայցականն. զոր, * Ի նդ. ամենայն ազգս առնէր զանկարգու թիս զայս ॥ . Եղիշէ:

Ի բացառականն. զոր, * Աւրախարար զոհագործու թեամբս ապրեցուցէս զիս յորոգայթէ յայսմանէ ॥ . յո՛ւն . Իմաստ:

Ի պատմականն. զոր օրինակ, * Այլև որ մարզպան աշխարհին լեալ էր ... մեծապէս զոհէր զսուսէս զայսմանէ ॥ . Եղիշէ:

Ի պարառականն. զոր օրինակ, * Օբազմօք զայսոսիս զանց արարեալ՝ փու թացուք հասանել յընչաւէտ հօր առատ որդին ॥ . Երբէ՛մ:

Ի ներգոյականն. զոր, * Թագաւոր առնէս զամենեսին ... որք թագաւորեցին 'ի վերայ աստից 'ի կեանս յայտոսիկ ॥ . Խոսրո՛ւ:

Ի ստ այսմ կրկնին հասարակօրէն և նախագրուիքս ըստ և ընդ. զոր, * Գնեւ զնոսա յաւերակ և յանապատ ... ըստ աւուրս ըստ այսմիկ ॥ . Երբէ՛մ:

* Այն անձանց նոցա, որք զյաւիտենականն բարեկենդանու թի ընդ ապականացուիս ընդ այսմիկ փոխանակեն ॥ . Ի փնաստ:

Սոյնպէս և ս եթէ նախդիրքդ զ, յ, և 'ի, իցեն եզեալ 'ի վերայ նախընթաց ածականի, հարկ է կրկնել զնոսին, եթէ գոյականն անկեալ իցէ 'ի մէջ ածականին և դերանուանն. զոր օրինակ, * Օարթոյց զմիտս նոցա ... զճմարիտ պատկերէն զայսմանէ բուռն հարկանել ॥ . սարգիս . տէս յընդարձակն . զ, 11:

Յաղագս համաձայնութե ցոացական դերանուանոցս՝
Սոյն . գոյն . նոյն :

Սորա միշտ իբր ածական վարին . և զի յատուկ հոլովումն ոչ ունին , այլ միայն նախդրիւ հոլովին , յորժամ նախադասին անուանց , անհամաձայն դնին . զոր օրինակ , * Չայնակից սոյն ուղղափառուէս է սք եկեղեցիս անյ ը . գրեգոր կախ :

Եւ յսորիկ դերանուանք՝ մանաւանդ նոյնն՝ հազիւ ուրեք անմիջապէս յետադասին անուանց . իսկ եթէ յետադասեցին , պարտ է զնախդիրն կրկնել . զոր օրինակ , * Եւ յորոգայթ 'ի նոյն անկցին ը . սող :

Ի վախճան ցուցական դերանուանց անմի՝ գիտել արժան է և զայս , զի սորա առհասարակ՝ դնին երբեմն 'ի բանս իբր թարմատար , կամ իբր բացայայտելի 'ի ձեռն այնց բառից , յորս յարին յառաջոյ կամ զկնի . զոր օրինակ , * Աննայն ինչ՝ որ յաշխարհի է , չէ նա մեր ը . ի գնար :

* Բազմաց արդարոց քաջավայելուչ են շիրիմք նոցա ը . ի գնար :

* Յօղդ , որ ցօղի 'ի քէն , այդ բժշկու թի է նոցա ը . 'ի գիշերաց . յօրն :

* Օ վէմն զոր անարգեցին՝ նա եղև զլուխ անկեան ը . յարն :

Յօրս դերանուանքն նա , նոցա , այդ , զնա , իբր թարմատար դնին , կամ իբր բացայայտելի 'ի ձեռն բառից ան ինչ , և արդարոց , և ցօղդ , և զվէմն :

Յաղագս համաձայնութե սրացական դերանուանոցս՝ Լամ . քոյ . մեր . ձեր . իւր , իւրոյ :

Սորա միշտ ածականաբար վարին . և յորժամ յարին յանուանս , ևս և յընդունելուիս , յանմի համաձայնին ընդ նոսա 'ի վերջահոլովին , թէ 'ի յետա-

դասիլն , թէ 'ի նախադասիլն , և թէ անկցի 'ի միջի
այլ մասն բանի . զք , * Օ խարդ շրթամբք իմով զանձն
իմ անիծից ॥ . նար :

* Ի նդէր տեսանեմք զարև յետ մերոյ սիրելեացն ॥ . Եղիշ :

* Ի ճամբ առնուս ախտի ջատագով (զթիւրեալ ճըշ
մարտու թին) ॥ . լամբ :

Ըսացի համաձայնիլ սոցա 'ի վերջահոլովն . զի 'ի նախ
դրիւ հոլովս և յուղղականս միշտ անհամաձայն դնին .
զք , * Ը մենայն խորհուրդք իմ հաստատեսցին ॥ . Էսայ .

և ոչ լինի ասել . խորհուրդք իմք :

* Ը ւսո՞ ինձ առնել զկամս քոյ ॥ . և ոչ քոյս . սաղ :

* Ը աստեաց զկեանս մեր ॥ . և ոչ մերս . խորհով :

* Ը ատարեսցէ զկամս քեր 'ի կամս իւր ॥ . և ոչ ձերս և
իւրս . ճաշարոյ :

Սքա լինին և ս ծական դերբայից նովին համա-
ձայնութիւն , որով յարին յանուանս . զք , * Ը բարե-
պաշտելս իմո՞մ՝ դայթակղիմ ॥ . նար :

* Տացի կեանս նմա 'ի կենաց տուողէն քոյ՞ն արդա-
հատելովք ॥ . սարգիս :

Իսկ եթէ ուրեք ուրեք երևեսցի անհամաձայն , այն
ոչ է ստացական դերանուն իբր ածական , այլ՝ սեռա-
կան հոլով էական դերանունաց . որպէս յասելն ,
* Յարդարանալս իմ և մեղանչեմ ॥ . նար . դերանունս
իմ ոչ է ստացական , այլ՝ էական . և եդեալ է աստ իբր
անուն դերբայիդ՝ յարդարանալս :

Գ Լ Ո Ի Խ Ժ Գ :

Յաղագս համայնաբնէ յարաբերական դերանունս՝ Որ :

Յառաջ քան զխօսիլ զհամաձայնութիւն սորա՝ զի-
տելի է , զի սա 'ի կարգս բանի զօրութիւն 'ի մեջ բե-
րեալ զայլ մասն բանի՝ դնի ներգործութիւն 'ի տեղի
նորա . որպէս զի մի կրկնեսցի մի և նոյն բառ :

Ըրդ նախ առաջին՝ յարաբերէ սա զանուն , զդե-
րանուն , և զընդունելուի . զոր օրինակ , * Ը մենայն
նիւթոյ՝ որ մարմին է , ապականութիւն հետեւի ॥ . լամբ :
Ուր որն յարաբերէ զանունդ՝ ամենայն նիւթոյ :

* Բարևոր է խոնարհուի յամ ժամ . և յամ նեղուէց
ապրեցուցանէ զայնօսիկ , ոյ՛ մերձենան առ նա ॥ . ՃճԲ :

Ուր ոյն յարաբերէ զգերանունդ՝ զայնօսիկ :

* Արժանի գոայ ճաշակել զըւր յաղբերէ փրկուէ
նորոգողին զմեզ , զորոյ զաթոռն իսկ ընկալայ ॥ . յովն . հախ :

Ուր բառս որոյ՝ յարաբերէ զընգունելուիդ՝ նորոգողին :

Ուրեք ուրեք յարաբերէ սանակ զբայ և զբան .

դր , * Սարմինս ճգնի , տքնէ և պահէ , որովք և օգնէ
մտաց և կամաց ॥ . լամբ : Ուր բառդ որովք յարաբերէ

զբայսդ ճգնի . արնէ . liā :

* Սարդ բարի ... զյաղթիւն սիրէ , որով և նուաճէ .

և ոչ զյաղթելն , որով զմարտն գրգռէ ॥ . լամբ : Ուր

բառդ որով յարաբերէ զյաղթելն և զյաղթելն :

* Այ վաստակեցի ՚ի հունձս արմտեացն , որով ՚ի մուտս

ձեան աւուրցն խռովուէ կերակրել պատրաստեցայց ॥ .

նար : Ուր որովն յարաբերէ զայս բան՝ ոչ վաստակեցի ՚ի

հունձս արմտեացն :

Ղիտելի է ևս , զի այս դերանուն երբեմն յարա-

բերէ զնախընթացն . դր , * Վ գործոյն , զոր գործէ ,

առնու զանուն ॥ . Եղնիկ :

Այլ երբեմն զհետեւեան . դր , * Օ որ վասն այլոց

կորստեան խօսիմք՝ անձամբ ՚ի նմին եմք ॥ . Իփնաբիոս :

Ուր զորն յարաբերէ զի վերջոյ եդեալ բառդ ՚ի նմին :

Այրբեմն ևս մտանէ ՚ի մէջ յարաբերելի անուանն ,

և ՚ի մէջ բայի նորա , կամ յատկացուցչի նորին , և

կամ ածականի նորուն , և այլն . զոր օրինակ , * Արդ

զբեռնդ , զոր գու ոչ ես բառնալոց , էր վասն հոգաս

և դատիս ॥ . լամբ . արեն :

* Անտոգիւտ արդարու թեամբ լիցի՝ զոր պահանջեաց ,

փրկու թի ॥ . այսինքն արդարու թի լիցի փրկուէն , զոր

պահանջեաց . լամբ :

* Օ ի ծանիցես զբանիցն , որոյ աշակերտեցար , զճըշ-

մարտու թին ॥ . յի ծանիցես զճշմարտուի բանիցն , որոյ

աշակերտեցար . զուի :

* Օ ոգեկանն , որ յառաքինուէն է , պինդ պահիցեմք

զազատուի ॥ . այսինքն պինդ պահիցեմք զողեկան ա-

զատու թին , որ յառաքինու թին է . յովն . Իմաստ :

Բազում անգամ ևս զօրուք ունի սա զյարաբերէ .

լին : ԳՐ , * Որ նախ խոնարհի , նախապատիւ բարձրաս-
ցի ॥ լաճԷ : Ուր զօրութիւն կայ բառս նա . որպէս թէ
ասէր . նա՛ որ խոնարհի , բարձրասցի :

* Իշխան որ կոչի , յորժամ ունի՛ որոյ իշխէ . և ար-
քայ , յորժամ ունի՛ որոյ առաջնորդէ ॥ . այսինքն յոր-
ժամ ունի զհպատակս , որոց իշխէ , lix . լաճԷ :

Համաձայնութիւն այսր դերանուան կրկնակի նկա-
տի : 'Սախ՝ զի թուով համաձայնի ընդ այնմ , զոր
յարաբերէ . զի որովհետեւ դնի ՚ի տեղի նորա , զայն-
քան պարտինշանակել , զորքան նայն նշանակէ : Ուս-
տի եթէ յարաբերեալն միակի նշանակեսցէ , պարտի
դնիլ եզակի . ԳՐ , * Ըսն է տիրապէս իմաստուն , որ
գործով ուսուցանէ զիւրն իմաստունի , այն է լւայ վար-
դապետ , որ նախ առնէ , և ապա ուսուցանէ ॥ . սարգ :
* Բնուան հարի զանհաստատ հողմոյ , որով միշտ տա-
տանեալ այսր անդր տարաբերիմ ॥ . նարէկացի :

Իսկ եթէ յարաբերելին իցէ բազմաւորական , յա-
րաբերականն դնի յոգնակի . զոր օրինակ , * Սի պատ-
րեսցուք ՚ի հեշտալեացս , որս կախարդեն զզգայու-
թիւնս ॥ . սարգ :

Եւ քանզի բազում եզականք ևս ունին զօրութիւն
յոգնականի , եթէ յարաբերեալքն լինիցին բազում
եզականք , յարաբերականն ևս իբր ՚ի բազումս յոգ-
նակի դնի . ԳՐ , * Սուսք են փառասիրութիւն և մար-
դահաճունի , որս և զհաւասան իսկ հալածեն ॥ . սարգ :

Իսկ եթէ յարաբերելին իցէ անեզական անուն , ո-
րովհետեւ այն ըստ նշանակութեն իբր եզական է , յա-
րաբերականն ևս բազում անգամ եզակի դնի . զոր
օրինակ , * Յիշեա՛ զչնորհս աւազանին՝ որով լուսաւո-
րեցար ॥ . երզնկացի :

Եւ ներհակ այսմ՝ եթէ յարաբերելին իցէ անուն
հաւաքական կամ հանրական , ՚ի վարիլնց իբր յոգ-
նական վասն գոլոյ նշանակուէ նոցա բազմաւորական ,
յարաբերական որն դնի յոգնակի . ԳՐ , * Օ իմրդ կա-
րիցեմք և զբահանայապետական դատաւորութիւն ՚ի
դործ արկանել առ ազգ այնպիսի , որս . . . դատաւո-
րաց եկեղեցւոյ նստին դատաւորք ॥ . շորհ :

Ըսացի ՚ի վարիլն իբր յոգնական . զի եթէ իբր ե-

զական վարեցին այսպիսի անուանք, յարաբերական
որն և ս զնի եզակի . Գր . * Մենայն , որ զչար գործէ ,
ատեայ զլոյս ॥ . Եւ : * Երկուրդ , որ գնայր ընդ
խաւար , ետես զլոյս մեծ ॥ . Եսայ :

ՄԵՂ գիտելի է , զի այս գերանուն բազում ուրեք
ըստ թուոյն զօրութի համաձայնի . քանզի բազում ան
գամ փոխանակ յոգնական գնելոյ եզական գնի՝ մա-
նաւանդ յուղղականն և ՚ի նախդրիւ հօլովսն . Գր ,
* Մն բազումք ՚ի մարդկանէ , որ երևին բազմաց , ե-
թէ սքք են և առաքինիք . . . և նախատանաց և ոչ
միոյ համբերեն ॥ . սարգ : * Օտոյն զայս միտս ամենայն
ոք ստասցի առ անձ ՚ի վերայ անձ նեղութեց և չար-
չարանաց , զոր վասն նորա կրեմք ॥ . Իփսա :

Արկրորդ համաձայնութի այսր գերանուան նկա-
տի յայսմ , զի յայնպիսի հօլով գնի , յորպիսի գնելի
էր յարաբերելին , եթէ եզեալ էր ներգործութի՝ ըստ
պահանջելոյ բային կամ անուանն : Ըստի .

Արբեմն գնի յուղղական հօլովն՝ իբր անուն բայի . Գր ,
* Մենայն , որ զչար գործէ , չար գտցէ ॥ . սգա :

Արբեմն գնի ՚ի սեռական հօլովն՝ իբր յատկացու-
ցիւ . Գր , * Ստանեն առաջի անձնոցա է , որոյ սիրտն
է ուղիղ ընդ նմա ॥ . լաճ :

Արբեմն գնի յայլ հօլովս՝ իբր խնդիր բայի , և ս
և իբր խնդիր անուան , և ընդունելութե , և նախա-
դրուէ . զոր օրինակ , * Օի զոր սերմանեսցես՝ զնոյն
և հնձեսցես ॥ . Վարդ հարց : Աւր զորն է խնդիր բայիս
սերմանեսցես :

* Արոմ ցանկացաւն՝ ոչ եհաս ՚ի կէտն ॥ . Երդն : Աւր
որոմն է խնդիր ցանկացաւն :

* Արոյ համեմատ և զսա ցուցանէ ॥ . Գեորգ : Աւր որոյն
է խնդիր անուանս համեմատ :

* Մս այն (երկիր) է . . . որոյ ցանկացօղն աղաղա-
կէր , հոգի քոյ բարի ॥ ին . Բոսայէ : Աւր որոյն է խըն-
դիր ընդունելութես ցանկացօղ :

* Մենայն ՚ի քէն է , և որդւովդ . առանց որոյ եղև և
ուրիւն ॥ . սգա : Աւր որոյն է խնդիր նախադրութես
առանց :

ՄԵՂ սակայն ՚ի գերազանձ չարագրութիւն երբեմն

այլազգ կարգի այս համաձայնութի լի չորից . նախ՝
 յորժամ յարաբերականն համաձայնի ընդ յարաբե-
 րելոյն 'ի նոյն հոլով, թէ և յայլ հոլով էր դնելի (լի
 յունական ոճոյ) . րո, * Առաջնորդեա՛ ժողովորդեանն
 այնմիկ 'ի տեղին՝ յոր ասացի քեզ ॥ . Եւեց . փոխանակ
 դնելոյ , 'ի տեղին՝ զոր ասացի քեզ . (որպէս եղեալ
 է ոսկան) :

Երկրորդ՝ ընդ հակառակն , յորժամ յարաբե-
 րեալն համաձայնի ընդ յարաբերականին . րո, * Առ-
 զբանն՝ զոր խօսիք՝ մի մնացէ առ ձեզ ॥ . Ժամագիրք .
 փոխանակ ասելոյ . և բանն՝ զոր խօսիք՝ մի մնացէ
 առ ձեզ :

Երրորդ՝ ըստ երկուցն և սանհամաձայն գալոյ ե-
 թէ յարաբերականին , և եթէ յարաբերեցելոյն . րո,
 * Օ նոյն գրէ առ որս 'ի խուժաստան էին ժողովուրդք ॥ .
 Թով . արծր . փոխանակ ասելոյ , զնոյն գրէ առ ժող-
 վուրդան որս 'ի խուժաստան էին :

Չորրորդ՝ ըստ համաձայնելոյ զօրուք եղեալ յա-
 րաբերեցելոյն . րո, * Վաղցր է Խոր՝ որոյ սպասեն նմա
 յաւուր նեղուէ ॥ . նաառա՛մ . փոխանակ ասելոյ . քաղցր
 է Խոր այնոյէ , որք սպասեն նմա : Առ այս չորեքին ե-
 ղանակք՝ զորս եղաք , հասարակ են առ նախնիս մեր՝
 ոչ 'ի ստորին շարագրութիս , այլ 'ի դերատանս :

'Ի վախճան ճառիս արժան է զիտել և զայս . իբր
 զի երբեմն 'ի յարաբերականն յարին և այլ դերան-
 ուանք թարմատարաբար , կամ իբր զարդ . և այս՝
 մանաւանդ 'ի թարգմանեալ գիրս . րո, * Արանեալ
 է այր , որոյ օգնու թի իւր 'ի քէն է ॥ . սաղ : Ար դե-
 րանունս իւր՝ դնի իբր զարդ , կամ իբր թարմատար
 ինչ . և կամ իբր բացայայտիչ յարաբերականին՝ ոնչ
 ասացաք զցուցական դերանունաց 'ի վերջ ժոյ . գլխոյն :

Վիտելի է դարձեալ , զի յարաբերական որն եր-
 բեմն առանց ունելոյ զզօրուի յարաբերականի՝ այլ
 յաւէտ զզօրութի անորոչ հարցականի , դնի յառա-
 ջոյ իբր ածական՝ թուով և հոլովիւ համաձայն . րո,
 * Արու՛ չափով չափէք՝ չափեսցի ձեզ ॥ . ճառ :

նես չտողիս , և ոչ սրամտիս . փռութաս մեղկելոյս , և ոչ խափանիս ॥ . նար :

* Աստեալդ յաթռութեանդ քերովուհից՝ նիսա գթութի մեր հոգիս ॥ . շար :

* Օ ամենեսեան աշակերտեցին հոգևով զօրացեալքն և մարմնով տառապեալքն ॥ . լամբ :

Հինգերորդ՝ (այլ սակաւ ուրեք) ՚ի մակբայս . ԳՐ ,

* Այս ժողովրդեան՝ որ շուրջս կածն՝ առնեմ ॥ . նանայ :

* Բայց զիարդ այժմդ տեսանէ՝ ոչ գիտեմք ॥ . յովն :

* Ար իրաւապէսն դատի՝ զմարմնականն ՚ի ծոցս մեր հատուցանէ տանջանս ॥ . յովն . իմաստ :

Այսոքիկ յօդք ուրեք ուրեք դնին փոխանակ միմեանց . քանզի «էն դնի յերիս դէմս ևս . ԳՐ , * Արպէս սկսաք» ՚ի նմին և կատարեսցուք ॥ . եղիշէ :

* Ի գրելոցս ձեր ծանուցաւ ॥ . շարհատ :

* Արտիր լը այնոցիկ՝ որ մարտնչինս լը մեզ ॥ . եղիշէ :

Այնպէս և դան . ԳՐ , * Առ ինչ արդեօք հրամայեսցես քան թէ հրամայեցիր ॥ . եղիշէ :

* Օ որ ասէքդ՝ ցուցէք գործով ॥ . Գրգր :

* Ար նստինդ աւազիկ ամենեքեան առաջի քո ॥ . լամբ :

Բստ այսմ և նոն . զոր օրինակ , * Իսկ եթէ ոչ զայն առնիցեմք՝ զոր հրամայեցաքն , և զայն խօսիցիմք՝ զոր վարդապետեցաքն , ազատուէ օրինօքն եմք գատելոց ॥ . սարգ :

* Օ իարդուսուցանես ինձ , եթէ առնու որ զքոյդ՝ դու մի պահանջեր , երբ դու զքոյն պահանջես ॥ . ճբ :

* Ար մեռանին՝ արդարացեալ է ՚ի մեզաց անտի ॥ . հարովն :

Արքա երբեմն փոխանակ դնելոյ ՚ի վերայ բուն աշուան , կամ գերբայի , կամ խնդրոյ բային , լիւ , դնին ՚ի վերայ այլոց բառից առ ՚ի գեղեցկացուցանել զարագրութիւն . զոր օրինակ , * Օ ինչ գործեցից ողբալիս հոգի՝ յայնմ մեծի աւուր վտանգի ॥ . փոխանակ ասելոյ , ողբալի հոգիս . նար :

* Գուլեմ զճշմարտութեդ լինել օժանդակ ॥ . փոխանակ ասելոյ , դուլեմ զլինելդ քո օժանդակ ճշմարտութե . լամբ :

* Ամենայն որ՝ որ հակառակամարան է , զյաղթօղն

լինեւ՝ որքան կարէ՝ ախորժէ ॥ փոխանակ ասելոյ, ըզ-
յաղթօղ լինեւն . լաճք :

Այլ աստ գիտելի է, զի այսօրիկ յօգք բազում
անգամ դնին ՚ի տեղի դերանուանց զօրութի յարե-
լոց յանուանս և յընդունելուիս և ՚ի բայս սկսուիս
օրինակաւ . զոր օրինակ, * ՚Կ վեր ամբարձայ մոխիրս
մերժելի ॥ փոխանակ ասելոյ, ՚ի վեր ամբարձայ էս
մոխիրս, կամ ՚ի վեր ամբարձայ էս, որ և մ' մոխիր
մերժելի . նարեկ :

* Արծեցեր անօրէնս ՚ի մտի քում, թէ՛ և էս քեզ
նմանիցիմ ॥ այսինքն կարծեցեր Գրիգոր, որ անօրէն էս,
և այլն . սաղ .

* Ար զթայն, ողորմու թիւն գտցէ ॥ այսինքն նա, որ
զթայ, ողորմութի գտցէ . սառեկ :

* Ար եզևն՝ լինեւ ոչ ունի ॥ այսինքն, այն՝ որ եղև, ոչ
ևս է լինելի . իգնարեոս :

Գարձեալ գիտելի է, զի յօգք ն, դնի երբեմն փո-
խանակ անուան, որ զօրութի իմանի . և այս՝ երբակի .
Սի յարելով ՚ի յատկացուցիւն՝ զօրութի իմացեալ
անուանն . զոր օրինակ, * Արդ՝ է բարկու թի, որ գո-
վելի է ՚ի զրոց . որպէս մովսէսին, որով զեզիպտացին
սպան . . . և է բարկու թի, որ պարսաւելի է . որպէս
կայենին, որով զեզբայրն իւր սպան ॥ այսինքն որպէս
բարկու թի մովսէսի . ին . սարգ :

Արկորդ՝ յարելով ՚ի յածականն . Գր, * Օ սղա-
տանականն համարձակագոյն այժմ բարբառիմ ॥ ք
զպղատոնական բանն . խորէն :

Արկորդ՝ յարելով ՚ի խնդիրն նախադրուէց, յորս
իցէ եզեալ ներգործութի նախդիրդ շ՝ զօրութի իմա-
ցեալ անուանն . այլ այս ՚ի սակաւս յոյժ . զոր օրի-
նակ, * Բնդ զօրս հրեշտակաց միաբանական օրհնութի
բարեբանեցէք զի վերայ քերովլէիցն ॥ այսինքն բա-
րեբանեցէք զնստեալն ՚ի վերայ քերովլէից . կի՛ զայն՝
որ է ՚ի վերայ քերովլէից . լաճք :

* Օ գիւրալուրն և զառանց խոր բառիցն յարգեն ॥
ք զբանն, կամ զայն՝ որ առանց խոր բառից . սարգ :

* Օ վասն մեղացն ոչ խնդրեցեր ॥ ք զմատուցեալն
քեզ վասն մեղաց . կամ զայն՝ որ վասն մեղաց . սաղ :

Գ Լ Ո Ւ Խ Թ Ժ Օ :

Յաղագս համայնախումբէ Բայի ընդ անուան, ընդ դերահոսան
և ընդ ընդդոսելուսնէ :

Բայք կրկնակի համաձայնին լը անուանս, լը գեր-
անուանս և լը ընդունելու թիւս . Կախ՝ իբր լը այնս,
որք ասին անուան Բայի . Երկրորդ՝ իբր լը այնս, որք ասին
խնդիր Բայի . զոր օրինակ յասելն, * Բերան ամ-
պարչտաց կլանէ զգատաստանս ॥, առաջ . 'ի սմին բա-
նի բայս իլանէ՝ ունի զերկուս անուանս, որոց առա-
ջինն՝ այսինքն Բերանն՝ եղեալ է անուն բայի, և նշա-
նակէ զտր գործողուն կլանելոյն . իսկ միւսն՝ այսինքն
դասաստանն՝ եղեալ է խնդիր բայի, և նշանակէ զեն-
թակայն՝ առ որ լինի գործողուն կլանելոյն : Իսկ ա-
նունս ամպարչտայ՝ է յատկացուցիչ Բերանոյն : Եւ յամ-
նախ խօսեսցուք զառաջին համաձայնութենէ, այս-
ինքն զանուանէ բայից . և ապա զերկրորդէն, այս-
ինքն զխնդրոյ նոցին :

Յաղագս առաջին համայնախումբէ Բայից . համ

Յաղագս անուան Բայի :

Անուն բային է այն՝ որ նշանակէ զտր գործողու-
թեն . այսինքն զգործողն կամ զկրօղն, և կամ զայն՝
որ լինի . որպէս յայտ է 'ի վերոյգրեցոցդ . և քանզի
յատկապէս անուանք և դերանուանք և ընդունելու-
թիք կարգին նշանակել զգործողն կամ զկրօղն, նորա
միայն յատկապէս լինին անուն բայի, որպէս յայտ լի-
ցի 'ի յաջորդ գրեցոցդ : Եւ զի աներևոյթ բայք ևս
երբեմն իբր անուն վարին, նորա ևս լինին բազում
անգամ անուն բայի . որպէս ունիմք ասել 'ի ստորե-
ի վերջ Բ հանունին :

Իսկ այլ մասունք բանի որովհետև պիտակաբար
միայն կարեն վարիլ իբր անուն, անյատկապէս կարեն
լինել անուն բայի . ըստ որում են բառք ինչ . փր :

* Իբրևն նախդիր է բանի ॥ . լամբ :

- * Օ այս արդեօհն յայտ առնէ ։ Ի գնապ ։
 - * Օ ի հանն այլ է , և և հանն այլ ։ Խոսրով ։
 - * Սին՝ փափաքանաց՝ որում ոչ հասանեմք , է տարա-
ցոյց ապաշաւանաց ։ Լաճ ։
 - * Վիտէճն՝ ամենեցուն յոյտ է ։ Կանայ ։
- Սյլ այժմ զսորք զանց արարեալ՝ դիցուք զհինգ
կանոնս վասն համաձայնութեանուն բայի Ը բայի ։

Վանն . ւ ։

Սթէ բայն իցէ դիմաւոր , անուն բային պարտի
դնիլ յուղղական հօլովն . զոր օրինակ , * Վաղարե-
լին նեղութիքն , և եհաս հանգիստն ։ Ի գնապ ։ Ուր
անուանքս՝ նեղութիքն և հանգիստն՝ են անուն բայիցս՝
դարարեցին և էհաս . և եդեալ են յուղղական հօլովն
վասն դիմաւոր լինելոյ բայիցն ։

Իսկ եթէ բայն իցէ անդէմ՝ որպիսի են աներևոյթք ,
դերբայք և գրագէտք , անուն բային հասարակօրէն
դնի ՚ի սեռական հօլովն . զոր օրինակ , * Մյն է ժա-
մանակ , յորում երանութիքն լնուն . աղբարաց մեծա-
նալ , և սգաւորաց մտիծարիլ , և հեղոյ զվերին երկիրն
ժառանգել ։ Ի գնապ ։ Ուր անուանքս՝ աղբարաց , սգա-
ւորաց և հեղոյ՝ են անուն բայի ՚ի սեռական հօլովն վս
անդէմ լինելոյ բայիցս՝ մեծանալ , մտիծարել և ժառան-
գել . որք եթէ որոշեալ գլխօք կարգէին , անուանքն
ևս յուղղական հօլովն դնէին . որդոն , ազքաաք մե-
ծանան . սգաւորք մտիծարին . և հեղք ժառանգեն
զվերին երկիրն ։ Մտ այսմ է տեսանել և ՚ի յաջորդ
օրինակս ։

* Վաղարակել խոյրաածոյս՝ անդրէն վիրաւորիմ ։ Կար ։

Ուր բառգ խոյրաածոյս՝ է անուն բայիս՝ ՚ի ճարակել ։

* Վազում անգամ զան ըմպելով մանկանն ՚ի բաց ոչ
գառնայ ։ Ուր մանկանն է անուն բայի դերբայիս ըմ-
պելով . սարգ ։

* Սքին վարդանայ մտրակեալ զերիվարն՝ ՚ի փախուստ
զախոյեանն պարտից դարձուցանէր ։ Ըմպ . սրճր ։
Ուր բառս սքին վարդանայ՝ է անուն գրագէմ բայիս
մտրակեալ ։

Ուրեք ուրեք ևս դնի յուղղական հօլովն. ԿՐ, * Հա-
սեալ 'ի թիկունս աներևոյթ օգնութիանն խորտակեաց
յայտնապէս զգաղանի պատերազմն ॥ . շար :

Իսկ դերանուանք դնին երբեմն նաև 'ի տրական
հօլովն, և այս՝ յաւէտ 'ի դերբայս և յաներևոյթ ե-
ղանակս. ԿՐ, * Փափաքեաց անձն իմ՝ 'ի ցանկալ ինչ
յիրաւունս քո ॥ . սաղ :

Գիտելի է ևս, զի անուն բային յարակատար և
գերակատար ժամանակաց, և անցելոյ ստորագասա-
կանին՝ 'ի յերրորդ դէմն եղականին իբր 'ի բազումս
դնի 'ի սեռական հօլովն. ԿՐ, * Այլ էճ եղեալ է 'ի մտի
իմում՝ բազում չարչարանօք կարճել զձեզ 'ի կենաց
ձերոց ॥ . եղիշէ : Ուր սեռական դերանունս էճ՝ լեալ
է անուն բայիս երեալ է :

* Գրեալ էր Ֆեր յաճեղէն տառիս, զի մի մոռացայց
զձեզ ॥ . Տափտար : Ուր սեռական հօլովս Ֆեր լեալ է
անուն բայիս Գրեալ էր :

* Իժէ մոռացեալ իցէ Ռեր զանունն այ մերոց ॥ . սաղմոս :
Ուր սեռական հօլովս Ռեր՝ լեալ է անուն բայիս Տոռա-
ցեալ իցէ : Տես և 'ի մասն . ք . գլ . ԺԹ . 'ի վերջն :

Իսկ երբեմն՝ դնի յուղղական հօլովն. զոր օրինակ,
* Հանգուցեալ է հոփի այ 'ի բեզ ով եղբայր ॥ . Վարդ :

* Ունիս զոր, որ ստացեալ իցէ զձձմարիտ հնազան-
դութի ॥ . Վարդ հարց :

Սասն . Բ :

Գարձեալ էթէ բայն իցէ դիմաւոր, անուն բային
պարտի թուով և դիմաւ համաձայնիլ ընդ նմա . զոր
օրինակ, * Աճմարտութիւն ազատեսցէ զձեզ ॥ . յո՛ւն :
Ուր որպէս բայս ազատեսցէ՝ ըստ թուոյն է եղական,
նոյնպէս և անուն բային, այսինքն ճշմարտութիւն՝ է եղա-
կան. և որպէս բայն է յերրորդ դէմն, նոյնպէս և ա-
նուն բային՝ 'ի ձեռն ն յօդին :

Իսկ բառս զձեզ՝ է խնդիր ազատելոյն : Սոյնպէս է
և 'ի յաջորդ օրինակս. յերիս դէմն ևս :

* Ամբարտաւանեցայ Գողիս շնչաւոր ॥ . Կար :

* Սեռար անմահ, և զմահացեալն նորոգեցէր ॥ . Կար :

* Պատիժքն ուսուցանեն զղղաստու թի || . Գէորգ :

Բայց գիտելի է, զի այսպիսի յօգք որոշիչք դիմաց՝
բազում անգամ զօրութիւն դնին յերրորդ գէմն. զոր
օրինակ, * Աւ զդէ ոչ հանէ || . Եղիակ : Ուր զօրութիւն
զոյ յօգս՝ և . որպէս թէ ասէր . դէն ոչ հանէ զդէ :
Բստ այսմ է ատեանել և ՚ի յաջորդ օրինակսդ :

* Իրնարհոմբէ բանակետղ է սրբութե || . ՏճԷ :

* Լ՛յր փորձի ՚ի բերանոյ գովչաց իւրոց || . առաջ :

* Ամանեցին ինձ չարիք, և ես ոչ կարացի ճանաչել || . Կար :

Իսկ գերանուանք յիւրեանց ունելով զգէմն՝ ոչ
կարօտին դիմորոշական տառից, այլ առանց նոց հա-
մաձայնին. զոր օրինակ. * Այն է սպաս տանել ձու-
լեալ պատկերի, և մեզաց ախտի . արդ՝ Ես գնացի լը
այս ճանապարհ կորստեան հետոց խաւարի || . Կարէի :

* Որովհետեւ մարդ ես դառ, ոչ պակասին ՚ի քէն ըիծք || .
Չարք Կարց :

* Աս ետ ինձ զանվրէպ գիտութի զեղելոցս || . Իմաստ :

Այլ թէպէտ յարաբերական գերանուան չունի զս-
րոշեալ գէմն, բայց զօրութիւն ունելով զայն՝ յերիս
գէմն ևս կարէ համաձայնիլ առանց յօգի . զոր օրի-
նակ, * Տունկս դառնոտեան՝ որ զգարչուի անառակ
վարուց ծաղկեցի || . Կար :

* Աս ես՝ որ օրէնսդէտ առնես զմեզաւորսն ՚ի ճա-
նապարհի՝ լը բանի երգողին դաւթայ || . Կոյնն :

* Որք մեզօք ժանգացուցանեն զհոգիս, ոչ կարեն ըզ-
լոյս անուէն յինքեանս կերպարանել || . Կար :

Այլ աներևոյթն զոր յօգ և ունիցին, լինին ա-
նուն բայի միշտ յերրորդ գէմն . որք, * Աստեղս վեհա-
գոյն բնաւիցդ՝ ոչ է իմ, այլ՝ քնի || . Լաճ :

* Տիրելք ամենեցուն՝ ինայել տայ քեզ յամ || . Իմաստ :

* Ողորմելն չթողու զարժանին ինդրել || . Խոսրով :

Սոքա բազում անգամ առանց յօգի ևս լինին ա-
նուն բայի . մանաւանդ էական բայից . զոր օրինակ,

* Սեփեղ ՚ի չարեաց՝ է հանձար || . Կրք : Ուր աներևոյթ

բայս թէպէլ՝ առանց յօգի լեալ է անուն բայիս՝ է :

Բստ այսմ լինին սոքա անուն բայի և բացարձակ
գիմաղուրկ բայից . որք, * Առաջի մարդկան ձեռնալ

դիւրին է , այլ ոչ առաջի նյ ը . Իգնատ : Ուր ձեանալն է անուն բայիս դիւրին է . իսկ առաջի ճարդանն , ին . է ինդիր ձեանալն :

Անն . Գ :

Եթէ անուն բային իցէ բազում եզական՝ ը նոյն դիմաց , բայն հասարակօրէն դնի յողնակի : Օ ի ուրովհետե յայնժամ ար գործողուն կամ կրողուն է բազում , բայն և՛ որ նշանակէ զգործողութիւնս , պարտի դնիլ բազմաւորակի . զոր օրինակ , * Յորտ և երէժ օրհնեցան ՚ի յակօբայ ը . Գերգ :

* Ղինի և արբեցումի ապականեն զարս իմաստունս ը . յաճախ :

* Ղաղն և գողակիցն ՚ի միում պատժի են ը . նոյն :

* Յորժամ կարեն և կառն ՚ի միասին իցեն , չիք ինչ այլ՝ որ արգելուլ կարիցէ ը . Գերգ :

Իայց բազում անգամ և՛ս դնի բայն եզակի . և գրեթէ զօրութի կրկնի . զր , * Մուրն հատուցման պահի պարտն և պարտանն ը . յովն . կառն :

* Մտօղուտ է անդ խոսարձանութի և զընտանն ը . խոսարձ :

* Եթէ ոչ լուծանի ազահութի , սէր և ողորձութի ոչ հաստատի ը . Իգնատ :

Անն . Գ :

Եթէ անուն բային իցէ բազում ՚ի զանազան դէմն , բայն դնի ՚ի սլատուականագոյն դէմն , այսինքն յայն դէմ , որ համեմատութի է առաջին . իբր զի եթէ մին յանուանց բային իցէ յառաջին դէմն , և միւսն յերկրորդն , կամ յերրորդն , բայն դնի յառաջինն . զի առաջին դէմն սլատուականագոյն է քան զերկրորդն , և երկրորդն քան զերրորդն . զր , * Ես և դու և անձ բաղնութի . . . աշակերտեսցնիք անձային զրոց ը . ելեւ . և ոչ լինի ասել՝ ես և դու և անձ բազմութիգ աշակերտեսցիք , կամ աշակերտեսցին : * Իշխեա՛ մեզ դու և որդիքս , և որդիք օրդուց քոց ը . դատ . և ոչ լինի ասել՝ դու և որդիքս իշխեսցէ :

Կանոն . Է :

Եթէ անուն բային իցէ ըստ ձայնին եզական , իսկ ըստ նշանակուածն բազմաւորական , (որպիսի են անուանք թուականք), բայն դնի յոգնակի . զոր օրինակ , * Նինգն 'ի նոյանէ յիմարք էին ॥ . Ժար :

* Չորէքեանն (այսինքն չորք տարերք) հային կամաց ակնարկելոյ արարչին իւրեանց ॥ . Եղիշէ :

Իսկ եթէ անուն բային իցէ բաւ հաւաքական , ոն՞ փոստ . ազգ , կն , կամ հանրական , որպէս՝ բաւս ան , և կամ կրկնակ , ոն՞ փ փ . այր ջընէեր . իւրաքանչիւր . այրուքէ . կն , բայն երբեմն դնի յոգնակի՝ վասն ունեկոյ նց զնշանակուածի բազմաւորական . զք , * Տիրեցին աշխարհիս հայոց՝ ազգն սասանայ պարսկի ॥ . Եղիշէ :

* Ի են փառօք նորա ամենայն երէիք ॥ . յով :

* Ինն այր ջընէեր իւր , եկայք արկցուք աղիւս ॥ . Տն :

* Լարաքանչիւր յընկերէ իւրմէ զգոյշ լերուք ॥ . Երեմ :

Լու երբեմն , մանաւանդ թէ բազում անգամ , դնի եզակի . զոր օրինակ , * Լսուհետև վտանգեցաւ ազգքրիստոնէից ॥ . Լամբ :

* Լնայն Ժարք զլաւն ցանկայ ունել , և ոչ զնուազն աւնուլ ॥ . պարմ . աղէքս :

* Աստուեսցէ իւրաքանչիւր զընկեր յաշխարհիսս ॥ . ՏԲ :

Ըստ այսմ համաձայնին բայք և ընդ անեզական սնուանս . երբեմն յոգնակի և երբեմն եզակի . զք ,

* Սուլուծի և հեղգուի Բոյ ոչ քաւին ॥ . Խոսրով :

* Րանայն Բոյս մի զբազեսցի յիրս կենցաղոյս , այլ միշտ յերկինսդ բնակեսցէ ॥ . Լամբ :

Ի վախճան այսոցիկ հինգ կանոնաց՝ զայս մի ինչ արժան համարիմ ծանուցանել . իբր զի բազում անգամ անուն բային դնի զօրուի . զոր օրինակ , * Եթէ կամիս հետևիլ յի , պահեա՞ զբանս նորա ॥ . Լարք հարց : Ուր անուն բայիցս նախ և պահեա՞ զօրուի դնի . այս ինքն է՞ դոս :

Իսկ երբեմն ներհակ այսմ՝ բայն դնի զօրուծի , և անուն բային ներգործուծի . զոր օրինակ , * Րանիւ և կերսլարանօք՝ բազում խոնարհք . իսկ արդեամիք

և ճշմարտութիւն՝ դուն ուրեք ॥ . Կի բանիւ և կերպարանօք բազում խոնարհք գտանին , լի . սարգ :

Գ Լ ՈՒ Խ Թ ԺԷ :

Յաղագս երկրորդ համախոյնութիւն Բայից . համ

Յաղագս խնդրոյ Բայից :

Բայք յետ համաձայնելոյ լը այնս՝ որք ասին անուն բայի , և նշանակեն զտր գործողութեց կամ կրելուց , պահանջեն համաձայնիւ և լը այնս՝ որք ասին խնդիր բայի և նշանակեն զենթակայն , այսինքն զկրօղն գործողութեց կամ զեզրն , կամ զպատճառ նոցին , կամ զվախճան , կամ զգործ , կամ զայն՝ յորմէ լինի կրել :

Երգ՝ յուրից մասանց բանի՝ այնք լինին տիրապէս խնդիր բայի , որք լինին յատկապէս անուն բայի . այսինքն է՝ անունն , դերանունն և ընդունելութիւն , ևս և աներևոյթքն , ընդ որս և դերբայքն . որպէս յայտ լիցի՝ ի ստորև գրելոցդ .

Իսկ այլ մասունք բայի նիւթապէս միայն կարեն լինել խնդիր բայի . ԳՐ , * Յաճախաբար դնէ զերօտինն ॥ . ոսկ :

* Օ այս միւս՝ մի յանյուսուէ կարծիս ձգեր ॥ . լամբ :

* Իձառաջ և ոհս ՚ի նմանէ յառաջ բերեալ հաստատէ ॥ . անդ :

* Իսկ ես առող եղկելի անձին իմոյ կարդայի ॥ . յոճ . հալ :

* Օ ան խարոց եղ ՚ի միջի ॥ . սարգ :

* Կլուխ գովութե՛ զերբն դնէ ॥ . ոսկեբ :

* Օ այն միայն յաւել , և հայր ազգաց բազմաց արար ॥ . նոյն :

Երբեմն նաև ամբողջ բանք լինին խնդիր բայի . ԳՐ ,

* Եւ ՚ի հնունն զայսր տպաւորութի՛ օրինակաւ նկարագրեցեր՝ զգարձարո՛ւքն առ իս , և ես դառնամ առ ձեզ ॥ . նար : Ուր բանս դարձարձար առ իս լի՛ է խնդիր սեռի բայիս նկարագրեցեր :

Եւլ արդ՝ որովհետև բայք պէսպէս են սեռիւ , և իւրաքանչիւրն այլևայլ նշանակուի , վասն որոյ կրկին խնդիր կարեն առնուլ . մի ըստ սեռի , և միւս ևս՝ լը

Յաղագս խնորոյ սեռի ներգործ¹¹ . Բայից : 195
բնութե : Խնորի սեռին է այն , զոր պահանջէ բայն
վասն սեռիւ զանաղանելոյ . իսկ խնորի բնութե է այն ,
զոր իւրաքանչիւր բայ պահանջէ լի իւրում նշանա-
կութեն : Ըրդ՝ ներգործական բայք , ընդ որս և հա-
սարակք և կրաւորականք՝ առնուն նախ՝ զխնդիր սե-
ռի . և երկրորդ՝ զխնդիր բնուէ : Իսկ չեզօրականք՝
ընդ որս և էականք՝ առնուն զխնդիր բնութե և եթ .
զորոց ունիմք խօսիլ այժմ՝ ՚ի մասնաւորի . (տես զայս
մանկ յընդարձակն . Գ . 17 :

ԳԼՈՒԽ ԺԲ :

Յաղագս խնորոյ սեռի՝ ներգործական
և հասարակ Բայից :

Ներգործական բայք առ հասարակ առնուն զխըն-
դիր սեռի ՚ի հայցական հօլովն . Գր , * Օքարինս ու-
ղորկեցին ջուրք ॥ ԳԲ : Ուր հայցական անունդ դարինս՝
է խնդիր սեռի ներգործական բայիս ողորկեցին :

Սոյնսպէս և հասարակ բայք՝ յորժամ վարին իբրև
զներգործական , առնուն զխնդիր սեռի ՚ի հայցական
հօլովն . Գր , * Քանզի յիմարն յիմարութի խօսեացի ,
և սիրտ նորա զնանրութի խորհեացի ॥ Եսայ : Ուր հայ-
ցական հօլովքս յիմարութի և զնանրութի են խնդիր սե-
ռի հասարակ բայիցս՝ խօսեացի և խորհեացի :

Ըսլ երբեմն այս խնդիր սեռի զօրութի դնի . Գր ,
* Երանելի այն ոչ է՝ որ ուսուցանէ , այլ այն՝ որ առ-
նէ և ուսուցանէ ॥ Վարդ հարց : Ուր զօրութի կայ խըն-
դիր սեռին . Կր է՝ զբանն ար . որպէս թէ ասէր . ոչ է
այն երանելի՝ որ զբանն ար ուսուցանէ . այլ այն , որ
առնէ զնոյն :

Վիտել արժան է աստ՝ զիներգործական բայք ինչ
՚ի յարին յարմատս իւրեանց կամ ՚ի բայանուանս
առնուն զնոսա ՚ի հայցական հօլովն ոչ իբր խնդիր սե-
ռի , այլ իբր խնդիր բնութե . Գր , * Օհարաւածս թըլ-
նամուոյ հարի զբեզ ॥ այսինքն հարուածուք թընա-
մուոյ . երե՛ :

Եւ երբեմն ՚ի տեղի այսպիսի խնդրոյ դնի անորոշ

Հայցական կամ ուղղական. ԳՐ, * Ահար զնոր հարուածս յոյժ || . լաճք :

* Աւ եւայ եզեկիւս լաւիան մեծ || . այսինքն լալով մեծաւ . եսայ : Այս յաճախ ևս պատահի 'ի չեզոքական բայս . զորմէ տէս 'ի գլ . ին . 'ի կանսն . ժն :

Այսպիսի խնդիր 'ի գործ ածի և 'ի յարաբերականս . ԳՐ, * Ահրն զոր սիրեցեր զիս 'ի նոսա իցէ || . Կր սէրն՝ որով սիրեցեր զիս . յո՛ւն :

Գիտելի է ևս , զի ոմանք 'ի ներգործական բայից փոխանակ Հայցականի առնուն զխնդիր սեռի 'ի տրական հոլովս . ԳՐ, * Արհրաբէսցոս անձային սրնանիս || . շարանոց :

* Օ օրացոյց զմեզ , զի յաղբեացոս այնմիկ՝ որ յաղթաւ հարեաց զընուծիս մեր || . իգնար :

* Ոչինչ կարէին սոնանել նամա || . յո՛ւն . կախ :

* Մի սորանփանեացոս պատուիրանին || . սարգ :

Աւ լը հակառակն ոմանք 'ի չեզոքական բայից՝ ուրեք ուրեք ներգործականապէս վարելով , խնդիր սեռի առնուն 'ի հայցական հոլովս . ԳՐ, * Աթէ տղայք լուէն զօրհնաբանումն ի՞նչ || . յաճքի : Օ այսցանէ տէս յընդարձակն . Կ . 18 :

Գ Լ Ո Ի Խ Ժ Ժ :

Յաղագս ինորոյ բնութիւնէ՝ Աերգործանիս Բայից :

Բայք ներգործականք բաց 'ի խնդրոյ սեռին՝ առնուն նաև զխնդիր բնուէ 'ի պէսպէս հոլովս . և այս՝ չորեքկին . Ախա՛ իբր ըստ բնութան , որ և ասի բռան ինչորի բնութիւնէ . այսինքն այնպիսի՝ զոր բնուէ բային ըստ առաջին նշանակուէ իւրում պահանջէ . որպէս բայս առաջել ըստ ինքեան պահանջէ առնուլ խնդիր բնուէ զնախդրիւ տրական . ԳՐ, * Առաջեաց առ մեզ զհոգի իւր || . յճք : Ուր նախդրիւ տրական հոլովք՝ առ մեզ , է բուն խնդիր բնութիւն բայիս առաջել :

Արհրորգ՝ իբր յարմարական , կամ լը յարմարութիւն . այսինքն այնպիսի խնդիր՝ որ զնի 'ի տեղի բուն խնդրոյ բնութիւն , յարմար այնմ՝ նշանակուածէ՝ զոր ունի

բայն ՚ի բանի անդ : Որպէս եթէ բայս առաջել, որ ըստ ինքեան պահանջէ առնուլ զնախդրիւ տրական, փոխանակ նորա առնուցու զպարառական, կիմ զայլ Հոլով ՚ի ձեռն նախադրու թէ . Գր, * Հորդան իւրոյ զօրուն տուեալ՝ առաջէ զկողմամբ ճուաշ գաւառի ॥ յովն . Կախ : Ուր բառդ՝ զհողմաճէ՛ եղեալ է փոխանակ բուն խնդրոյ առաջել բային՝ իբր խնդիր յարմարական . այսինքն յարմարեալ և եղեալ ՚ի տեղի բուն խնդրոյ առաջելն, մինչև ոչ ևս զօրու թէ պահանջել զայն :

Երրորդ՝ իբր երկրորդեան . այսինքն այնպիսի խնդիր՝ զոր բայն ըստ բնութե իւրում երկրորդաբար պահանջէ : Որպէս բայս առաջել՝ երկրորդաբար պահանջէ առնուլ զխնդիր ՚ի Հոլովն բացառական . Գր, * Առաջեա՛ ՚ի մեզ ար զօգնութի ՚ի լեռնէ սոյ քում մէ ॥ շար : Ուր բացառական Հոլովս ՚ի լեռնէ գնի իբր երկրորդական խնդիր բայիս՝ առաջեալ :

Չորրորդ՝ իբր պարահան, կամ ըստ պատահման . այսինքն այնպիսի խնդիր՝ որ ըստ պատահման զիպի բային . որպէս նոյն առաջել բայն կարէ առնուլ ըստ պատահման զխնդիր յայլեայլ Հոլովս, և կամ նախադրութեք, կամ գերբայիւք . Գր, * Որ աւետաւոր քում գալտեանդ առաջեցեք յաշխարհ զքր մարգարէսն ॥ շար : Ուր ուղղական Հոլովս աւետաւոր՝ է պատահական խնդիր բայիս առաջեցեք :

* Առաջեցին զերիտասարդս իւրեանց զջրոյ ॥ երե՛ : Ուր պատմական Հոլովս զջրոյ՝ է պատահական խնդիր բայիս առաջեցին : Սոյնպէս և յայլ խնդիրս :

Իսկ առ ՚ի որոշել՝ թէ ներգործական բայք յոր Հոլովս պահանջեն տիրապէս զխնդիր բնուէ ըստ ինքեան, դիցուք քանի մի կանոնս հանդերձ օրինակօք : Եւ թէպէտ զորս կանոնադրեմք աստ՝ նոքին զայլ խնդիր ևս առնուն, բայց այնքիկ ոչ են բուն խնդիր . այլ կամ երկրորդական, կամ յարմարական, և կամ պատահական : Եւ զի որք երկրորդականքն են՝ և պատահականք՝ ինքնին որոշին, թողումք զայնս, և միայն վասն յարմարականաց յարեմք զկնի բուն խնդրոց երիս երիս օրինակս :

Սանն . Թ :

Բայք՝ որք ասին առաջին հարգի , այսինքն որք նշանակեն զդործողութիւն առնելոյ զիմն՝ այս ինչ , կամ համարելոյ և կամ անուանելոյ զիմն՝ այսպիսի ինչ , առնուն զինդիր բնութե՛ յուղղական հոլովն . և սոքա են սակաւ յոյժ . զոր օրինակ , * Այլ ամ մեղք ... մեղաոր միայն առնեն զմարդն . իսկ ամբարտաւանունն սաքանայ գլխովին առնէ ॥ . սարգ :

* Օ ահեակն հեթանոսաց՝ աջ Յեռնադրեցին ॥ . նար :

* Օ եղբարս ջատագովս օրինաց քահարէլ նմին համարէմք ॥ . լամբ :

* Բանոր զկեանս աշխարհիս անուանէ ॥ . յովհ . իմաստ :

* Բան զնա աւետարանիչս յորջորջէ ॥ . նանայ :

Ոմանք ՚ի տեղի բուն խնդրոց լի յարձարութե՛ առնուն զուղղական . զք , * Այաշխարութի զմարդ՝ հրեշտակ յարդարէ ॥ . սարգ :

* Իմաստասէրք զորք աշխարհ սասցին զմարդ ॥ . խոսրով :

* Այլէ զշամբս եղեղանց յօրինեմ գրելս . . . ոչ Բասական հարծեմ զնոսա ॥ . սարգ :

Սանն . Բ :

Բայք որք ասին երկրորդ հարգի , քի որք ունին զնշանակութի տուչական՝ կամ իբր տուողական , առնուն զվերջահոլով տրական . զք , * Տար իմաստնոյն պատճառս , և իմաստնագոյն և ս լիցի ॥ . առակ :

* Բարեկրոցն դասք արբոնցին հեթանոսաց զջուրն կենդանի ॥ . իֆնապիոս :

* Տնօրինեաց մարդկան ազգի զվերկութի ॥ . լամբ :

* Յաղղեաց նմա շահս ՚ի վաստակոց իւրոց ॥ . իմաստ :

* Հորդեաց մեզ ճանապարհնորոզ և կենդանի ॥ . լամբ :

* Ստուծե և աւասպելեաց Բանան (զլեւիսն) յօժարութե ॥ . շնորհ :

Ոմանք ըստ յարձարութե՛ առնուն զվերջահոլով տրական . զք , * Բարի առնէ ամբ բարեաց ॥ . սաղ :

* Օ ամենայն ինչանախնայոց սիրոյն քօի ॥ . խոսրով :

* Այլ թանց և լեզուոյ դնել դրունս աղաչեմք ॥ . շնորհ :

Անուն . Գ :

Բայթ՝ որք ասին երբորդ կարգի , այսինքն որք նշանա
կեն զգործողունի ածելոյ զիմն առ այլ , առնուն ըզ-
նախդրիւ տրական . զթ , * Այստողանելն 'ի խոնար-
հուլի ածել զմեզ ॥ . Խոսրով :

* Գլխք ոչ երբէք բռնիք զոր վարեն 'ի կորուստ ॥ . Եղիշ :

* Այ գաղարեն ճառածնել զխռովունի յառաջաստ խա-
ղաղուլի երկնաւոր հարսնարանին ॥ . Նորհ :

* Արհատեա՛ առ իս զաջգ ամենագով ॥ . Կար :

* 'Ի սեղան արքայուլի զմեզ հրատարել ॥ . սարգ :

* Օ գիրն 'ի հոգի խոսարիել ॥ . արեսարիել :

Ոմանք լսյարճարուի առնուն զնախդրիւ տրական . զթ ,

* Սի ևս համարեցի՛ զնոսա 'ի մարգիկ ॥ . Եսայ :

* Աթէ ես ինչ ստեցի այսմիկ երգման , հարս՛ ար ար ար
զիսաս ստուլի իմոյ 'ի գլուխ իմ . յո՛ւն . կալ :

* Ո՛ իցէ 'ի ձէնջ մարդ՝ ցոր Խոսրիցէ որդի իւր հաց ,
միթէ քար տայցէ նմա ॥ . Կոխանակ ասելոյ , յորմէ
խնդրիցէ . ճար . և զուի :

Անուն . Գ :

Բայթ՝ որք ասին շրբորդ կարգի , այսինքն որք ունին
զնշանակունի բացառողական , (այս է՛ բառնալոյ կամ
առնոյ զիմն յայլմէ) , առնուն զինդիր 'ի հոլովն բա-
ցառական . զոր օրինակ , * Բարեցի՛ 'ի ձէնջ զընդու-
նայն միթարուլին ձեր ॥ . Եսայ :

* Օ ձեզ ընարեաց ար յամ ազգաց ॥ . անանիա :

* Սի որ զձեր բաժինն 'ի ձէնջ հարսնիցէ ॥ . Եղիշ :

* Փարստեա՛ 'ի մտաց իմոյ զմեզ մթուլի ॥ . Կարելի :

* Հայցեր 'ի կենաց զմահ ॥ . շար :

* Լորա ոստան 'ի քիւն զհեղունի , և մեզ աւանդեցին ॥ .
Լար :

Ոմանք լստ յարճարուի առնուն զբացառական . զթ ,

* Օ տուն իւր յանիրաւ ստացուածոց անտի ընո , և
մեծանալ կարծէ ॥ . Նորհ :

* Հասարակաց զաշխարհս յանկերպարան նիւթոյ ॥ .
Իմար :

* Սակայն և զայն իշխեցին Խորհանիել յինէն ॥ . ա՛փալ :

Ս ան . Է :

Բայք՝ որք ասին հինգերորդ կարգի , այսինքն որք ունին զնշանակուի պատմողական , (այս է՝ պատմելոյ , կամ խորհելոյ ինչ զայլմէ) , առնուն զխնդիր պատմական . զոր օրինակ , * Պարտեւոյնս կըռով զանպատումն զօրու թէ ॥ . սէբեր :

- * Հրեշտակք զմաննէ խօսին պարծանօք ॥ . Կոչ :
- * Օ սահմանակից ազգացն ղէհոյցանէ ॥ . Գեորգ :
- * Օ որոց և ոչ մի որ յանձին կալաւ ճարենագրել ॥ . Խոր :
- * Ս ապաքէն զայս ամառակ զմաննէ առաջեւոյն ॥ . ամբ :
- * Ս ի խորհեալն չար զումեքէ ॥ . Վարս հարց :
- Ո մանք ըստ յարճարուի առնուն զպատմական . Կր ,
- * Ըրք անօրէնք հուր հարին զբաղաքէ ॥ . առաջ :
- * Հանդէն անուն չար զձէնջ վն օրդւոյ մարդոյ ॥ . զուհ :
- * Պրէր և կնքէր զերգումն , և կաղէր զաւետարանէն ॥ . եղիշէ :

Ս ան . Ը :

Բայք՝ որք ասին վեցերորդ կարգի , այսինքն որք նշանակեն զգործողութի առնելոյ զիմն իւրի իբր գործեօք , կամ իբր միջնորդօք , առնուն զխնդիր գործիական . Կր , * Ը ծակօք իմն կըռեր զիւր և զամենեցուն կենցաղս ॥ . յոյճ . կալ :

- * Աերակրեցին զնսքաղցրութ բանին ճշմարտուէ ॥ . Իգն :
- * Օ ի որով պարծեցեր զհակառակորդսն , նովին զմեզ առքեզ կոչեցեալ փառատրեցեր ॥ . Իմաստ :
- * Օ անազան ծաղիօք զարդարեաց զերկիր ॥ . նանայ :
- * Ը առագայ թիւք իւրովք լուսատրե զամենայն տիեզերս ॥ . եղիշէ :
- * Որ առատապէս սերմանէ , լնա բաղմասպատիկ աճմամբ զգիրկս իւր որայիւքն ॥ . զնորի :
- Ո մանք ըստ յարճարուի առնուն զգործիական . Կր ,
- * Ը ովառ առանին իշխանք նոյ զմարդասիրուի ॥ . եղիշէ :
- * Ս արեաց զաշխարհ սրբութ և արդարութ ॥ . Իմաստ :
- * Օ ըմպելի իմ արտասուօք խառնեցի ॥ . սաղ :
- Ը յլ զխտելի է , զի որովհետև գործողութք հասա

բակօրէն իւրք կատարին, բայք վասն նշանակելոյ ըզ-
գործողութիս՝ գրեթէ առ հասարակ կարեն առնուլ
զինդիր գործիական, մանաւանդ անցողականքն . ու
րոց վասն ոչ է հարկ տալ օրինակս ։

Սանն Է ։

Բայք որք ասին եօլնէրորդ կարգի, այսինքն որք նշա-
նակեն զներգործել իրիք շուրջ զայլով, առնուն ըզ-
խնդիր պարառական . և սորա են սակաւ յոյժ . զի ,
* Որ սիրեն զօրէնս, պարեն զինքեամբք պարիսպ ։ առաջ ։
* Շորջ փակեալ զպարսպաւ զբոլոր քիքն ։ պարմ . աղէ ։
* Օ աչսն իւր յածեալ զբազմականօքն ։ Կոյնն ։
* Օ ի Կանոնացանէս զքե զպարզես արքայութե երկ-
նից ։ սեբէրիանոս ։

Ոմանք մանաւանդ թէ բազումք՝ ըստ յարճարութե
առնուն զխնդիր պարառական . զի , * Օ ամենայն
մնասս զիւր գործոցն զխորհրդակցօքն արկանէր ։ Եղիշէ ։
* Իսկ զգօսացելովքն, որ ՚ի հաւանութի ոչ կամին դալ,
սփռեացէ զանձրե փայլատականցն ՚ի կիզուլ ։ աճաբ ։
* Ոչ սակաւ խուժան աւերանաց զաշխարհաւն զեղոյր ։
յովն . կաթ ։

* Օ զօրս իւր զթիկամբք Խողեալ, և ընտրեալ արս իբ-
րև յ միայն՝ գան հասանեն ՚ի ձորափոր ։ Կոյնն ։

* Օ զլիոյն մօրթն զերեսօքն դարչոացին ։ Տակ ։

Ղիտելի է, զի ոմանք ՚ի ներգործական բայից որք
հային ՚ի ծաղր կամ յարհամարհանս, զպարառական
խնդիրն այնպէս սեպհականեն ինքեանց, մինչև ՚ի տե-
զի խնդրոյ սեռի առնուլ զայն . զի , * Մի որ յանմլ-
տաց ... այպանիցէ զբանիւք մերովք ։ Նորդ ։

* Որ չամակն զընչիւք, անտրտում կայ ։ Կեղոս ։

* Փաղաղէր զպօղոսիւ՝ տալ նմա արծաթ ։ Ճառնար ։

* Որ հաւատայ պատժոց մեղաւորացն, և փառաց
արդարոցն, և զիմաստուին ՚ի գործ ածէ, նշխանէ զմե-
զօք ։ լամբ ։

Ղիտելի է ևս, զի երբեմն ներգործական բայք ինչ՝
(մանաւանդ բայս առնէճ), վասն յարելոյ ՚ի պէսպէս
անուանս՝ իբր յանօրոշ հայցականս, որովք իբր մի բայ

վարին, առնուն զինդիր 'ի պարառական հոլովն. Գր,
 * Մականար արարին զբանիւք հրամանաց իմոց ॥ . յոտիմ :
 * Մի զանց արասցոս զմերով փրկութիս ॥ . սարգ :
 * Աչ երբէք անգոյն արարեալ զբոյսն խրատու, այլ
 ինամ տարեալ հոգացայ ամենայնի ॥ . խոր :

Սանն . Ը :

Բայք՝ որք ասին ունեւորդ կարգի, այսինքն որք ունին
 զնշանակուի առնելոյ կամ ունելոյ ինչ յիմիք 'ի ներքս,
 առնուն զինդիր ներգոյական . Գր, * Ղեկոյս զգանձս
 մեր յերկինս . զի յորժամ երթայցեմք անդ, բացուք,
 և ուրախ լիցուք ॥ . Տճբ :

* Մի պահեսցէս 'ի գանձարանիդ զնիւթեալ իմ պար-
 տուցս անօրէնութի ॥ . նար :

* Ար կամաւ հուրուի յինքն իբէ, ոչ երբէք կարէ նա
 գալ յառողջութի ॥ . յովհ . կաթ :

* Օ սէրն ւնջ ոչ ոսնիս յանձինս ॥ . յովհ :

* Օ կոյրն թէպէտև յոսկի համակիցես՝ ոչ ինչ զգայ, և
 նորօք ոչ ամբարտաւանէ ॥ . սարգ :

* Օ հողին կենդանի 'ի նմա փոխառէ ॥ . լամբ :

Ոմանք ըստ յարմարուէ առնուն զներգոյական . Գր,

* Օ այնչափ չարչարանս բերէր 'ի մարմնի ॥ . Գով . լուս :

* Մի հրահանգս կրթուէ վարժեցին զնոսա ॥ . եղիշէ :

* Որարեցոս զանձինս մեր 'ի զանազան խորտիկս ॥ .
 նոյն :

Սանն . Լ :

Բայք՝ որք ասին ինեւորդ կարգի, այսինքն որք նշա-
 նակեն զներգործել ինչ ընդ պարագայիւք իւրիք, առ-
 նուն զինդիր 'ի ձեռն նախադրութե . զոր օրինակ,
 * Մի ընդ ստուերի այսր մթութե զանձառելիդ ըսս
 փոխանայէր ॥ . նարեկացի :

* Տուն լն տուն իցեմք . և ազարակ ընդ ազարակ խառ-
 նեմք ॥ . Վեցօր :

* Օ իւր կամսն ոչ Բաբանեաց ընդ կամացն ւնջ ॥ . սարգ :

* Մի թէ ցանկալի է քեզ ընդ նոսա (ցի լն սթս) լուսել
 զանձն քոյ, սրբեմ զնա լն պարգևացն քոյ ॥ . «եբեր :

* Օ հոգս կենցաղոյս կոտորէ՛ր 'ի վերայ անձանց ॥ . լամբ :

* Արձաբեր զատամուկնսն 'ի վերայ թագաւորին զագ-
կայ ॥ . յովհ . կաթ :

Բազում բայք ևս ըստ յարմարութեան առնուեն զխնդիր
'ի ձեռն նախադրուէ. քր, * 'ի վերայ աւագոյ շինուածս
յիմարուածէ կառուցի ॥ . նար :

* Եւ զգուռն յգեաց (զովտ) զնի իւր ॥ . ծննորոյ :

* Իսկ կէսքն ... զմահ քան զկեանս ընարեին ॥ . եշեշէ :

Եւ զգիտելի է, զի գրեթէ ամ բայք կարեն առ-
նուլ զխնդիր 'ի ձեռն նախադրուէ պէսպէս օրինակաւ :

Սանն . Ժ :

Անցողական բայք հասարակօրէն զայնպիսի խնդիր
բնութեան առնուեն, զորպիսի պահանջեն բայքն յորոց
բղխեն . քր, * Յեղոսացո՛ւք զգրգուեալ եկեղեցի մեր 'ի
գաւազանն երկաթի ॥ . լամբ :

* Շանապարհի նմանեցոյց զարդարութիւն ॥ . խորով :

* Խոնարհութիւն զամբ 'ի մարդիկ խոնարհեցոյց, և զմար-
դիկ 'ի խոնարհուէ յերկինս Բարձրացոյց ॥ . սարգ :

* Անհնար է զրկողին ողորմութիւն գտանել յայ՛ եթէ
զզրկանսն 'ի զրկեալն ոչ դարձուցանէ ॥ . նոյնն :

* Արպէս անոյց ընդ ընկերսն իւր՝ նոյն անցք անցա-
նեն ընդ նա ॥ . ճծբ :

* Ար ախտիցն՝ յօժարուք տուեալ տեղի ... (և) խնա-
մով Լաբոսացանէ յինքեան զխմորն չարուէ . . . ոչ է, և
ոչ ասի նա ախտիսին ॥ . շնորհ :

Սանն . Ժա :

Բայք բարդք և բաղադրեալք, թէ ներգործա-
կանք, և թէ չեզոքականք, որոց նշանակութիւն չիցէ
ըստ ամի փոփոխեալ, իբր 'ի բազումս զայնպիսի խն-
դիր բնութեան առնուեն՝ զորպիսի պահանջեն 'ի պարզ
գուն իւրեանց . զոր օրինակ, * Օ ամ բարեաց ըզ-
տիպան և զօրինակսն փութաթիք յանձինս ձեր նկա-
րագրել ॥ . շնորհ :

* Ա իրաւիցեաց յորդէրուի զաիեղերս ॥ . զարար . կաթ :

* Չհնազանդեալ անձական հրամանին՝ հրաքերէր 'ի չարիս . և անտի լինէր սկիզբն չարեաց ॥ . Եղեմէ :

* Ասանմա զպատիւ արդարոցն ... զի առ յոյս քաղցրագունից՝ 'ի բարիսն յեռնարէսցէ ॥ . սարգ :

Իսկ որք զայլ խնդիր առնուն՝ վերաբերին 'ի նշանակուիս այնց բայից , զորս եղաք՝ և դնելոց եմք յայլ կանոնս :

Այլ վասն բայից՝ որք բարդին 'ի բառիցս Բանեմ և Խօսեմ, գիտելի է . զի սոքա առհասարակ երբեմն իբր ներգործական վարին , և երբեմն իբր չեզոքական : Յորժամ իբր ներգործական վարին , հասարակօրէն առնուն զխնդիր բնութե 'ի հօլովն տրական . զի , * Օ մարմնոյն յատկուին ոչ խորշի պօղոս քորաբանել մեզ ॥ . Գր . Կալ :

* Յանլուր ականջս ոչ է օգուտ ինչ (զյորդորանս) երկայնաբանել . այլ՝ զուր աշխատանք ॥ . Խորոզ :

Իսկ յորժամ իբր չեզոքական վարին , ըստ ինքեանս պահանջեն զխնդիր 'ի հօլովն պատմական . զի , * Պատկառեալ դիմօք համայնից ունօղս՝ զքնաւից աղերսաբանեմ զմեռելոցն՝ քեզ կենդանեաց ॥ . Կարէ :

* Որ չարախօսեացէ զհօրէ կամ զմօրէ՝ մահու վախճանեսցի ॥ . Կարէ :

Ասան . ԺԸ :

Երգործական բայքս՝ Չափեմ, առնեմ. շինեմ. ևն , յորժամ յարին յայնպիսի անուանս , որք ունին զնշանակութի չափմանց . որպէս լայնութե , երկայնութե , կանգնոյ , կշռոյ , ևն , առնուն զնոսա իբր երկրորդական խնդիր 'ի պեսպէս հօլովս :

Երբեմն մանաւանդ թէ բազում անգամ յուղղականս . զի , * Առ չափեաց զերկայնութի նորա ի կանգուն , և զլայնութին ի կանգուն ॥ . Եղեմ :

* Արար բարձրուի պարսպին հ կանգուն ॥ . յարի :

* Առ շինեաց ի կանգուն ... զմի կողմանոցն ॥ . Բազ :

* Առ քեզ ... Տիրիկ՝ Տինգ հարիւր սիկզ ॥ . Ելից :

Երբեմն 'ի բայառականս . զի , * Առ չափեաց զորմ

տաճարին 'ի վեց կանգնոյ, և զլայնուի կողման տանն 'ի չորից կանգնոց || . Եղեի :

* 'Ի տանն կանգնոյ զերկայնու թի միոյ սիւնակին առ Կիցես, և 'ի միոջէ կանգնոյ և 'ի կիսոյ զթանճրուի և զլայնու թի միոյ սիւնակին || . Ելեի :

* 'Եւ նեցուկք 'ի ներքոյ նր՝ շուրջանակի պարէին զնա 'ի տանն կանգնոյ || . Գ. Բափ :

Երբեմն 'ի գործիականն . Գր, * 'Եւ չափեաց Տաղար չափոյն զուղիսն || . Եղեի :

* 'Եւ ... իւզ ճիթենեաց Տիմենեաւ միով || . Ելեի :

* 'Եւ գողեալք երեսուն և երեք կանգնովք պարէին զնա շուրջանակի || . Թ. Բափ :

Երբեմն յուղղականն և 'ի նախդրիւ տրականն միանգամայն . Գր, * 'Եւ չափեաց զտրահն յերկայնուի ճ կանգուն, և 'ի լայնուի ճ կանգուն || . Եղեի :

* 'Եւ զկամար սեանցն արար յիսուն կանգուն յերկայնու թի, և երեսուն 'ի լայնու թի || . Գ. Բափ :

* 'Եւ Կիցեսայ խրճիթ 'ի լայնուի ոտնաչափս չորս, և յերկայնու թի ոտնաչափս ութ || . Վարք հարց :

Երբեմն 'ի գործիականն և 'ի նախդրիւ տրականն միանգամայն . Գր, * 'Եւ արայէն զնա կանգնաւ յերկայնու թի, և կանգնաւ 'ի լայնու թի || . Ելեի :

* 'Եւ արայէն զնա չորեքանկիւնի՝ թզաւ յերկայնու թի, և թզաւ 'ի լայնու թի || . Կոյն :

* 'Չորեքիւսի և կրկին գործեաց զտախտակն՝ թզաւ յերկայնու թի, և թզաւ 'ի լայնու թի || . Կոյն :

Սանն . ԹԳ :

'Երգործական բայքս՝ Ս աճառեմ, գնեմ . Վարչեմ . 'ի Վարչոս րամ . սակ արիանեմ . lix . և որք յարին յանուանս գնոց, առնուն զխնդիր 'ի սեռական հոլովն՝ իբր զերկրորդական . Գր, * Ս աճառեցին զյովսէփ իսմայելացւոցն քսան դահեկանի || . Ծնն :

* Ղանեաց զնա իննսուն դահեկանի || . Վարք հարց :

* Օ որ Վարչեաց հարծաթոյ || . Եփրեմ :

* Ս զահեկանի միոջ սակ արիէր ընդ իս || . Տար :

* Ս արայաւ զլիճակ անդին ... ճ ոչխարի || . Ծնն :

* Բայց թէ կամիս՝ փողոյ փողոյ առնուածքս ॥ Վարք հարց ։
 Բայսպիսի բայք երբեմն փոխանակ սեռականի առ-
 նուն զայլ հոլովս . կամ նախադրուքս ընդ . զոր օրի-
 նակ , * Օ եղբայր իւրեանց Վաճառեցին՝ ընդ Շղատե-
 կանին ॥ . յո՞րդի :

* Եւ Վարջեցաւ նոքօք (յի Կ արծաթովք) արկմելէք
 արս սրիկայս և զարհուրեցուցիւս ॥ . դարս :

* Բարէ վարձս մշակացն առուրն դահեկան ॥ . Տարս :

* Տափանեաց զիս հարիւր լիտը ոսկոյ ॥ . ոսկեք :

* Սոսոցայ ես զնոսա՛րի գնոց արծաթոյ ॥ . յովհ . կալ :

Իսկ բայքս՝ հարկանել , և զարկանել կամ զարկոցանել՝
 իբր ՚ի բազումն առնուն զնախդրիւ սեռական իբրև
 զխնդիր յարմարական . դր , * Օ մանկունս ծնեալ մեզ

ի քաղզէացուց սերմանէն՝ զվիժի հարցոսք ॥ . լաճք :

* Յետս յետս տարեալ՝ զարկոց զգեանի ॥ . իտարով :

Գ Լ Ո Ւ Խ Ի

Յաղագս ինորոյ կրաւորական Բայից ։

Կրաւորական բայք առնուն զխնդիր սեռի ՚ի հո-
 լովն բացառական . դր , * Յաղբեցաւ ողորմութիւն յար-
 դարութիւն ॥ . լաճք . սարէն : Ուր կրաւորական բայս յաղ-
 բեցաւ՝ առեալ է խնդիր սեռի զբացառական հոլովք
 յարդարուի . իսկ ողորմութիւն է անուն բայիս յաղբեցաւ ։

Բստ այսմ և հասարակ բայք՝ յորժամ կրաւորա-
 կանաբար վարին , առնուն զխնդիր սեռի ՚ի բացա-
 ռական հոլովն . դր , * Պետրոս՝ վէմ դաւանեցաւ յիսձե-
 ղէն բերանոյն ॥ . Տաճքիւ վերծանող . ճառ փալստեան ։

Բայց զիտելի է , զի բազում անգամ կրաւորական
 բայք , ևս և հասարակք , զօրուք ունին զխնդիր սե-
 ռին . զոր օրինակ , * Հանապազ Յաղիմ , և ոչ երբեք
 իրարիմ ॥ . նարեի :

Երբեմն ևս կրաւորական բայք իբր չեղորական
 վարելով՝ ոչ պահանջեն զխնդիր սեռի . դր , * Հաւա .
 սով հասարակ սէրն ճշմարիտ ॥ . Տճք :

Գիտելի է դարձեալ , զի կրաւորական բայք եր-
 բեմն փոխանակ բացառականի զայնպիսի խնդիր առ-

նուն , որ ըստ խմբէ համարի նոցա այն իբր խնդիր սե-
ռի և այս յաւէտ 'ի գործիական հօլովս . ԳՐ , * Չարն
բարեաւն յողմի , և ոչ չարեաւն ॥ . փոխանակ ասելոյ ,
'ի բարւոյն' և ոչ 'ի չարէն ॥ . լամբ :

* Աշաւակեցաւ անմեղութն քնի պարտականն մեղաց
աշխարհի ॥ . փխիկ ասելոյ , յանմեղութէն քնի . լամբ :

* 'Ի խէթ խղճիս խոցոփիմ , և բոցով շնչոյս ճէնճէրիմ ॥ .
փոխանակ ասելոյ , 'ի խթմանէ խղճիս , ևն . Կար :

Իսկ թէ զորպիսի խնդիր բնութեմ առնուն կրաւ
րական բայք , ոչ է հարկ գրելին . զի զայնպիսի առ-
նուն' զորպիսի պահանջն ներգործականք իւրեանց .
և այն 'ի վարիլ իւրեանց իբր չեզոքական . ԳՐ , * Ըստ
ոչ քնի 'ի խաւար , այլ զխաւարն լուսաւորէ ॥ . յաճախ :

* Առաջաստին թռչարան յանկարկատելի ծուէնս պա-
րտեցաւ ॥ . Կարէի :

* Ես ծանոցեալ եմ ինձ , և ոչ անծանօթ յինէն ॥ . Խորհ :

Գ Լ Ո Ի Խ Ի Ա :

Յաղագս Խնորոյ Չեղորական Բայից :

Չեզոքական բայք՝ թէ ներգործակերպք և թէ
կրաւորակերպք՝ ոչ առնուն զխնդիր սեռի . զի 'ի սե-
ռէ իւրեանց ոչ նշանակեն զներգործել գործողին յեն-
թակայն՝ այլ զենթակայիւ . վասն որոյ միայն լն նշա-
նակելոյ բնուէ իւրեանց առնուն զխնդիր 'ի պէսպէս
հօլովս : Եւ որպէս ասացաք զներգործականաց , սոյն
պէս և սոքա չորեքիին առնուն զայսպիսի խնդիր :

'Եւս' ըստ Խնդան , որ և ասի՝ Բռան Խնդիր . այսինքն
այնպիսի՝ զոր բնութի բային 'ի նշանակութի իւրմէ
նախ պահանջէ . որպէս բայս Գաճ՝ 'ի նշանակուէ իւր-
մէ նախ պահանջէ զնախգրիւ տրական . զոր օրինակ ,
* Որ առնէ զճշմարտուի՝ Գայ առ լոյսն ॥ . յովն :

Երկրորդ՝ յարմարական . այսինքն զայնպիսի՝ որ զնի
'ի տեղի բուն խնդրոյ՝ յայլ հօլով՝ քան զոր բնութի
բային լն ինքեան պահանջէ . ոնկ է թէ Գաճ բայն փո-
խանակ առնելոյ զնախգրիւ տրական՝ առնուցու զպա-
րաւական , զոր օրինակ , * Սիշտ զերկրաւ Գաճ ॥ . Խոր :

Կամ հանդերձ նախադրու թիւ . զոր օրինակ , * Յանկարծակի Գայէ 'ի վերայ նորա մահս ॥ . յաճախ :

Երրորդ՝ երկրորդական . այսինքն զայնպիսի՝ զոր երկրորդաբար պահանջէ բնուի բային . որպէս բայս Գամ՝ երկրորդաբար կարէ առնուլ զբացառական . զոր օրինակ , * Ղապին առ նա յամ կողմանց ॥ . ճարէ :

Չորրորդ՝ պարահական . այսինքն զայնպիսի՝ որ ըստ ինքեան ոչ պատշաճի բնութե բային , այլ՝ ըստ պատահման միայն , և կամ ըստ հեռաւոր ինչ պատշաճողուէ . որպէս եթէ Գամ բայն ըստ պատահման առնուցու զինդիր 'ի հոլովն գործիական կամ նախադրուի . Գր , * Ղամ անուամբ ան զօրուէց ॥ . Թ . Լափ : * Բազում հիւանդուիք վա՛մեղաց Գան ॥ . Գեորգ :

Իսկ առ 'ի որոշել՝ թէ չեղորական բայք յոր հոլովս առնուն զինդիր բնութե ըստ ինքեան՝ դիցուք զմե տասան կանոնս հանդերձ օրինակօք ինչ . յորս յաբեցուք և զօրինակս ինդրոց յարմարականաց :

Կանոն . Թ :

Չեղորական բայք ոչ առնուն զինդիր բնութե ըստ ինքեան յուղղական հոլովն . այլ՝ երկրորդաբար միայն , կամ ըստ պատահման , և կի՛մ ըստ յարմարուէ . զոր օրինակ , * () րէնք անձային հայցեն Լափաւոր 'ի վերայ անի ॥ . Եղիէ :

* Բնդէր (ուլարծաթասէր) հասարակչա և ափահ , հասանցեն 'ի գերեզմանն ॥ . սարգ :

* Ղա զի կեղծաւորուի է , ոնի 'ի տեսարանսն ռամիկ գոլով (ոք) Լափաւոր էրդարանի ॥ . նոյն :

* Ստուի է , և ճշմարտութի ձեանայ ॥ . նոյն :

* Սարդին դարձաւ , և զմարմնոց իրս սիրեցաք , և զկնի մարմնական իրաց ընթացաք ॥ . Խոսրով :

* Լխտացեալք ըստ մարմնոյ՝ Գրաք զնշաւորս ॥ . Լամբ :

Կանոն . Բ :

Չեղորական բայք՝ որք ունին զնշանակուի հետևողական կամ հաղորդական , առնուն զվերջահոլով տրական . Գր , * Օ տերունի պատուէրն լքեալ՝ թելադրուէ օձին հէրեմիմ ॥ . նարէէ :

- * Նառապետացի անմիտն իմաստնոյն ॥ . առաջ :
- * Տառասարեացի մահս մեր մահուն արդարոցն ॥ . եղեղէ :
- * Լսյ ամենայն չարիք յաջողեցան նմա ॥ . եղեղէ :
- * Արարի՛մ գերեզմանի, և ոչ հասանեմ ॥ . յոք :
- * Բերան անխրատից փռեղեկանայ չարեաց ॥ . առաջ :
- Ոմանք ըստ յարձարութե՛ն առնուն զվերջահոլով տրական . զոր օրինակ, * Շրթունք քահանային զգոռապետն զիտուէ ॥ . ճաղաք :
- * Նանրացի գործ մարդկանն, և այնմ հոգացելն . և մի հոգացելն 'ի բանս տարապարտս ॥ . ելեց :
- * Այցաք Գնացաք իրաւանց, և ոչ էր ॥ . եսայ :

Ամեն . 7 :

Չեզոքական բայք՝ որք ունին զնշանակուի առ այլ (այսինքն որք ցուցանեն իբր զբերումն առ իմն), առնուն զնախդրիւ տրական . զոր օրինակ, * Վնայ մարդ 'ի տուն իւր յաւիտենից ॥ . ծողով :

- * Որ յոսայ 'ի մեծութի, կործանեսցի ॥ . առաջ :
- * Յանձն չար արուեստ իմաստուէ ոչ ճոյղէ ॥ . իմաստ :
- * Արդ հայե յերեսս, և անձ հայե 'ի սիրտս ॥ . Թ. Թագ :
- * Այլ նախանձիցիս չէ ճանապարհս անօրինաց ॥ . առաջ :
- * Ոչ այնքան ուրախանան՝ յառեալ մեծութիս՝ որքան որդին 'ի պակասեալն ॥ . սարգ :

Ոմանք չը յարձարութե՛ն առնուն զնախդրիւ տրական . զոր, * 'ի պատուիրանս քո հոգացայ ॥ . սաղմոս :

- * Այլ փարիբ 'ի գիրկս, որ ոչ քո իցեն ॥ . առաջ :
- * Արչափ դեփերիմս առ քեզ, ախորժես ॥ . խոսրով :

Ամեն . 8 :

Չեզոքական բայք՝ որք ունին զնշանակութի յայլմէ, առնուն զխնդիր բացառական . զոր, * Աշուր մեղաց 'ի կողէն աղամայ՝ հրդեհել զամ՝ մարդկային բնուիս . եւ ջուր 'ի կողէն յսի՝ շիջուցանել զամ՝ հրդեհն անօրէնութե՛ն ॥ . սարգիս :

- * Ամբարհաւաճեալ ... Վրիպեցաւ 'ի փառացն ॥ . յաճախ :
- * Օրծաք 'ի մախանացն գերուէ . սպրեցաք 'ի ծառայեցուցինն ռխակալուութի ॥ . լամբ :

- * Լնմիտքն ոչ 'ի յանդիմանու թէն , այլ 'ի տանջանացն երկնիկն ॥ . Գեորգ Վարդ :
- * Պատրանօք նախաստեղծին մերէացաք 'ի լուսոյն ॥ . շար :
- * Սբաթեացոս 'ի խելադարու թենէ ॥ . սարգ :
- Սմանք ըստ յարմարութե առնուն զբացուական . Կր ,
- * Տաւատացեալքն ոչինչ երկմտուիք եւրահասարկին յառաջին խրատուէք վարդապետացն իւրեանց ॥ . եղիշէ :
- * 'ի բարեաց գործոց և 'ի հաւատոց հեղեցացան ॥ . լամբ :
- * 'ի բազում փայտից զուարթանայ հուր ॥ . առաջ :

Սանն . Է :

Ղեզոքական բայք՝ որք ունին զնշանակուի գոհանալոյ , կամ տրտնջելոյ , առնուն զխնդիր պատմական . և սօքա են սակաւ յոյժ . Է որս կարէ դասիլ և բայս հոգամ . զոր օրինակ , * Վահագնոս միշտ զառատ ողորմու թէ նորա ॥ . Խոս :

* Սք բրբնջեն զայ ... թոյլ տայ կրել չարչարանս ॥ . շարգ . Եղի :

* Վրննջեն զբէն առ պարսպօքն ॥ . Եղի :

* Օ այտտիկ գրելով՝ զանձնէս դաբախաղեմ ॥ . սարգ :

* 'ի թէ որքան քօփոն լինի զնոցանէ անծ ॥ . լամբ :

* Օ փառաց ինչ ոչ հոգային (սքք) ॥ . սարգ :

Սմանք ըստ յարմարութե առնուն զպատմական . Կր ,

* Օ կատարածէ աշխարհիս ահնարէ ॥ . Գեորգ :

* Յորդեր առաւել բանն զնմանէ ॥ . զուս :

* Ղու և ժողովուրդքս փոճարեալ էք զայ ॥ . Եղու :

* Լեւն զանծիտուէն՝ անհնարին կորուստ ॥ . աբանաս :

Սանն . Ը :

Ղեզոքական բայք՝ որք նշանակեն զգործողութիւն իւր լինելի , առնուն զխնդիր գործիական . զոր օրինակ , * Վոյովքդ վաստակօք պճնեցայց ... աւազանին զգետտիւ պերճացայց ॥ . նար :

* Պարարացան դաշտք արդարութիւն , և Գեղեցեացան աւսպատք մաքուր կուսութիւն ॥ . շար :

* Լու սակայն ակն նորա ոչ յափի մեծութիւն ॥ . Ժողով :

* () Ը օրէ աւուրք կենացս նուագին . զի բուսանիմք
'ի պատանեկուէ . ծաղկիմք երիտասարդուի . Լաբշամիմք
ծերուծի . շորանամք մահուամք ॥ . լամք :

* Ճ առագայ թիւք աղօթից նորա պայծառանայ ॥ . երչն :

* Յ աւօք վարանէալ էմ ॥ . յոք :

Ո մանք ըստ յարձարութե առնուն զգործիական . զր ,

* Լ թէ որդւովք պարծիս դու , գերի վարին նորա 'ի
քէն ॥ . ճծք :

* Մ եք զամ հաւաստի ուսաք , և տակաւին ևս կորըս-
տեան ճանապարհաւ փնամք ॥ . ի փնար :

* Ե սկ որք ատեանն զյանդիմանուծի , վախճանեացին
անարգանօք ॥ . առախ :

Ը յ գիտելի է , զի որպէս ասացաք զներգործական
բայից , նոյնպէս և չեզոքական բայք՝ գրեթէ աւհա-
սարակ կարեն առնուլ զինդիր գործիական :

Ամեն . Է :

Չեզոքական բայք՝ որք ունին զնշանակուծի շուրջ
զայլով , առնուն զինդիր պարառական . և սորա են
սակաւ յոյժ . զր , * Ը նկեալ 'ի վերայ , փարէին զպարա-
նոցաւ նորա ॥ . վարք հարց :

* Ո ւ պարեցին զինև մառախսուղք 'ի ձօնելն զքեզ ॥ .
նարեի :

* Ը ք անմտի զվայրօք յածին ॥ . առախ :

* Ե սկ այս պատիւ , որ սորայս է , փերալանցեաց զամե-
ներումք ॥ . սարգ :

Ո մանք ը յարձարութե առնուն զպարառական . զոր
օրինակ , * Օ ի ծաղիկն զինև յետինք ॥ . յոք :

* Լ սորհուրդք բարեաց զփոշապին զքև ॥ . առախ :

* Ս պառնալիք մահուան անցին զնորօք ॥ . եղիլէ :

* Ե ակ զամօթ արհամարհէր , և զերկիւղիւն 'ի վեր
ելաներ ॥ . փրիփոր էալ :

Ամեն . Ը :

Չեզոքական բայք՝ որք նշանակեն զգործողուի յի-
մք կամ ուրեք լինելի , առնուն զինդիր ներգոյա-

- կան դր , * Այ ճառի 'ի սահմանեալ ուխտին՝ որ 'ի մէջ նոցա ॥ . յո՛ւ . Էջն :
- * 'Ի յոտս հասարակի՛մ , և 'ի միտս ասարանի՛մ ॥ . նար :
- * Եւթէ յիս Բնակէ , կենդանի եմ ես ॥ . ոսկ :
- * 'Ի սիրտ առատ հանգիլի իմաստութի ॥ . առակ :
- * Արք 'ի մարդս և յաղբերակունս և 'ի սք օդս զբօս- նուցուն , սրատեսք և քաջահայեացք լինին ॥ . խոսրով :
- * 'Ի մշտնջենամուռնչ սաղճոսս համակեր ॥ . յո՛ւ . Էջն :
- Ոմանք ըստ յարճարութե՛ն առնուն զներգոյական . դր ,
- * Աւրեմն արդարանայ 'ի բանս իւր առաքեալ ॥ . լաճ :
- * Յանձանձրոյթ աղօթօ նահարակեր ॥ . յո՛ւ . Էջն :
- * Ար Բարձրացար 'ի խաչին վ՛ն ազգի մարդկան ॥ . շար :

Սանն . Ը :

Ղեզոքական բայք՝ որոց նշանակուին նկատի 'ի պա-
րագայս իրիք , առնուն զինդիր 'ի ձեռն նախադրու-
թեց . դր , * Յորժամ բռնութիւն հոռուսցոսք ընդ աշ-
խարհիս , աշխարհս 'ի բաց քանդի . և մեք 'ի պատու-
հասէ չապրիմք ॥ . եղիշ :

- * Խաղայր լէ իսահակայ որդւոյ իւրում ॥ . ծնն :
- * Եւրթ նախ հաղբեաց լէ եղբօր քում . և ապա եկեալ
մատուցիւր զպատարազն քո ॥ . ճար :
- * Հեծեծեացոսք 'ի վերայ վիրալից հոգւոց ॥ . սարգ :
- * Թափասորէ 'ի վերայ պարթևաց արշակ քաջ ॥ . խոր :
- * Հովանասցի աջ քո ձոր 'ի վր ստեղծուածոց քոց ॥ . շար :
- Բազումք ևս լը յարճարութե՛ն առնուն զինդիր նախա-
դրութիւն . դր , * Յաւէտ Բերճեցաս 'ի վերայ իմ արքայ-
ութիւնն այ ॥ . նար :
- * Օ Էջանէի ես զկնի տկարութե՛ն նորա ॥ . շար հարց :
- * Յենկացան զհետ երանաւէտ ձայնին ॥ . շար :

Սանն . 9 :

Բայք Ղեզոքականք , կամ որք իբր Ղեզոքական վա-
րին , յորժամ յարին յանուանս աւուրց և ժամանա-
կաց , առնուն զնոսին ինդիր փոխանակ ներգոյակա-
նի 'ի հայցական հօլովն՝ իբր զինդիր պատահական ,

կամ երկրորդական . փր , * ' Վ հաղորդութիւն զամ մի
ողջոյն , և զևս բազումսն հրաժարեն ॥ . լաճ : Ուր հայ-
ցական հոլովքս՝ զամ մի ողջոյն , և զևս բազումս՝ են պա-
տահական խնդիր չեզոքական բայիս հրաժարեն : Ուստ
այսմ է տեսանել և 'ի յաջորդ օրինակսդ :

* Սասիանայր գործ պատերազմին դառնութե զեր-
կուս ամս ॥ . եղիշէ :

* Շրջեցաւ յաշխարհի կատարինն ամի զամս շ ॥ . շնորհ :

* Սառեցան կալեցան զգիշերն ամենայն ॥ . եղիշէ :

* ' Վու ես՝ որ բաւես ընձեռել սիրտ այլ , և ճանապարհ
մի՝ երկնէլ 'ի քէն զբովանդակ կենացն սահման ॥ . նար :

Որպէս զչեզոքականաց ասացաք , սոյնպէս իմմ և
զներգործականաց և զկրաւորականաց , ևս և զէա-
կանաց . զի սոքա ևս 'ի յարինն յայսպիսի անուանս՝
առնուն զնոսին 'ի հայցական հոլովն . փր , * Սեցցէ անձն
իմ , օրհնեսցէ զքեզ զամ աւուրս կենաց իմոց ॥ . շար :

* Պատուէր հրամանի տուեալ աշխարհին՝ զողջոյն ա-
միսն քաղոց պահօք և աղօթիւք առնել խնդրուած առ-
ւած ॥ . եղիշէ :

* Նաւ ար ար Բերժեայ զքուն յարքայէ զգիշերն զայն ॥ .
Եսեբր :

Փախեցան երկիրք զերիս ամս և զվեց ամիս ॥ . զուի :

* Վետնախշտիք լինէին զինն ամ և զվեց ամիս ॥ . եղիշ :

Նայսպիսի խնդիրք բազում անգամ առանց զայի
դնին . փր , * Նկաց (յուսիկ) 'ի հայրապետութեան
ամս ք ॥ . յովն . կալի :

* Սուրբեցան արտի մի ը աղուանից արքային ॥ . եղիշ :

* Տիտոս ինն արտ պաշարեաց զէէմ ॥ . զարար . կալի :

* Նաւ եղեն 'ի տապանին ծէ արտ և ծ օր ॥ . ճճէ :

Նայլ քանզի այսպիսի խնդիրք ունին զզօրուի ներ-
գոյականի , բազում անգամ 'ի ներգոյական հոլովն
դնին . փր , * Յառարս շառառան երևելնոցա ॥ . գործ :

* Յայսմ գիշերի զողիդ 'ի քէն 'ի բաց պահանջիցեն ॥ . զուի :

* Յիննեբորդ ծաման ետ զհոգի իւր 'ի ձեռս հօր ॥ . ճճէ :

* Յամսեանն շրթորթի եկին հասին յաշխարհն հայոց ॥ .
եղիշէ :

Վիտելի է ևս , զի այսպիսի խնդիրք երբեմն դնին
նաւ յայլ հոլովս մանաւանդ 'ի պարառականն . փր ,

- * Որ անճաշակ լինելով զԲաղճաժամանակէսոյ առարբէ՛ր՝ յօժարու թի՛ւ բարձեր զկարիս մարմնոյ ॥ . շար :
- * Օ ինն ժաման գոչեաց յա՛ ՚ի ձայն մեծ ॥ . Տար :
- * Օ հասարակ Գիշերաւ ես մտից ՚ի մէջ եղիպտոսի ॥ . Ել :
- * Եւ այնպէ՛ կայր Ռեծ ժամս յանհնարին պրկոցոսն ॥ . Եղիլ :

Կանոն . Ժն :

Բայք չեզոքականք՝ ևս և կրաւորականք յորժամ յարին յայնպիսի անուանս՝ որք են արմատք նոյ կամ ածանցեալք յարմատոյ նոցին , իբր ՚ի բազումն առնուն զնոսին ՚ի հայցական հօլովն փոխանակ գործիականի . Գր , * Եթէ կամիս ո՛վ մարդ Ռեծանալ զանկշուելի մեծու թին , ես ցուցանեմ զօրինակն ॥ . սարգ :

* Օ նոյն նահատակութիւն նահապահէցաւ և աշխարհս հայոց ॥ . Եղիլ :

Բստ այսմ լինի և ՚ի յարաբերականս արմատոյ բայից . Գր , * Բնկալցին զանարգանս իւրեանց մալուութիւն՝ զոր մալորեցան ॥ . Եղիլ :

* Բնեայն անիրաւուիք նորա , զոր անիրաւեալ իցէ , մի յիշեսցին ॥ . Եղիլ :

Բայնպիսի հայցական հօլովք արմատոյ բայից՝ դնին երբեմն առանց պի իբր անորոշ հայցական , կամ իբր ուղղական . Գր , * Տրտմեցաւ յովնան տրտմուի մեծ ॥ . այսինքն տրտմութիւն մեծաւ . յովնան :

* Խնդացին յոյժ ուրախութի մեծ ॥ . Տար :

Երբեմն ևս բայք ինչ վասն վայելու թիւ և եթ յարեալ յայլ անուանս՝ առնուն զնոսին ինդիր բնութիւն ՚ի հայցական հօլովն , վասն ունեւոյ զմերձաւորութի ինչ , կամ զվերաբերութի առ նշանակութի արմատոյ այնր բային՝ որոյ լեալ է ինդիր . Գր , * Յազապս որոյ պէտք են , զի և զճրագունս գիտութի պայծառ ունիցին , զի մի խաւարեալք տգիտութի Բմբեսցին զմեղայն քուն ॥ . Իգնար . փոխանակ ասելոյ՝ Թմբեսցին քնով մեղաց :

* Երբա զծաղրալից երկիւղն ախարանային ॥ . Իմաստ :

* Եթե իբր մեր առողջացան զանախտաւորութի երկնաւոր ॥ . Եղիլ :

* Այս զնոյնս պարտ էր շարչարել քօի ॥ . այսինքն այնու
քիւք շարչարանօք շարչարել . զոհ :

* Ա , որ այսմ ցանկայ , յորժամ 'ի ծայրս ամ մե-
ծութե հասանէ՝ զտիրապէսն զոտարձանայ ॥ . այսինքն
տիրապէս զուարճութի զուարճանայ . լամբ :

Ղիտելի է ևս , զի բայքս՝ Ղնամ , երևամ , ընթանամ և
ոտարճիմ , 'ի յարիւն 'ի բառսդ՝ ճանտարհ , ոտի , պող-
ոտայ , լեւ , թէպէտև պահանջեն առնուլ զնոսա 'ի նախ-
դրիւ տրականն , բայց բազում անգամ ևս առնուն 'ի
հայցականն . զք , * Այր անօրէն և անզգամ փնայ ըզ-
ձանապարհս թիւրս ॥ . փոխանակ ասելոյ , 'ի ձանա-
պարհս . առաջ :

* Սգով և տրամու թիւ երևային զերկայնութի ձանա-
պարհին ॥ . փոխանակ ասելոյ , յերկայնութի ձանա-
պարհին . եղիլ :

Գ Լ Ո Ի Խ Ի Կ :

Հաղագս Խնդրառուին Գ խնայորէ Բայից :

Ասն խնդրառուէ սոցա պարտ է զիտել , զի այն
բայք՝ որք ասին ըստ պատահման զիմազուրկ . որնոս՝
լուսանայ , մեանայ , յաճախէ , հասանէ , պարաշէ , ինանէ . լեւ :
ևս և այն բայք՝ որք ասին ըստ պատշաճի զիմազուրկ .
որպէս՝ մարմնի , խոտի , հարծի , յառի . լեւ , առնուն զխըն-
դիր 'ի վերջահօլով տրականն , ը նմին երբեմն և զսյլ
խնդիր . զք , * Այլ լուսադաս նոցա 'ի քերքոն ॥ . Բ . լապ :

* Հասանէ քեզ դարձեալ մարդարեանալ ॥ . յայտ :
* Այ որ արկանէ ձեռն զմաճով , և հայիցի յետս՝ ե-
թէ յաջողեալ էցէ արքայութե ան ան ॥ . զոհ :

* Խաւարելոցն մտօք և զրկելոցն 'ի ճշմարտութենէ
դառն խոտի անձային օրինադրութի ॥ . խոսքով :

* Սարչարի , և անչարչարելի հարծի ինքեան ॥ . շնորհ .
Լուր :

Սոյնպէս և այն բայք , որք ասին բացարձակ կամ
ըստ ինքեան զիմազուրկ . որպէս՝ վայել է . պարտ է . լեւ ,
առնուն զվերջահօլով տրական . զք , * Այն է ծա-
ռայիցն ան միշտ օրհնել զնա ॥ . խոսքով : Այլ ծառայիցն

այ՛ է տրական խնդիր բայիս Վայել է . իսկ աներևոյթ բայս Դրո օրհնել է անուն բայի : Ստ այսմ է և ՚ի սոսին :

* Սորէպ է եպիսկոպոսին հայարաու թք և գոռոզու թք լինել առ հնազանդեալ ժողովուրդսն ॥ . Հորհ . Ե :

* Սմաստասիրին պարո և արժան է ազատամիտ լինել ՚ի նախանձուէ ॥ . սարգ :

Սյսպիսի բայք երբեմն առանց խնդրոյ դնին . Գր ,

* Սլ զինչ արդեօք պարո է յառակէս ուսանել ॥ . Իգն :

* Սարի է ուսուցանել . . . յորժամ նախ ինքն առնիցէ՛ զոր ինչ այլոց ուսուցանէ ॥ . Վար հարց :

* Սնիրան է պարծել յիմաստս մարմնոյ ॥ . նարէէ :

Գ Լ Ո Ի Խ ԻՎ :

Յաղագս խնդրառուիէ Լսական բայից :

Լական բայք հասարակօրէն առնուն զխնդիր յուղղական հոլովն . Գր , * Լյգին փշաբեր՝ փշալից եղև ॥ . Տճք :

Ուր փշալիցն է ուղղական խնդիր էական բայիս եղև . իսկ այդին փշաբեր՝ է անուն բայի : Ստ այսմ են և սոքին :

* Լս եմ որթն ճշմարիտ , և հայր իմ մշակ է ॥ . յովն :

* Լարք մարդկան հակառակասեր է ॥ . լսմք :

* Ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութե ॥ . Խորեն :

Լյլ աստ պարտ է ՚ի միտ առնուլ բարուք , զի եթէ էական բայք՝ իցեն յողնակի , ուղղական խնդիրն բազում անգամ դնի եզակի . Գր , * Վուք է՝ աչ երկրի ॥ . Տար :

* Որոց առաջնորդութեն՝ հայրենի դաստիարակութեք ուղեկից լինիմք ॥ . Գրիգոր Կաթ :

* Տաճար էի՛ հոգւոյն սնչ , արդ զհարան դիւանց լինիցի՛ ॥ . եղիցէ :

Սյսպիսի ուղղական խնդիրք՝ ուրեք ուրեք դնին ևս և ՚ի նախդրիւ տրականն իբր յարմարական խընդիր . Գր , * Լս եղից ձեզ ՚ի հայր , և դուք եղիցի՛ ինձ յուստերս և ՚ի դստերս ॥ . փոխանակ ասելոյ , ես ե-

դէց ձեզ հայր, և դուք եղիջիք ինձ ուստերք և դրստերք . Բ . Կր :

Վիտելի է, զի էական բայք յորժամ յարին յայն պիտի անուանա՝ որք ունին զնշանակութի ժամանակաց, չափուց և զնոց, առնուն զնոսին խնդիր 'ի սեռական հոլովն . փր, * Վոյ էր ամաց վեցհարիւրոց, և ջրհեղեղ ջուրցն եղև 'ի վերայ երկրի || . ծննդոց :

* Եւ էր լայնութի նր երից կանգնոց || . 'ի վարս նիւոյ :

Եւ յայտի սեռական հոլովք անուանց ժամանակաց երբեմն յառքական բայս ևս յարին՝ իբր պատահական խնդիր նոցա . այլ այս 'ի սակաւս . փր, * Եւ վաւ ճանեցա՝ յովսէփ ամաց հարիւրևտասանց || . ծնն :

Վիտելի է ևս, զի անուանք չափուց և կշռոց յայլ հոլովս ևս լինին խնդիր էական բայից .

Երբեմն յուղղականն . փր, * Եւ երկայնութիւն նորա (էր) իննսուն կանգուն || . եղեէ :

* Վսան դանկ լեյի երկդրամեանն || . դեռ :

* Եւ կշռ զրահից նր (էր) հինգ հազար սիկզ պղնձոյ և երկաթոյ || . Թ . Բափ :

Երբեմն ևս յուղղականն և 'ի տրականն միանգամայն . փր, * Եւ դրան սրահին վարագոյրք (եղեյն) քսան կանգուն 'ի բարձրութի || . Էլեյ :

* Եւ եղև (չափն) ըստ չափոյ դրան, որ հայեր ընդ աբելս, յիսուն կանգուն յերկայնութիւն, և քսան և հինգ կանգուն 'ի լայնութի || . եղեէ :

Իսկ երբեմն 'ի բացառականն . փր, * Ի քառասուն կանգնոյ էր տունն || . Գ . Բափ :

* Ի քսան և հինգ սկեղէ եղեյն ձեզ մնաս մի || . եղեէ :

Երբեմն ևս 'ի գործիականն . փր, * Եւ թանձրութի ծովուն (էր) թզաւ || . Բ . Գայ :

* Ալ վայրապար դնէ զչափ ճանապարհին՝ երկայնութի հարիւր վաթսուն ասպարիզաւ լեալ || . Իֆնա :

Իսկ վասն այլոց խնդրոց էական բայից ոչ է հնար որոշակի կանոն դնել . զի ըստ պահանջման բանին և ըստ զօրուէ անուանցն՝ յորս յարին՝ առնուն զխընդիր 'ի զանազան հոլովս՝ բազում անգամ իբր երկրորդականս . փր :

* Եւ վս կատաղիս ընդդէմ ընութեզ ով մարդ . ոչ

- նորին բնու թէ է ընկերն , որում զայրանաս ॥ . սարգ :
- * Տէր ինքնին եղիցի մեզ լոյս մշտնջենական ॥ . յովն . Իմ :
- * Բազմապատիկ էն առ այս սքոյն բանք ॥ . Իփն :
- * Պատերազմաց սկիզբն յազահու է մարդկան եղև ॥ . եղևնի :
- * Լճաւատիկ բանքս ամ 'ի կարգի զճճմարիտ օծելոյն է ॥ . սարգ . յովն :
- * Լըւ եղիցի հանգիստ նորա պատուով ॥ . Էսայ :
- * Լնկանիցիս դու , և ամենեքին՝ որ զքեւ իցեն ॥ . Էղէի :
- * Լայց ոգիք արգարոց 'ի ձեռին նյ ին ॥ . Իմաստ :
- * Ոչ կարեն հօտք առանց հովուաց լինել ॥ . Խոր :
- * Լոս արարիչ ձեր՝ մարդ եղէ վասն ձեր ॥ . Ընորհ :

Գ Լ Ո Ի Խ Ի Պ :

Գ Ի Կ Ե Լ Ի Ի Ի ն է 'ի վերայ խնդրոյ Բայից և 'ի վերայ նախորդի նոյին :

Սան ինչ ինչ գիտելիք 'ի վերայ խնդրոյ Բայից, զորս պատշաճ դատեցաք կարգել յայս գլուխ առանձինն , առ 'ի տալ զնոցանէ զորոշ ինչ տեղեկու թի : վս որոյ .

Գ Ի տելի է նախ , զի բայք բազում անգամ յարել լով յանուանս ինչ՝ իբրև մի վարին ընդ նոսա , և առ նուն խնդիր հաղորդական , այսինքն այնպիսի՝ որ ոչ սոսկ Բային համարի , և ոչ լոկ անուանն . այլ՝ երկուցն միանդամայն . և այս՝ թէ 'ի ներգործականս , թէ 'ի չեզոքականս , և թէ յէականս :

Վ ներգործականս . Գր , * Գիրկս արկի կենցաղոյս սիրոյ ॥ . նար : Ուր վերջահարով տրական հարովս սիրոյ կենցաղոյս՝ է խնդիր փերէն արհմեւելնի :

Վ չեզոքականս . Գր , * Խրատեաց զաստի կենացս զամ ինչ 'ի բաց ընկենուլ , և անտի կենացն միայն պատկառ կալ ॥ . Իփնաստ : Ուր վերջահարով տրական հարովս անտի կենացն՝ է խնդիր պարհաստ կալնի :

Յէականս . Գր , * Ացորդ լեր հեղու թի տաժանաւորս տկարուէ ॥ . նար : Ուր վերջահարով տրական հարովս րաժանանոր րհարուլէն՝ է խնդիր կցորդ լինելնի . իսկ հեղուլէն է երկրորդական խնդիր նորին :

Վիտելի է երկրորդ , զի յորժամ բազում բայք
դան 'ի միասին , խնդիրն մօտագունին հետևի . ֊ր ,
* Վեղեալ անձինք օրհնեն և գոհանան զոյ՝ զեր-
ծեալք 'ի վտանգից ॥ . Ի ֆնաս : ॥ Եր խնդիր բային՝ այս
ինքն պատմական հօլովդ զոյ՝ եղեալ է ըստ բնուածի
այնր բայի՝ որ մօտ է նմա , այն է՝ բայս ֆոհանան . և
ոչ այնր՝ որ հետի է 'ի նմանէ , այն է՝ բայս օրհնեն :
Ըստ այսմ է և 'ի սոսին :

* Հայեցաւ և ետես զինքն լի տկարութիւն ॥ . Եղիշէ :
* Խորհուրդ արարեալ . . . հարցին և քննեցին և 'ի
վերայ հասին մտացն անշարժութիւն ॥ . 'ի նոյն :
* Իսկ զհակառակ բարւոյն զչարն՝ այսինքն զսատա-
նայ , և զորս 'ի նմանէ սերմանեալ զմեղս՝ ատել և 'ի
բաց դառնալ ॥ . Զնորհ :

Բայց երբեմն՝ այլ սակաւ ուրեք հեռագոյն բային
հետևի խնդիրն . ֊ր , * Ընին գնացին զնա ॥ . Դուհ :

Ուր հայցական հօլովս զնա՝ ոչ է լեալ խնդիր այնր
բայի՝ որ մօտ է նմա , այսինքն է՝ ֆնացին . այլ՝ այնմ ,
որ հետի է 'ի նմանէ , այսինքն է՝ առին . որպէս թէ
ասեր . առին զնա և գնացին :

Վիտելի է երրորդ , զի յորժամ բազում բառք
նախդրիւ լինին խնդիր բայի , նախդիրն դնի 'ի վե-
րայ ամ խնդրոց . ֊ր , * Ընդ տեսանէր զերկիրն ա-
ւետեաց , զաշխարհն կենդանեաց , զլեառն սրբու-
թեան ॥ . Խորհն :

* Պահեա՛ 'ի տեղւոջ հանգստեան մեռօրինակ այսր
դադարման՝ յաներևոյթ մտածութեց , 'ի մասնաւոր
սխալութեց , 'ի մեծագոյն դայթակղութեց , 'ի փոք-
րագոյն ոտնառութեց , 'ի խաբեբայ չար ձանձրու-
թեանց ॥ . նար :

* Տրդատ արբայ հայոց մեծաց՝ առ մեծամեծս և առ
իշխանս և առ նախարարս և առ գործակալս և առ այլ
մարդիկ , որ ընդ իմով իշխանութիւն էք՝ յաւանս և 'ի
շէնս և 'ի զիւղս և յադարակս . . . ողջոյն ॥ . աֆալ :

Վիտելի է չորրորդ , զի եթէ խնդիր բային ևս ու-
նիցի զխնդիր՝ եղեալ նախ քան զինքն , և կամ զայլ
ինչ բառ , նախդիրն հասարակօրէն դնի 'ի վերայ նո-
րին , այսինքն 'ի վերայ խնդրոյ խնդրոյն . ֊ր , * Պար-

ծեցուցանես 'ի սյայծառութի քուսի տեսակի զքե
պանծացեալսն ॥ . այսինքն զպանծացեալսն քե . հար :

* Ար բանիւ միայն ունի զառ 'ի յիմ խոստովանուի ,
այլ ոչ գործով , այնպիսւոյն հաւատն մեռեալ է ॥ . ք
որ բանիւ միայն ունի զխոստովանութի առ ան լե ,
այնպիսւոյն հաւատն մեռեալ է . շնորհաւի :

* Տարածեալ զանձն իմ առաջի՝ զի մահ՝ զլորմանն
ցուցից կերպարան ॥ . այսինքն ցուցից զկերպարան
զլորմանն 'ի մահ . հարեի :

* Առողջս՝ ոչ զորս յողջութե Էն , այլ՝ զբիւր ատ
տիւք հիւանդացեալս ասիցէ ॥ . այսինքն զհիւանդա
ցեալս բիւր ատտիւք . շնորհաւի 'ի Ռոդղինս :

* Այն զի՝ զոր լի նախայօժար կամաց ատեցաք զհո
գևորն խաղաղութի՝ զրկեաց ան և 'ի մարմնով զնոյն
ուներւոյն ॥ . այսինքն 'ի ուներւոյն զնոյն մարմնով . լաճ :

* Աթէ ամբարես զառանց համարոյ գործոցս իմ չա
րիս , մեռայց կենդանւոյն ॥ . այսինքն զգործոց իմոց
չարիս , որք են առանց համարոյ . հարեի :

* Պետրոս սէր կարծէր զի վերայ փրկին մեռանէն ॥ .
այսինքն զմեռանէն 'ի վերայ փրկին . լաճ :

Իսկ երբեմն դնի 'ի վր երկուց կամ բազմաց ևս . քր :

* Որք զառ 'ի քս զարչարանս յանձն առեալ համբե
րեցիք՝ ով անասէր հայրապետք ॥ . շար :

* Ար զփառակցի հօր հոգւոյդ զտաճարն զառ 'ի քէն
հովանացեալն այսօր հանգուցեր 'ի լոյսն անմատոյց ॥ .
անդ :

* Ար զարարչակիցն հօր զի սկզբանէ զբանն ան յորո
վայնի քում կրեցեր ॥ . անդ :

Գ Լ Ո Ի Խ Ի Ե :

Յաղագս Աստուծոյն Բայեց ըստ Լինելոյ նոցա
արգելիչ խնորոյ :

Օր ինչ ասացաք զբայից , և զխնդրառուէց նո
ցին , զայն ան պարտ է իմանալ և զաներևութից ,
լնդ որս և զգերբայից , ըստ որում են բայք : Իսկ
յաղագս լինելոյ սոցա անուն բայի և խնդիր բայի՝

խօսեցաք 'ի գլ. թլ. 'ի հաննն . Բ : Ս'նայ մեզ այժմ' խօսել զսոցանէ՝ ըստ լինելոյ սոցա արգելիչ խնդրոյ :

Արդ սքա իմ աներևոյթ բայք բազում անգամ 'ի բազում տեղիս ընդ առաջ ելեալ դիմաւոր բայի՝ արգելուն զխնդրառու թի՛նորա . զի ինքնին լեալ խնդիր բային՝ ինքեանք առնուն զխնդիրն ըստ պահանջելոյ բնութե՛ն իւրեանց . և յայնժամ կուին արգելիչ խնդրոյ . զք , * Որ խոստացար րաւ զփականս արքայութե՛ն երկնից երանելոյն պետրոսի ॥ . շար . թլ : Ուր աներևոյթ բայս րաւ՝ ընդ առաջ ելեալ դիմաւոր բայիս Խոստացար՝ լեալ է նմին իբր խնդիր , և արգելեալ է զխնդրառու թի՛նորին . և ինքն է առեալ խնդիր սեռի զբառգ՝ զփականս արքայութե՛ն երկնից . նաև խնդիր բնութե՛ն , զբառգ՝ երանելոյն ղեարոսի :

Այլ գիտելի է նախ , զի արգելիչ խնդրոյ լինին՝ 'Սախ՝ ներգործական աներևոյթք՝ ներգործական բայից . զք , * Ինու թիւնս մեր սիրէ ծածկել զմերկու թիւն ॥ . եղիչ :

Ուր ներգործական աներևոյթ բայս ծածկել է արգելիչ խնդրոյ ներգործական բայիս սիրէ . և ինքն է առեալ խնդիր զբառգ զմերկու թի :

Երկրորդ՝ չեզոքականք՝ չեզոքականաց . զոր օրինակ , * Նսկեսցո՛ւք հրանել ընդ նեղ դուռն ॥ . Վարդ հարց : Ուր չեզոքական աներևոյթս հրանել է արգելիչ խնդրոյ չեզոքական բայիս հսկեսցո՛ւք . և ինքն առեալ է խնդիր զբառգ՝ ընդ նեղ դուռն :

Երրորդ՝ ներգործականք՝ չեզոքականաց . զոր օրինակ , * Գու ջանա՛ գործել զբարիս , և մի երկնիք 'ի տկարութե՛ք բումմի ॥ . Վարդ հարց : Ուր ներգործական աներևոյթս գործել է արգելիչ խնդրոյ չեզոքական բայիս ջանա՛ . և ինքն առեալ է խնդիր զբառգ զբարիս :

Չորրորդ՝ չեզոքականք՝ ներգործականաց . զոր օրինակ , * Սովսէս աղաչեաց հրանել 'ի պարգևական երկիր ॥ . սարգ : Ուր չեզոքական աներևոյթս հրանել է արգելիչ խնդրոյ ներգործական բայիս աղաչեաց . և ինքն առեալ է խնդիր զբառգ՝ 'ի պարգևական երկիր :

Գիտելի է երկրորդ , զի երբեմն աներևոյթ բայն լինի արգելիչ խնդրոյ սեռի միայն , և ոչ խնդրոյ բը-

նուծե . փր , * Ուսո մեզ առնել զարդարուծի ճշմարտուծե ॥ Ժամագիրք : Ուր աներևոյծ բայս առնել արգելեալ է զխնդիր սեռի բայիս ոսոս . և ոչ զընուէն :

Գիտելի է երրորդ , զի երբեմն արգելիչ խնդրոյն նախադասի դիմաւոր բային . փր , * Հարանել փուծայր զկապ միաբանուծե սիրոյ նոցա ॥ . յովհ . էալ : Ուր արգելիչ խնդրոյն՝ հարանելն՝ նախադասեալ է բայիս փոխայր :

Եւ երբեմն ևս՝ խնդիր արգելչին նախադասի քան զդիմաւոր բայն , որ անկանի ՚ի մէջ արգելչին և ՚ի մէջ խնդրոյ նորա . փր , * Օտիեզերս բաւեցին ընու շնորհօք հոգւոյն սրջ ॥ . Իգնար : Ուր խնդիր սեռի աներևոյծ բայիս ընու՝ որ է արգելիչ խնդրոյ , եղեալ է նախ քան զդիմաւոր բայս Բաւեցին . իսկ խնդիր բընուծէն եղեալ է զկնի . զոր մարծ էր դնել այսպէս . բաւեցին ընու զտիեզերս շնորհօք հոգւոյն սրջ :

Գիտելի է չորրորդ , զի բազում անգամ միոյ բայի լինին բազում արգելիչք խնդրոյ . փր , * Փուծացաւ վաղվաղակի զոր թողովել , գունդ հաղիւլ . եղիւ : Ուր երկոքին աներևոյծքս ևս՝ թողովել , հաղիւլ են արգելիչ խնդրոյ բայիս փոխայր :

Գ Լ Ո Ի Խ Ի Օ :

Յաղագս Գերբայեց :

Գերբայք են աներևոյծ բայք հոլովեալք իբր ա. նուն : Սորա թէպէտ միշտ ունին զզորուծիւն բայի , բայց որովհետև իբր անուն հոլովին՝ գրեթէ ըստ օրինակի գոյականաց վարին : Ուստի և իբր գոյական անուն , ՚իտիս՝ լինին յատկացուցիչ . փր , * Որ ունի ազանջս լեւոյ , լուիցէ ॥ . Ժար : Ուր գերբայս լեւոյ՝ է յատկացուցիչ ականջաց :

Երկրորդ լինին բացայայտիչ . փր , * Յերկոսին զօրաւոր է՝ ՚ի պարթեւն և ՚ի Բարեփործեւն ॥ . Գէորգ . ԷԳ : Ուր գերբայք ՚ի պարթեւն և ՚ի Բարեփործեւն՝ լեալ են բացայայտիչ անուանդ յերկոսին :

Երրորդ՝ լինին խնդիր նախադրուծեց . փր , * Մի

ուսցուք զգիրս այ վասն կարդալոյ միայն , այլև վասն սուրբեցոյ ॥ . 58Բ :

Զորորդ՝ լինին խնդիր անուանց . ար , * Եւ քան զի ոչ գտայ արժանի պարծեցալ 'ի փառս Ը սքցն դաս . . . 'ի կարգն երկրորդ զիմեցից՝ զնմանինն իմ յիշատակել ॥ . նար : Ուր դերբայս պարծեցալ՝ հանդերձ խնդրով իւրով , (որ է՝ 'ի փառս ընդ սքցն դաս) , է տրական խնդիր անուանս արժանի :

Զխնդերորդ՝ լինին խնդիր բայի . երբեմն իբր բուն խնդիր բնուէ . ար , * Ի եզուաւ 'ի խրատել փութամբ . և յարդեանցն պակասեալ գտանիմք ॥ . սարգ : Ուր դերբայս 'ի խրատելեալ է բուն խնդիր փութարցն :

Երբեմն ևս՝ մանաւանդ թէ բազում անգամ , լինին խնդիր երկրորդական , և յս էէտ ևս պատահական . ար , * Ի Խաթատորել ճշմարտութեն՝ լուսոյէ ամ կարծեցուցանող զօրութիւն ॥ . դատիւ անյաղի : Ուր դերբայս 'ի Խաթատորել է երկրորդական և պատահական խնդիր բայիս ընդէ :

Եւ յատ գիտելի է , զի բազում անգամ 'ի գերապանծ շարադրութիս դերբայք 'ի վերջոյ դնին 'ի գործիական հօլովն իբր խնդիր առ 'ի չքնաղ ընծայեցուցանելոյ զբանսն . ար , * Եւ զի որք բժշկենն (մարմնաւորակէս) զմարմինն և եթ բժշկեն , առ հոգւոյն բժըկութի շահ և ոչ մի ինչ ցոցանելով ॥ . սարգ :

Վիտելի է ևս , զի ներգործական դերբայք երբեմն 'ի խրթին շարադրութիս փոխանակ հայցական հօլովի առնուն զխնդիր (ըստ բայանուանց) 'ի սեռական հօլովն . և այն համարի նոցա իբր յատկացուցիւ . ար , * Ի յոտարին պահել՝ դաշինն դժբեցի ॥ . փոխանակ ասելոյ , 'ի պահել զուխան . նար :

* Ուր էից լուսոյն արժանի եզեր Բառնալոյ 'ի քո գիրկս ॥ . 2ար :

Գ Լ Ո Ի Խ Ի Ն :

Յաղագս համայնութե ընդունելուց 'ի հասարակի :

Ընդունելութիք՝ թող զյանդեալսն 'ի ընդ կրկնակի համաձայնին ընդ միմեանս :

Նախ՝ իբր խնդիր . ԳՐ , * Ղատապարտողք՝ զքո՞ ոչ խոսարձանողաց ॥ . շար : Ուր ընդունելու թիս խոսարձանողաց՝ է խնդիր ընդունելու թեանս դատապարտողք . իսկ հայցական հոլովս զքո՞ է խնդիր սեռի խոսարձանողաց . որպէս թէ ասէր . դատապարտողք այնոցիկ՝ որք զքո՞ ոչ խոսարձանին :

Երկրորդ՝ իբր ածական . ԳՐ , * Ղարգէալ տրտնջող... արարչուսեալ աշխատող ॥ . նար :

Իսկ ՚ի յարին յանուանս՝ բազում օրինակաւ հաւմաձայնին ընդ նոսա : Նախ՝ իբր խնդիր . ԳՐ , * Ղարարողին զգեցուցիչ . վերորդնելոն գրգիչ ॥ . նար :

Երկրորդ՝ իբր յատկացուցիչ . ԳՐ , * Ձեռն ընդբերաց դիւրաւ յաղթեսցէ ॥ . առաջ : Նայց ոչ լինին յատկացուցանելի :

Երրորդ (այլ ՚ի սակաւս) իբր բացայայտիչ և բացայայտելի . ԳՐ , * Ղաւ ամսն լինիջիր խոնարհ առ սիբելիս և առ ատելիս ॥ . ոսկ . եփես : Ուր ընդունելու թիբք առ սիբելիս և առ ատելիս՝ են բացայայտիչ անուանս առ ամսն : * Օ պարունակողսն անպատուեալ զտաճարն և զսեղանն , պատուեցին յատուկ զպարունակեալսն ॥ . յովհ . իմաստ : Ուր ընդունելու թիւնդ զպարունակողսն է բացայայտելի ՚ի ձեռն բառիցս զբաճարն և զսեղանն :

Չորրորդ՝ իբր ածական՝ ածական անուանց . այլ այս ՚ի սակաւս . ԳՐ , * Օ հերքեալ վնասակարս պարտուց մահու՝ յամենախնամ աչաց հզորիդ մի մերժեսցես ॥ . նար :

Հինգերորդ՝ ը օրինակի գոյական անուանց՝ առնուն երբեմն զածականս . զոր օրինակ , * Ղնհանձար խնդրողն՝ յամենայնէ վրիպի ॥ . իփնաստ : Ուր ընդունելու թիւնս խնդրող՝ առեալ է ինքեան ածական զանունդ անհանձար :

Իսկ թէ սոքա զիարդ իբր ածական համաձայնին ընդ գոյականաց , և կամ զորպիսի խնդիր առնուն , ասանցուք ՚ի յաջորդ գլուխսդ ՚ի մասնաւորի :

Գ 1, Ո Ի Խ Ի Բ :

Յաղագս Ընդունելու էց յանգիւղոյ 'ի օղ :

Սորբա միշտ իբր ածական անուն վարին, ունելով ևս զգորութի բայիցն՝ յորոց բղխեն, ըստ որոց ևս առնուն զխնդիր : Իսկ թէ զխնդր, յայտ լիցի 'ի յաջորդ կանոնսդ :

Կանոն . Ծ :

Ընդունելութիք ներգործականք յանգեալք 'ի օղ՝ առնուն զխնդիր սեռի 'ի սեռական կամ 'ի հայցական հոլովն՝ ըստ սլահանջելոյ վայելութե տեղւոյն . զոր օրինակ, * Օրհնօղն իշոյ՝ արքայ կացուցանէր ॥ . Տափտա : Ուր բառդ էլոյ՝ է խնդիր որհնողն :

* Երանի թէ գոնեայ անագան ճանաչէաք, կամ 'ի բժշկութի միտէաք . և ոչ՝ խնդրողայն զճշմարտութի՝ ընդդէմ զինէաք ॥ . Լամբ : Ուր հայցական հոլովս զճշմարտութի՝ է խնդիր ընդունելութես խնդրողայ :

Կանոն . Է :

Ընդունելութիք ներգործականք յանգեալք 'ի օղ՝ բաց 'ի խնդրոյ սեռի առնուն երբեմն զխնդիր բնութեան, և զայն կամ ըստ ինքեան կամ ըստ յարմարութե, և կամ իբր երկրորդական, ըստ սլահանջելոյ բայիցն՝ յորոց բղխեն յայլ և այլ հոլովս :

Յուղղականն . զր, * Օքեզ ան խոստովանողայ ॥ . նար . գանջ . հոփ : Ուր բառդ ան է ուղղական խնդիր բնութե ընդունելութես խոստովանողայ :

'Ի վերջահոլով տրականն . զր, * Եստապարտօղ մարգարէից զխոնարհիլք քո յերկնից ॥ . շար : Ուր բառս զխոնարհիլք է խնդիր սեռի նախապարտօղն . իսկ մարգարէիցն՝ է տրական խնդիր նորա :

'Ի նախորդիւ տրականն . զր, * Պայծառացի զմանկունս քո յօրհնաբանութի ծափողն զողլուսոյ 'ի քեզ՝

մայր եկեղեցի ॥ շար: Ուր բառս զշող լուսոյ է խնդիր սեռի ծագողին. իսկ բառդ 'ի թեղ է խնդիր բնու թէ, և ինքն լեալ է յատկացուցիչ բառիս յօրհնաբանութի, կամ իբր արական խնդիր:

'Ի բացառականն. փր, * Օ առ 'ի յերկնիցն ասեմ իջեալ կենսատուն կերակուր՝ զնորն ուխտ և նորոգոն զմեզ 'ի մեղացն եղծմանէ ॥ յովհ. Իմաստ: Ուր զմեզն է խնդիր սեռի ընդունելու թեանս նորոգող. իսկ բառս յեղծմանէ մեղացն՝ է խնդիր բնու թէ:

'Ի գործիականն. փր, * Ուստապայծառ իմաստիւք լոյս եղելոց աշխարհի համաժափող ॥ շար: Ուր բառդ եղելոց՝ է խնդիր սեռի համաժափողին. իսկ բառդ լուսապայծառ Իմաստիւք՝ է գործիական խնդիր նորա. այլ բառդ լոյս՝ է ուղղական խնդիր ընդունելու թէս եղելոց. սոյնպէս և բառս աշխարհի՝ է արական խնդիր նորա. որպէս թէ եղեալ էր. լուսապայծառ իմաստիւք համաժափող այնոցիկ, որք են լոյս աշխարհի, այս է՝ կրօնաւորաց:

'Ի ներգոյականն. փր, * Քնազօր զինուորաց համախմբօղ 'ի հոգևոր պատերազմին. . . երանելին բասիլիոս ॥ շար: Ուր քնասէր զինուորացն է խնդիր սեռի համախմբողին. իսկ 'ի հոգևոր պատերազմին է ներգոյական խնդիր նորա:

'Ի ձեռն նախադրու թէ. փր, * Օ արարածս փոխանակ արարչին մեծարողք ॥ յովհ. Իմաստ: Ուր բառս շարարածս է խնդիր սեռի մեծարողին. իսկ նախադրու թիւնս փոխանակ հանդերձ խնդրով իւրով՝ լեալ է նմա խնդիր բնու թէ:

Մանն. 7:

Ինդունելու թիւնք չէղորականք յանդեալք 'ի օղ առհասարակ զայնպիսի խնդիր առնուն, զորպիսի պահանջեն բայքն՝ յորոց բղխեն. փր, * Չիք իմ թագաւոր իշխեցող շնչոյս բաց 'ի քէն քս ॥ նար:

* Թուեցին և զեղբայրն զայն ընդ փնայցօղն յարբունիս ॥ Վարդ Կարոյ:

* Յերկիւղէ ինչ ոչ զանգիտող ॥ Տափիս. առ պէտքոս էալ:

* Վտկացող լինի ջիւք զայ ॥ Կողոս:

- * Խոնարհեալ 'ի տես մարմնով ճգնողէն ॥ . շար :
- * Խոստովան լեր բարեբարին այ . . . զոտիցդ հետոց՝
իբրև զպատուիրանաւն այ Վաղղայ ॥ . նար :
- * Փրկեա՛ զանձինս 'ի փորձանաց՝ 'ի խաւարի շրջոյ
գիւաց ॥ . շար :

Ս անն համաձայնութե՛ այսպիսի ընդունելութե՛յ
ընդ գոյական անուանց՝ գիտելի է, զի սոքա որովհե-
տև միշտ իբր ածական վարին, ըստ կանոնի ածական
անուանց համաձայնին ընդ գոյականաց . 78, * Ս'ի
լինիր ընկեր աւն Բարկայողի . և ընդ բարեկամի կայրա-
յողի մի բնակեր . գուցէ ուսանիցիս զճանապարհս նու-
րա ॥ . առակ :

- * Հայցեմք 'ի ներոյ քաղցրութե՛ ձերմէ ॥ . շար :
- * Յօլով անգամ 'ի դասողայն թափէ զինքն թռչոց ॥ .
պիտոյից :

Վ Լ Ո Ւ Խ Ի Թ :

Յաղագս Ընդդռանելուաւնէջ յանգեւոյ 'ի եալ :

Ս ասպիսի ընդունելութիք յորժամ հօլովին՝ միշտ
իբր ածական անուն վարին, թէ և ներգործութիք
չունիցին զգոյական ընդ ինքեանս . 78, * Վժուարին
է յաճախելոյն 'ի սովորութիւն մեղաց՝ ազատիլ ॥ . լաճ :
Ուր ընդունելութիս յաճախելոյն՝ եղեալ է իբր ածա-
կան . որոյ գոյականն զօրութիք կայ . 79 է՝ Դարդան :

Իսկ եթէ առանց հօլովելոյ գիցին, երբեմն իբր
բայ վարին, և երբեմն իբր անուն : () որոց գիտելի
է, զի եթէ սոքա ներգործականապէս առցին, միշտ
իբր դրողէմբայ 'ի գործ ածին . զոր օրինակ, * Ու-
ղեալ զպատճառն՝ պատճառաւորացն պաշտօն մատու-
ցանէին ॥ . ելնիկ :

Իսկ եթէ կրաւորականապէս առցին, 'ի գործ ա-
ծին անխտիր . զի երբեմն իբրև զբայ վարին . զոր օրի-
նակ, * Ս արնեալ 'ի բազմաց՝ 'ի մահ զբաւեցայ ॥ . նար :

Եւ երբեմն՝ մանաւանդ թէ բազում անգամ իբ-
րև ածական անուն . զոր օրինակ, * Օ խորդ սասա-
նեցաւ հասարակն . . . իբր օտարացաւ ծանոցեալն ॥ .
նար :

Իսկ համաձայնութի սոցա նկատի ըստ կանոնի համաձայնութե ածականաց՝ թէ՛ ՚ի նախադասիւն, թէ՛ ՚ի յետադասիւն, և թէ՛ անկեալ իցէ՛ ՚ի միջի սյլ մասն բանի . զոր օրինակ, * Ոչ այլ ինչ այնպէս զքեզ սիրելի առնէ ան, որպէս սպասեալ անդամոյն յսի դարման տանել և յառողջութի ածել ॥ . սարգ :

* Շանս սպանելոյ մի քարինս արձակեցես . լուոյս ջախջախելոյ մի սաստիկս որոտացես . հողոյս անպարտելոյ մի իբր ամբարհաւաճի ուժգինս մոնչեցես ॥ . նար :

* Հանրերջելոյն հասցուք բարութեց ॥ . ոսկ :

* Օ ի եթէ զթագէ ասիցես կամ զծիրանեաց կամ զոսկէհոռուն հանդերձից ընդելուդեալ մարգարտով, սակայն ոչինչ ասես ॥ . սարգ : Ուր ընդելուդեալն յետադաս դուրով ոչ է համաձայնեալ ընդ գոյականի իւրում, որ է բառս հանրերջի : Օ ի այսպիսի ընդունելութիք ուրեք ուրեք ՚ի գերապանծ շարադրութիս առանց համաձայնութե ևս յետադասին :

Որպէս զկրաւորական ընդունելութեցդ ասացաք, սոյնպէս իմա և զչէզոքականաց . զի և նոքա ՚ի գործածին անխտիր : Երբեմն վարին որպէս զբայ, և ունին զգորութի գերբայի . զոր օրինակ, * Վութեմ, մի հեղգար . գուցէ դարձեալ հարաջեալ ընդ խաւար գընացես ॥ . եղիշ :

* Տեւալցեալք անձառ լուսոյն՝ վերասլացան ՚ի կեանս անմահ ॥ . շար :

Իսկ երբեմն՝ և բազում անգամ իբր ածական անուն վարին ըստ կրաւորականաց, և ըստ նոցա համաձայնին . զոր օրինակ, * Մնձն յափեալ զխորիսիս և զմեղր արհամարհէ . բայց անձին հարօրելոյ և դառն իբրև զբաղըր թուի ॥ . սոսկ :

Սասն խնդրառուէ այսոցիկ ընդունելութեց յանգեւոյց ՚ի եալ ոչինչ պիտոյ է գրել . զի զայնպիսի խընդիր առնուն՝ զորպիսի սահանջեն բայքն, յորոց բլղխեն թէ կրաւորականք իցեն, և թէ չեզոքական . զոր օրինակ, * Հայցեցէք զխաղաղութի ճշմարիտ վկայք քբյ երրորդութեմ՝ նեղելոյս յանօրինաց բանութե ॥ . շար : Ուր բացառական հոլովս ՚ի բռնաութե անօրինաց է խնդիր սեռի կրաւորական ընդունելութեդ նեղե-

Լոյս . իսկ ինքն է արական խնդիր բայիս հայցեցէք :

* Ղաւիթ զյոսացեալն 'ի տը' լերին նմանեցուցանէ ॥
Գէորգ : Ուր 'ի քերն' է լը ինքեան խնդիր չէզոքական
ընդունելութես զյոսացեալն :

ՄԵԼ պարտ է գիտել, զի ոմանք 'ի կրաւորական
ընդունելութեց աստի ուրեք ուրեք այլ 'ի սակաւս
յոյժ՝ փոխանակ բացառականի առնուն զխնդիր 'ի
սեռական հոլովն . զոր օրինակ, * Ուսուցանեն վար-
դապետութիս զմարդկան պարտիրեալս ॥ . փոխանակ
ասելոյ, զպատուիրեալս 'ի մարդկանէ . ճարէ :

Իստ այսմ ևս և չէզոքականք երբեմն փոխանակ
բուն խնդրոյ առնուն զսեռական կամ զտրական .
զոր օրինակ, * () Կարացեալք աշխարհի՝ և որինչ աշ-
խարհիս՝ փափկացան առաքինութե վարուք ॥ . այս-
ինքն օտարացեալք յաշխարհէ . Կար . երգ :

Սոքա երբեմն լը բաղդատական անուանց ևս առ-
նուն զխնդիր . զոր օրինակ, * Հիսանդացեալն 'ի մարդ-
կանէ՝ թէ և 'ի մահ աշխատիցին, սակայն առողջու-
թեան յուսով թեթեանան ॥ . յովչ . էալ :

* Ղովեալք 'ի վկայս՝ հօրն մեծի համանման ॥ . շար :

Գ Լ Ո Ի Խ Լ :

Յաղագս Ընդունելութեց յանգեւոյ 'ի լի :

Ս անն ընդունելութեց՝ որք յանգին 'ի լի, գիտե-
լի է, զի սոքա իբր ածական վարին . և 'ի յարին յա-
նուանս՝ ըստ կանոնի ածական անուանց համաձայնին
ընդ նոսա, թէ 'ի նախադասին՝ և թէ 'ի յետագա-
սին . զոր օրինակ, * Փոխանակ զքալէ լուսոյն՝ իմանա-
լի լուսոյն ճառագայթիւք զսրտին խնդրեն լուսառ-
բել զաչս ॥ . յովչ . իմաստ :

* Խորհրդեամբ ցուցաւ սքանչելոյն յակոբայ ॥ . շար :

* Լըդարև հօր սքանչելոյ որդիք զարմանալէք առաւել
քան զառաւել (արիստակէս և վրթանէս) ॥ . խոր :

* Լնճառելոյն հասիք երանութե ॥ . շար :

Ս անն խնդրառութե սոցա գիտելի է, զի որովհե-
տև սոքա յերիս սեռս վերածին, 'ի չէզոքականս, 'ի

կրաւորականս, և 'ի ներգործականս, ըստ այնց առնուն զինդիր:

Չեղորհանահաղորդին հասարակօրէն առնուն զինդիր 'ի տրական հօլովն. զոր օրինակ, * Տեռան բորբոքեցան մեծաւ ցանկութեմ տեսանել զհասարիչն ամենեցուն, և պանթրօնալին հրեշտակաց՝ մարդ 'ի յերկրի երևեալ, և դիւրամթրօնալի մարդկան || . Իգնար: Ուր բառդ հրեշտակաց՝ լեալ է խնդիր չեզոքականահաղորդընդունելուէս՝ պանթրօնալին. և անունս մարդկան՝ լեալ է խնդիր չեզոքականահաղորդընդունելուէս դիւրամթրօնալի:

Սոքա 'ի բացառականն ևս առնուն զինդիր. Գր, * Օակատեցայ անկասելի 'ի պատկառելեացն գործոց || . նար: Ուր բացառականդ 'ի պարհառելեացն գործոց՝ լեալ է խնդիր չեզոքականահաղորդընդունելութես անկասելի:

Արատորհանահաղորդին առնուն զինդիր ըստ սեռի երբեմն 'ի տրականն. զոր օրինակ, * Արջանկութի խոստովանելի ամ երկրի || . նար: * Ս'ի լար գերի բազմաց ողբալի || . նար:

Իսկ երբեմն 'ի բացառականն. զոր օրինակ, * Լնդանելին 'ի համայնից . . . պարագրի այսօր || . շար:

* Ս'ի ամ անվանելի 'ի դրանց դժոխոց || . 'ի նոյնն:

* Լնքեան միայնոյ քննելի օրինակն, և յարարածոց անգիտելի || . շնորհալի. 'ի դասանումն:

Սերգործանահաղորդին երբեմն ունելով զգորուի ողի (որպէս ասացաք 'ի մասն. Թ. գլ. իգ. 'ի վերջն). առնուն զինդիր 'ի սեռական հօլովն՝ իբր զինդիր սեռի. զոր օրինակ, * Լհա ան օգնական իմ, և տէրընդունելի հոգւոյ իմոյ || . Գր լունօղ հոգւոյ իմոյ. սաղ:

* Ոչ եղև լեւի ներքին ականջօք տերունական հրամանին || . այսինքն լսող զտերունական հրամանն. շնոր:

* Որ եղև առաջնորդ ունելեացն յսի || . այսինքն ունողաց, այս է՝ ըմբռնողաց զյն. Գործ:

Ուրեք ուրեք ևս առնուն զհայցական. զոր օրինակ, * Ատուն զարծաթն զպարաստեալն 'ի ձեռս Գործելեաց զգործս կահի տանն նոն || . այսինքն գործողաց զգործս lix. Գ. Բագ. ԺԲ. 11:

* Յօր լսելոյ քո զաւետիս՝ խնդրեալ լինել մեզ լսելիս՝
զձայն աւետեաց քո միաճնին , եթէ եկայք օրհնեալք
հօր իմ ॥ . այսինքն խնդրեալ լինել մեզ լսողս զձայն
աւետեաց միաճնի քո . այս է՝ եկայք օրհնեալք .
և այլն . շար :

* Եւ եզիցի՝ իբրև միտցին օտք քահանայիցն հրեւոյ
զտապանակ ուխտին նոն նամ երկրի՝ 'ի ջուրն յորդա-
նանու , պահասեցէ ջուրն ॥ . այսինքն կրողաց զտա-
պանակ ուխտին . յեսոսայ . ֆ . 13 :

Իսկ վասն ընդունելու թէց՝ որք յանգին 'ի լոյ՝ տես
յերկրորդ մասին . 42 . 17 :

Գ Լ Ո Ի Խ Լ Դ :

Յաղագս համաշայնու է պապասխանայ ընդ հարցման :

Յորժամ 'ի բանս պատասխան լինի իմիք հարց-
ման , հարկ է զի պատասխանին համաձայնեցի հարց-
մանն՝ գոնէ զօրու թի :

Եւ յս համաձայնութի 'իսխ՝ նկատի ըստ հօրովին .
զոր օրինակ , * (հրց) . Օ ինչ է կաթուղիկէն . (պա-
պասխանի) . Տիեզերական . զի նամ եկեղեցիք ուղղա-
փառաց՝ որ ընդ տիեզերս , մի են . . . զոր և առաքե-
լական կոչեմք ॥ . խոսրով :

* Իսկ արդ՝ ով է պօղոսն , կի՞ ով է սպողոսն : (պապա-
սանի) . Պաշտօնեայք , որովք հաւատացիքն ॥ . ք . հր :

Իարձեալ . * Եւ առինչ իրս բարկանայ : (պիս) .
Բնդ մեծատանց անիրաւութիւն , և ընդ աղքատաց
հպարտութի ॥ . պապ . աղեք :

* Ում են նման սոքա : (պիս) . 'ի ման են մանկանց՝
ոչ անմեղաց , այլ՝ յիմարաց ॥ . Իգնատի :

Երկրորդ՝ նկատի ըստ զօրութե նշանակութե բա-
ռիցն . իբր զի՝ պատասխանին լիցի այնպիսի բառիւ ,
որ համաձայն գտցի զօրութե հարցմանն , թէ ըստ որ-
պիսութե , թէ ըստ տեղւոյն , և թէ ըստ ժամանա-
կին , և այլն . որպէս երևի յօրինակսդ՝ որ զկնի :

* Ինթացողացն զհետ քի այսպիսի ճանապարհաւ

ո՛ւր լինին օթձանք , (ՊԽ) . Ոչ 'ի հարկս համապա-
տիւ ծառայից , այլ՝ ուր տէրն է ամենեցուն ॥ Զորհ :

Վարձեալ . * Ուստի արդեօք կոչեաց (զմեզ ԽԾ) :
(ՊԽ) . Վ Վհաց , 'ի փողոցաց , 'ի ճանապարհաց և 'ի
ցանկոց : (ՀԳ) . Եւ ո՛ւր արդեօք կոչեաց : (ՊԽ) . Վ
հրեշտակական պատիւ , 'ի սրովբէական սրբաբանու-
թի , յԽծութէն փառս ॥ . սարգ :

* Եմք ապա 'ի խաւարի . Էմք 'ի ստուերս մահու :
(ՀԳ) . Վ՛ր վասն : (ՊԽ) . Սասն զի փոխեցաք 'ի մահ-
ուանէ 'ի կեանս : (ՀԳ) . Օ իարդ , և որով օրինա-
կաւ : (ՊԽ) . Օ ի սիրեմք զեղբարս ॥ . սարգ : Տես
յընդարձակն :

Եւլ աստ գիտելի է , զի բայն՝ որ՛ներգործուք դնի
'ի հարցման , իբր 'ի բազումս զօրուք գտանի 'ի պա-
տասխանին . որպէս է տեսանել 'ի վերոյ գրեալսդ :

Եւ երբեմն ևս փոխանակ այնր բառի՝ որ լինելոց
էր բուն պատասխանի հարցմանն , դնի բան ինչ՝ իբր
բացայայտիչ զօրուք իմացեալ բառին . զոր օրինակ ,

* Օ ինչ է՝ զոր կարդացերն : (ՊԽ) . Օ մի սսէ խըն-
դրեցի , և զտոյն աղաչեմ : (ՀԳ) . Եւ որ է այն : (ՊԽ) .
Ինչակեղ ինձ 'ի տուն Խն , և շուրջ զսեղանով նորա
երգել ॥ . Խորով :

Վիտելի է ևս , զի բազում անգամ հարցումն դնի
առանց պատասխանոյ . զոր օրինակ , * Ինչէր մեր-
ժեցար 'ի պտղոյն շնորհաց՝ իբր զադամ 'ի ծառոյն
կենաց ॥ . սար :

Գ Լ Ո Ի Խ Լ Տ :

Յաղագս հաղթուիէ բանի , և պէսպիսութիւն
շարադրութեց :

Վ համաձայնուի մասանց բանի կազմին պէսպէս
շարադրութիք բանից . ոմանք սակաւաբառք , և ո-
մանք բազմաբառք :

Սակաւաբառք կազմին 'ի սակաւ բառից՝ գոնէ յե-
րից . այսինքն 'ի բայէ , յանուանէ բային , և 'ի խըն-
դրոյ նորին . զոր օրինակ , * Երգում ծնանի զհայկ ॥ .

խոր : Աւր կան երեք բառք . այսինքն անուն բայի , բայ , և խնդիր :

Բայց երբեմն մին յերկոց աստի զօրութիւն դնի . զմի օրինակ , * (Թմբերեցոյց ծուլութիւն || . այսինքն թմբեցոյց զսողման ծուլութիւն . նար : * Բնկալ զսովեալս || . այսինքն դու ընկալ զսովեալս . նար : * Կնցեալն անյայտ || . այսինքն անցեալն է անյայտ . նար :

Իսկ բազմաբառք կազմին 'ի բազում բառից՝ այլ և այլ եղանակաւ շարայարեւոյց ընդ միմեանս . այսինքն իբր խնդիր , իբր յատկացուցիչ , իբր բացայայտիչ , իբր ածական , և այլ . որպէս յայտ է 'ի բազում օրինակաց եղելոց 'ի քերականութե աստ . և յայտնի ևս ցուցցի 'ի յաջորդ օրինակացդ : Արդ՝ այսպիսի շարադրութիւնք՝ թէ բազմաբառք և թէ սակաւաբառք՝ երրակի կարեն կազմիլ , Պարզ , միջակ , և խրթին :

Պարզ շարադրութիւն ասի այն , որ կազմի 'ի դիւրին շարայարութենէ ընտել և սովորական բառից . և է դիւրըմբռնելի ամենեցուն :

Միջակ շարադրութիւն ասի այն , որ կազմի 'ի վայելուչ շարայարութիւն ընտիր բառից . յորում և գտանին յետ և յառաջութիւն նոցին , և խնդրառութիւնք անուանց :

Խրթին շարադրութիւն ասի այն , որ կազմի 'ի մանուաճոյ շարայարութիւն ընտիր կամ մթին բառից զոր իմաստնոց միայն է իմանալ . տես յընդարձակն :

() Ինչպէս պարզ շարադրութե :

* Օ ոմն իմաստասէր 'ի Հացկերոյթ կոչեցին . և նա « իբրև եմուտ 'ի տուն » և բազմեցաւ , նայեցեալ 'ի « վեր և 'ի վայր և 'ի չորեսին կողմունս տանն » ետես « զանազան գունովք զարդարեալ , և ազգի ազգի ե « ըանդօք պայծառացեալ . ապա լցեալ զբերանն խը « խով՝ եթուք յերեսս տանուտնն : Այլ իբրև Հար « ցեալ եղև , թէ ընդէր արարեր զայդ , պատասխա « նի ետ , և ասէ . և զինչ վնաս արարի . զոր դուք « պատուեալ էիք՝ և ես պատուեցի . և զոր դուք ոչ « էիք պատուեալ , և ես ոչ պատուեցի : Հայեցայ

,, յամ տունս , և տեսի զարդարեալ և պատուեալ
 ,, ամիւ , և ոչ կարացի թքանել . իսկ զերեսս տանու-
 ,, տեառնն տեսի անպատիւ , զի ոչ էր զարդարեալ
 ,, առաքինութի զներքին մարդն . վասն որոյ և անդ
 ,, թքի : Եւ արդ՝ եթէ այսոքիկ արտաքինք , որ զճըշ-
 ,, մարիտ անծածանութեթի ոչ գիտէին , այսպիսի իմն
 ,, նախանձ ունէին բարեաց դործոց՝ և առաքինասէր
 ,, վարուց , ապա որչափ ևս առաւել մեզ պարտ է բա-
 ,, զում զգուշութի և փոյթ ունել յառաքինութիս .
 ,, որք մեծագոյն շնորհաց արժանացաք զալստեամբն
 ,, քնի , և պատուական խաչին փրկագործութեն ॥
 'ի Տէնտալնէ Ժամագրոց :

Ղարձեալ . * Սաքաւն գողանայ զօտար ձուս , և
 ,, թխտեալ՝ ձայն հանէ . իսկ ձագքն իբրև լսեն զձայն
 ,, նորա՝ և զձայն մօրն իւրեանց՝ որ ծնաւն զնոսա ,
 ,, թուուցեալ գնան յերամս իւրեանց : Սոյնպէս և
 ,, բանսարկուն 'ի ձեռն մեղաց գողացաւ և հեռացոյց
 ,, յարարէին զազգս մարդկան . իսկ նոքա իբրև լուան
 ,, զձայն մարմնացելոյ բանին , գնացին զհետ նորա ॥
 զարար . կալ :

() Բիւսէ միջակ շարագրութի :

* Վաջն վարդան՝ և ամ զօրքն՝ որ ընդ նմա էին ,
 ,, իբրև տեսին զբազմութի պատրաստութե գնդին
 ,, հեթանոսաց , հայեցան և յիւրեանց սակաւութին .
 ,, թէպէտ և կարի յոյժ նուազունք էին քան զնոսա ,
 ,, ոչ ինչ զանգիտեցին առ 'ի յոյժ բազմութեն . այլ՝
 ,, առհասարակ միաբան համբարձին յերկինս զձայնս
 ,, իւրեանց . աղաղակէին և ասէին . դատեա՛ տը զայ-
 ,, նոսիկ , և այլն . . . Եւ զայս ասելով խուճք արա-
 ,, բեալ յարձակէին . և զաջ թեւն բեկեալ զձախոյ
 ,, կողմամբն արկանէին . և սրոյ ճարակ զամենեօտան
 ,, տային . և ընդ երեսս դաշտին փախստական առ-
 ,, նէին . . . Յայնմ տեղուջ գէտակն 'ի վեր ամբառ-
 ,, նայր արշաւիր արշարունի . գոչէր առ իւծաբար , և
 ,, յարձակէր վարազաբար . հարկանէր սատակէր ըզ-
 ,, վուրկն բաջ՝ զեղբայր թագաւորին զփնեաց . և ըզ-

,, բաղում համհարզս նորին ընդ նմին կոտորէր . և
 ,, այնպէս ամբն առհասարակ այր զախոյեան իւր յեր-
 ,, կիր կործանէր : Աւ առ յոյժ յանդուզն յարձակ-
 ,, մանն՝ յուլլադոյն այն էր , զոր գետամոյնն առնէին՝
 ,, քան զանկեալն սրոյ ՚ի ցամաքի . և ՚ի բաղմու թէ
 ,, դիականցն անկելոց՝ յստակ ջուրք գետոյն յարիւն
 ,, դառնային ॥ . եղելէ . Գ :

* Ասկ ՚ի ծագել արեգական լըդէմ մերոց զօրացն՝
 ,, ՚ի պղնձապատ վահանացն նշոյլք զլերամբքն փայ-
 ,, լատակէին՝ իբրև յամպոյ մեծէ . և ՚ի նոցանէ ՚ի
 ,, դուրս ոստէին ՚ի մերոց նախարարացն քաջք զրա-
 ,, հաւորք որպէս ՚ի փայլատականցն ճառագայթք .
 ,, յորոց ՚ի տեսութէն միայն զանգիտեալ պարսկա-
 ,, կանն գունդ , սակաւ ինչ և մերն՝ վասն ոչ կարել
 ,, հայել ընդդէմ արեգականն ծագման . . . և ՚ի խառ-
 ,, նակել մարտին՝ պատահէ կամսարականն սպանդա-
 ,, բատ՝ խմբի մեծի , յորում էր քաջն շերգիր . . . և
 ,, հերձեալ զխումբն՝ որպէս զանթահար՝ յերկիր
 ,, կործանէր զքաջն , և զխումբն պտուտեալ ՚ի փա-
 ,, խուստ դարձուցանէր ॥ . իորէն . Գ . 37 :

* Ար երբեմն (շապհոյ արքայի և ատոմայ նախա-
 ,, բարի) զհետ երամակաց ցուոց յանդգնագոյնս ար-
 ,, շաւել ընդ խորտաբորտս և ընդ վիմուտ տեղիս .
 ,, յորմէ կասել սկսաւ շապուհ : Ասկ ատոմայ մոկաց-
 ,, ոյ եպերեալ զնա՝ ասէ . զնա՝ զնա՝ անծորդիդ պար-
 ,, սից , եթէ այր իցես . և նա ասէ . դու երթիջիր .
 ,, զի ՚ի քարինս՝ դիւան է շահատակել : Աարձեալ
 ,, յայլում ժամու դիպեցաւ ՚ի շամբս կին՝ որսալ
 ,, հրով . և շապհոյ ոչ համարձակեալ ՚ի թաւուն քաջ-
 ,, արշաւ լինել՝ մինչև շրջապատել հրոյ . և նորա ըզ-
 ,, հայեցուածն յերկուս բաժանեալ՝ այսր անդր բե-
 ,, րեալ լինէր երիվարուն : Սիւսանգամ ասէ ատոմ .
 ,, անծորդիդ պարսից՝ ահա հայր քո և անձ , ընդէր զան-
 ,, գիտես . իսկ շապուհ ասէ . թողեալ ՚ի բաց զկատա-
 ,, կելդ՝ յանցանել ընդ հուրդ դարձն զբեզ , որ և էս
 ,, զկնի քո . քանզի յառաջեւն՝ ձիս իմ խրտչի : Այն
 ,, ժամ այպանեաց զնա ատոմ՝ ասելով , մի թէ և այդ
 ,, քարինք իցեն՝ զի էս յառաջեցից . և արդ՝ եթէ

,, դու զմոկացիս կոչեսցես դիւազգիս, ես զսասա-
 ,, նեանսդ կոչեմ կնամարդիս : Այլ մարակեալ զերի-
 ,, վարն՝ իբրև ընդ հովիտ ծաղկանց անցանէր ընդ
 ,, հուրն՝ զերծուցանելով զշապուհ ॥ Խոր . 7 . 55 :

() Ինտէ խրեին շարադրութիւն :

* Ար առ պատուիրանադրեալն ոչ ձկտի հասանել
 ,, կանոն, նա յահեկակողմանն դանդաչէ խոտորեալ
 ,, ճանապարհի . իսկ որ յառաւելազանցն նկրտի հրա-
 ,, մայեցելոցն հասանել, զաջակողմանն այնպիսին տեն-
 ,, չացաւ գտանել զխոտորումն : Սինն յանդգնաբար
 ,, յապաշխարութե հոսելով վտանգս՝ յառաւել պրն
 ,, դու թէն յանյուսու թե ընկղմի խորս . և միւսն՝ ան-
 ,, չափաբար ընդարձակեալ թողու թէն յուսով՝ զբո-
 ,, վանդակ զերկիւղին՝ ի բաց լուծանէ զկապ : Իսկ որ
 ,, յերկաքանչիւրոյն զանգիտեալ հրաժարիցէ ծայ-
 ,, րայեղ խոտորմանց, (նա) միջին իմն արդարակ և
 ,, անստերիւրող ճանապարհաւ բերիցին . յորմէ ոչ
 ,, փոփոխեսցի նախահարցն հաստատեալ սահմանք .
 ,, (այս է՝) ոչ տէրունականն աւուր զապաշխարուեն
 ,, ի վերայ ածել զնսիր . և ոչ նմանօրէն սմա զծումա-
 ,, կանսն դատարկացուցանել և փափկացուցանել զա-
 ,, լուրս . և ոչ դարձեալ յառ գերազանցագոյնն սո-
 ,, ցա ումք վերանալ ելանել . որպէս թէ՛ ընդ ան-
 ,, գործութի և ընդ բերանալուծութի խառնել և
 ,, զքնոյն խորութի և զգինէ՛ճանութեն որովայնամու-
 ,, լու թի . իսկ ի տրամականսն՝ ծանրաբեռնութեն ի
 ,, ներքոյ դնանիլ տկար բնութես, մարմնասպան լի-
 ,, նելով յաւէտ՝ քան թէ ախտասպան . և ի կբել
 ,, մարմնոյն՝ գտանել հոգւոյն զվհատութեն տարա-
 ,, կուսանս ॥ . յովհաննէս Իմաստասէր . Լ :

* Աուր անժամանխ բարձրացեալն այցելու թե՛ նշան
 ,, սքանչելարուեստ փայլակնաձև փայլմամբ յեսա-
 ,, նեալ՝ քառասայրեան գուլով բերանաւ, ի ձեռն ա-
 ,, ջողակ աջոյն յսի յեղմամբ շողողեալ . որ ի փրբ-
 ,, կու թի նորոգման մարդոյն՝ զջիւս ուժգնապիրկս չա-
 ,, բին խստութե քև հատեալ իսպառ սլարուրեաց .

„ զօրեղ երթմամբ 'ի խոր խոցոտեալ՝ անպատուաստե-
„ լի լուծեալ խորտակեաց ॥ . նար . 'ի գովեստն խալի :

* Իսկ հաւատոյն լուսոյ արմատ և աղբիւր՝ մերու-
„ նակ բնութենս պտուղ՝ բարեբանեալն անձաճին , ընդ
„ երկնաւս մաքրապայծառ լուսով կուսու թէն ընդ
„ իւր զհոգևորսն վառեալ զամպարաշար սքցն զաս-
„ տեղս՝ զերրորդունն ընդ տիեզերս շրջափայլէ հրա-
„ շապայծառ ճառագայթ ॥ . խորեն . 'ի ճառն վարաձառի :

* Լսյժմ ամսք՝ տէրունւոյն սպասահարկեալ հրա-
„ մանի՝ լուսատեսակք յարևելից՝ ոսկեճաճանչք 'ի
„ հիւսիսոյ՝ զմիմեամբք կուտակեալ 'ի միագոյն թանձ
„ բութե փայլակնացայտք՝ որոտընդոստ ցողաբուղիս
„ առատութք զտիեզերս արբուցանեն : Եւ օդք շնւ
„ չեալ մաքրագոյն՝ բիւրակերպեան ծաղկանցն և
„ տնկոցն երփն երփն զարդուք զաշխարհս պայծա-
„ ռազարդեալ պսակեն ॥ . 'ի նոյնն :

Գ Լ Ո Ի Խ Լ Գ :

§ Յաղագս լուծման պէսպէս շարադրութից :

Ը արադրութից լուծումն է որոշումն իւրաքան-
չիւր բառից միոյ բանի՝ ըստ զանազան պաշտաման
նոցա , իբր անուն բայի , իբր բայ , իբր խնդիր բայի ,
իբր մակբայ , իբր յատկացուցիչ , իբր բացայայտիչ ,
իբր ածական , և այլն : Ըրդ՝ թէպէտ յասացելոցս
ցայս վայր կարէ ուսանօղն ինքնին լուծանել գրեթէ
զնմ շարադրութիս , բայց առ 'ի օգնել ևս նոցա՝ մա-
նաւանդ տկարացն , և դիւրացուցանել զաշխատանս
նոցին , դիցուք աստ քանի մի օրինակս . և լուծցուք
զնոսին :

Լ լուծումն պարզ շարադրութից :

* 1 . § արտաքնոցն իմաստասէր ոմն տուն շինեաց .
„ 2 . և դեղազործ ոմն ասաց ցնա , ծեփեա՛ զտուն քոյ ,
„ զի եկեալ դեղեցկացուցից զնա զանազան նկարուք
„ պատկերաց , և անկուածոց յօրինուածովք : 3 . Ըսէ

„ իմաստասէրն , եկ յառաջ նկարեա՛ , և ապա ՚ի վե-
 „ բայ ծեփեցից . 4 . զի զգարչելիսն ծածկէլն է բար-
 „ լոք՝ քան թէ յայտնէլն ॥ . Բեհն . Ժամագր :

Յայսմ բանի , յառաջին համարն՝ ածական ան-
 ունդ իմաստասէր՝ է անուն բայի . որոյ գոյականն զնի
 զօրութիւն . այսինքն է՝ այր ոհն իմաստասէր : Ոհն՝ է մաս-
 նական անուն մասնաւորիչ նորա . այսինքն անուանս
 իմաստասէր . Յարրահնոն՝ է բացառական խնդիր մաս-
 նական անուանս ոհն : Ե ինեաց է բայ : Տոհն՝ է խնդիր
 սեռի բայիս շինեաց . և է անորոշ հայցական :

Յերկրորդ համարն , Եսն է շաղկապ բաղճիւսա-
 կան : Ղեղագործ՝ է անուն բայիս ասաց : Ոհն՝ է մաս-
 նական անուն՝ որպէս յառաջին տան : Խնդիր սեռի
 ասաց բային՝ զօրութիւն զնի . այսինքն է՝ ասաց զայս .
 այս է՝ ծեփեա՛ դրոհն քոյ : Յնա՝ է խնդիր բնութե ասացին :
 Ղեփեա՛ է բայ հրամայական . որոյ անունն զնի զօ-
 րութիւն . այսինքն դոհ : Օրոհն՝ է խնդիր սեռի ծեփե-
 լին : Վոյ՝ է ստացական դերանուն . և լեալ է ածա-
 կան րոհն : Օր՝ է շաղկապ պատճառական : Ելեալ
 է բայ գրադէմ՝ կամ ընդունելուի իբր բայ եղեալ ,
 որոյ անուն բային զնի զօրութիւն , այսինքն է՝ իմ : Ղե-
 դեցիացոցից՝ է բայ , որոյ անունն զնի զօրութիւն , իմ էս :
 Օրոհն՝ է խնդիր սեռի գեղեցիացոցանելոցն : Վեարոհ՝ և
 յօրհնոսածուլ՝ են խնդիր բնութե նորին : Օրոհանն՝ է
 ածական բառիս նեարոհ : Պարիւրաց՝ է յատկացու-
 ցիչ նորա : Ղեարոհոց՝ է յատկացուցիչ բառիս յօրե-
 նոսածուլ :

Յերրորդ համարն , Իմաստասէրն՝ է անուն բայիս ա-
 սէ , որոյ խնդիրն զնի զօրութիւն . իմ է՝ ասէ ցնա զայս
 ինչ , (որ է հետևեալ բանն) : Ելի՝ է շեղական բայ ,
 որոյ անունն զնի զօրութիւն . իմ դոհ : Վեարեա՛ է բայ ներ-
 գործական , որոյ խնդիր սեռին զնի զօրութիւն . այս-
 ինքն դրոհն : Յոսալ՝ է մակբայ ժամանակական նեա-
 բել բային . և՛ է շաղկապ : Ղեփեցից՝ է բայ ներգոր-
 ծական . որոյ անունն է՝ էս . և խնդիրն զնի զօրութիւն .
 իմ զայն : Ելոհն՝ և ՚ի վերայ՝ են մակբայ ծեփեալ բային :

Ե յերրորդ համարն , Օր՝ է շաղկապ պատճառա-
 կան : Ղեաճիւն և յայրնելն՝ են անուն բայիս Բարոհ է :

Օ գարշէլէան՝ է խնդիր սեռի ծածկէլոյն և յայտնէլոյն :
 Վրան Բէն է շողկապ նախընտրական ՚ի մէջ երկուց
 բայիցս ծածկէլ և յայտնէլ :

Ի առճոռանի միջակ շարադրութե :

* 1. Եւ արդ՝ որպէս ՚ի մասունս մարմնոյ քան զամ՝
 ,, պատուականագոյն և առաջին՝ գլուխն է, յաղագս
 ,, տեղւոյն բարձրութե և զգայարանացն ՚ի նմա եղե-
 ,, լոց . և ապա այլքն յանդամնոց մի ի միովէ . 2 . այս
 ,, պէս և յանդամն հոգւոյն մեծ և առաջին իբրև
 ,, զգլուխ է հաւատոյն ճշմարտութի . 3 . և ընդ նմին
 ,, յարմարեալ՝ որպէս անձն ընդ զլնոյ՝ գործք արգա-
 ,, բութե մեծամեծք և փոքունք՝ ըստ պատուիրանացն
 ,, քօի ॥ . շնորհ . ընդհանր :

Յայտմ բանի՝ յառաջին համարն, Եւ արդ՝ է շող-
 կապ սկզբնաւորական : Որպէս՝ է մակբայ նմանական :
 Վալուին է անուն բայի : Ին է բայ : Պարտաւանագոյն
 և առաջին՝ են ուղղական խնդիր բային : Վրան՝ է նա-
 խադրութի : Օ ամ՝ է խնդիր նախադրութե . և այս
 նախադրութի հանդերձ խնդրով իւրով լեալ է խըն-
 դիր անուանցս պարտաւանագոյն և առաջին : Վ ճաստանս՝
 է երկրորդ խնդիր նոցին, (յի պարտաւանագոյն և ա-
 ռաջնոյն) . և կամ պատահական խնդիր բայիս՝ է :
 Սարնոյ՝ է յատկացուցիչ ՚ի ճաստանին : Յաղագս է նա-
 խադրութի : Վարչրութե՝ է խնդիր նախադրութեան :
 Տեղւոյն՝ է յատկացուցիչ բարձրութե . նն է շողկապ :
 Օ գայարանայն՝ է երկրորդ խնդիր նախադրութեան :
 Եղելոց՝ է ընդունելութիւն ՚ի հօլովս սեռական . և է
 լեալ ածական զգայարանայ : Վ նմա՝ է խնդիր ընդունել-
 լութեան . և այս նախադրութի, յի յաղագսն՝ հանդերձ
 խնդրովք իւրովք լեալ է երկրորդական խնդիր բայիս՝
 է : Եւ ապա՝ է մակբայ դասական : Վրան՝ է անուն
 բայի . որոյ բայն դնի զօրութիք . այս է՝ դասին : Յան-
 դանոյ՝ է խնդիր բառիս այլն : Սի ըստ միջէ՝ է դարձեալ
 դասական մակբայ զօրութիք իմացեալ բային :

Յերկրորդ համարն, Վ յայտնս՝ է մակբայ : Ղ շար-
 րութի է անուն բայիս՝ է : Տառարոյն է յատկացուցիչ

Ճշմարտութիւն : Սեծ՝ և առաջին՝ են ուղղական խնդիր բայիս՝ է : Յանդամ՝ է ներդոյական խնդիր բառիցդ՝ Տեծ և առաջին : Նոգայն՝ է յատկացուցիչ յանդամին : Իբրև՝ է նախադրութի : Օ գլուխ՝ է խնդիր էբրևին . և սա հանդերձ խնդրով իւրով լեալ է պատահական խնդիր նոցա . իմ Տեծին և առաջնոյն . և կամ պատահական խնդիր բայիս՝ է :

Յերրորդ համարն , լան է շղկապ : Վործք՝ է անուն բայի : Յարմարեալ է բայ : Ինք՝ է նախադրութի : Լին՝ է խնդիր նորա . որ և հանդերձ խնդրովն լեալ է խնդիր յարմարեալին : Լորդարտութի՝ է յատկացուցիչ գործքին : ՍեծաՏեծք՝ և փոքանք՝ են ածական նորա , իմ գործքին : Ի սոր՝ է նախադրութի : Պարտախրանայն՝ է տրական խնդիր նորա : Վսի՝ է յատկացուցիչ պարտախրանայն . և ըսոն՝ հանդերձ խնդրով իւրով լեալ է իբր պատահական խնդիր գործքին : Իսկ ՚ի միջանկեալ բառսդ՝ որպէս անչն ընդ գլխոյ , կայ զօրութի կրկնումն բայիդ յարմարեալ . իբր թէ ասեր . որպէս անձն յարմարեալ է լը գլխոյ . ուր Լնչն՝ է անուն բայի : Յարմարեալ են է բայ : Ինք՝ է նախադրութի : Վլխոյ՝ է խնդիր նորա . որ և հանդերձ խնդրովն լեալ է խնդիր բնութե յարմարեալին :

Ի սոճոսն խրեին շարարտութի :

* 1. Օ անսպառ խաղացմունս անձայնոցն ՚ի քեզ յնորհաց , և զանդուլ հոգւոյն ՚ի վերայ քօ իմացուա . ծոցդ զշարժմունս՝ ծանեայ ՚ի ձեռն գեղեցիկ խընդրոյս . 2 . յառաջ քան զմարմնոյդ՝ զհոգւոյդ ընկալեալ զծանօթութի . 3 . որ և սիրելի իմոց իսկ ախորժակացս է՝ առաւել ևս սովորութեցս || . Խոր . յառաջ :

Ի սմա՝ յառաջին համարն , անուն բային դնի զօրութի . յսինքն է՝ էս . իսկ բայն է՝ ծանեայ : Ի առքդ՝ զանսպառ խաղացմունս և զանդուլ զշարժմունս՝ են խնդիր բայիս ծանեայ : Ի ծայնոյն շնորհաց՝ է յատկացուցիչ կրաւորականահաղորդ անուանս խաղացմունս . և դնի իբր անուն բայի խաղացմանց : Ի բեղ՝ է խնդիր նորա . այս .

ինքն խաղաղմանցն : Հոգառն է յատկացուցիչ կրաւորա-
կանահաղորդ անուանս զշարժմանս . և է եղեալ փոխան
անուան բայի . որպէս յառաջնումն : Վ Վերայ է նա
խաղրուծիւն : Վճացուածոցր է խնդիր նորա : Վճ է
յատկացուցիչ իմացուածոցն . և այս նախաղրուծի հան-
դերձ խնդրով իւրով լեալ է խնդիր անորաւ շարժմանցն :
Վ յեռն է նախաղրուծի : Վեղեցիկ խնդրոյս է խնդիր
նորա . և այս նախաղրուծի հանդերձ խնդրով իւրով
լեալ է յարմարական խնդիր բայիս ծանկայ : Որպէս
թէ ասէր . ՚ի ձեռն գեղեցիկ խնդրոյս այսորիկ՝ զոր
յինէն խնդրես , ծանկայ ես զխաղալն՝ այսինքն զգե-
ղանիւն անծային չնորհաց ՚ի քեզ անսպառ , և զշար-
ժիւն՝ այսինքն զիջանեւն հոգւոյն ՚ի վերայ մտաց քոց
անդադար :

Յերկրորդ համարն , անուն բային դնի զօրու թիւ .
այսինքն է ՚ի՛ : Բնկալեալ է բայ . (կամ որ նոյն է՝ ըն-
դունելու թիւ եղեալ իբր դրադէմ բայ) : Օ ծանօթու-
թիւ է խնդիր սեռի բայիս ընկալեալ : Օ հոգառն է յատ-
կացուցիչ ծանօթութիւ : Յառաջ քան է նախաղրուծի .
որոյ խնդիրն զօրու թիւ դնի՝ ընդ բառիւդ՝ զմարմնոցր .
այսինքն է՝ զծանօթութիւ . որոյ լեալ է յատկացուցիչ
բառդ զմարմնոցր . որպէս թէ ասէր , յառաջ քան զծա-
նօթու թիւ մարմնոցդ՝ ընկալեալ զծանօթու թիւ հոգւոյդ :

Յերրորդ համարն , որն յարաբերէ զվերջին բառն
առաջին համարոյն՝ որ է բառդ՝ խնդրոյս . և է լեալ
անուն բայիս սիրելի է : Բառքդ՝ իմոց իսկ անորժակացս ,
առաւել ևս սովորութեցս՝ են խնդիր նորա . այսինքն է
բայիս՝ սիրելի է . ուր՝ իսկն դնի իբր զարդ . իսկ իմոցն
է ածական անորժակաց : Բառաւել ևսն՝ շղկատ առա-
ւելական . որպէս թէ ասէր . այդ խնդիրդ սիրելի է
անորժակացս իմոց , և առաւել ևս սովորութեցս :

ԳՒՈՒԽ ԼԳ՝

Յաղաքս Յարմարագրութեան :

Յարմարագրութիւնն է ուղիղ գրութիւն բառից ՚ի
ձեռն յատուկ տառից , և պատշաճ կարգումն բանից

'ի ձեռն յարմար կետից և նշանաց : Ուստի երկու պաշտօնք են յարմարագրութե :

Ղուաջինն է՝ զիւրաքանչիւր բառ գրել իւր սեպհական տառիւ . փ , Ղնօթ , և ոչ անօր . գոհար , և ոչ րոյց ոչ է հարկ գրել յերկար . ապա թէ ոչ պարտ էր զամբ բառ ներգործութիւն զնել աստ : Իսկ եթէ կամիս ամի սոցա տեղեակ լինել , պիտոյ է քեզ պարապել ընթերցման գրոց , և քննութե բառից . և ևս հայել յաճախ 'ի բառգիրքն , ուր որոշ եղեալ կան իւրաքանչիւր բառք ըստ բուն տառից իւրեանց :

Երկրորդ պաշտօն յարմարագրութե է՝ զիւրաքանչիւր բան ուղիղ և որոշ կարգել , թէ ըստ բառիցն , և թէ ըստ հատուածոյ բանիցն . թէ ըստ պարբերութե , և թէ ըստ տրոհութե : Իսկ այս լինի 'ի ձեռն կետագրութե , նշանագրութե և պատուագրութե . զորոց խօսեսցուք կարգաւ :

Ս ան Էեպագրութե :

Կետագրութիւն է ուղիղ կարգումն բառից և բանից 'ի ձեռն կետից : Իսկ կէտքն են զիծք ինչ որոշիւք հատուածոց բանից , և կարգի բառից . և են երեք :

Ղուաջինն անուանի ստորակէտ և է այս (,) և զնի սա հասարակօրէն 'ի վերջ անկատար բանից և կամ այնպիսեաց որ թէպէտ յինքեանս ըստ իմիք համարին կատարեալ , բայց համեմատութե այլումբ բանի որոյ են հատուած , են իբր անկատար և պահանջեն յարիլ 'ի նոյն 'ի կատարիլ : Սա լինի ևս մակակէտ ինի տառին , յորժամ իբր նախդիր վարի . փ , 'ի տուն . 'ի տան . 'ի տանէ , ևն :

Երկրորդն ասի միջակէտ և է այս (.) և զնի սա 'ի վերջ այնպիսի բանից որ թէպէտ և են կատարեալ , բայց դեռ ևս չեն վերջացեալ . յորոց ըստ կանոնի ոչ սկսանի գլխագրով այլ բան : Սա ասի միջակէտ , զի հասարակօրէն 'ի մէջ պարբերութե բանից զնի :

Իսկ երրորդն ասի վերջակէտ որ է այս () և սա

դնի 'ի վախճան կատարեալ բանից վերջացելոց . յուրոց հասարակօրէն գլխագրով, կամ երկաթագրով սկսանի այլ բան : Եւ ահա երեքին սոքա յայտնի երեւին յառաջիկայ օրինակդ :

* Արք վերաւորին 'ի սլաօերազմի աստ մերում, դեղնոցա ապաշխարութիւն է . զոր դնեն 'ի վերայ վերաց իւրեանց ॥ . ՏՃԷ :

Եւրդ նկատել արժան է, զի յորժամ բազում անուանք կամ բայք աւելի քան զերկուս՝ անմիջապէս շարայարին զհետ միմեանց, եթէ նախընթաց նոցին դիցի առանց շաղկապիս եւ, հասարակօրէն դնի 'ի միջի ստորակէտ կամ գոնէ բութ . փր, * Խորամանկ, մեքենաւոր և արուեստական է ատոյեանն մեր . բայց զէն նորա տկարագոյն է քան զմերն ॥ . ՏՃԷ :

Եսացի՝ աւելի քան զերկուս . զի եթէ երկու միայն իցեն, ոչ է հարկաւոր դնել զստորակէտ, այլ՝ ոչինչ, և կամ առ առաւելն՝ զբութ . փր, * Խաղային դրնային այնուհետև 'ի վերայ պահակին հոնաց, զոր ունէին բռնութիւն պարսիկք . առնուին՝ քանդէին ըզպահակն ॥ . Եղիշ :

* Եւրք իցէ, զի ելից 'ի թանձրագանդաղ ձանձրալի մարմնոյս ॥ . Եղիշ :

Իսկ եթէ շաղկապաւս եւ յարեսցին, թէ երկու իցեն՝ և թէ աւելի, ոչ է հարկ դնել զստորակէտ, այլ՝ կամ զբութ, և կամ զոչինչ . փր, * Արկնէր և երեքինէր զանսուտ երգումն ॥ . Եղիշ :

* Եւ գնացից և վարուց և իրաց՝ 'ի չափու սլարտ է կալ, և ոչ խոտորել՝ ոչ յաջ և ոչ յահեակ ॥ . նար . երգ :

Եւ եթէ յայսպիսի շարայարեալ շաղկապաւոր բառսդ յարեսցին այլ բառք իբր բացայայտիչք, կամ իբր յատկացուցիչք, կամ իբր ածականք, կամ իբր խնդիրք եւ, յայնժամ դնի ստորակէտ, կամ բութ . փր, * Յարգեն զթշուառութի, և պարսաւեն զյաջողուածս . ծաղր առնեն զանուն բախտի, և զփառաւորաւն այսպանեն յոյժ . սիրեն զանչքութի հանդերձից, և յարգեն զանարգն քան զպատուականս . գովեն զմահ, և պարսաւեն զկեանս ॥ . Եղիշ :

Եւ ևս արժան է նկատել, զի 'ի բանս յորժամ

յարին շաղկապք, պարտ է ըստ պահանջելոյ շաղկապման բառից և բանից դնել զկէտ . որոց զօրինակսն կարես գտանել կարգաւ յառաջին մասին . Գլ. 7:

Մտք՝ որպէս հարկ է քերթողին 'ի շարադրէն ինչ՝ 'ի կիր առնուլ զայսօսիկ կէտս ըստ յարմարուէ տեղւոյն , սոյնպէս և ս հարկ է ընթերցողին կամ խօսողին կըռել զիւրաքանչիւր անդամ և զպարբերուածի խօսից , և տրոհմամբ բանից 'ի ձեռն շնչառուէ արտասանել . 'ի ստորակէտս՝ զխոնարհումն ձայնին կախ թողլով՝ իբր կատարելի . 'ի միջակէտս՝ զձայնն հատանելով՝ իբր լը իմիք կատարեալ . և 'ի վերջակէտս՝ զձայնն և զբանն վերջացուցանելով՝ իբր ամենևին աւարտեալ :

Վտանին դարձեալ և այլ երկու տեսակք գծից , որք երբեմն 'ի գործ ածին 'ի շարադրուածիս . որոց մինն ասի , ԳրէնԽալիկ , կամ ԳրէնԳիծ . և միւսն ԷնԲաճայ : Վակագիծն է այս . () . և սա 'ի մէջ բանի զմասնաւոր բան ինչ և կամ բառ պարագրէ և իբր եղնգամբ 'ի վեր առնու . մինչև առանց ընթեռնելոյ զայն , ամբողջ մնալ իմացուածոյ միւս բանին , յորոյ միջի զետեղեալ կայ . օր , * Մագուք՝ (թէ ակորժէք) , նախ զօրէնս ան 'ի ձեռս մեր , և ընթերցուք ॥ լաճ : Ուր ահա այս բան՝ Բէ Կորժէ՝ որոշեալ է փակագծիւ . առանց որոյ կարէ իմացուած միւսոյ բանին մնալ ամբողջ . օրգոն , առցուք նախ զօրէնս ան 'ի ձեռս մեր , և ընթերցուք :

Վնթամնայն է այս () . և սա զերկուս տարակաց վանկս միոյ բառի յարէ 'ի մի : Վլ այս յայնժամ վնի , յորժամ մի վանկ բառին է 'ի վերջն նախընթաց տողին , և միւսն 'ի սկիզբն յաջորդ տողին . որպէս է տեսանել յայս բան . — * Որ յուսով մեղանչէ , ան յոյս կորնչի ॥ . սարգ :

Մյլ նկատել պարտ է , զի մի վանկքն թիւր անջատեցին 'ի վերջս տողից , այլ՝ ըստ պահանջման փաղառութե . ուստի և այնպիսի վանկք՝ որք բաղաձայնիւ սկսանին , յանջատին՝ բաղաձայն նոցա ոչ է դնելի 'ի վերջն տողից , այլ՝ 'ի սկիզբն յաջորդ տողին :

Ս ասն որոյ թիւը է այս անջատումն՝ բարեկէնդան . տեսի . գնացաք լեւ : Այլ պարտ է դնել այսպէս , բարեկէնդան . տեսի . գնացաք լեւ : Բայց յերկբարբառ վանկս կարէ դնիլ ըստ երկուց ևս . զի երկեալ կամ երկեալ , անկիւն կամ անկիւն . լաւութի կամ լաւութի լեւ : Սոյնպէս ևս յայնպիսի բառս՝ յորս ու տառն իբրև վել չնչէ , մարթ է անջատել այսպէս՝ ստեղծուած . պատուել . ՚ի նախանձուէ . լեւ . այլ լաւ ևս , ստեղծուած . պատուել . ՚ի նախանձուէ . լեւ :

Այլ եթէ երկու ձայնաւորք մի զկնի միոյ դիպեցին , պարտ է զմին ՚ի վերջ նախընթաց տողին դնել , և զմիւսն ՚ի սկիզբն յաջորդ տողին . զի , բաղաւամ մարիամ . միայն . գաբրիէլ . էմմանուէլ . առնէին . ընուին . սիմէոն . էակ . կայաք . մնայաք . բայից . քոյին . գոյիւք . լեւ :

Սրբա եթէ զկնի ունիցին զայլ վանկ , այլազգ ևս բաժանին . սրգոն , բաղաւմայ . մարիամու . գաբրիէլին . էական . միայնակ . լեւ :

Այլ ևս յայնպիսի բառս՝ յորս եւ տառն զօրութի է եղեալ , յանջատելն զայնս՝ եւն իբր ՚ի բազումն դնի ներգործութի . զի , փրտութի . դրնել . զրննել . ըսկասնիլ . ըզնա . լեւ :

Այլ գիտելի է , զի բառք բարդեալք կամ բաղադրեալք առանց միջանկեալ տառի՝ այլազգ անջատին . զի սկզբնաւորութի պարզիցն՝ յորոց զօդին , թէ և ձայնաւոր տառիւ սկսցին . զի , ուրախարար . դժուարիմաց . պարաւութի . բացորոշել . դերանուն . ապերախտ , լեւ :

Իսկ որք միջանկեալ տառիւ բարդին , սկզբնաւորութի բաղաձայնից անջատին . զի , ճառաբանել . կենագործել . լեւ :

Ս ասն նշանագրուել :

Ի բարբառս մեր կան նշանք ինչ , որովք յատկութիք չնչմանց տառիցն սրոյն ՚ի ձեռն արուեստի առողանութի ըստ ոլորակին , ըստ հադագին՝ և ըստ

ամանակին . և են եօթն . սուհ , որ է այս⁷ . սուղ , որ է այս օ . Լաւ , որ է այս⁸ . Բաւ , որ է այս⁹ . Նշա , որ է այս¹⁰ . Երկար , որ է այս¹¹ . պարոյն , որ է այս : Նշդ որս դասի և ուրախ , որ նման է պարուկի , և կոչի ևս երբեմն պարոյկ , որ և է այս¹² . զորոց խօսեսցուք յառաջիկայդ :

Սոսկն 'ի հնուն վարէր 'ի վր այնց տառից , զորս առաւել նուրբ պարտ էր հնչել , քան զլծորդատառս նմանաձայնս նոցա :

Սուղն գլխաւորաբար վարի յերաժշտութե . թէ պէտ և հին գրիչք ոմանք դնելին և 'ի վր երկբարբառիս ու :

Իսկան նշանակէր առ հինան զխոշորաձայն հնչումն այնց տառից , որոց կան լծորդատառք նմանաձայնք , այլ նուրբ հնչմամբ : Սովորութին խափան էարկ այսոցիկ :

Իսկութն դնի նախ 'ի վերայ թուական անուանց դասականաց , յորժամ վարին իբր մակբայ . և կամ յորժամ ունիցին զյօդ առանց լինելոյ խնդիր բայի , և կամ ածական . զի , * Խորհեալ եմք նոյնպէս ծառայել քեզ միամտութի . եթէ հաստատեսցես առ մեզ դաշամբք զերիսս զայսոսիկ . սուղին՝ ճիշել զյանցանսն . . . Երկրորդ՝ զի դարձուսցես մեզ զամ ժառանգութի մեր . . . Երրորդ՝ հնարել թափել զմեզ 'ի կայսերէ || . Խոր :

Իբրևորդ դնի բութ 'ի վերայ շողկապիցս՝ այլ . դարձեալ . արդ . և արդ . իսկ արդ . այլ արդ , եւ . զի , * Ո՛չ եթէ զամ ինչ՝ զոր խորհեսցի մարդ՝ առնել կարօղ է , այլ զորս թողացուցանէ անձ || . Վարդ հարց : * Գարնեալ եթէ 'ի նաւ ելեալ որ՝ լի ամեհի ալիս կամ միցի ճանապարհօրդէ || . Իմաստ :

* Եւ արդ՝ հայեաց յերկինս 'ի վեր , ո՛վ մարդ , և յերկիր 'ի խոնարհ || . սուրդ :

Իբրևորդ՝ դնի բութ 'ի վերայ դրադեմ բանից՝ 'ի լինելն հեռի դիմաւոր բային . մերթ ևս 'ի մօտ լինելն . զի , * Երդ՝ էր վր զկերպարանս ծառայութեն թողեալ՝ դատաւոր և քննիչ նստիս օրէնսդրին || . սուրդ :

* Օրուարթադին դիմօք և համեստ բանիւք յառաջ

մատուցեալ՝ տային պատասխանի թագաւորին ॥ . եղիշէ :

Սոյնպէս ևս եթէ դրադէմն յետագասեալ իցէ , պարտ է դնել զբուծ 'ի վերջ նախընթաց բանին . թէպէտ յայսպիսիս երբեմն ստորակէտ ևս դնի . զք , * Արդեօք մտից 'ի խրախճանուծի խորանին լուսոյ՝ քլ առաջնորդեալ ॥ . նարեկ :

* Օչոյնս և ես հանդերձ հառաչմամբ բարբառիմ՝ 'ի դիպուածոց աստի վտանգեալ ॥ . յովան . իմաստ :

Չորրորդ՝ բուծն դնի երբեմն 'ի վերայ այնպիսի բառից ևս , յորս կարէր դնիլ ստորակէտ . զք , * Որ խոնարհի՝ խոնարհեցուցանէ զգ. ևս . և որ ոչ խոնարհի՝ խոնարհի 'ի դիւաց ॥ . լամբր :

* Ս'ի որ՝ որ չար իցէ՝ յուսասցի անպարտ լինել ॥ . յոբ :

Եշտն 'ի գործ ածի 'ի նշան սուր հնչելոյ զձայնաւորան : Ալ ըստ այսմ՝ դնի նախ՝ 'ի վերջ հրամայական բայից . զք , * Արձանացիր 'ի յոյն , մինչդեռ ժամանակս 'ի ձեռս է . մատիր առ արքայն ահաւոր , մինչդեռ 'ի շնորհացն յաթոռ է . հաւատա՞ գտանել շնորհս 'ի դէպ ժամանակի օգնականուծե՞ ॥ . լամբր :

Այլ եթէ հրամայական բայն ունիցի յառաջ քան զինքն զայնպիսի բառ , ընդ որում՝ 'ի միտին վարի , յայնժամ՝ դնելի է շեշտն 'ի վ'ր նախընթաց բառին . զք , * Յամենայն իրաց չարաց 'ի բանց կացէք ॥ . Թես :

* Բաջ իմա զբանն , եթէ չգոյ այլ չար քան զայն ॥ . խորոզ :

* Գուք բուռն հարէք , և ան լիցի գործակից ॥ . լամբ :

Ալ ևս՝ եթէ հրամայականն ունիցի նախ քան զինքն զարգելական մասնիկս՝ մի , թէ առընթեր՝ և թէ հեռի , յայնժամ՝ զշեշտն պարտ է դնել միայն 'ի վերայ արգելական մասնական . զք , * Յիմաստուծի քո մի հպարտանար . . . մի լինիր իմաստուն յաչս անձինքո ॥ . սոսակ :

Արբեմն ևս վ'ս զգուշուծե՞՞ դնի շեշտ 'ի վերջ անուանց ինչ , որք էական բայիւ վարին , կամ որք էական բայի ուղղական կամ սեռական խնդիր լինին . զք , * Ստա՛հ եմ՝ 'ի ձեզ տրամբ ॥ . Բ . Թեստաղ :

* Լա՛ւ է անզաւակուծի հանդերձ քաջուր ॥ . իմաստ :

* Լմաստնոց է վերակացու լինելն ॥ . իֆնաստ :

Արքրորդ՝ ՚ի յատուկ անուանս այլոց ազգաց՝ սովորութի եղև ոմանց դնել զշեշտն ՚ի վերայ առաջնոյ վանկի ՚ի կոչականն, յորժամ առանձինն վարին . Գր .

* Յուդա՝ համբուրելով մատնես զորդի մարդոյ ॥ . Դաւի :

Ասացի՝ յորժամ առանձինն վարին . զի եթէ կրքկնեսցին, շեշտն սովորաբար դնի ՚ի վերջին վանկն . Գր .

* Սողոն սողոն գեղեցիկս բարբառեցար՝ ոչ երանել զբարեբախտութի մարդոյ մինչև ցվախճան ॥ . Խոր :

Աւ ևս եթէ կոչական անուանք վարեսցին մասնըկամբքս՝ և և՛ լի որում են կոչականակերտք, սովորութի եղև զշեշտն դնել ՚ի վերայ այնց մասնկանց . Գր . * Ամանօղ եղերուք ո՛ հովիւք առաջին հովուացն արդարոց ॥ . ՏճԲ :

Իսկ եթէ կոչական անունն զինի կամ առաջի իւր ունիցի զայլ անուն, կի՛մ զգերանուն, լիւ . շեշտն դնի ՚ի վերջին վանկն նախընթացին . Գր . * Սիմոն յովնա նու՝ սիրես զիս առաւել քան զդոսա ॥ . յով :

* Ասգեա՝ ՚ի յիս զոյս քառուէ արքայ երկնաւոր ॥ . Կարէ :

Իսկ յայլ անուանս ՚ի կոչականն շեշտն դնի ՚ի վերջին վանկս . Գր . * Տուիչ պարգևաց, ինքնաբուն բարի . . . փառաւորեալ . անքննիւն . անեղ . ահարկու . սոսկալի . հզօր . սաստիկ . անտանելի . անմերձենալի . անըմբռնելի . լիւ ॥ . Կար . 7 :

Արքրորդ՝ դնի շեշտ երբեմն ՚ի վերայ ոմանց բացասական և ստորասական մակբայից . և ՚ի վերայ բառիս՝ չի՛ . մերթ ևս ՚ի վերայ բառիցս՝ սա, դա, նա, յորժամ վարին էական բայիւ . Գր . * Ո՛չ նախանձի խաւար լի աղջամուղջ ॥ . ՏճԲ . 17 :

* Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ գիտեմ զձեզ ॥ . Տար :

* Ղիք ակնառութի առաջի այ ॥ . Կողոս :

Արբեմն ևս մարթ է դնել շեշտ փոխանակ ոլորակի ՚ի վերայ հարցական բառից՝ լի պահանջման տեղւոյն . Գր . * Փութացաւ ուսանել թէ քանի իցեն պարագլուխք քաջ նահատակացն . . . զինչ անուանք իւրաքանչիւր համահարզացն իցեն . . . ո՛ դք ՚ի նոցանէ յերկբայս կայցէ . և կամ ո՛ դք զանձն ՚ի մահ դնելով՝ դուն գործիցէ ॥ . Եղիշէ :

Արկարն 'ի գործ ածի 'ի բանս հեզնականս , ողբա-
կանս , ցաւակցականս , զարմացականս . ևն . զոր օրի-
նակ , * Ա՛հ՛ որ քակէիր զտաճարն , և զերիս աւուրս
չինէիր զնա , ապրեցո՛ զքեզ ॥ . Ժաբ :

* Ա՛հ՛ զայ՛ մեծիդ բարերարութե՛ , անարգս մեղայ ॥ .
նար . Իէ :

* Ազորմիմ՝ ողորմիմ սիրելեաց ձերոց , և բազում
անգամ ողորմիմ անձանց ձերոց ॥ . Եղիշէ :

Այլ յայսպիսիս՝ հնար է ևս փոխանակ երկարի
դնել շեշտ , մերթ ևս պարոյկ , և կամ ոչինչ , ըստ ա-
ռուգանելոյ բանին :

Պարոյկն ևս դնի յայնպիսի բանս՝ որք յայտնեն
զկիրս հոգւոյն . որպիսի են այն բանք՝ որք հասարակ
օրէն 'ի ձեռն միջարկութեանց առաջի դնին . զո-
րոց զօրինական կարես տեսանել յառաջին մասին .
ԳԼ . Ին :

Աւորակն՝ որ նմանութի ինչ ունի լը պարուկին , մա-
նաւանդ թէ՛ երբեմն պարոյկ ևս կոչի , առաւել քան
զպարոյկն տայ ուրրել զձայնն . և սա դնի՝ Ախս՝ 'ի
վերայ հարցական մակբայից . ԳՐ , * Օ՛ր բնաւ պիտոյ
են մեզ անցաւոր կեանքս ॥ . Եղիշէ :

Արկորդ՝ դնի 'ի վերայ հարցական անուանց . զո-
րոց զօրինական տես 'ի ԳԼ . Լն :

Արբորդ՝ դնի 'ի հարցական բանս՝ 'ի վերայ այնր
բառի , որով հարցումն յայտնի . ԳՐ , * Արկայնամիտ
միայն լինիցի առ նոսա ॥ . Դոմէ :

* Տեսանէք , զի 'ի գործոց արդարանայ մարդ , և ոչ
'ի հաւատոց ॥ . յաէ :

Սոյնպէս ևս եթէ 'ի հարցական բանս դիցի մակ-
բայ երկբայական , ուրրակն դնի 'ի վերայ այնր բա-
ռի , որով 'ի մեջ բերի հարցումն . և ոչ 'ի վերայ մակ-
բային . զոր օրինակ , * Ա՛իթէ տկարանայցէ՛ առ 'ի
յնոյ բան ॥ . Ճնն :

* Արդեօք տեսից զվայելչութի ընտանիդ քո պայծա-
ռութե՛ ॥ . նարեէ :

Այլ գիտելի է , զի բազում անգամ 'ի տեղի ուր-
րակին դնի պարոյկ . և 'ի տեղի պարուկին՝ ուրրակ .
և երբեմն ևս 'ի տեղի երկարին՝ ուրրակ , կամ պա-

րոյկ . և ս և շեշտ . և 'ի տեղի ոլորակին կամ պարու-
կին՝ երկար , ք առողանելոյ զբանսն , որպէս և յի-
շեցաք 'ի վերոյ :

Սասն պատուարբուլն :

Վտանին և այլ չորս գիծք , որք կոչին տեսակք
պատուարբուլն . որոց առաջինն ասի սիան . և է այս ,
1 . և սա միայն փոխան այբի դնի 'ի մէջ միոյ բառի .
նչ 'ի սկզբան , և նչ 'ի վերջոյ , այլ 'ի միջի . փր , բուք .
ամուլեմ . ճշակեմ . բովնդակեմ . ևն : Եւ յլ զայս չէ
պարտ յաճախել , բայց եթէ հարկն ստիպեսցէ 'ի
կարգել զտողս բանից :

Երկրորդն ասի երկրեակ . և է այս , 2 . և սա դնի
նախ 'ի վերայ բառի փոխան ձայնաւոր տառի եղե-
լոյ 'ի մէջ բառին . փր , խնրհուլն . ս'վրեալ . ևն :
Եւ բարեոք և ս է յայսպիսի տեղիս բնաւ ոչ առնուլ
'ի հիր զայս նշան : Վնի երկրորդ 'ի վերջ կիսատ բա-
ռից ինչ , զորս հնար իցէ ընթերցողին իմանալ . զոր
օրինակ , զուկ . յովհ . լամբ . ևն . ք զուկաս . յով-
հաննէս . լամբոնացի . ևն :

Երրորդն ասի դուր , որ և պատիւ կոչի , երբեմն
և ս քաշ . և է այս , 3 . և սա դնի 'ի վերայ բառի՝ եր-
բեմն փոխան ձայնաւոր և բաղաձայն տառից ինչ այնք
բառի . զոր օրինակ , ան . ամ . եմ . իէլ . երդ . չրդ .
մդ . խհդ . Ժմկ . փխկ . ևն : Եւս երբեմն փոխան ձայ-
նաւոր տառից միայն , մանաւանդ փոխանակ այբի .
փր , քհնյ . պտճա . սհմն . սկ . բղմ . պրտւր . խնրհուի .
ժղվրդ . ևն :

Սա պատիւ կոչի , զի 'ի սկզբան յորժամ հնարե-
ցաւ՝ դնիւր 'ի պատիւ գրեցելոյն . փր , ան , թքր ,
տր , ևն . և յետոյ հարկ եղև : Եւս 'ի դնիլ յանպա-
տիւ իրս՝ 'ի ներքոյ զետեղէին . փր , ուծք առժա-
մայնք . ստնյ , ևն :

Չորրորդն ասի նշանակի . որ դնի փոխանակ միոյ
ամբողջ բառի . և սորա են կրկին տեսակք : Սմանք
կազմին 'ի բաղադրուլն գրոց . որպիսի են սքին .

փր, այսինքն . լւ, ըստ . իկ, կամ .
 փր, զոր օրինակ . լւ, ըստ այնմ . ք, քան .
 լւ, ընդ . լւ, և այլն . ս, այսպէս . լւ :

Իսկ ոմանք կազմին յայնպիսի գծից, որք ոչ դասին
 լւ գիրս լեզուի մերոյ . որպիսի են սորին . Տ աշխարհ .
 (Լուսին . * աստղ . լւ :

Ըստ այսմ ինչ շատ լիցի առ ՚ի յուսումն ուղիղ խօ
 սելոյ լւ մարդիկ և անսխալ շարագրելոյ : Ըստ էթէ
 կամիս յառաւելն բերիլ տես յընդարձակն :

ՀԱՄԼՈՒՑՈՒԹԻՒՆ,

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Յորում առաջի դնին սահմանք և բաժանմունք և պարագայք մասանց բանի, և կանոնք համաձայնութե նոցա ընդ միմեանս:

Գ Լ ՈՒ Խ Ա:

Թիւ շէնչ իցէ թերականութիւն, և ոչ իցէն գլխատոր ուսանելիք 'ի նմա:

Քերականութիւն է արուեստ ուղիղ խօսելոյ՝ և անսխալ շարագրելոյ:

Գլխաւոր ուսանելիք 'ի քերականութե՝ են չորք. գիր, վանկ, բառ, և բան:

Գիրն է գիծ ինչ նշանակիչ տառի: Իսկ տառն է հնչումն ինչ յօդելի և հեգելի. զի յօդի ընդ այլում հնչման, և հեգեալ ընդ նմա՝ հնչէ զբաղադրեալ ձայն:

Վանկն է ձայն ինչ, որ միով հնչմամբ ելանէ ընդ բերան մարդոյ՝ բաղկացութիւն ձայնաւոր և բաղաձայն տառից. որդոն, * մա. զէն. liā:

Բառն է ձայն նշանական. այսինքն այնպիսի ձայն, որ կարգեալ է 'ի նշանակել ինչ: Առ բաժանի յուրժ ազգս. որք են՝ անուն, դերանուն, բայ, ընդունելութիւն, նախադրութիւն, մակբայ, շաղկապ, և միջարկութիւն:

Բանն է շարամանութիւն բառից՝ յայտնող տրամախոհութե մտաց: Առ է կրկին. կատարեալ, և անկատար:

Կատարեալն է, որ անթերի յայտնէ զգատմունս մտաց. որ, * Թաղաւոր արդար կանգնէ զաշխարհ:

Իսկ անկատարն է, որ տայ զսկզբնաւորութիւն իմա նալոյ զգատմունս մտաց, բայց ոչ աւարակէ . Կ՛ր, * Ա թէ անսայցես ॥ . յոր թէ յարեացի բայ ինչ, կատարի . Կ՛ր, * Ա թէ անսայցես, աղերսեմ ॥ :

Սասունք բանի են ութ ազգ բառից զորս յիշեցաք . անուն, գերանուն, բայ, ընդունելութիւն, նախադրութիւն, մակբայ, շղկապ, և միջարկութիւն :

Յաղագս անուան :

Ընունն է մասն բանի, որով իրն յորջորջի . Կ՛ր է այնպիսի բառ, որով իրն ասի այս ինչ : Կամ որ զէնութիւն իրին նշանակէ . Կ՛ր, * ծառ . լոյս . երկիւղ . չար . ևն :

Ընունն բաժանի յերկուս, 'ի գոյական և յածական : Գոյական անունն է, որ ինքնին վարի 'ի բանս, և նշանակէ զիրս էականս, կամ իբր էականս . Կ՛ր, * մարդ . հաց . սէր . օրհնութիւն . ևն : Այլ բաժանի, 'ի յատուկ, 'ի հաւաքական, և 'ի յընդհանուր :

Յատուկն է, որ կարգեալ է՝ զմիոջէ միայն ասիլ . Կ՛ր, * մովսէս . սիոն . նեղոս . ևն :

